



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


ստանձնել և տարածել նյութը ցանկացած մեալափով կամ կրիչով
մեալոխել կամ օգտագործել առկա նյութը առեղծելու համար նորը


You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Two m. l. p. y. c.









Պոլիտեխնիկ բոլոր երկրների, միացիկ

ԿՈՄՍՈՒՆԻՍԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

1

Կոմսոնիսակ

1. Մ. Մարտինով — Ֆեդերացիայի
2. Մ. Մարկին — Մրեկ և այլք
3. Ն. Նեմին — Մրբայր Մուսերնայինայր և Նրա ախ
դր պատմությունների
4. Գ. Ջեմովին — Պարտադրական չեզոքության
կանոնները
5. Գրառ Մեպին — Նեյքեր Մրբայր Մուսերնային
այլ
6. Զ. Ջեպին — Մրբայր Մուսերնային կարճա-
նամեր
7. Շ. Լուսին — Փաշտոնական պատմություններ (պատմ-
ություններ պեղարացիայի առթիվ)
8. Մ. Մարկին — Մուսերնայինայր ինտերնացիոնալ
9. Կոմսոնիսակական Մուսերնայինայր կանոն-
գրություններ
10. Ն. Նեմին — Գրառության կարգի պատմություն
այլ
11. Ա. Մեպին — Մարտինով — Մրբայր Կոմսո-
նիսակական Մուսերնայինայր
12. Ն. Քարաբին — Մարտինովական զարեյաների
մասին
13. Մ. Մարտինով — Վրաստան, Հայաստան, Աստա-
նա և Մարտինով Մուսերնային
14. Գ. Ջեմովին — Համալսարանային չեզոքության
միջոցային ինտերնացիոնալ
15. Ա. Լուսին — Ամսերնային, Մարտինով, Լուսին
16. Ն. Քարաբին — Մարտինով պարտականություններ
17. Կար Մեպին — Մարտինով ինտեր
18. Ն. Կարաբին — Մարտինով և ինտերնացիոնալ
կարճա-
նամեր
19. Ն. Կարաբին — Փաշտոնական կրթական գրա-
ռություններ
20. Ա. Քարաբին — Կոմսոնիսակական ինտերնացիոնալ

Ի Մ Ա Ն Գ Ի Ն Ս Ա Ր Թ Վ Ա Ր Թ .

Այս գիրքը եւ նախքան եմ ձեր, որովհետեւ ձեր տան-
 ջանքների ու գրկանքների գնով է պայմանաւորւած նրա
 ... անձամբ:

404

3 ԿԻ

68

ԵՐԱՆՈՒՆ Ի ՍՏԱԿԱՆ

Ի ՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԼ

անհրաժեշտ հանդիսւոր,
 տալիս արձակուրդս այս

այս աշխատութիւնը, դուր
 որ մատուց օրերից մատ-
 ասակարգի արդար կռիւն,
 և զահարեւելու կամ մու-
 կատարեալ յաղթանակը
 սերնդին, բնկեր Սարգս

բ ինձ, եթէ եւ յաճախ
 թիւններիս մէջ, զիպի

Ձեր բնկեր Սարգս

ԳՐԱԳԱՐԱՆ «ԵՐԻՆՏ»

ԽԱՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ Ե. ՍՈՒՐԵՆԱ

Պրոլետարների բոլոր եղբայրներ, միացե՛ք.

3KII

4-68

3KII

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԼ

ՀԱՅԿԱՍՏԱՆ

1921

ԹԻՖԼԻՍ

БИБЛИОТЕКА «ЕРИНТ»

ПОД РЕДАКЦИЕЙ Е. СУРЕНА

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳԱՐԱՆ
ԿԿՈՒԿԵՑ. ԵՍԻ

Пролетарии всех стран — соединяйтесь!

Коммунистический интернационал

A II
81169

Հ. Ս. Ս. Ս.
ԽՆԿԱԼԱՅՈՒՄԻ ՓԱՆԳՐԱՆ
ՀԱՅԿԱՍՏԱՆ
Музей Революции
№

1921

Тифлис

34434 10100499

11653-4520

11653-4520

RECEIVED
JAN 14 1954
U.S. AIR FORCE
WASHINGTON, D.C.

ԴԵՊԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ

I

«Անկախ» Վրաստանի, «ազատ» Հայաստանի, «ինքնորոշ» Ադրբեջանի երեքամեայ անցնալը մի դրական կողմն ունեցաւ. մեր երկրի բանւոր-գիւղացիական մասսաները իրանց կաշւի վրայ փորձեցին, որ մեկուսացած ու կղզիացած մանր պետութիւնների գոյութիւնը չի բղխում յեղափոխական պրոլետարիատի շահերի ճիշտ ըմբռնումից, այլ արդիւնք է ներհակ, թշնամի դասակարգի քաղաքական շահատակութեան, որ «անկախ» Վրաստանի կամ Հայաստանի, կամ Ադրբեջանի դիմակի տակ հետապնդում է իր էգոիստական, նեղ-դասակարգային հաշիւները:

Վրաց ազնւականը, հայ բուրժուան, թուրք բէզը ստակալով Հոկտեմբերեան Յեղափոխութիւնից, որ պարզել էր համաշխարհային սոցիալական յեղափոխութեան դրօշակը և մահ էր բերում բոլոր արտօնեալներին, ձեռք-ձեռքի տւած՝ որպէս միևնույն շահագործող ու կեղեքող դասակարգի հարադատ զաւակներ, պոկեցին Անդրկովկասը յեղափոխական Ռուսաստանից և ստեղծեցին նախ «անկախ ու սուվերէն Անդրկովկաս» (այդ կոմեդիան կատարում էր Անդրկովկասի Սէյմում) և ապա երկիւղ կրելով որ մեր երկրի բանւոր դասակարգի և գիւղական չքաւորութեան միաբան ու անբաժան շարքերը հասկանան այն ստոր խարդախութիւնը, որ եւրոպական իմպերիալիստների մատի նշանով լարում էր նրա սիրտը թշնամիների — ազնւականներին, կապիտալիստներին և բէգերին ծախւած մենշինկների, զաւակեցականների ու մուսաւաթիստների կողմից, վերջիններս մի երկրորդ անգամ յօշոտեցին, անդամահատեցին Անդրկովկասը և ստեղծեցին երեք մանրապետութիւններ (այս կոմեդիան կատարում էր Թիֆլիսում, Երևանում և Բազում մայիսի 26—28-ին), որոնց պատմական միակ միասին էր խեղդել բանւոր դասա-

կարգի յեղափոխական թափը, մթաղնել առանց այն էլ խաւար գիւղացութեան գիտակցութիւնը: Եւ պէտք է ասել, որ կապիտալիզմի «սոցիալիստ» ազնետները բարեխղճաբար կատարեցին իրանց պարտքը: Նրանց յաջողեց մի բոլակ գրաւել ու համոզել իսկ պրոլետարիաւին, թէ այն ամենը՝ ինչ կատարում են մենշեիկները, զաշնակցականները և մուսաւաթիստները, թելադրում են հենց «ժողովրդական» շահերից, բղիւում են Սոցիալիզմի և Ինտերնացիոնալի միակ ճիշտ ըմբռնումից:

Եւ այնքան լաւ ու ճարպիկ խարդախեցին ու խարեցին բանւորներին և գիւղացիներին, որ ժող երեք տարի գինւորի շոր հագած խեղճ ու կրակ պրոլետարը գէնքը ձեռքին պաշտպանում էր Մադալսոփ, Սալ-Օզլու, Բեօլագերանի մաքսատները, որ թալանւում էին մեր ժողովուրդները, արիւն էր թափւում Լոռում, Ղարաբաղում, Օսեթիայում, Աբխազիայում, Ադարբաւում, Փոյլիում «հայրենիքի» գերագոյն պատուի փրկութեան համար:

Զարմանալի չէ ուրեմն, որ երեք տարւայ ընթացքում ոչ մի խնդիր՝ քաղաքական թէ տնտեսական չյաջողեց լուծել «անկախ» հանրապետութիւնների տէրերին—մենշեիկներին, զաշնակներին և մուսաւաթիստներին:

Անդրկովկասի սովետիզացիայից յետոյ մեզ Խորհրդային իշխանութեան և Կոմմունիստական կուսակցութեան ծանր ժառանգութիւն մնաց: Մի շարք հրատապ խնդիրներ՝ որոնց լուծմանը զուր սպասում էին Անդրկովկասի բանւորներն ու գիւղացիք (մեզ չեն հետաքրքրում բուրժուազիայի տնէշերը և գիււնք, թէ նրանք ինչ «սպասելիքներ» ունին), ոչ միայն չլուծեցին, այլ ընդհակառակը գիտմամբ խճճեցին ժողովրդի բաղդի երէկւայ տնօրինողները: Եւ մենք այսօր կոչւած ենք խճճւած ու յետաձգւած հարցերը մէկիկ-մէկիկ հրապարակի վրայ դնելու և լուծելու մեզ յատուկ վճռականութեամբ և անկեղծութեամբ:

Այդ խնդիրներից մէկն է—և զուցէ ամենադժուարը, սրովհետեւ նրա յաջող կամ անյաջող լուծումից է կախւած յեղափոխութեան և պրոլետարիատի ապագան մեր երկրում—նաև Անդրկովկասի ապագայ կազմութեան, քաղաքական-տնտեսական կոնստիտուցիայի, կերպարանքի խնդիրը:

Անժխտելի փաստ է, որ Անդրկովկասը ներկայանում է իբրեւ տնտեսական միանրածան ամբողջութիւն և Վրաստանը, Հայ-

աստանը, Աղբրեջանը իրար միայն լրացնում են, իրարից անկախ չեն կարող ապրել: Եթէ մի տեղ կայ քարածուխ ու մարգանց, միւս տեղ կայ պղինձ ու աղ, իսկ երրորդ տեղը՝ նաւթ ու ձուկ. եթէ կայ Բաթում, կայ նաև Զուլֆա, Բազու-Էնդելի, որոնք բոլորն էլ միևնույն տնտեսական կեանքի համազօր արտերիաներ, հաղորդակցութեան կարևոր ջրանցքներ են: Մենչևիգմի անկումից առաջ մենք բոլորս հանդիսատես էինք, թէ ինչպէս մեռնում էր «անկախ» Վրաստանը՝ հակառակ Անտանտի «օգնութեան», որովհետև Աղբրեջանը նրան չէր ուզում նաւթ տալ. ինչպէս Հայաստանը խեղդւում էր սովի մէջ, որովհետև մենչևիկեան Թիֆլիսի վրայով նրան ալիւր չէին ուզում հասցրնել. ինչպէս Աղբրեջանը չէր կարողանում ստանալ գնւած ապրանքները արտասահմանից, որովհետև «ազատ վազոններ չկային» կամ Բաթումի նաւահանգիստը «նացիոնալիզացիայի» էր ենթարկւած Զխիկուլուիկիների և Դէորգաձէների կողմից:

Տնտեսական ամբողջութեան հետ, և հենց տնտեսական ամբողջութիւնից բխելով, Անդրկովկասը ներկայանում է նաև իր բնադաջական միութիւն, անբաժանելի միաւոր:

Զէնքով թէ «խաղաղ» կոնֆերենցիաներում մենչևիկներին, զաշնակներին, մուսուաթներին նոյնիսկ անգլո-ֆրանսիական ճարպիկ դիպլոմատների բարձր հովանու և փափուցների տակ չյաջողւեց լուծել քաղաքական թէկուզ մի հատիկ վէճ, սահմանադժային ամենահասարակ տարաձայնութիւն. նոյնիսկ անվիճելի խնդիրները (Զալալ-Օղլին կամ Դսեղը «Հայաստան» է, թէ «Վրաստան») վիճելի էին դառնում, հենց որ մանրապետութիւնները սկսում էին իրար հետ զրուցել, հենց որ խնդիրները դրւում էին աղղային մակարդակի վրայ, հարցերին մօտենում էին մանրբուրժուական-մեչչանական իդէոլոգիայի մասշտաբով:

Նւ պէտք է նկատենք այստեղ, որ խնդիրների անլուծելիութիւնը, կարծիքների անհասկացողութիւնը հետևանք չէին սոսկ բարի ցանկութեան պակասութեան: Նոյնիսկ մենք կոմմունիստներս, որ լցւած ենք ամենաբարի ցանկութիւններով դարձեալ չենք կտրող լուծել Ղարաբաղի կամ Զանգեզուրի, Օսեթիայի կամ Աջարիայի, Լոռայի կամ Ախալքալաքի, Աբխազիայի կամ Նախիջևանի, Նուխայ շրջանի կամ Աղբաբայի, Զանգիբասարի խնդիրները, եթէ տաաջնորդող գիծը, ելակէտը, ու-

դեցողքը բոլոր երկրներին և բոլոր լեզուներով խօսող շահագործ-
ւածներին շահերը չեն լինի, եթէ մենք չզեկավարենք դասա-
կարգային աշխարհաշայեացքից բղխող շահերով, պրոլետարա-
կան մտածելակերպով, Անդրկովկասի բանւորութեան ամբողջու-
թեան շահերով:

Մենչեկներն ուզում էին ստեղծել «մեծ» Վրաստան. ինչ
փոյթ, թէ Աբխազիան, Օսեթիան, Աջարիան, Լոռին այլ կերպ
էին մտածում...

Դաշնակցականներն ուզում էին նոյնպէս «մեծ և միացեալ»
Հայաստան, ուրեմն Զանգիբրասարը, Աղբարան, Նախիջևանը սրի
պէտք էր քաշել...

Մուսաւաթը արիւնին արիւնով էր պատասխանում և իր
հերթին մաքրում էր Ղարաբաղը, պաշարում Զանգեզուրը, սրի
անցնում Արեւը...

Ահա այսպիսի այլանդակ կերպարանք էր ընդունել Անդր-
կովկասի հասարակական կեանքը և ազգադաւ ու արիւնոտ խնդիր-
ները կլանում էին ժողովրդական մասսաների յեղափոխական
էներգիան և ստեղծագործական հանճարը: Բայց կոմունիստա-
կան կուսակցութիւնը, Անդրկովկասի Խորհրդային իշխանու-
թիւնը այլ կերպ, ի՞ր կերպ կը մօտենայ այդ ցաւոտ խնդրին և
կը լուծի մենչեկներին, դաշնակների ու մուսաւաթների չլուծած,
նրանց տեսակէտով «անլուծելի» այդ կարևոր, հրատապ խնդիրը:

II

Անդրկովկասը կատարելապէս անկախ, անջատ լինել չի կա-
րող. առաւել ևս անկախ ու անջատ չեն կարող լինել Աղբրեջանը,
Հայաստանը, Վրաստանը դատ-դատ վերցրած այն մտքով, ինչ
մտքով որ ուզում են հասկանալ անկախութիւնը պրոլետարիատի
հակառակորդները: Անդրկովկասը պէտք է լինի կամ Անտանտի
հետ, ինչպէս որ էր մենչեկ-դաշնակ-մուսաւաթի օրօք, կամ յե-
ղափոխական Ռուսաստանի հետ, ինչպէս որ էր յեղափոխութեան
առաջին օրերին և է նորից:

Եւ այդ բանը մեզանից չի կախած, այլ կապիտալիստա-
կան աշխարհի իրերի դասաւորումից, Ժողովանիւ-ձատիսով-Ու-

սուրբէզոյ՝ սոսկ կամակատարներ էին եւրոպական իմպերիալիստները: Եւրոպայի «նամեատնիկները» (Հասկել և ուրիշները) կառավարում էին մեր երկիրը: Մենշևիկեան Վրաստանի, ինչպէս նաև զաշնակցական Հայաստանի զինւորական ծրագրներն ընդգէմ Խորհրդային Ռուսաստանի մշակում էին Զրանսիայի և Անգլիայի զենեւրայները. զենեւրայ Կլինիտաձէն գործում էր (սա պատմական փաստ է) ֆրանսիացի զինւորականների ուղղակի ցուցումներով:

Այդպէս է նաև՝ Կովկասը շատ ու շատ կողմերով յիշեցնող՝ Բալկաններում, որը նոյնպէս բաժան-բաժան է եղած զանազան մանրապետութիւնների, որոնք՝ եւրոպական իմպերիալիստների խաղերի շնորհիւ՝ չեն կարողանում մի ընդհանուր լեզու գտնել և շարունակ իրար արինաքամ են անում,

Անգլիան ճշմարտութիւն է ամեն մի սոցիալիստի համար (ի հարկէ, եթէ նա վրացական մենշևիկի կամ «ինտերնացիոնալի հայկական հատւածի»—զաշնակի տիպի «սոցիալիստ» չէ), որ մանրապետութիւնների «անկախութիւնը» դատարկ խօսք է և նրանք իրապէս գտնուում են այս կամ այն մեծ պետութեան հանկերում, որը մղում-տանում է մանր ժողովուրդների արինաքախնջ աշխատանքը և իր կողակիների համար ցինիկաբար պատերազմի դաշտը հանում «անկախ Թագաւորութեան» անդիտակ մասսաներին զանազան կեղծ պատրուկների տակ: Եւ եւրոպական կապիտալի ոճիւրը համուում է այնպիսի շտեմուած լրբութեան: Որ միևնոյն զրպանից զինում են պատերազմող երկու կողմերին էլ, զէնքով ու զրամով օգնում թէ մէկին և թէ միւսին, որպէսզի ժողովուրդների մէջ զարաւոր թշնամութիւն և անանցանելի վիճ փորեն:

Անտանտի մի անդամը, օրինակ Անգլիան օգնում է Եունաստանին քեմալականների դէմ. միւսը՝ Զրանսիան Բուլղարիի հետ—Քեմալին՝ Եունաստանի դէմ...

Բալկանների բոլոր մանրապետութիւնների սոցիալիստական կուսակցութիւնները—Բուլղարիայի, Ռումանիայի, Սերբիայի, Եունաստանի, Չերնոգորիայի մեր ընկերները տասնեակ տարիներ պահանջում են բալկանեան ժողովրդների ֆեդերացիա: Այդ փրկարար զաղափարի սահմանափակումներն Բալկաններում եղել է մեր յայտնի ընկեր Ռակովսկին, որ Բուլղարական և Ռումանական սոցիա-

լիստակաւ կուսակցութիւններէ հիմնադիրներէց մէկն է։ Ռուսին, բոլոր, սերբ, յոյն բանւորութիւնը և աշխատաւոր գիւղացութիւնը դգուժ են, որ միակ միջոցը, ճանապարհը ազատելու և բոլորական գիշատիչներէ շահագործող օպեկայից, դա՛ բալկանեան ֆեոդերացիան է, այսինքն՝ աշխատաւորական ոյժերի համերաշխութիւնն ու համախմբումը ընդհանուր դրօշակի տակ ընդգլժ հերոսական կապիտալի։

Սակայն ֆեոդերացիան ձեռնտու չէ «ազգային» բուրժուազիային, այնտեղի մենշէրկներին ու զաշնակներին։ Նրա գլժ են՝ շատ հասկանալի պատճառով՝ նաև կապիտալիստական մեծ պետութիւնները և Բալկանների պրոլետարիատի արտաքին ու ներքին թշնամիների միացեալ ուժեղ ֆրոնտի հանդէպ տույժմ ջախջախում են այնտեղի բանւոր-գիւղացիական թոյլ, երիտասարդ ու անկազմակերպ շարքերը։ Իսկ մեր ընկերները այդ պաշտօնարի համար բանտարկուժ, աքսորուժ և ծածկուժ են որպէս «գաւաճաններ»՝ «պատրիոտ» դասակարգի կողմից։ Ընկ. Ռակովսկին չի կարող անպատիժ վերադառնալ Բալկանները։

Եւրոպական իմպերիալիզմը մենշէրկների, զաշնակցականների, մուսաւաթիստների ձեռքով ստեղծեց Անդրկովկասում երկրորդ Բալկանները։

Ժորճանիան, Թատրսովը, Սուուրբէկովը գերադասեցին ինչ խարդախների (ազգերի) լիզայի հետ, քան յեղափոխական Ռուսաստանի պրոլետարիատի։ Բայց բարեբաղդաբար Անդրկովկասը համեմատաբար արագ ու շուտ թօթափեց հակա-յեղափոխութեան լուծը և նորից մտաւ պրոլետարական Ռուսաստանի գիրկը։ Բարեբաղդաբար նոյնպէս մեր երկրի բաղդը այլևս չեն տնօրինելու Անտանտն ու նրա վառթարագոյն ազնւանները՝ մենշէրկներն ու զաշնակները, այլ ինքը աշխատաւոր ժողովուրդը, որը ոչ մի երկրում և ոչ մի պարագայում չի կարող համերաշխութեան և ոյժերի միացման կողմը չլինել։

Եւ Անդրկովկասի ֆեոդերացիան մեր երկրի յեղափոխական բանւոր-գիւղացութեան փրկաբար կոչն է, որ բղիւժ է մեր աշխատաւորութեան կենսական պահանջներից և թեկադրում է յեղափոխութեան շահերի գիտակցութիւնից։

Բնականաբար հարց է ծագում, թէ ի՞նչպէս ենք պատկերացնում մեզ այդ ֆեոդերացիան. արդեօք՝ որպէս բարի հարեա-

նական սերտ կենսակցութիւն երեք «անկախ» պետութիւններին, կամ—այսպէս անւանենք մտքի պարզութեան համար—երեք մեծ՝ վրացի, հայ, թուրք կանցոններին (մանաւանդ որ «կանտոն» տերմինը շատ զործածական էր մեզ մօտ յեղափոխութեան առաջին տարին),—թէ որպէս աւելի մօտ զործակցութիւն, եթէ կուզէք՝ ձուլումն երեքից աւելի, բազմաթիւ ազգագրական-տնտեսական կանտոններին՝ ցրւած Անդրկովկասի բոլոր անկիւններում:

Քննենք նախ առաջին հարցը:

Անդրկովկասի ժողովուրդները այնպէս են իրար մէջ խառնուած, ազգերի ու ցեղերի ազգագրական-պատմական դասաւորումը այն ուղղութեամբ է ընթացել, որ մեզ համար այսօր շատ դժուար է, եթէ չաւենք ուղղակի անկարելի, գծել ազգագրական տեսակէտից պարզ ու բոլորին բաւարարող արդար սահմանագիծ: Եթէ անգամ յաջողէր ըստ էտնոգրաֆիական յատկանիշների գծեր քաշել, յամենայն դէպս տնտեսական Ֆակտորները կը ստիպէին մեզ ամեն օր խախտել այդ արհեստական բաժանումները, որովհետեւ շատ յաճախ տարբեր ազգագրական կազմութիւն ունեցող տերրիտորիաներ ներկայանում են իւրեւ տնտեսական անբաժանելի մի ամբողջութիւն և մի մասը չի կարող ապրել առանց միւս մասի: Երկնակ մեզ թէկուզ Բաթումի շրջանը, Ղարաբաղն ու Ղազախը՝ Սիւսլում են, երբ կարծում են, թէ սարը կարող է ապրել առանց դաշտի և կամ ընդհակառակը, թէ կարելի է լեռնային Ղարաբաղը կտրել ու կարելի է տալ մի «պետութեան», իսկ գաշտայինը միւսին և այդպիսով ստեղծել նորմալ կեանք, խաղաղ կացութիւն երկրում, լուծել Ղարաբաղի խնդիրը:

Զի կարելի նոյնպէս կտրել Բաթումի շրջանը Վրաստանից, պատճառարանելով այդ միայն նրանով, թէ այնտեղ վրացի տարրը չնչին փոքրամասնութիւն է:

Կեանքը ցոյց է տալիս, որ Անդրկովկասի վրացի, հայ և թուրք մանրապետութիւնների փորձերը՝ ստեղծել երեք ամբողջացած եւ առանձնացած տերրիտորիաներ, երեք ազգային կանտոններ,—սոսկալի պարտութիւն կրեց, և նոյնիսկ զէնքը, աներևակայի ընտելութիւնն անգամ չկարողացան մաքրել հարկաւոր կըրտ տերրիտորիա վրացու, հայի, թուրքի «պետականութեան» համար:

Վրաստանում Զուղելու բանդաները հրով ու սրով «հա-
տակութեան» էին բերում օսերին ու արխաղներին, աջարացի-
ներին ու շուաւեր-խաչէնցիներին, ախալքալաքցիներին ու լո-
սեցիներին (տես նրա «Тяжелый крест» «աշխատութիւնը»)՝
գրացական միատարր կանառն ստեղծելու համար Անդրկովկա-
սում:

Հայաստանում Դրօն ու Համազասպը, Լապոնն ու Դալի-
Ղազարը և միւս շատ խմբապետներ մաքրում էին օտար տար-
րերից, սրի քաշում և թալանում Աղբարան, Զանգիրասարը,
մնչում նոյն իսկ ռուս և յոյն զիւղերը, զարնեալ նոյն միապա-
զազ տերրիտորիայի նպատակով:

Աղբրեջանում սրիկայ Սուլթանովը տաճկական ազնւոնների
հետ միասին նոյնպէս մաքրում էր հայ տարրից Աղբրեջանը,
աւերում Արէշը, Ղարաբաղը, Գանձակը, «տերրիտորիա» ստեղ-
ծելու համար:

Բայց յաջողւեց նրանցից որեւէ մէկին նպատակին հասնել:
Ոչ և հազար անգամ ոչ:

Այսօր, երբ Խորհրդային իշխանութեան շնորհիւ Անդրկով-
կասում ստեղծւել են համեմատաբար նորմալ ու խաղաղ զար-
գացման պայմաններ, երբ չեն կարող անպատիժ սրի անցնել
այս կամ այն զիւղ, ժողովուրդներ միայն այն պատճառով որ
այսինչ ազգութեան են պատկանում, որի աչքն ու յօնքը դուր
չեն գալիս մենշեիկին, դաշնակին կամ մուսաւաթին,—այսօր
Աղբրեջանից քլւած, թալանւած ու արեան մէջ կորած Նուխայ
ու Ղարաբաղի չարքաշ զիւղացիին անրոնադատելի ոյժով ձգտում
է Հայաստանից Աղբրեջան (տասնեակ վազոններով արէշցիներ
ու դարաբաղցիներ այսօր էլ կանգնած Սալ-Օղլիում—Աղբրեջանի
իշխանութիւնից սպասում են իրաւունքի վերադառնալու իրանց
ծննդավայրերը), հրաժարւում է Հայաստանի հազարաւոր զեւ-
եռաթիւն հողերից ու պետական օգնութիւնից և երազում իր քէր-
ճերի մասին...

Նոյնը և թուրք զիւղացիների մօտ է կատարւում: Աղբա-
րայից և Զանգիրասարից քլւած թուրք մասսան, որի մէջ զեւ
կենդանի է դաշնակցական խմբապետների սարսափների ուրա-
կանը, հենց որ Խորհրդային իշխանութիւն հաստատուեց Հայաս-
տանում, վերադարձաւ իր հողերը և հրաժարեց Տաճկաստանի

շատ աւելի պարարտ և տարածութեամբ գերազատ ազատ հողերից...

Վրաստանում Խորհրդային իշխանութիւնը զազարեցրեց մենշևիկեան կոլոնիզատորական քաղաքականութիւնը. արխագներն ու օսերը, աջարացիքն ու հայերը իրանց զգացին իրաւահաւասար քաղաքացիներ այն հողի, որի վրայ ապրում են. վերջ տրեց նաև Ղարաբաղի և Բորչալուի շրջանների վրացացումին (որ փոխարինել էր մոնարխիստական աբսոլսեմիսմը)։ Արխագիւան ազատ է։ միւս ազգերի ազգային-կոլոնիզատորական պէտքերին նոյնպէս բաւարարութիւն է տրուում։

Այսպէս, ուրեմն, Զուգելու, Դրօի, Սուլթանովի սուրը, ժորդանիայի, Թատիսեանի, Ուսուրըէկովի նենդ ու ազգատեաց դիւանագիրտութիւնը կատարեալ ֆիասկօ, պարտութիւն կրեց։ Մենշևիկներին, զաշնակներին և մուսաւաթիստներին չաջողեց՝ հակառակ վրացի, հայ, թուրք, արխագ, օս, աջար, ռուս, յոյն և այլ դիւզական մասսաների կամքի՝ իրանց համար առանձնացած «գիղեցիկ» անկիւն, ազգազրականապէս (մի կողմը թողնելով ինդրի տնտեսական կողմը) զծւած երեք «հայրենիք» ստեղծել անբաժանելի Անդրկովկասում։

III

Մի շրջան կամ գաւառ ուզում է լինել Վրաստան, Հայաստան կամ Ադրբեջան. ուրեմն ի՞նչ կայ աւելի հեշտ և պարզ, քան կտրել այդ գաւառն ու շրջանը և կցել այն տերրիտորիային — Վրաստանին, Հայաստանին կամ Ադրբեջանին — որին նա ուզում է պատկանած լինել։

Աւելի հեշտ ու ցանկալի լուծումն ինդրի դժար է պատկերացնել, զոնէ թէորետիկապէս։ Բայց երբ նայում ենք Անդրկովկասի քարտէզին, ուշի-ուշով քննում «ինքնորոշման» շուրջը մղւած վերջին տարիների կռիւներն ու պայքարը, դիտում ամենից աւելի վիճող ու կուռղ շրջանների աշխարհազրական դրութիւնը, ի նկատի առնում անտեսական ֆակտորները, գալիս ենք այն եզրակացութեան, որ այն՝ ինչ այլ պարագաներում բնական լուծումն է թուում, մեր իրականութեան մէջ ամենից աւելի անբնական և նոյնիսկ ոչ-ցանկալի հենց նոյն այդ բողոքող շրջանի համար։

Ղարաբաղը ուզում է «ինքնորոշուի»։ Նա ցանկանում է Հայաստանի հետ լինել։ Աղբյուրայի կամ Նախիջևանի շրջանը ցանկանում է Աղբյուրեջանի հետ կապել։ Աջարիան կամ Օսեթիան ուզում են լինել ինքնավար։ Բայց կեանքը ցոյց է տալիս, որ Ղարաբաղը տնտեսապէս շատ աւելի կապւած է Աղբյուրեջանի հետ, քան Հայաստանի և կարող է կառավարել միայն Աղբյուրեջանի վրայով։ Եր Նախիջևանը կամ Աղբարան պէտք է մնան Հայաստանի սահմաններում, եթէ մենք ուզում ենք կենսունակ մի «պետութիւն» կազմել և Աղբյուրեջանը՝ այդ շրջանները նրան անցնելու գէպքում պէտք է Հայաստանի վրայով կառավարի նրանց։ Եր Օսեթիան ինքնորոշուի պէպքում, եթէ նոյնիսկ միանան հարաւային և հիւսիսային, կովկասեան երկու Օսեթիաները և մի կուլտուրական միաւոր կազմեն, այնուամենայնիւ հարաւային Օսեթիային շատ աւելի անհրաժեշտ է տնտեսապէս, գուցէ և այլ տեսակէտներից Վրաստանը, քան «հարադատ» հիւսիսային Օսեթիան, որովհետեւ ձմեռը երկու Օսեթիաները անանցանելի կերպով իրարից կտրւած են։ Եր ինքնորոշւած Աջարիան չի կարող ապրել առանց Բաթումի, իսկ Բաթումը ամենից քիչ աջարական քաղաք է և հաւասարապէս անհրաժեշտ է ամբողջ Աղրկովկասին։

Պարզ է պատկերը։ Ղարաբաղը ուզում է «Հայաստան» լինել, բայց Աղբյուրեջանի «սահմաններում», Աղբարան կամ Նախիջևանը՝ «Աղբյուրեջան», բայց Հայաստանի «սահմաններում», Օսեթիան՝ ինքնավար Օսեթիա, բայց Վրաստանի «սահմաններում», Աջարիան ազատ, բայց ոչ-աջար Բաթումով որպէս կենտրոն։

Կան աւելի տիպիկ դրութիւններ։ Լօռին, օրինակ, չի ուզում լինել Վրաստան։ Նա մի քանի անգամ զէնքը ձեռքին բողոքել է մենչեկինների տիրապետութեան դէմ, պատերազմի առիթ դարձել։ Բայց չի ցանկացել լինել նաեւ Հայաստան։ Երբ Խորհրդային Վրաստանը փորձում է տարածել, «համաձայն պրիզովորների» — համախոսակամների, իր իշխանութիւնը Լօռւայ վրայ, ազգաբնակչութիւնը չի բնորոշում նրան, թէ և շարունակում է պնդել, թէ ինքը զերազատում է Թիֆլիսը Երևանից։

Բայց միայն Լօռին չէ այդպէս «կապրիզնի»։ Բորչալուի

թուրքական մասը, որ նոյնպէս տնտեսապէս թիֆլիսի հետ է կապւած՝ համախոտնականներ է ուղարկում Բագու և պահանջում «Աղբրեջան» լինել՝ առանց հրաժարելու Վրաստանից, թիֆլիսից, առանց որի նա տնտեսապէս կը մեռնի՝ եթէ միայն հնարաւոր լինէր «պետական» սահմանները խօտիւ գծել և չբխախտել:

Եւ երբ Ղարաբաղը կամ Աղբարան, նախիջևանը կամ Արեշը ասում են թէ՛ մենք ուզում ենք լինել Աղբրեջան կամ Հայաստան առանց Աղբրեջան ու Հայաստան լինելու. երբ Օսեթիան կամ Լօռին ուզում են լինել Օսեթիա կամ Հայաստան, բայց Վրաստանի հետ կապւած, երբ տարիների բռնութիւնները, կոտորածները, աւերը, արիւնքը, զինուորական օկուպացիան չեն կարողանում «հպատակութեան բերել» Ղարաբաղը, Աղբարան, Լօռին, Օսեթիան և այլն այս մի բան ասում է մեզ, պէտք է դռնէ աւի, և մենք պարտաւոր ենք այս պատմական փաստերից ու դասերից հանել անհրաժեշտ ու հարկաւոր եղբակացութիւններ, եթէ չենք ուզում դո՛ւ դառնալ կոյր նացիոնալիզմի և ականաջ շարունակողը լինել այն ոհրագործ ու աւանտիւրիստական քաղաքականութեան, որ հիմք դրին Անդրկովկասում մենչիկինները, զաշնակներն ու մուսաւաթիստները և որը թունաւորեց մեր երկրի բանուոր-գիւղացիական մասսաների կեանքը:

Ուրեմն ինչպէս ենք մենք պատկերացնում ֆեդերացիան Անդրկովկասի իրականութեան մէջ:

IV

Այսպէս, ուրեմն, պարզից աւելի պարզ է մի գրութիւն, որ մանրապետութիւններից ոչ մէկին չը յաջողւեց ստեղծել տերրիտորիա և անհնարին է Անդրկովկասը երեք հաւասար, թէկուզ անհաւասար՝ բայց երեք կենսունակ մասի բաժանել: Սակայն, եթէ դէն շարունակ նացիոնալիստական հաշիւները՝ մենք փորձենք Անդրկովկասը երեքի փոխարէն «բաժանել» (եթէ ինքնին արդէն բաժանւած չէ) տասն և երեք կամ թէկուզ (եթէ կարիք կայ) քսան և երեք կանգոնի, «մտցնենք» լայն կանտոնալ սխառն՝ օրինակ ըստ շէյքարականի, էտնոգրաֆիական

սկզբունքի հետ ի նկատի ունենալով անտեսական կողմը ևս,— ապա կը տեսնենք, որ ամեն տարածայնութիւն ու վէճ, բոլոր կուլտուրական-տնտեսական խնդիրները, ինչպէս նաև ազգային առողջ պահանջները, միանգամայն լուծւած կը լինին:

Արխագիան, Օսեթիան, Աջարիան, Ղարաբաղը, Արեշի շրջանը, Աղբարան, Լօռին, Ախալքալաքը, Չանգեղաւորն ու Նախիչևանը, որոնցից մի քանիսի մէջ այնքան զօրեղ են կենտրոնախոյզ ձգտումները՝ շնորհիւ մենշևիկ—դաշնակ—մուսաւաթ մանրապետութիւնների ստեղծած երեքամեայ քաղաքական ներքին զրութեան, իսկ միւսների մէջ նոյնչափ զօրեղ ձգտումն ստեղծելու մի ընդհանուր կենտրոն,—բոլորը լիովին բաւարարւած կը լինին:

Յայտնի է շէջարական սիստեմը. այնտեղ կայ քսան և երեք կանտոն, որից, եթէ յիշողութիւնը մեզ չի դաւաճանում, մէկը՝ իտալախօս է (Տեսսենի կանտոնը), հինգը՝ ֆրանսիախօս (Ժընև, Վօ, Վալէ, և այլն), մնացածը՝ գերմանախօս: Թւում է թէ, որքան հասկանալի է իտալախօս կանտոնի գոյութիւնը (նա մի հատիկ է), նոյնչափ և աւելի անհասկանալի է հինգ ֆրանսիական և տասն և հինգից աւելի գերմանախօս կանտոնների գոյութիւնը, քանի որ վերջիններս կարող էին իրանց հերթին մի գերմանախօս և մի հատ էլ ֆրանսախօս կանտոն կազմել և յետոյ էլ ֆեդերացիա: Բացի երկրի աշխարհագրական դիրքից, տնտեսական պատմական ընթացքը, կուլտուրական զարգացումը պատմականօրէն ձևել են մէկից աւելի ֆրանսախօս և գերմանախօս կանտոններ, և՛ օրինակ՝ ինդուստրիալ Ժընևը, որը հազնոր կապերով աւելի մօտ է Լոդանին, իրան շատ աւելի կապւած է համարում գերմանախօս և ոչ-պակաս ինդուստրիալ Յիւրիխի հետ, քան ֆրանսախօս՝ բայց խաշնարած Վալէի կանտոնին:

Նոյնպիսի բազմականտոնալ սիստեմ ընդունելով մեր երկրի համար, տնտեսական-ազգագրական տասններեք կամ քսաններեք կանտոններ ստեղծելով (աւելի ճիշտ կը լինէր ասել՝ արդէն բնականաբար գոյութիւն ունեցող կանտոնները ձևակերպելով), Անդրկովկասը կը ծածկէր «խնդրորոշած» միաւորներով, ներքին լայն ինքնավարութիւն վայելող շրջաններով,

որոնք բոլորն էլ կապած կըլինէին Անդրկովկասի ընդհանուր կենտրոնի հետ:

Այն ժամանակ ի հարկէ այլևս Ազրբայի և Ղարաբաղի, Նախիջևանի և Աջարիայի, Օսեթիայի և Լոռայ և այլն «վիճելի» ու «անլուծելի» խնդիրներ չեն կարող լինել: Սակայն կարող է պատահել ուրեմն, որ հայաբնակ կամ թուրքաբնակ, կամ վրացաբնակ միատարր տերրիտորիայի վրայ՝ փոխանակ մի կանտոնի՝ լինին մի քանի կանտոններ:

Ի՞նչ ֆեաա. թող մի կողմից լինին մի քանի հայկական կանտոններ, մի քանի վրացական, — աւելի կամ պակաս թուրքական, միւս կողմից միայն մի կանտոն՝ օրինակ օսական, մի կանտոն աջարական և այլն:

Մեզ կարող են առարկել, թէ կանտոնալ ցանցը ջլատելու է մի ժողովրդի կուլտուրական կենանքի թափը, ոյժը: Սխալ առարկութիւն: Ընդհակառակը՝ բազմականտոնալ սխառմը միջոց է տալիս մի երկրի, մի ժողովրդի բոլոր բաղկացուցիչ մասերին հակառակ սահմանագծային զիզգագների, «աներեւակայելութիւնների»՝ մերկացնել ընդունակութիւնների և էներգիայի մաքսիմումը: Ռոմանական (ֆրանսիական) Շւէյցարիան բաժանւած լինելով բազմաթիւ կանտոնների, այնուամենայնիւ իրան կուլտուրական տեսակէտից մի ամբողջութիւն է զգում և ամբողջացած սերտ գործակցութիւն կայ: Նոյնը և դերմանական Շւէյցարիայի մասին կարելի է ասել: Ուրիշ կերպ չի էլ կարող լինել նաև մեզ մօտ և մեր երկրի ժողովուրդների կուլտուրան բնաւ չի տուժի բազմականտոնալ սխառմից *):

*) Իսկ «հայկական դատը», — կառարկեն մեզ մեր նացիոնալիստները, և զուցէ ոչ միայն նացիոնալիստները: Այդ հարցին մենք որոշ պատասխանում ենք. — ինչպէս էլ վերջանալու լինի այն «բրեւարը», որ փաթաթեցին հայ ժողովրդի վզով դաժան պայմանները և զաշնակների քաղաքականութիւնը, — բաւարարւի մեր ժողովուրդը ներկայ տարածութեամբ, թէ՛ ստանայ նոր հողեր, — մեզ համար մի բան պարզ է. — ամեն պարագայում մենք Յեղափոխական Ռուսաստանի հետ ենք և Անդրկովկասի միջոցով ամուր կապում ենք ռուսական բանւոր-գիւղացութեան հետ: Բայց այս միջանկեալ:

Մեր ընդհանուր կուսակցական գերագոյն մարմին—ընդհանուր կենտրոնի համար ևս Անդրկովկասը մի անբաժանելի ամբողջութիւն է։ Ոչ, աւելին։

Ռուսաստանի Կոմմունիստական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի համար ոչ թէ միայն Անդրկովկասը, այլև ամբողջ Կովկասը (բացի նրա Կուրանո-Չերնոմորեան և Ստաւրոպոլ-նոր Քերեքի շրջանից) իրաւամբ ներկայանում է քաղաքական-տնտեսական մի միասնի և Դադաստանի, Լեռնականների, Աղդրեջանի, Վրաստանի, Հայաստանի հանրապետութիւնները, ենթարկելու են, — թող լինի այդ կուսակցական տեսակէտից՝ բայց մենք գիտենք մեր կուսակցութեան գերընդորդային շինարարութեան մէջ, — մի ընդհանուր կենտրոնի, այն է Կաւքազին (Ռուսաստանի Կոմմունիստական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի Կովկասեան Բիւրօն)։

Ահա մեր կենտրոնի այդ որոշումը, որ առաջ ենք բերում Կրասնոգորի (Նախկին Եկատերինոգորի) «Կարմիր Ատոդ» թերթից (ապրիլի 15—1921 № 73/35)։

«Ի տեղեկութիւն Դոնի և Կովկասի կուսակցական կազմակերպութիւններին.

«Համաձայն Ռուս. Կոմ. Կուս. Կենտր. Կոմիտէի Կազմակերպիչ Բիւրօի նիստի № 3, սոյն թւի մարտի 31-ի որոշմանապրօթեան՝ Ռուս. Կոմ. Կուս. Կենտր. Կոմիտէի Կովկասեան Բիւրօն բաժանուում է երկու բիւրօի — Ռուս. Կոմ. Կուս. Կենտր. Կոմիտէի Հարաւ-Արեւելեան Բիւրօ և Ռ. Կ. Կ. Կենտր. Կոմիտէի Կովկասեան Բիւրօ։

«Հարաւ-Արեւելեան Բիւրօի իրաւասութեան ենթակայ են Դոնի, Կուրանո-Չերնոմորեան շրջանի և Ստաւրապոլի (նոր) Քերեքի նահանգների կազմակերպութիւնները. Կովկասեան Բիւրօն զեկամարում է Վրաստանի, Հայաստանի, Աղդրեջանի, Դադաստանի, Լեռնականների հանրապետութեան և Նախիջևանի կազմակերպութիւնները»։

Այսպէս ուրեմն, կտրելով Կովկասի «վարչութիւնից» այն մասերը, որոնք միշտ էլ ձգակ էին Ռուսաստանին և իսկապէս ամեն կերպ աւելի մօտ են եղել Ռուսաստանին՝ քան Թիֆլիսին, մեր

A II
8/169

Կենար. Կոմիտեն ի մի է խմբում Կովկասի (անդր թէ այսր) այն մասերը, որոնց բաղդը տնտեսապէս և պատմականապէս շաղկապւած են, իրար լրացնում են:

Նւ. Հիւսիսային Կովկասի մեզ անհրաժեշտ, միմեանց լրացնող մասերի միացումը չի թուլացնում մեր թեղիսը բաղմականաւորն Անդրկովկասի կամ Կովկասի մասին, որովհետեւ եօթանասուն հազարանոց Ինդուշեթիայի, աւելի կամ պակաս թիւ Բալկաններէ, կրկնապատիկ թիւ Չեչեններէ, աւել կամ պակաս թիւ լեռնական բազմաթիւ ցեղերի, — որոնցից իւրաքանչիւրի մէջ չափազանց զարգացած են ինքնավարութեան զգացմունքները և իրար մէջ նոյնչափ անհաշտ են ապրում, իրար նոյնչափ չեն ուզում «հնազանդել» ինչպէս և «օտար» տարրին, — Հիւսիսային Կովկասի այդ ցեղերի տերրիտորիաներն իսկապէս չափաւորածեւած մի.մի կամ մի քանի փոքրիկ կանտոններ են և մենք միայն պէտք է «սրբազործենք» այն, ինչ արդէն գոյութիւն ունի կամ որին ձգտում են իրականութեան մէջ:

VI

Մենք ընդհանուր և թռուցիկ կերպով ուրազեցինք մի կողմից այն պատկերը, որ ժառանգութիւն է մնացել մեզ «անկախ» մանրապետութիւններից, միւս կողմից ներկայացրինք այն լուծումը, որ բղխում է իրական կեանքից և թելադրում աշխատանքական մասսաների ու յեղափոխութեան շահերով:

Դժուար գործ է թօթափել նախապաշարութիւնները, արհամարհել նացիոնալիստական թոյնը, որ զժրախտաբար ուտում է նոյնիսկ մեզնից շատերին, ցոյց տալ յեղափոխական մտքի կորով ու հարկաւոր վճռականութիւն, երբ ուզում ես լուծել որեւէ կարևոր խնդիր: Հարկաւոր է նոյնպէս գիտենալ արհամարհել բանւոր դասակարգի և գիւղական չքաւորութեան սխերիմ թշնամիների—մենչեկների, զաշնակների, մուսաւաթիստների և աւելի զգուշ թուրքաշահացիոնալիստ թափթփուկների «աղմուկն» ու «բողոքը»:

Մեր գլխի մէջ պէտք է լաւ մեխներ բնկ. Ստալինի խօսքերը, թէ՛

«Ռուսաստանից անջատելու, բաժանելու նպատակները

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒՆԵՐԸ

Мусей Революции

պէտք է մերժել ոչ միայն նրա համար, որ նա հակասում է կենտրոնի և ծայրամասերի միջև ստեղծւելիք միութեան, այլև նախևառաջ այն պատճառով որ նա հիմնաւորապէս հակասում է ինչպէս կենտրոնի, նոյնպէս և ծայրամասերի ժողովրդական շահերին^{*)}։

Եւ եթէ մենք միանգամ արդէն պարզ դնենք այս խնդիրը, թէ մեր երկիրը արդէն ձևած ու չափւած երեք մանրապետութիւն չէ, մանաւանդ «անկախ» չէ, այլ յեղափոխական Ռուսաստանի բաղկացուցիչ անբաժան մի մասը, ընդհանուր ֆեդերացիայի ֆեդերատիւ մասը, ապա մի կողմից մենք կովկասի բաղմալեղու ժողովուրդների համար բնական փոխ-յարարերութիւններ կը ստեղծենք, միւս կողմից մեր և յեղափոխական Ռուսաստանի փոխ-յարարերութեան պատկերը կը պարզենք ժողովրդական մասսաներին։

Իսկ մեր ժողովրդական մասսաներն ուղում են ամեն զնով և ինչ զնով ուղում է լինի, քնալ Ռուսաստանի յեղափոխական քանուրդիւղացութեան հետ։

Մ. Սարգիսն

^{*)} Տես Ստալին «Պրկրդային Ռուսաստանի արգաւային քաղաքականութիւնը», երես 2 և 3։

ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՈՐ

Երէկ—մեծ կեղծիքի օրն էր: Նրա իշխանութեան վերջին օրը: Հնուց թելը-թելի հտկից, որպէս սարդեր, մարդիկ խնամքով մանուած էին զգոյշ մեշշանական կեանքի ամուր ստախը, աւելի ու աւելի ծծւելով ստութեամբ և ազանութեամբ: Աստասան շշմարտութիւն էր համարուած ցինիկ սուտը, թէ մարդը պէտք է կերակրուի մերձաւորի արիւն-քրտինքով, իսկ արտադրութեան գործիքներն ու բնութեան հետ կուսկու զէնքերը—պէտք է մարդուն ճնշելու գործիք ծառայեն:

Եւ ահա երէկ այդ ճանապարհով հասանք մինչև համաշխարհային պատերազմի յիմարութեան. նրա կօշմարային արշալոյսը միանգամից լուսաւորեց հին, անառակ ստութեան ամբողջ աշխարհակ մերկութիւնը, և մենք տեսնում ենք, որ հին աշխարհը սասանւում է հիմնաւորապէս, նա պայթել է, նրա խաւար զաղանիքները մերկացած են, և այսօր նոյնիսկ կոյրերը լուսաւորւած տեսնում են անցեալի բոլոր աշխարհակութիւնը:

Այսօր—հատուցման սոսկալի օրն է այն ստութեան համար, որ թագաւորում էր երէկ:

Ժողովրդի համբերութեան բռնկման ուժով Զախջախւած է փտած կեանքը և նրան ալեւ անկարելի է վերականգնել հին ձևերի մէջ:

Արդեօք բոլոր հինը սպանւած է: Ոչ, նա կը սպանի վաղը:

Այսօր շատ բան սոսկալի է. բայց բոլորը բնական է ու հասկանալի: Միթէ բնական չէ, որ մարդիկ՝ վաբաւած իշխանութեան ուժեղ թոյներով—ալկոհոլիզմով և սիգիլիստով—չեն կարող մեծաւորի լինել: Միթէ բնական չէ, որ մարդիկ զոգանում են, երբ զոգութիւնը երէկւայ օրւան հիմնական օրէնքն էր: Բնական է տասնեակ, հարիւրաւոր և հազարաւոր մարդկանց սպանելը այն

բանից յետոյ, երբ չորս տարի շարունակ մենք վարժեցրինք նրանց միլիոններով սպանելու երէկւայ ցանաժը չէր կարող այսօր չընելու. դաժան է ընթացիկ օրը, բայց դաժանութիւնը նրա ծնունդը չէ: Չարիքը մարդկանց ուժերով է ստեղծուում. ոչինչ չի ստեղծուում մեզնից անկախ: Անցեալի փրատակների միջից պարզ երևում է այն ամենը՝ ինչով որ նա կապւած ու ձուլւած էր, և այն ամենը՝ ինչ ծածկւած էր ճնշւած մարդկանց հոգիներում—այսօր նրանց զրգոում է ճնշելու: Պատմութեան հայելու առաջ մարդը կանգնած է մերկ՝ որպէս դադան, վառւած ուշացած, անհարկաւոր վրէժի կրակով: Շատ վատ բան կարելի է ասել մարդու մասին այսօր:

Բայց չպէտք է ժողանալ, որ շատ է պայծառ օրը, և նրա համար են այդքան խիտ սուերները. չպէտք է ժողանալ, որ այսօր թողի, ցեխի, փման քասօի մէջ արդէն սկսել է անցեալի ամուր, երկաթի ցանցերից մարդկանց ազատագրման մեծ աշխատանքը, սոսկալի ու ծանր աշխատանք, ինչպէս երկունքի տանջանքները. պէտք է զգալ, որ երէկւայ շարիքը՝ երէկւայ օրւան մարդկանց հետ միասին՝ տարւում է իր վերջին ժամերը:

Այնպէս պատահեց, որ ժողովրդների առջևից գնում են դէպի վճռական կոխը արդարութեան յաղթանակի համար՝ ամենից աւելի անփորձ ու թոյլ մարտիկները—սուս մարդիկ, տնտեսապէս և կուլտուրապէս յետամնաց երկրի մարդիկ, իրանց անցեալով ուրիշներից աւելի տանջւած մարդիկ: Դեռ երէկ ամբողջ աշխարհը նրանց համարում էր կիսավայրենի. իսկ այսօր—գրեթէ մեռնելով քաղցից—ոգևորւած և տղամարդու պէս, որպէս հին, սովոր մարտիկներ՝ գնում են դէպի յաղթանակ կամ մահ:

Ամեն ոք, ով անկեղծօրէն հաւատում է, որ մարդկութեան անյաղթելի ձգտումը դէպի ազատութիւն, զեղեցկութիւն, խելացի կեանքը՝ անպառաւ մի ցնորք չէ, այլ միանգամայն իրական ոյժ, միակ ընդունակ ստեղծելու կեանքի նոր ձևեր, որ այդ ոյժը խակապէս շարժին է, որով կարելի է յեղաշրջել աշխարհը,—ամեն մի ազնիւ մարդ պէտք է խոստովանի համաշխարհային արժէքը այն գործերի, որոնք կատարւում են Ռուսաստանի ամենից ազնիւ յեղափոխականների կողմից:

Այն, ինչ այժմ կատարւում է Ռուսաստանում, պէտք է հասկացնի որպէս հակայական փորձ՝ կեանք ներշնչելու, գործի

վերածելու այն մեծ գաղափարները և խօսքերը, որոնք ստեղծ-
ւած են, աւելած են մարդկութեան ուսուցիչների, Եւրոպայի
խմաստումների կողմից: Երէկ Եւրոպայի սոցիալիստական միտքը
ոուս ժողովրդին սովորեցնում էր մտածել. այսօր ոուս բանւորը
տքնում է եւրոպական մտքի յողթանակի համար:

Եւ եթէ ազնիւ ոուս յեղափոխականները,—սակաւաթիւ,
չբխապատւած թշնամիներով, սովից տանջւած—կը պարտեն,
ապա այդ սոսկալի դժբախտութեան հետեանքները դաժան կեր-
պով կը ծանրանան Եւրոպայի բոլոր յեղափոխականների, նրա
ամբողջ բանւոր դասակարգի ուսերի վրայ:

Այդ կատաստրոֆայի համար—եթէ միայն նա տեղի կու-
նենայ—ստիպւած կը լինեն վճարել իրանց արիւնով և կեանքով
նրանք բոլորը, որոնք չեն զգում, չեն հասկանում այն սոսկալի
կոխը, որ օր-օրի վրայ մղում են ոուս բանւորները:

Ազնիւ միտքը չի տատանւում, ազնիւ սիրտը օտար է զի-
ջումների գայթակղութեան, ազնիւ ձեռքը չի յոգնում աշխատե-
լուց. քանի բարախում է սիրտը, ոուս բանւորը հաւատում է,
որ նրա ոգով եղբայրները չեն թոյլ տայ խեղդելու Ռուսաստա-
նում յեղափոխութիւնը, չեն տայ յարութիւն տանելու այն ա-
մենին, ինչ մահացու կերպով վերաւորւած է և հանգչում, վե-
րանում է և կը վերանայ—եթէ մեծ խնդիրները հասկացին
Եւրոպայի յեղափոխական մտքի կողմից:

Մաքսիմ Գորկի

ԵՐՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ ԵՒ ՆՐԱ ՏԵՂԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

«Համաձայնութեան» երկրների իմպերիալիստները օգտակել են Ռուսաստանը, ձգտելով կտրել Խորհրդային հանրապետութիւնը—որպէս վարակի օջախ—կապիտալիստական աշխարհից։ Իրանց հաստատութիւնների «գեմոկրատիզմով» պարծեցող այդ մարդիկ այնքան կուրացած են Խորհրդային հանրապետութեան ատելութեամբ, որ չեն նկատում, թէ որքան զրանով իրանց ծաղրելի են դարձնում։ Մտածեցէ՛ք միայն. առաջաւոր, ամենից աւելի քաղաքակիրթ և «գեմոկրատիկ» երկրները՝ մինչև ատամները զինւած, զինւորական տեսակէտից ամբողջ աշխարհի վրայ անբաժան կերպով թագաւորող, վախում են՝ որպէս կրակից՝ զաղափառական վարակից, որ դալիս է աւերած, քաղցած, յետամնաց, նրանց ասելով նոյնիսկ կիսավայրենի երկրից։ Հենց միայն այդ հակասութիւնը արդէն բացում է բոլոր երկրներէ աշխատաւոր մասսաների աչքերը և օգնում է մերկացնել կեմանսօ, Լիոյզ Զորջ, Վիլսոն իմպերիալիստների ու սրանց կառավարութիւնների կեղծիքը։

Կապիտալիստները իրար մէջ լուծեան իսկական դաւադրութիւն են կապել, ամենից աւելի երկրիւղ կրելով ճիշտ տեղեկութիւններ տարածել Խորհրդային հանրապետութեան մասին ընդհանրապէս, նրա պաշտօնական ղոկուսմանների մասին մասնաւորապէս։ Սակայն ֆրանսիական բուրժուազիայի գլխաւոր օրդան «Ժամանակը» (Le Temps) տպագրել է տեղեկութիւն Մոսկւայում Երրորդ Կոմմունիստական Ինտերնացիոնալի հիմնաւում մասին։

Մենք մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում ֆրան-

օրական բուրժուազիայի այդ գլխաւոր օրգանին, ֆրանսիական շովինիզմի և իմպերիալիզմի այդ առաջնորդին: Մենք պատ-
րաստ ենք «Ժամանակ» թերթին ուղարկել երախտագիտութեան
ուղերձ այն բանի համար, որ նա մեզ այդքան խելացի կերպով
օգնում է:

Թէ ինչ կերպ է կազմել «Ժամանակ» թերթը իր տեղեկու-
թիւնը մեր ռազմիոյի վրայ հիմնւելով, ամենայն պարզութեամբ
մերկացնում են այն շարժառիթները, որոնցով զեկավարւել է
փողի քաակի այդ օրգանը: Նա կամեցել է ծակել Վիսոնին՝—թէ
տեսէք թէ ովքեր են նրանք, որոնց հետ դուք թոյլատրելի էք
համարում բանակցութիւնները: Փողի քաակի պատւէրով զրոգ
իմաստունները չեն նկատում, թէ ինչպէս Վիսոնին բուլեւիզմով
• երկիւղ տալը դառնում է աշխատաւոր մասսաների աչքում բոլ-
շեկիկների համար միայն ռեկլամ: Կրկին անգամ մեր խորին շը-
նորհակալութիւնը ֆրանսիական միլիտնատէրերի օրգանին:

Երբորդ Իստերնացիոնալի հիմնումը կատարւեց այնպիսի
համաշխարհային դրութեան մէջ, որ «Համաձայնութեան» իմպե-
րիալիստների կամ կապիտալիզմի ծառաների (ինչպիսիք են Շէյ-
դեմանցիները՝ Գերմանիայում, Ռէններները՝ Աւստրիայում) ոչ
մի արգելք, ոչ մի փոքրոգի ու ողորմելի ճարպիկութիւններ չեն
կարող խանգարել բանւոր դասակարգի մէջ այդ Իստերնացիոնա-
լի մասին տեղեկութիւններ տարածւելուն և ոչ էլ բանւորու-
թեան համակրութեանը այդ Իստերնացիոնալին: Այդ դրութիւնը
ստեղծել է ոչ թէ օրերով, այլ ժամերով ամենուրեք պարզ աճող
պրոլետարական յեղափոխութիւնը, ստեղծել է աշխատաւոր մաս-
սաների մէջ տիրող եռոհրպային (սովետական) շարժումը, որը
արդէն հասել է այնպիսի ոյժի, որ դարձել է իսկապէս համաե-
ւարհային:

Առաջին Իստերնացիոնալը (1864—1872), բանւորական մի-
ջադգային կազմակերպութիւնը, նախապատրաստեց պրոլետա-
րիատի յեղափոխական գրոհը կապիտալի դէմ: Երկրորդ Իստեր-
նացիոնալը (1889—1914) հիմք դրեց պրոլետարական շարժման
միջադգային կազմակերպութեան, որի աճումը գնաց աւելի լայ-
նութեան ուղղութեամբ, ինչ չէր կարող չադգել յեղափոխական
մակարդակի բարձրութեան վրայ, չուժեղացնել ժամանակաւորա-

պէս օպորտունիզմը՝ որը վերջի վերջոյ այդ Ինտերնացիոնալին պէտք է բերէր խայտառակ վախճանին, կրտսին:

Երրորդ Ինտերնացիոնալը փաստօրէն հիմնւեց 1918 թին, երբ օպորտունիզմի և սոցիալ-շովինիզմի դէմ մղուող պայքարի շատ տարիների պրոցեսը, մանաւանդ պատերազմի ընթացքում, ստեղծեց մի շարք ազդու թիւնների մէջ կոմմունիստական կուսակցութիւններ: Զեպանապէս Երրորդ Ինտերնացիոնալը հիմնւեց 1919 թ. մարտին Մոսկւայում գումարւած նրա առաջին համագումարում: Եւ այդ Ինտերնացիոնալի բնորոշ գիծը, նրա կոչումն էր իրագործել մարքսիզմի պատգամները և իրականացնել սոցիալիզմի ու բանւորական շարժման դարաւոր իդէալները, — Երրորդ Ինտերնացիոնալի այդ բնորոշ գիծը միանգամից երեւան հանեց, որ նոր, երրորդ «Բանւորական միջազգային ընկերութիւնը» որոշ չափ սկսում և արդէն ձուլել խորհրդային սոցիալիստական հանրապետութիւնների միութեան հետ:

Առաջին Ինտերնացիոնալը ստեղծեց սոցիալիզմի համար մղուող պրոլետարական միջազգային պայքարի հիմունքը:

Երկրորդ Ինտերնացիոնալը մի շարք երկրների մէջ շարժման լայն, մասսայական տարածման պայմանների նախապատրաստական շրջանն էր:

Երրորդ Ինտերնացիոնալը վերցրեց երկրորդ Ինտերնացիոնալի աշխատանքների պտուղները, դէն չպրտեց նրա օպորտունիստական, սոցիալ-շովինիստական, բուրժուական և մանրբուրժուական ազատութիւնը (свободу) և սկսեց իրականացնել պրոլետարիատի դիկտատուրան:

Կուսակցութիւնների միջազգային միութիւնը, — որ ղեկավարն է աշխարհիս ամենայնզապիտական շարժման, կապիտալի լուծը թօթափող շարժման, — այժմ ունի իր ոտքի տակ չտեսնւած ամուր հիմք՝ մի քանի խորհրդային հանրապետութիւններ, որոնք համաշխարհային մասշտաբով իրականացնում են պրոլետարիատի դիկտատուրան, նրա յաղթանակը կապիտալիզմի դէմ:

Երրորդ կոմմունիստական Ինտերնացիոնալի համաշխարհային-պատմական նշանակութիւնը նրանումն է, որ նա սկսեց կեանք տալ Մարքսի ամենամեծ լոզունգին, — մի լոզունգ, որ սոցիալիզմի և բանւորական շարժման դարաւոր զարգացման եզրակացումն էր, մի լոզունգ, որ արտայայտում է հետեւեալ հասկացողութեամբ՝ պրոլետարիատի դիկտատուրա:

Այդ հանճարեղ նախատեսութիւնը, այդ հանճարեղ թէորիան զառնում է իրականութիւն:

Այդ լատինական բառերը այժմ փոխադրած են Եւրոպայի քոլոր ժողովուրդների լեզուներով. ոչ, այդ քիչ է, աշխարհիս բոլոր լեզուներով:

Սկսել է համաշխարհային պատմութեան նոր շրջան:

Մարդկութիւնը իր վրայից ձգում է ստրկութեան վերջին ձեւը՝ կապիտալիստական կամ վարձու ստրկութիւնը:

Ազատելով ստրկութիւնից, մարդկութիւնը տալիս անգամ անցնում է իսկական ազատութեան:

Ինչպէս պատահեց, որ պրոլետարիատի զինատուրան իրականացնող, Խորհրդային հանրապետութիւն կազմակերպող առաջին երկիրը եղաւ Եւրոպայի ամենից աւելի յետաձեաց երկրներից մէկը: Մենք հազիւ թէ սխալւած լինենք, եթէ ասենք, որ յետաձեաց Ռուսաստանի գէպի զեմոկրատիզմի վերջին ձեւը, բուրժուական զեմոկրատիզմի վրայով դէպի Խորհրդային կամ պրոլետարական զեմոկրատիզմը կատարած «թռիչքը» — այս «հակասութիւնը» (բացի մեծամասնութեան վրայ արւած սոցիալիզմի զեկավարների, օպորտունիստական սովորութիւնների և ֆիլիստերական նախապաշարումների ճնշման) պատճառներից մէկն է, որ առանձնապէս դժուարացրեց կամ ուշացրեց Խորհուրդների նշանակութեան բմբռնմանը արեւմուտքում:

Ամբողջ աշխարհում բանւորական մասսաները ընազգմամբ ըմբռնեցին Խորհուրդների նշանակութիւնը, որպէս պրոլետարական կուի գէնք և պրոլետարական պետութեան ձև: Բայց օպորտունիզմով նեխւած «զեկավարները» շարունակեցին և շարունակում են ազօթել բուրժուական զեմոկրատիզմի վրա՝ անւանելով այն ընդհանրապէս «զեմոկրատիա»...

Եթէ զարմանալի է, որ պրոլետարիատի զինատուրայի իրականացումը ցոյց տւեց նախ և առաջ յետաձեաց Ռուսաստանի և բուրժուական զեմոկրատիայի վրայով նրա կատարած «թռիչքի» միջի «հակասութիւնը»: Զարմանալի կը լինէր, եթէ պատմութիւնը մեզ ընծայէր զեմոկրատիայի նոր ձևեր առանց մի շարք հակասութիւնների:

Ամեն մի մարքսիստ, նոյն իսկ ամեն մարդ, որ ծանօթ է ժամանակակից գիտութեան հետ, եթէ նրան հարց տաք՝ հաւա-

նական է արդեօք զանազան կապիտալիստական երկրների հաւասարաշափ կամ ներդաշնակ-պրոպորցիոնալ անցնումը պրոլետարիատի զինտատուրայի,—կը պատասխանի այդ հարցին անշուշտ բացասաբար: Ոչ հաւասարաշափութիւն, ոչ ներդաշնակութիւն և ոչ էլ պրոպորցիոնալութիւն կապիտալիզմի աշխարհում երբէք ոչ եղել է և ոչ էլ կը լինի:

Իւրաքանչիւր երկիր զարգացնում էր, — առանձնապէս ցայտուն կերպով՝ զարգացնում էր կապիտալիզմի և բանւորական շարժման մէկ կամ միւս կողմը կամ զիժը, կամ թէ յատկութիւնների խմբակցութիւնը: Զարգացման տոկոսը ընթանում էր անհաւասար:

Երբ Ֆրանսիան կատարում էր բուրժուական մեծ յեղափոխութիւնը՝ Եւրոպայի ամբողջ ցամաքը արթնացնելով պատմական նոր կեանքի, Անգլիան, որ այն ժամանակ կապիտալիստական տեսակէտից Ֆրանսիայից շատ աւելի զարգացած էր, պրտնում էր հակա-յեղափոխական կռաւիցիայի գլուխ:

Իսկ այդ շրջանի անգլիական շարժումը հանճարեղ կերպով նախազգացնում էր շատ բան ապագայ մարքսիզմից:

Երբ Անգլիան տալիս էր աշխարհին առաջին լայն, իսկապէս մասսայական, քաղաքականապէս ձեռնկերպւած, պրոլետարական-յեղափոխական շարժում—շարտիզմ, Եւրոպայի կոնսրիննետի վրայ տեղի ունեն մեծ մասամբ թոյլ բուրժուական յեղափոխութիւններ, իսկ Ֆրանսիայում բռնկած առաջին մեծ քաղաքացիական պատերազմը պրոլետարիատի և բուրժուազիայի միջև: Բուրժուազիան ջարդեց պրոլետարիատի զանազան ազգային բանակները զատ-զատ և տարբեր երկրներում տարբեր կերպով:

Անգլիան օրինակ տւեց մի երկրի, ուր—բայտ Էնգելսի արտայայտութեան—բուրժուազիան բուրժուացած արիստոկրատիայի հետ ստեղծել էր պրոլետարիատի ամենից աւելի բուրժուացած վերին խաւը (верхняя); Կապիտալիստական առաջաւոր երկիրը մի քանի տասնեակ տարիներով յետաձեռն հանդիսացաւ պրոլետարիատի յեղափոխական կռիւ տեսակէտից: Ֆրանսիան կարծես թէ սպառեց պրոլետարիատի ուժերը երկու հերոսական, համաշխարհային պատմական տեսակէտից շատ բան տւած 18—48 և 1871 թւականների բանւորական դասակարգի բուրժուազիայի դէմ ուղղած ապստամբութիւնների մէջ: Բանւորական շարժ-

ման Խոտերնացիոնալում հեղեմոնիան այնուհետեւ, 19-րդ դարու 70-ական թւականներէց, անցաւ Գերմանիային, երբ Գերմանիան տնտեսապէս յետ էր թէ Անգլիայից և թէ Ֆրանսիայից: Իսկ երբ Գերմանիան տնտեսապէս գերազանցեց այդ երկու երկրներին, այսինքն, 20-րդ դարու երկրորդ տասնամիակին, այն ժամանակ Գերմանիայի համաշխարհային օրինակելի մարքսիստական-բանւորական կուսակցութեան զլուխ կանգնած էին մի բուռն ամենասուտը սրիկաներ, կապիտալիստներին ծախած ամենակեղտոտ լըրեր, Շէյդեմանից և Նոսկէից սկսած մինչև Գաւիթն և Լեշինը, միապետութեան և հակայեղափոխական բուրժուազիային ծառայող այդ ամենազգուշի դահիճները բանւորներից:

Համաշխարհային պատմութիւնը անշեղ կերպով ընթանում է դէպի պրոլետարիատի գիկտատուրան, սակայն ընթանում է նոր, ոչ հարթ, ոչ-հասարակ ճանապարհներով:

Երբ Կարլ Կաուցկին զեռեւ մարքսիստ էր և ոչ թէ մարքսիզմի այն դաւաճանը—ընեպատը, ինչպիսին նա դարձաւ որպէս մարտիկ Շէյդեմանի և բուրժուական դեմոկրատիայի հետ ընդդէմ Թոր-հրդային կամ պրոլետարական դեմոկրատիայի, նա զրոււմ էր 20-րդ դարու հենց սկզբին «Ալաւեանները և յեղափոխութիւնը» յօդւածը: Այդ յօդւածում նա նկատում էր այն պատմական պայմանները, որոնք մատնանշում էին միջազգային և յեղափոխական շարժման մէջ հեղեմոնիայի անցնումը պաւեաններին:

Այդպէս էլ պատահեց, ժամանակաւորապէս,—բայ ինքեան հասկանալի է, որ միայն կարճ ժամանակով—յեղափոխական պրոլետարական Խոտերնացիոնալում հեղեմոնիան անցաւ ուսններին, ինչպէս որ 19-րդ դարու զանազան շրջաններում նա զրտնում էր անգլիացիների, ապա ֆրանսիացիների, ապա գերմանացիների ձեռքին:

Եւ շատ անգամ եւ ասիւթ ունեցել ասելու՝—առաջաւոր երկրների հետ համեմատած ուսներին հեշտ էր սկսել պրոլետարական մեծ յեղափոխութիւնը, բայց նրանց համար զժւար կը լինի ռաբուցակել այն և հասցնել վերջնական յողթանակի, սոցիալիստական հասարակութիւն կատարելապէս կազմակերպելու տեսակէտից:

Անդ համար հեշտ էր սկսել, նախ այն պատճառով, որ ցարական միապետութեան 20-րդ դարու եւրոպայի համար արտակարգ յետամնացութիւնը առաջ էր բերում մասսաների յեղափո-

խական գրոհի արտակարգ ոյժի Երկրորդ՝ Ռուսաստանի յետա-
մնացութիւնը իւրատեսակ ձեռք ձուլեց բուրժուազիայի դէմ
ուղղած պրոլետարական յեղափոխութիւնը՝ հողատէրերի դէմ
ուղղած գիւղացիական յեղափոխութեան հետ։ Մենք 1917 թ.ի
հոկտեմբերին սկսեցինք այդ բանից, և մենք այն ժամանակ
այնքան հեշտութեամբ չէինք յաղթի, եթէ մենք չսկսէինք այդ
բանով։ Մարքսը դեռ 1856 թւականին խօսելով Պրուսիայի մա-
սին, ժամանակում էր պրոլետարական յեղափոխութեան գիւղա-
ցիական պատերազմի հետ իւրատեսակ միացման հնարաւորու-
թեան վրայ։ Բոլշևիկները 1905 թ.ի սկզբից մաքառում էին
պրոլետարիատի և գիւղացութեան դիկտատուրայի զաղափարի
համար։ Երրորդ՝—1905 թւականի յեղափոխութիւնը չափազանց
շատ բան արեց բանւորների և գիւղացիների մասսաների քաղա-
քական կրթութեան համար (որպէս նրանց ուսանգարգ) ինչպէս
տրեմուտքի սոցիալիզմի «վերջին խօսքի» հետ ծանօթացնելու,
նոյնպէս և մասսաների յեղափոխական զործողութեան տեսակէտից։
Առանց 1905 թ.ի այդպիսի «բնդհանուր փորձի», 1917 թ.ի յե-
ղափոխութիւնը ինչպէս բուրժուական՝ փետրաբեան, նոյնպէս
և պրոլետարական՝ հոկտեմբերեան—անկարելի կը լինէր։ Զոր-
րորդ՝ Ռուսաստանի աշխարհագրական դիրքը թոյլ էր տալիս
նրան աւելի երկար գիմանալ, քան միւս երկրներին, կապիտա-
լիստական առաջաւոր երկրների արտաքին զերակշռութեան դէմ։
Հինգերորդ՝ պրոլետարիատի իւրատեսակ յարարերութիւնը գիւ-
ղացութեան հետ դիւրացնում էր անցնումը բուրժուական յե-
ղափոխութիւնից սոցիալիստականին, գիւրացնում էր քաղաք-
ների պրոլետարների ազդեցութիւնը կիսապրոլետարական, աշ-
խատաւորների աղքատ խաւերի վրայ գիւղերում։ Վեցերորդ՝
—գործադուլային կուի երկարատեւ շփումն և բանւորական եւ-
րոպական մասսայական շարժման փորձը դիւրացնում էին ծըն-
ւելուն—խորը և արագ կերպով լարւող յեղափոխական սխաւ-
ցիայում—պրոլետարական յեղափոխական կազմակերպութեան
այնպիսի ինքնատիւ ձևերի, որպիսին են Խորհրդները—սովեթները։

Այս թւումը, ի հարկէ, լքիւ չէ։ Սակայն սրանով առայժմ
կարելի է բաւականանալ։ Խորհրդային կամ պրոլետարական դեմո-
կրատիան ծնւեց Ռուսաստանում։ Պարիզի կոմմունայի հետ հա-
մեմատում, արւած էր երկրորդ համաշխարհային-պատմական

քայլը՝ Գրոյեստարական-գիւղացիական Թորհրդային հանրապետութիւնը եղաւ աշխարհում առաջին հաստատուն սոցիալիստական հանրապետութիւնը։ Նա այլևս չի կարող մեռնել, որպէս պետութեան նոր սիւլ։ Նա արդէն այժմ միայնակ չէ։

Սոցիալիզմի շինարարութեան աշխատանքների իրականացման, նրան իր վախճանին հասցնելու համար զեռ պահանջում է շատ և շատ բան։ Աւելի կուլտուրական երկրներին Թորհրդային հանրապետութիւնները՝ աւելի մեծ կշիռ և ազդեցութիւն ունեցող պրոլետարիատով, ունեն ըլլալով տեղային զերագանցելու Ռուսաստանին, եթէ նրանք մի անգամ արդէն կանգնեն պրոլետարիատի զիկտատուրայի հանապարհի վրայ։

Մանկացած երկրորդ Խտերնացիոնալը մեռնում է այժմ և քայքայում։ Նա փաստապէս միջազգային բուրժուազիայի ծառայի գեր է կատարում։ Դա իսկական զեղին Խտերնացիոնալ է։ Նրա խոշորագոյն գաղափարական զեկափայտները ինչպէս կաուցկին՝ փառաբանում են բուրժուական զեմոկրատիան, անւանելով այն ընդհանրապէս «զեմոկրատական» կամ ինչ աւելի յիմար ու աւելի կոպիտ է՝ «մաքուր զեմոկրատ»։

Բուրժուական զեմոկրատիան անցաւ-գնաց, ինչպէս անցաւ զնաց նաև երկրորդ Խտերնացիոնալը, որ կատարում էր պատմականապէս անհրաժեշտ, օգտաւէտ գործ, երբ հերթական հարց էր դրած այդ բուրժուական զեմոկրատիայի շրջանակում պատրաստել բանտարական մասսաները։

Ամենազեմոկրատիկ բուրժուական հանրապետութիւնը երբէք չի եղել և չէր կարող լինել այլ բան, քան մի սոսկ մեքենայ աշխատատրութիւնը կապիտալի կողմից ճնշելու, քան կապիտալի քաղաքական իշխանութեան—բուրժուական զիկտատուրայի գործիք։ Դեմոկրատական-բուրժուական հանրապետութիւնը խոստացաւ իշխանութիւնը մեծամասնութեան. յայտարարում էր այդ, բայց երբէք չկարողացաւ իրականացնել այն, քանի զոյութիւն ունէր մասնաւոր սեփականութիւնը հողի և արտադրութեան միւս միջոցների վրայ։

Բուրժուական զեմոկրատական հանրապետութեան մէջ «ապատութիւնը» իրապէս ազատութիւն է հարուսների համար։ Գրոյեստարները և աշխատաւոր զիւղացիները կարող էին և պէտք է օգտագործէին այն՝ պատրաստելու իրանց ոյժերը կապիտալի

տապալու մի համար, յաղթահարելու բուրժուական ղեմակրատիան, սակայն փաստապես կապիտալիզմի օրօք աշխատուոր մասսաները որպէս ընդհանուր օրէնք չէին կարող օգտուել ղեմակրատիայով:

Առաջին անգամը աշխարհում, Խորհրդային կամ պրոլետարական ղեմակրատիան ստեղծեց ղեմակրատիա մասսաների, աշխատաւորների, բանւորների և մանր գիւղացիների համար:

Երբէք ղեռն աշխարհումս չի եղել ազգաբնակչութեան մեծամասնութեան աշխարհի պետական իշխանութիւն այդ մեծամասնութեան իշխանութիւնը գտնի վրայ, ինչպիսին է Խորհրդային իշխանութիւնը:

Նա—այդ մեծամասնութեան իշխանութիւնը—ընկնում է շահագործւածների և նրանց նպաստողների «ազատութիւնը», քաղցի վրայ հարստանալու «ազատութիւնը», կապիտալի իշխանութիւնը վերականգնելու համար կուելու «ազատութիւնը», ընդդէմ հայրենի բանւորների և գիւղացիների՝ օտարերկրեայ բուրժուանների հետ համաձայնելու «ազատութիւնը»:

Թող կաուցիկները պաշտպանեն նման ազատութիւնը: Դրա համար պէտք է լինել մարքսիզմի դաւաճան, սոցիալիզմի դաւաճան:

Երկրորդ Խտերնացիոնալի ղեկավարների՝ Հիլֆերդինգ և կաուցիկու զաղափարական սնանկութիւնը ոչ մի բանում այնքան ցայտուն կերպով չի արտայայտուել, որպէս Խորհրդային պրոլետարական ղեմակրատիայի նշանակութիւնը, նրա կապը Փարիզի Կոմմունայի հետ, նրա պատմական տեղը, նրա անհրաժեշտութիւնը՝ որպէս պրոլետարիատի գիկատատւրայի ձեռն հասկանալու կատարեալ անընդունակութեան մէջ:

Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի «անկախների» (կարգա՝ մեշշանական, ֆիլիստերական, մանր-բուրժուական) օրդան «Ազատութիւն» (Die Freiheit) թերթի № 74-ում գետեղւած է 1919 թւի փետրւարի 11-ի կոչը՝ «Գերմանիայի յեղափոխական պրոլետարիատին»:

Այդ կոչը ստորագրւած է կուսակցութեան վարչութեան և «Ազգային ժողովի», գերմանական «հիմնադիրի» ամբողջ ֆրակցիայի կողմից:

Այդ կոչը մեղադրում է Շէյդեմաններին Խորհրդների մեկուսացնելու ձգտումի մէջ և առաջարկում է—հանաք չեն անում—հաշտեցնել Խորհուրդները հիմնադիրի հետ, տալ Խորհուրդներին

որոշ պետական իրաւունքներ, որոշ տեղ սահմանադրութեան մէջ։
Հաշտեցնել, միացնել բուրժուազիայի զիկտատուրայի հետ...
Տրքան այդ հասարակ բան է. յրպիսի հանճարեղ-ֆիլիստերական
միտք է այդ։

Ափսոս միայն, որ Ռուսաստանում կերենակու օրօք արդէն
ճաշակել են այն մենշեիկները և սոցիալիստ-յեղափոխականնե-
րը, որոնք սոցիալիստի յաւակնութիւն ունեն։

Ո՛վ չի հասկացել Մարքսին կարգալով, որ կապիտալիստ-
կան իրաւակարգում ամեն մի սուր մոմենտում, դատակարգերի
լուրջ բախման օրօք հնարաւոր է կամ բուրժուազիայի զիկտա-
տուրա, կամ պրոլետարիատի զիկտատուրա—նա ոչինչ չի հաս-
կացել Մարքսի ոչ տնտեսական, ոչ էլ քաղաքական ուսմուն-
քից։

Բայց Հիլֆերդինդի, Կուցկու և Ընկ. հանճարեղ-ֆիլիստե-
րական միտքը բուրժուական զիկտատուրայի և պրոլետարական
զիկտատուրայի խաղաղ միացման մասին պահանջում է առան-
ձին վերլուծութիւն, եթէ ցանկանք սպառել տնտեսական և քա-
ղաքական անհեթութիւնները, որոնք պարունակում են փետրարի
11-ի այդ երեւելի և կոմիկ կոչի մէջ։ Ստիպած ենք յետաձգել
այդ մինչև միւս յօդածը։

Ն. Լեճիճ

25 ապրիլի 1919 թ.

Մոսկւա։

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

I

1919 թվ. մարտի 4-ին Մոսկվայում ծնւեց Երրորդ Խտեր-նացիոնալը։ Աւելի ճիշտ կըլինէր ասել, որ մանուկը ծնւել է 1918 թվին, 1919 թվ. գարնանը նրան մկրտեցին և մուծեցին ծննական գիրքը, երբ մանուկը բաւական արդէն ամրացաւ և սկսեց ոտքի կանգնել, երբ իշխանութիւնը իր ձեռքում բռնած բոլշեկական կուսակցութիւնը 1918 թվին անւանւեց Ռուսաս-տանի Կոմմունիստական Կուսակցութիւն և երբ մի քանի ամիս յետոյ գերմանական սպարտակեանները, որոնք իրանց յետեր ունէին փառաւոր անցնալ, նոյնպէս անւանեցին Գերմանական Կոմմունիստական Կուսակցութիւն,—ամեն մի յեղափոխականի համար պարզ դարձաւ, որ ծնւեց Երրորդ Խտերնացիոնալը։ 1919 թվին մեզ միայն Յետում էր ձեակերպել կապարւածը։

Եւ որքան միամիտ, երեսայութեան շափ միամիտ են թուում մեզ այժմ երեք-չորս տարի առաջ տեղի ունեցած մեր տաք վիճարանութիւնները։ Երբ 1915 թվականի աշնանը Յիմ-մերվալդում կոմմունիստների (ցիմմերվալդական ձախ) առաջին խտերնացիոնալիստական միջուկը յայտարարում էր սոցիալ-պա-տրիտների հետ կազմակերպչական խզման, կատարեալ անջա-ման անհրաժեշտութիւնը,—այդ անսովոր յանդգնութիւն, անա-սելի հերձած էր համարւում։ Երբ ցիմմերվալդական ձախը այն ժամանակ պնդում էր, թէ ժամանակակից ամբողջ բանւորական շարժումը կըբաժանի երեք հոսանքների (սոցիալ-շովինիստների, «կենտրոնի» խմբակ և կոմմունիստների), մեզ անւանում էին գոկարինեօրներ, սեկտանտներ և ուտոպիստներ։ Այժմ անջատումը

կատարւած իրականութիւն է: Այժմ ամեն մի հասարակ բանւոր հասկանում է (այդ չի հասկանում միայն ճախկին մարդ՝ Կառլ-Կին), որ չի կարելի միացնել Լիբկնեխտին նրան սպանող Շէյդեմանի և Էքերտի հետ: «Միութեան» կուռքը ջարդւած է, ամեն մի ազնիւ սոցիալիստ հասկանում է այժմ, որ մեզ համար թանկ պիտի լինի միայն այն միութիւնը, որը ուղղւած է բուրժուազիայի կողմն անցած սոցիալ-դաւաճանների դէմ: Տարածաշնութիւնները, որոնք առաջ վճռում էին մի կուսակցութեան շրջանակներում, այժմ փողոց են հանւած և վճռում են բարբիկազների վրայ, պուշմինստների և Թնդանօթների օգնութեամբ: Այժմ մենք տեսնում ենք վերը յիշւած երեք հոսանքները գործողութեան մէջ, համաշխարհային հակաշակաւն էկրանի վրայ: Այդ երեք հոսանքների քաղաքականութիւնը այժմ անցնում է միլիտանտոր բանւորների աչքերի առաջ: Եւ աւելի ու աւելի հալւում է այն բանւորների թիւը, որոնք վստահանում են առաջին և երկրորդ հոսանքներին: Եւ աւելի ու աւելի աճում են, սոսկալի արագութեամբ, այն բանւորների անթիւ մասսաները, որոնք խմբւել են երրորդ ուղղութեան (կոմմունիստների) շուրջը, — միակ հոսանքը, որը հաւատարիմ մնաց բանւոր դասակարգին:

Առաջին հոսանքի — այսինքն բոլոր երկրների Շէյդեմանցիների դէմ մղել գաղափարական կռիւ — աւելորդ գործ է: Այստեղ մենք գործ ունենք դասակարգային գիտակից թշնամու հետ, որը «սոցիալ-դեմոկրատիայի» զրօշակի տակ տարածում է մաքուր բուրժուական գաղափարներ: Այստեղ քննադատութեան զէնքը պէտք է ամբողջ ֆրոնտի վրայ փոխել զէնքը ձեռքին շրննադատելով: Մեր լոգունգն է սպիտակ սոցիալ-դեմոկրատների վերաբերմամբ, — ասելով Լասսալի խօսքերով — «թշնամուն օձիքից և ծունկը կրծքի վրայ»...

Բայց ահա երկրորդ հոսանքը («կենտրոնը»), որի գաղափարական զեկավարը մնում է մինչև օրս Կառլ-Կին:

Այդ հոսանքի հետ դեռ ևս մղւում է գաղափարական կռիւ: Հանգուցեալ Ռուգա Լիւքսեմբուրգը արդէն 1910 թւին ասաց, որ եթէ ընկիրդիոնիզմի հետ արժէ կուել, ապա միայն նրա Կառլ-Կիական աղանդի դէմ:

Այն, ինչ ամենից աւելի ապշեցնում է մեզ մեր ամենից աւելի ուժեղ հակառակորդի — այսպէս կոչւած «կենտրոնի» դիրքի

մէջ, այդ նրա դադափարական, աներևակայիլի ոգորմելիութիւնն է։
Հեռանկարի կատարեալ բացակայութիւնը, անասելի ջրա-
լիութիւնը և հոգեկան աղքատութիւնը, անյատակ ֆիլիստերու-
թիւն, անծայր գադափարական վախկոտութիւն, — ահա այն դը-
ժերը, որոնցով բնորոշուած են կենտրոնի զիրքը։

«Կենտրոնի» կողմնակիցները շարունակուած են պնդել «ընդ-
հանրապէս դեմոկրատիայի» գադափարի վրայ, մեր ծրագրի հին
— ծրագիր-մինիմում և ծրագիր-մաքսիմումի — ստորաբաժանման
պահպանման վրայ։ Առաջին մակերևոյթային հայեացքով «կենտ-
րոնի» կողմնակիցները, թէկուզ միայն ձևականապէս, մեռած են
հաւատարիմ հին սոցիալիստական ծրագրին։ Նրանց զիրքի տակ
ծածկւած է սոցիալիզմի կատարեալ ուրացումը։

Եւ իսկապէս ենթադրեմք, որ կաուցելու և նրա աշակերտ-
ների պրոպոզիցը հիշտ է. ենթադրեմք մի բոլոր, — թէև բացարձա-
կապէս սխալ է այդ, — որ մօտիկ ապագայում ազատագրական
շարժումը Եւրոպայում սահմանափակւելու է միայն «դեմոկրա-
տիայի» շրջանակներով, այսինքն՝ բուրժուական դեմոկրատիա-
յով։ Այդ նշանակելու է, որ Եւրոպական սոցիալ-դեմոկրատիայի
ծրագրի կէսը, ծրագրի մինիմումը ստանում է իր իրականա-
ցումը։

Ինչ է թեկադրում այսպիսի դրութիւնը սոցիալիզմին հա-
ւատարիմ մնացած մարդկանց. ի հարկէ այն, որ հենց այժմ ա-
ռաջին պլանի վրայ դնել ծրագիր-մաքսիմումը, այսինքն՝ սոցիա-
լիզմի իրականացման ծրագիրը։ Եթէ բուրժուազիան այնքան
թուլացել է, որ ստիպւած է գիջել և ստիպւած է համաձայնել
«դեմոկրատիայի» իրականացման վրայ, ապա յատկապէս ներկայ
մոմենտին սոցիալիստի պարտականութիւնը կայանում է նրա-
նում, որ աւելի հեռուն դնայ և առաջ մղի այն, ինչ նրան
տարբերում է բուրժուական «դեմոկրատիայից»։

«Կենտրոնի» կողմնակիցները հակառակն են անում։ Հենց
ներկայ պատմական մոմենտում նրանք պահում են զրպանում
ծրագիր-մաքսիմումը և կուում են ոչ թէ բուրժուազիայի հետ,
այլ բանւոր գասակարգի հենց այն կողմնակիցների դէմ, որոնք
հերթական խնդրի են դարձնում անմիջական պայքարը սոցիա-
լիզմի իրականացման համար։

Ուշագրութեամբ դիտեցէք «թէորիաները», որոնք պաշտ-

պանում էին Կաուցկին և նրա բարեկամները երկրորդ Խոտերնա-
ցիոնալի բերնի տխրահոչակ կոնֆերենցիայում 1919 թվի սկզբ-
րին: Ասելի մեծ գաղափարական վախկոտութիւն անկարելի է
նայնիսկ երեակայել մեզ:

Կաուցկին և նրա բարեկամները «Չախջախում» էին կոմմու-
նիստներին, պահանջում էին բոլշեիկներին դէմ մեղադրական դա-
տալճիւ: Ենթադրեմք իսկապէս, որ բանւորները աւելի երկիւղալի
թշնամի չունեն, քան կոմմունիստները. ենթադրեմք, թէ գլխաւոր
խոչնդոտը, որը կանգնած է պրոլետարիատի առաջ սոցիալիզմի
նւսանման համար—բոլշեիկներն են. ենթադրեմք, Բայց ինչու՞նե է
կայանում պարոնայք կաուցկիստների սեփական ծրագիրը. ինչ-
պէս են նրանք պատկերացնում իրենց սոցիալիզմի իրականա-
ցումը:

Կաուցկին չի ցանկանում «սողքատութեան սոցիալիզմ»: Նա
չի ցանկանում, որ բանւոր դասակարգը իր ձեռքն առնի իշխա-
նութիւնը այն մոմենտին, երբ արտադրական ուժերը գրեթէ բո-
լոր երկրներում խախտւած են, երբ պատերազմը ամբողջ Եւրո-
պային հասցրել է չտեսնւած սովի:

Ինչ ասել կուզի, որ բանւոր դասակարգին շատ դժւար է
իրականացնել սոցիալիզմը այն պայմաններում, որպիսին ստեղ-
ծել են Եւրոպայի բուրժուազիան և նրա ծառաները՝ սոցիալ-
պատրիոտները. բայց ո՞րն է այլ հնարաւոր հանապարհը ըստ
Կաուցկու...

— Սպասել...

Բայց մինչև երբ. մինչև որ Եւրոպայի գլխաւոր երկրները
կազդուրւեն պատերազմի հետեանքներից, մինչև որ բուրժուա-
զիան կը վերականգնի տնտեսութիւնը, մինչև որ նորից կը ծաղկի
արդիւնաբերութիւնը. սակայն ո՞ւր է Կաուցկու երաշխաւորութիւ-
նը, գարանտիան, որ այդ ժամանակ բուրժուազիան մեզ չի նե-
տի նոր, աւելի արիւնահեղ սպանդանոցին: Եւ, որ գլխաւորն է,
ո՞ւր է Կաուցկու գարանտիան, որ պանդանելով մատնաւոր սեփա-
կանութիւնը, բուրժուազիան ընդունակ կը լինի վերականգնել ար-
տադրական ուժերը, որոնք վատնւած են հենց նրա կողմից այն-
քան զիշատիչ, այնքան վայրենի կերպով...

Կամ վերցրէք խորհուրդների մասին հարցը: Կարելի է ա-
տել խորհուրդները,—ինչպէս որ իսկապէս ատում են բուրժուա-

գիւան և նրանց վարձկանները, — արդարացիորէն նրանց մէջ տեսնելով կապիտալի թագաւորութեան համար լուրջ մտանդ, կարելի է վերաբերել Թորնուրդներին տաք համակրանքով, — ինչպէս որ վերաբերում է նրանց բոլոր երկրների բանւորութեան ողնիւ և մաքուր մասը: Բայց մնալ չէզոք, ոչ տաք և ոչ էլ սառը Թորնուրդների վերաբերմամբ՝ չի կարող ոչ մի քաղաքական գործիչ, որ փոքր ի շատէլ յարգում է իրան, «խուսափել» Թորնուրդներից — միանգամայն անարժան բան է: Բոլորը տեսնում են, որ Թորնուրդները աշխարհում իսկապէս է, որ տակ են միլիոնաւոր բանւորները պատերազմից յետոյ: Այստեղ միայն կարելի է լինել նրանց հետ կամ նրանց դէմ: Մինչդեռ կաուցիկական «կենտրոնը» թէ Բերնի կոնֆերենցիայում և թէ ընդհանրապէս իր ամբողջ պրոպագանդայի մէջ ձեռնում է, թէ չի նկատում Թորնուրդային իշխանութեան պրոբլեման: Լուսազոյն դէպքում «համարձակները», ինչպէս Գեյֆերդինգը և նրա բարեկամները, փորձում են օրինական ամուսնութեամբ կապել սէակցիոն բուրժուական հիմնադրի զազափարը՝ յեղափոխական պրոլետարական Թորնուրդների զազափարի հետ:

Երկրորդ Ինտերնացիոնալի Բերնի կոնֆերենցիան, որ սաւանում էր Կաուցիկու ուղին, վախկոտ կերպով խուսափեց Թորնուրդների խնդրից: Եւ զրանով նա ինքն իրան աւելց չտեսնւած զազափարական ազդասութեան վկայական...

Վերը մենք արինք ենթադրութիւն, որ յեղափոխական շարժումը Եւրոպայում կարող է սահմանափակել միայն «զեմսկրաւիայի» յաղթանակով: Մենք ասացինք, որ ռճիր կը լինէր նոյնիսկ այդ դէպքում հրաժարել ծրագիր-մաքսիմումի — այսինքն սոցիալիզմի համար անմիջական կուի խնդիրը գնելուց:

Բայց այդպիսի ենթադրութիւն միանգամայն չի համապատասխանում ժողովրդին: Այժմ արդէն միանգամայն պարզ է, որ շարժումը Եւրոպայում ընդհակառակը ընթանում է շատ աւելի արագ, քան այդ սպասում էին նոյնիսկ ամենամեծ օպորտիւնիստները Երրորդ Ինտերնացիոնալի Մոսկւայի համագումարում: Քաղաքացիական կուի հրդեհը բռնել է ամբողջ Եւրոպան:

Պատմական տեսակէտից ամբողջ Եւրոպական բուրժուական սկսում է հրաժարական տալ:

Կամուսնիզմի յաղթանակը ամբողջ Գերմանիայում միան-

զամայն անխուսափելի է: Մօտիկ ազագայում առանձին պարտութիւններ գեռ կը լինեն: Սե գոյնը շատ կարելի է այս կամ այն տեղ ժամանակաւորապէս կը յաղթի կարմիր գոյնին: Բայց Վերջնական յաղթանակը այնուամենայնիւ կը մնայ կարմիր գոյնին:

Աշխարհագրական տեսակէտից պրոլետարական յեղափոխութիւնը շարժում է արեւելքից արեւմուտք: Այժմ պրոլետարական յեղափոխութեան այդ մարշրուտը արդէն միանգամայն սրուց կերպով դնել է: Առաջին յաղթանակը կոմունիստները տարան Ռուսաստանում. դրա զլխաւոր պատճառը այն էր, որ ռուսական բուրժուազիան աւելի թոյլ էր, պակաս կազմակերպ, քան միւս երկրների նրա եղբայրակիցները: Այժմեան ռուսական հակա-յեղափոխութեան սխւն Պետր Սերգեւիչն, որ մի ժամանակ սոցիալիստ էր, իր աշխատութիւններից մէկի մէջ ասել է, թէ «որքան աւելի հեռու գէպի արեւելք, այնքան աւելի ցած է բուրժուազիան»: Մենք այժմ կարող ենք աւելացնել՝—այնքան աւելի ցած է այնքան աւելի թոյլ է բուրժուազիան: Ահա թէ ինչու համար ռուս բանւոր դասակարգին յաջողեց առաջինը իրականացնել այն խնդիրը, որի առաջ կանգնած են ամբողջ աշխարհի բանւորները:

Գերմանական և աստորիական բուրժուազիան, ինչպէս նաև քոյոր պարտւած երկրների բուրժուազիան, շնչաւազաւ է լինում մեր աչքի առջև, և իսկապէս ասած մահւան ջղաձգութիւններ է ապրում: Բայց և յաղթող երկրների բուրժուազիան, «Անտանտայի» երկրների բուրժուազիան նոյնպէս արդէն պարզօրէն զգում է, որ մօտենում է նրա բկին մահւան ոսկրոտ ձեռքը: Բուցժուական ազդեցիկ փարիզեան թերթերից մէկը մօտերս գրում էր՝—զարմանալի մարդիկ են մեր պարոն միլիտարները. նրանք բաժանում են աշխարհը, նրանք մտածում են այն մասին, որ լուս բաժանեն Բալկանեան թերակղզին, Ռուսաստանը և այլ «ազդեցութեան սփերաներ»: Բայց նրանք չեն նկատում, որ հենց իրանք արդէն շրջապատւած են բոլշեւիկ բոցավառ օղակով և որ կորցնում են իրանց սեփական երկրները:

Միանգամայն ճիշտ է!

«Համաձայնութեան» իմպերիալիստների մի մասը սուր

կերպով գգում է վտանգը: Միւս մասը իրան ներկայացնում է աւելի հաստատուն: Այստեղից է ծագում ամբողջ տարածայնութիւնը նրանց մէջ:

Ինչո՞ւ ֆրանսիական և իտալական բուրժուազիան ամենամարտականն է, ինչո՞ւ սոցիալիստական յեղափոխութիւնը ամենից աւելի հասունացել է Ֆրանսիայում և Իտալիայում: Որովհետեւ Ֆրանսիայի և Իտալիայի կապիտալիստները կորցնելու գրեթէ ոչինչ չունեն. նրանց մնում է միայն մի ելք—գործել կարուկ կերպով, պատերազմ յայտարարել Ռուսաստանին: Ներանք փորձում են Ռուսաստանի դէմ լարել Գերսանիային, մի խօսքով՝ գործել «խիբուրդիայի» օգնութեամբ:

Ինչո՞ւ Անգլիայի և Ամերիկայի իմպերիալիստները հակուում են (կամ գտնէ մի ժամանակ հակումէին) խաղաղ լուծման՝ այսպէս կոչւած՝ «սուսական» խնդրի,—որը իսկապէս միջազգային խնդիր է, կապիտալիզմի—լինել—չլինելու խնդիրն է: Որովհետեւ բուրժուազիայի գրութիւնը Անգլիայում և Ամերիկայում համեմատաբար աւելի կայուն է: Որովհետեւ պրոլետարական հոսանքի ալիքն այնտեղ գեղեսւ այն աստիճան չի ուղղել կապիտալիզմի հիմունքները, ինչպէս Ֆրանսիայում և Իտալիայում:

Ահա թէ ինչու «Համաձայնութեան» իմպերիալիստների մի մասը դեռ ևս յոյս ունի մի կերպ գոչու պրծնել նրան սպասող բախտից: Այստեղից է բղխում «չաղթող» իմպերիալիստների բանակի երկու դիժը: Նրանք բոլորը հաւատար չափով ուզում են մորթել սոցիալիստական յեղափոխութիւնը Ռուսաստանում և ընդհանրապէս Եւրոպայում: Բայց նրանց մի մասը, կարելի է ասել, թէ ուզում է և թէ վախում:

Իր օրերի վերջալոյսին բուրժուազիան, հանդիսատես լինելով իր յետադիմութեան և քայքայման, պէտք է ծնի իրատեսակ համլէտներ, լալկաններ: Եւրոպական յետադէմ բուրժուազիան ունէր իր զահիճները—Գալիֆէն և Կլեմանտոն: Նա այժմ կը ճանաչի նաև ուրիշ գէմքեր—«գեկափարներ», որոնք վստահ չեն իրանց վրայ, որոնք պատմական տեսակէտից արդէն հրաժարեցւած են: *Facies Hytrocraatica*—ահա թէ ինչ ևս ուզում ասել բուրժուազիայի նոյնիսկ ամենառաջաւոր մասի վերաբերմամբ, երբ նայում ես նրա մեռնող գէմքին...

Թէ ինչպէս կը լուծւի հղնաժամբ մօտ ապագայում—ոչ ոք չի

կարող նախատեսել: Այդ չգիտել նոյնիսկ ոչ ոք մարդկութեան բախտը անօրինող Անտանտայի «ամենազօրններից» որևէ մէկը: «Համաձայնութեան» խմբերիայիստները կը գիմեն արդեօք բաց պատերազմի Ռուսաստանի դէմ:

Յրանսիական կառավարութեան թերթ «Le Temps» (№ 21047) խաղաղութեան պահպանութեան համար խմբագրական յօդածում, մօտերս գրում էր.

«Ազգերի լիզան և բուլշեիկների կառավարութիւնը երկու հիմնարկութիւններ են, որոնք չեն կարող միասին ապրել աշխարհում: Դուք ցանկանում էք երկարատև խաղաղութիւն՝ զրաւեցէք ուրեմն Պետրոգրադը»:

Սա բաւական պերճախօս է: Կը փորձեն արդեօք մեր թշնամիները իրականացնել այդ ծրագիրը, — ներկայումս ասել անկարելի է: Պրոլետարական յեղափոխութեան բախտի տեսակէտից նշանակութիւն չունի այդ:

Կարող է պատահել, որ զուցէ Ամերիկայում կապիտալիզմը գոյութիւն ունենայ մի քանի տարի կոմունիստական եւրոպայի կողմին: Կարող է պատահել, որ զուցէ նոյնիսկ Անգլիայում կապիտալիզմը գոյութիւն ունենայ մի երկու տարի եւրոպայի ցամաքի վրայ յաղթած կոմունիզմի կողմին: Բայց երկար այդպիսի կենակցութիւն անկարելի է: Կրկնելով Յրանսիական բուրժուազիայի օրգանի խօսքերը, մենք կարող ենք ասել՝ — կապիտալիստական Ամերիկան և կոմունիստական եւրոպան միասին ապրել չեն կարող աշխարհիս վրայ՝ յամենայն զէպս փոքր ի շատէ երկար ժամանակ: Բայց որպէս անցողական շրջան հաւաքուոր է նաև այնպիսի հեռանկար, որպիսին մենք պատկերացրինք վերը...

Յամենայն զէպս վիճակը զցւած է. սկսւած է գրուր կապիտալիզմի դէմ: Եւ նա կը վերջանայ մեր կատարեալ յաղթութեամբ: Մենք արդէն լսում ենք փուլող կապիտալիստական եւրոպայի հին շէնքերի ազմուկը: Պրոլետարական յեղափոխութիւնը յաղթական կերպով կանցնի մի երկրից միւսը: Հսկայի քայլերով նա երբեմն նոյնիսկ յանկարծակի կանցնի ոչ թէ մէկ, այլ երկու և ասելի օաճմաններ: Տասնեակ միլիոն աշխատաւորներ հատուցումն են պահանջում այն ստորացումի համար, որին

նրանք ենթակայ էին խելացնոր խմբերիայիստական նպանգանոցի ամբողջ շորս տարւայ ընթացքում:

— Բանւոր դասակարգը արդէն չի կարող իշխանութիւնը վերցնել իր ձեռքը անժամանակ:

Այսպէս էր գրում զեռ տասը տարի առաջ Կառլցկին, երբ նա սոցիալիստ էր: Իսկապէս որ, — ասում ենք. բանւոր դասակարգը չի կարող այժմ յայտարարել իր զիկտատուրան չափազանց վաղ: Սոցիալիզմի համար պայմանները հասունացել են: Պրոլետարիատի զիկտատուրան գրւած է ամբողջ քաղաքակիրթ աշխարհի օրակարգում: Մեր այժմեան բոլոր անյաջողութիւնները շատ կարճ ժամանակից յետոյ, համեմատած այն մեծ յաղթանակների հետ, որոնք մենք նոյն ժամանակաշրջանում կը տանենք, մեզ կը թւան աննշան էպիզոդներ: Ձկայ աւելի հիմնաւոր չէնք, քան երբորդ Խոտերնացիոնալի չէնքը, որի հիմքը դրւեց 1919 թւականի մարտին Մոսկւայում: Երբորդ Խոտերնացիոնալի դրօշակի տակ բանւոր դասակարգը կը յաղթանակի ամբողջ աշխարհում:

Գ. Զինովիեւ

ԿԵՑՑԵ ԵՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

I

Մայիսի մէկի տօնը երկրորդ սոցիալիստական Ինտերնացիոնալի միակ փորձն էր խօսքից գործի անցնելու և խկապէս միացնել բոլոր երկրների պրոլետարներին ընդհանուր, հոյակապ և ուժեղ ցոյցի մէջ: Մեծ յաջողութիւն չի ունեցել այդ փորձը, և վերջինիս բախումը շատ բնորոշիչ նախազգուշացումն էր այն խայտառակ անանկութեան, որ կրեց երկրորդ Ինտերնացիոնալը համաշխարհային պատերազմի սկզբին: Բայց և այնպէս, շնայած այս անյաջողութեան, մայիսի մէկի տօնը ներշնչեց շահագործւածներին, ճնշւած մասսաներին կենդանի կրակի կայծ, և սերմանեց ծիլեր նոր կեանքի, որը դուրս բերեց բանւոր դասակարգը համբերութեան անյոյս խաւարից զէպի գիտակից, եռանդուն կռիւ լայն ճանապարհը:

Մայիսեան տօնի ոյժը կայանում է նրա հիմնական մտքի մէջ, միջազգային համերաշխութեան հսկայ զաղափարի մէջ, որը միացրել է համաշխարհային կապիտալի բոլոր ստրուկներին: Այդ զաղափարը—Ֆանտազիայի ստեղծած ուրական չէ. նա—ճնունդ է արիւնով և քրտինքով ծածկւած իրականութեան. նա կատարեալ հետեանքն է գոյութեան այն պայմանների, որ ստեղծել է տիրապետող կապիտալը շահագործւածներին, բոլոր երկրների ճնշւած աշխատաւորների համար. նա արդիւնքն է ընդհանուր կարիքից բխող շահերի ընդհանրութեան, որը իր ներքին պէտք է թելադրէր կամքի և գործողութեան ընդհանրութիւն:

Այսպէս ուրեմն, միջազգային եղբայրութեան զաղափարը ներկայանում է անբաժան մասը ազատագրական մեծ մտքի, որը որպէս ուղղեցոյց աստղ լուսաւորում է բոլոր երկրների ստրկացած աշխատաւոր ազգաբնակչութեան ճանապարհը: Նա ոգևոր-

բում է աշխատաւորներին պայքարելու, լինելով այն կէտ-նպատակը, զէպի որը նրանք դիմում են յամառ կերպով՝ հակառակ բոլոր դժարութիւնների, անխուսափելի կորուստների, տատանումների և սխալների:

Դանդաղ, չափազանց դանդաղ է թուում մեզ այդ շարժման երթը, մեզ՝ որ բուռն անհամբերութեամբ սպասում էինք ամբողջ մարդկութիւնը միացնող երրորդ Ինտերնացիոնալի ծնունդին:

Աւելի քան եօթանասուն տարի է անցել այն օրւանից, ինչ Կոմմունիստական Մանիֆեստը յայտարարել է բոլոր շահագործւածների միջազգային համերաշխութեան գաղափարը, մատնանշելով այն բանի վրայ, որ այդ գաղափարը պէտք է ազատագրման համար նրանց մղած կուէ գորաւոր մղիչը լինի Մանիֆեստի լողունը՝ «պրոլետարներ բոլոր երկրների, միացէք» հրդեհից սրտերը և հոգու մէջ ծնեցրեց գործելու կամքը: Բայց գործնական արտայայտութիւնը նա գտաւ միայն մօտ քսան տարի յետոյ, 1864 թւին, երբ Լոնդոնում հիմնեց Բանւորների Միջազգային Ընկերութիւնը: Այս առաջին Ինտերնացիոնալին, որի նիւթական միջոցները՝ չափազանց աննշան էին, վիճակւած էր ապրել միայն մի քանի տարի: Հերոսական կուում ընկած Պարիզի Կոմմունայից անմիջապէս յետոյ քայքայւեց նաև Բանւորների Միջազգային Ընկերութիւնը: Բայց իր կարճատև գոյութեան ընթացքում առաջին Ինտերնացիոնալը կատարեց այն, ինչ ընդմիշտ կը մնայ նրա անմահ գործը մարդկութեան պատմութեան մէջ՝ նա միջազգային համերաշխութեան գաղափարը ընդհանուր սեփականութիւն դարձրեց այն բոլոր բանւորական կազմակերպութիւնների համար, որոնք իրանց նպատակ են դարձնում հանել պրոլետարիատը ստրկութեան խաւարից զէպի ազատութեան լոյսը: Առաջին Ինտերնացիոնալի կազմակերպչական ձևը չափազանց նեղ էր շարունակ ծաւալող այն կեանքի համար, որ նա առաջ բերեց բոլոր երկրներում, և ահա—տարտաքին ձևը փչրւեց, բայց նրա մէջ պարունակւող շարժման կենդանի հոգին շարունակեց ապրել և զարգանալ:

Եւ նորից անցաւ մօտ քսան տարի, երբ վերջապէս միջազգային համերաշխութեան այդ գաղափարը, որ առաջին Ինտերնացիոնալի հոգին էր, կրկին մարմնացաւ բոլոր մարտնչող բանւորների միութեան նոր ձևի, մէջ, 1889 թւականին Փարիզում,

միջազգային սոցիալիստական և բանւորական կոնգրեսում և հիմք դրեց երկրորդ Ինտերնացիոնալին: Հակառակ առաջին Ինտերնացիոնալին, նա չէր ներկայացնում թոյլ, փոքրիկ, միայն նոր ծնած կադմակերպութիւնների միութիւն. նրա մէջ մտել էին կենսունակ և երիտասարդ ողնորութեամբ լցած զանազան երկրների մասսայական սոցիալիստական կուսակցութիւններ և պրոֆեսիոնալ բանւորական միութիւններ: Թւում էր, թէ այս նոր Ինտերնացիոնալը կը միացնի բոլոր երկրների պրոլետարներին մի աշայղթելի բանակի մէջ, որ նա կտայ բոլոր երկրների բանւորական շարժման միևնոյն ուղղութիւնը՝ համապատասխան միջազգային սոցիալիզմի հիմնական սկզբունքներին և կը մատնանշի բոլորին միևնոյն ընդհանուր նպատակի վրայ: Եւ իսկապէս, մի շարք միջազգային կոնգրեսներ՝ բովանդակալից, սպառող վիճաբանութիւնների, վառ և ներշնչած բանաձևերի, հակայական ու փառաւոր ցոյցերի միջոցով արտաքին որոշ միաբանութիւն էին մտցնում բոլոր երկրների սոցիալիստների աշխատանքների մէջ: Թւում էր անկասկած, որ երկրորդ Ինտերնացիոնալի ամբարած նիւթական և հողերո շէնքի հակայական պաշարը պէտք է վերածւէր սպառնալի կուռղ ցոյցի ընդդէմ կապիտալիզմի:

Սակայն երկրորդ Ինտերնացիոնալը բաւականացաւ զեղեցիկ վճիռներ մշակող գործարանի դերով, իսկ իրականացնելու համար այդ վճիռները զանազան երկրների պրոլետարիատը չունէր ոչ ընդհանուր կամք և ոչ էլ ընդհանուր կուռղ մարմին: Հակառակ այն ամբողջ փայլին, որով շրջապատւած էր երկրորդ Ինտերնացիոնալը, նա անկարող եղաւ իրականացնել օրէնսդրական ճանապարհով նոյնիսկ այնպիսի հասունացած անտեսական ռեֆորմ, որպիսին է ութամեայ բանւորական օրը:

II

Եւ թէև նրա ամբողջ գործունէութիւնը հիմնւած էր պարլամենտարիզմի և բուրժուական դեմոկրատիզմի խոշորագոյն նշանակութեան վրայ, նա ոչ մի երկրում չկարողացաւ իրականացնել կատարեալ դեմոկրատական քաղաքական իրաւակարգ: Իսկ երբ հասաւ լուրջ փորձաքարի մոմենտը, մի մոմենտ՝ որ

պահանջում էր նրա ոյժի և ազգեցութեան ապացոյցներ, երկրորդ Ինտերնացիոնալը կրնց ամենախայտառակ պարտութիւն: Երր բռնկեց համաշխարհային պատերազմը, նրա զեկավարները չհամարձակեցին իշխանութեամբ արբեցած ոսկու ինտերնացիոնալի իմպերիալիստների դէմ կուռ հանել կարմիր ինտերնացիոնալը, որ սգեւրւած էր ազատագրման գաղափարով և պատրաստ էր տալ վճռական պրոլետարական կռիւ:

Երկրորդ Ինտերնացիոնալը չէր կարող նոյն իսկ կրկնել Ֆրանցիսկ առաջինի խօսքերը՝ «ամեն ինչ կորած է, բացի պատիւից», որովհետեւ ամենից առաջ նա կորցրեց պատիւը, պարտելով առանց որեւէ կուռի: Նա ընկաւ ծածկւած խայտառակութեամբ հենց այն կուռ դաշտում, որի վրայ գերմանական և ֆրանսիական պրոլետարները կոտորում էին իրար, Գերմանական Սոցիալ-դեմոկրատիայի և Ֆրանսիայի Միացեալ Սոցիալիստական կուսակցութիւնների օրհնութեամբ: Երկրորդ Ինտերնացիոնալի փառահեղ արտաքինի տակ, նրա փայլուն տարազի տակ ծածկւած էր փոքրօքի և թուլամորթ հոգի, որը անձնատուր լինելով աննշան ռեֆորմներին, մոռանում էր ձգտել սոցիալիզմի իսկական զանձին, մոռանում էր նոյնպէս, որ դանդաղ սոցիալական էվոլյուցիային անպայման պէտք է յաջորդէ յեղափոխական բուռն զարգացման շրջան:

Նոյն կարճատես վախկոտութիւնն էր երևում նաև: Երր դերադասում էր բուրժուական հասարակութեան հետ մանր կոմպրոմիսներ կապելը մեծ նպատակների համար մղելիք բաց պայքարին:

Երկրորդ Ինտերնացիոնալի ամբողջ ոգին և ուղղութիւնը բնորոշում էր իր էական գծերով, նրա բնարդարիւնով՝ Գերմանական Սոցիալ-դեմոկրատիայով, Գերմանական Սոցիալ-դեմոկրատիայի, որ սոցիալիստական ֆրազներով թաղցնում էր իր օպորտունիստական քաղաքականութիւնը, — երկրորդ Ինտերնացիոնալի մահւան գլխաւոր պատճառն եղաւ: Այդ մահւան մասին ոչ մի կասկած չի կարող լինել և գալւանիզացիայի ոչ մի փորձ, նման Ստոկհոլմում և Բեռնում կատարւածների, այլևս չեն կարող կենդանացնել նրա դիակը: Համաշխարհային պրոլետարիատի միջազգային համերաշխութեան գաղափարը, օակայն, չմեռաւ երկրորդ Ինտերնացիոնալի հետ միասին եղբայրական կուռ հր-

դեհի մէջ, նա շարունակում էր ապրել և իր գոյութեան մասին պնդում, թէ այն մերժման մէջ, որով պատասխանեցին սոցիալ-դեմոկրատական Ֆրակցիաները ռուսական Դումայում, Սերբական սկուպչինայում և աւելի ուշ խաղական պարլամենտում պահանջւած զինւորական կրեդիտներին, և թէ այն անվհատ ազիտացիայի մէջ, որ մղեց խաղաղութեան համար Անգլիայի Անկախ Բանւորական կուսակցութիւնը, և այն ժամանակ երբ գերմանական, ֆրանսիական, անգլիական և աւստրիական սոցիալ-դեմոկրատները պատրիտախօսական զինւորական երգերը փորձում էին խեղտել վիրաւորներին բողոքող հառաջանքը և վերջին հաւաքը մեռնող պլուրատներին, համերաշխութեան զաղափարը նորից բարձրացաւ իր ամբողջ հասակով, մասնաճիւղով աշխատանքի ժողովուրդներին ազատագրութեան ճանապարհը: Նա բարձրացաւ արեան և ցիւխի միջից, արտայայտելով մաշւած զէմքերի վրայ տանջանք: Բայց միաժամանակ նրան շրջապատում էր երբէք չմարած կեանքի պայծառ փայլը: 1915 թ.ի կանանց Միջազգային Սոցիալիստական կոնֆերենցիային նա օգնեց՝ սոցիալիզմի սկզբունքները չմոռացածներին, բոլոր երկրների գիտակից պրոլետարուհիներին պանել օւղիղ ճանապարհը, նա ներշնչեց նրանց մարտական լողունները: «Բաւաճան են խօսքեր, ժամանակ է գործի անցնել»՝ «Թող լինի կամքի կատարեալ միութիւն, գործողութեան կատարեալ միութիւն»:

Ինչպէս առաւօտեան արշալոյսը աւետում է ցերեկւայ անխուսափելիութիւնը, նոյնպէս էլ Բերնի կոնֆերենցիան աւետողն էր Երբորդ Սոցիալիստական Ինտերնացիոնալի: Նրա ծնունդը արձանագրւած է Ցիմմերվալդի, Քիէնտալի և Մոսկւայի կոնֆերենցիաների ղոկումենտներում, իսկ նրա գոյութեան մասին աւելի համոզեցուցիչ խօսում է այժմ նրա սեփական գործունէութիւնը: Ո՛րչա է, այդ գոյութիւնը ղեռնա շի կանոնաւորւած կանոնադրութիւնները յղւածներով և ծրագրերների կէտերով, բայց նա հիմնւում է աւելի հիմնական և լուրջ հիմունքի վրայ՝ միջազգային սոցիալիզմի հիմունքների վրայ: Այդ սկզբունքների թէորետիքական պնդումներից կենդանի իրականութեան փաստերի վերածումի մէջ կայանում է երբորդ Ինտերնացիոնալի պատմական խնդիրը, որ նրա գոյութեան իմաստն ու արդարացումն է կազմում: Հենց նրա մէջ է կայա-

նում երբորդ Ինտերնացիոնալի ստորերութիւնը նրա նախորդ երկու ինտերնացիոնալներէից:

Միջազգային համերաշխութեան գաղափարը բոլոր երկրներէ պրոլետարներէ մէջ ոգևորել է խակական սոցիալիստներին մեռական, անձնագոր կուսի համաշխարհային պատերազմի ոճրագործ յիմարութեան դէմ: Այդ կուսից բղխել է երբորդ Ինտերնացիոնալը և այժմ նոյն գաղափարը համաշխարհային յեղափոխութեան փոթորկի և հրդեհի մէջ է ձուլում նրա մասնակցողներին աւելի սեղմ ու անքակտելի կապերով:

Երկրորդ Ինտերնացիոնալի խայտառակ, անսկզբունք դիրքը համաշխարհային պատերազմի վերաբերմամբ պէտք է քաւի երբորդ Ինտերնացիոնալի խիստ հետեղականութեամբ համաշխարհային յեղափոխութեան մասնակցութեամբ պրոլետարիատը պէտք է նորից ոտքի կանգնի այն խորը անկումից յետոյ, որին նա հասաւ համաշխարհային պատերազմի ընթացքում, և նորից բարձրանայ մինչև զիտակցական իրականացումը իր պատմական խնդիրներէ: Համաշխարհային պատերազմը այն փորձաքարն է, որի վրայ երբորդ Ինտերնացիոնալը պէտք է սպացուցի իր գոյութեան իրաւունքը: Եւ ահա համաշխարհային յեղափոխութեան կարող շունչը արդէն փչում է ուղղակի նրանց դէմքին, որոնք չէին հաւատում նրան և կասկածում էին նրա կարելիութեան հնարաւորութեան վրայ:

Այնպիսի անձնութեաց այրութեամբ Ռուսաստանում սկսած յեղափոխութիւնը յաղթող դուրս եկաւ կուսից, ջախջախելով իր թշնամիներին: Զուր բուրժուական, ունևոր փոքրամասնութիւնը իր բննող ինտելիգենտների հետ փորձում էր սարսափով և սպիտակ տերրորով ոչնչացնել յեղափոխական սոցիալիզմի դործը: Այդ փոքրամասնութեան զիմադրութիւնը փչուեց Թորտուրդների մէջ կենտրոնացած պրոլետարիատի և ազբատ գիւղացութեան ոյժի զիմաց: Կարմիր Բանակը յաղթական կերպով յետ մղեց օտարերկրեաց դորքերը, որոնք՝ որպէս միջազգային խմբերալիզմի վարձկաններ՝ ռուսական հակա-յեղափոխականներէ հետ պէտք է խնդդէին երիտասարդ սոցիալիստական հանրապետութիւնը: Զրկործանուեց այդ հանրապետութիւնը նաև սովի և զրկանքների դէմ մղած պայքարում, չնայած որ խել էին հացահարուստ վայ-

քերքը, կտրել էին թէ՛ ծովերից և թէ՛ նախալին ու քարածխա-
լին աղբիւրներից: Այդ բաւական չէ. «բուլշևիկական վանդալնե-
րին» յաջողւեց հեռատես ռեֆորմների և սոցիալական ապահովու-
թեան միջոցով թեթեւացնել մասսաների ամենասուր կտրիքները,
և նոյնիսկ ժողովրդական լուսաւորութեան ասպարէզում նրանք
կատարեցին կուտուրական աշխատանք, որսիսին, ըստ Մաք-
սիմ Գորկու հեղինակաւոր վկայութեան՝ մարդկութեան պատ-
մութեան մէջ օրինակը չունի:

Գերմանիայում յեղափոխութիւնը պոկեց թաղը հրէշ-կապի-
տալի զլխից և ախտեղ այժմ կռիւ է մղում այդ հրէշի կատա-
րեալ ոչնչացման համար: Գերմանական բանւոր դասակարգը այս
անգամ պայքարում է ոչ թէ քաղաքական դեմոկրատիայի շրջա-
նակի ընդլայնման համար, ոչ թէ այս կամ այն սոցիալական
բարենորոգման նւաճման համար բուրժուական հասարակութեան
շրջանակներում. ոչ, նրա կռիւ նպատակն է՝ կապիտալիստա-
կան կարգերի ոչնչացումը և սոցիալիզմի իրականացումը: Այդ
կռում նա ստիպւած է ենթարկել վախեցած շահագործւածների
օրհասական գիմադրութեան, որոնց դասակարգային գիկտատու-
րան՝ առանց խնայելու բանւորի արիւնը և առանց կանգ առ-
նելու ամենախոր բռնաբարձման տաաջ՝ իրականացնում են Շէյ-
դեման, Էրերտ և Նոսկէ պարտիտարները... Գերմանական բան-
ւոր դասակարգի ազատագրական կռիւ խորը տրագիկմը կայա-
նում է հենց նրանում, որ կապիտալիստական կարգերը պաշտ-
պանում են բռնիքը և զբանասները ձեռքին նոյն պրոլետա-
րիատի ծոցից դուրս եկած, իրանց յեղափոխական փետուրները
կորցրած սոցիալ-դեմոկրատները: Բայց այդ քաղաքական կոմիկ-
ների խմբակը շուտով կը ջախջախի յեղափոխական փոթորկի
անխուսափելի թափով, որի մօտալուստ լինելը մեզ աւետում են
գործադուլային շարժման փոթորկաւոր ալիքները:

Բոլոր երկրներին պրոլետարների միջազգային համերաշխու-
թեան զաղափարն իր իրականացումն է գտնում յաղթական հա-
մաշխարհային յեղափոխութեան մեծ պրոցեսում: Համաշխարհա-
յին յեղափոխութիւնը կազմում է երրորդ Ինտերնացիոնալի բո-
վանդակութիւնը և նպատակը: Երկրորդ Ինտերնացիոնալը պար-
ծենում էր նրանով, որ ստեղծել է կռուող պրոլետարիատի ամեն
տարի կրկնուող համաշխարհային ցոյցը: Երրորդ Ինտերնացիո-

Նալի պարծանքը պիտի լինի համաշխարհային յեղափոխութեան յաղթանակը։ Ոչ մի վայրկեան չհեռացնելով մեր աչքերը մեր նպատակից, մենք պէտք է յիշենք, որ միայն լարելով մեր բոլոր ոյժերը և մեր ամբողջ կամքը, մենք կարող ենք հասնել ներքան։ Սրտի խորին կսկիծով յիշելով հերոսական մահով ընկած յեղափոխութեան զոհերի մասին, մենք մեր քերձ ողջոյնն ենք ուղարկում անձնուրաց մարտիկներին և յայտարարում ենք, որ ծածանելով մեր զրօշակները՝ մենք խտացած շարքերով կը դիմենք աշխատանքի ազատագրման վերջին, նւիրական կռիւն։ Թող ուրեմն պրոլետարական տօնի օրը ամբողջ աշխարհում թնդայ ուրախ, մարտական կոչը։

Կեցցէ համաշխարհային յեղափոխութիւնը։

Կեցցէ երրորդ Լեռներնացիոնալը։

Կարա Յեկիմ



ԵՐԲ ՄԵՆՔ — ՄԵՌԱԾՆԵՐՍ ԿԱՐԹՆԱՆԱԼՔ

Երկու տարի, — բայց առելի հաջուստ անցքերով, առելի նըշանակալից, քան զարեր...

Եթևու տարի է քաշում արդէն Ռուսական Բանւորական Յեղափոխութիւնը — հսկայական զրամա, ամենից զիւթիչ, ամենից հոյակապ իր բովանդակութեամբ, որպիսին երբեք տեսել է համաշխարհային պատմութիւնը: Այս երկու տարին նշանակում են մեծածնների արթնացումը, լծի տակ տառապող մասսաների ազատամբութիւնը, գերեզմանից զէպի համերաշխութեան և ազատութեան վրայ հիմնւած կեանքը: Դա — արթնացող բանալին է, ուղղւած համաշխարհային պրոլետարիատին, և առնող՝ թէ նոր ժամանակների արշալոյսը արդէն ծագել է: Ex oriente lux — լոյսը փայլեց արևելքից... Համաշխարհային յեղափոխութեան կոչմակը առաջինը զարկեցին բոլոր ստրուկների մէջ ամենից ճշմարտները: Վերջինները եղան առաջիններ: Մինչդեռ արևմուտքի բանւորական մասսաները զեռես վարանում էին, Ռուսական պրոլետարիատը միահամուռ, համարձակ թափով գլուխ անցաւ միջագային բանւոր դասակարգի, որ կուտւմ է պատերազմի դէմ, կապիտալիզմի և իմպերիալիզմի դէմ:

Համաշխարհային պատերազմը մահացու հարւած տուց ցարիզմին, վաղուց արդէն հիմնաւորապէս փառած և զրկւած կենսական ամեն ոյժից: 1917 թւի մարտին նրա զարերով կառուցւած շէնքը փլուց փառաւոր աղմուկով: Բանւորներն ու զինւորները, սերտ կերպով միացած դուրս եկան տիրող դասակարգի դէմ և առանց մեծ դժւարութեան տապալեցին ցարական լուծը: Բուրժուազիան նոր Ռուսաստանի բաղդը տնօրինելու փորձ արեց և ուզեց յեղափոխութեան յորձանքը մեկուսացնել մի կողմ, աջակէս, որ նա ձայն միայն քաղաքական յեղափոխութիւն և

չվերածւի սոցիալականիւ Այս էր այն նպատակը, որին ձգտում էր Կերենսկին իր կարճատև և չափազանց անփառունակ կարիւրայի ընթացքում: Տեսնելով թէ ուր է տանելու բուրժուական կառավարութեան այդ քաղաքականութիւնը, բանւորներն ու գիւնւորները նորից ապստամբեցին իրանց նպատակի կատարեալ գիտակցութեամբ լցւած բոլշևիկներին ղեկավարութեամբ: Այսպէս կատարւեց երկրորդ յեղափոխութիւնը, բանւորների մեծ և պանծալի յեղափոխութիւնը, որը—1917 թ. նոյեմբերի 6-ից մինչև 11-ը, մի քանի օրւայ համեմատաբար անարիւն կռիւց յետոյ—պսակւեց յաղթանակով և որի շնորհիւ Ռուսաստանում յայտարարւեց սոցիալիստական հանրապետութիւն յենւած պրոլետարիատի ղեկատարութեայի վրայ:

Պրոլետարիատի ղեկատարութեան պետական կազմութեան անհրաժեշտ ձևն է կապիտալիստական իրաւակարգից սոցիալիստականին անցնելիս: Նա չքացնում է առաջ տիրող դասակարգի երկրի բախտի վրայ ունեցած ազդեցութիւնը, ամբողջ քաղաքական և տնտեսական իշխանութիւնը յանձնում է քաղաքային և գիւղական՝ պրոլետարիատի ձեռքը: Պրոլետարիատի ղեկատարութեան Ռուսաստանում իրականացում է Խորհուրդի միջոցով, որ նոր գեմոկրատիայի կազմակերպման ձևն է: Ինչպէս պարլամենտը հանդիսանում է բուրժուական գեմոկրատիայի կամքի արտայայտիչը, նոյնպէս էլ Խորհրդային իշխանութիւնը հանդիսանում է պրոլետարիական գեմոկրատիայի թարգմանը: Ասխտանկը—ահա բոլոր քաղաքական իրաւունքների նոր հիմունքը: Որքան էլ ուզում է թող առարկեն դրա դէմ մեր ռէակցիոններները և աջ սոցիալիստները, յատկապէս հենց դա է մաքուր սոցիալիստական սկզբունքը, որ այսպիսով իրականացնում է պրոլետարիական ղեկատարութեան Ռուսաստանում: Եւ փաստորէն այն է, որ այժմ Ռուսաստանում իշխանութեան հետ կապւած են իսկական գեմոկրատիայի շատ աւելի լայն խաւեր, քան արևմուտքի բուրժուական-գեմոկրատական գոված պետութեան մէջ, ուր գեմոկրատիան ներքին բովանդակութիւնից զրկւած մի դատարկ բառ է, գեղեցիկ զարդարւած ծածկոց, որի յետեւ անարգել իր գիշատիչ գոյութիւնն է շարունակում կապիտալիզմը: Յենւելով ղեկատարութեայի վրայ, ուստի բանւորներն ու գիւղացիք սկսել են իրականացնել լայն սոցիալիստական ծրագիրը: Հոգը, որ Ռուսաս-

տանում՝ ինչպէս և ամենուրեք, զտնուում էր մի բուռը սեփականատէրերի ձեռքին, զրափւեց և անցաւ հողագործ մասնակրին՝ օգտագործելու այն հասարակական հակողութեան տակ: Արգելւած է հողի ամեն տեսակ վաճառք, փոխանակութիւն, գնում, ամեն տեսակ հողային սպեկուլեացիա, և այդպիսով վերացւած են սոցիալական անհաւասարութեան հիմնական պատճառները: Արդիւնագործութիւնը՝ և հաղորդակցութեան միջոցները ազգայնացած-պետականացած են և զրաւած են հենց իրանց՝ բանւորների անմիջական կոնտրոլի և ղեկավարութեան ներքոյ: Բանկերը և կապիտալները դարձան պետութեան սեփականութիւն: Բնակարան-տները՝ հասարակական սեփականութիւն: Մտցրւած է պարտադիր աշխատանք բոլոր աշխատանքի ընդունակների համար: Բանւորական օրը կրճատւած է 6—7, կամ ողջ՝ դէպքերում անոռաւելն 8 ժամ օրական: Մի շարք սոցիալական ռեֆորմների միջոցով իրականացած է ծերերի, հիանդների, ինվալիդների և երեխաների օգնութեան գործը: Մի խօսքով, բանւորական յեղափոխութիւնը նշանակում էր գիտակցական, նպատակայարմար ձգտում՝ ամբողջ տնտեսական և հասարակական կեանքը հիմնաւորել առողջ սոցիալիստական հիմունքների վրայ:

Բայց նա միաժամանակ նշանակում էր նաև հոգևոր յեղափոխութիւն: Ազգատութեան, անօգնականութեան, ստրկութեան ամենամեծ երկիրը ու ստորացումը կայանում է նրանում, որ նրանք ապականում են մարդու մէջ հոգին: Իսկ յեղափոխութեան ամենաբարձր և վեհ նւաճումը կայանում է նրանում, որ նա—ինչպէս այդ պատահեց Ռուսաստանում—ջախջախեց ժողովրդի հոգևոր շղթաները և լոյս սփռեց երկրում, ուր առաջ թագաւորում էր թաւաբն ու անգիտութիւնը: Պետական եկեղեցու ոչնչացումը այդ ուղղութեամբ առաջին քայլը եղաւ: *Ecrasez l'infame*—ջախջախեցէ՛ք զարշին,—այս էր բոլոր յեղափոխականների լոզունգը: Վոյտերի ժամանակներից՝ սկսած:

Եկեղեցին փլւեց և նրա տեղը բռնեց զպրոցը: Այս երկու տարւայ ընթացքում Ռուսաստանում բացւած են տասնեակ հազար զբոսայրոցներ: Հիմնւած են տասնեակ հազար ժողովրդական գրադարաններ: Բաձրագոյն զպրոցներին և համալսարաններին ցոյց է տրուում ամեն աշակցութիւն: Գիտակցութիւնն արթնեցնող, միտքը լուսաւորող մի-

լիոնաւոր հրատարակութիւններ տարածւում են ժողովրդի ամենա-
յետաձեռնաց խաւերի մէջ: Գիտութեան մաքուր և պայծառ ջրերը
ուժեղ յորձանքով ողողել են Ռուսաստանը, որոշելով և ազնու-
շնելով մինչև այն անմշակ հողը: Եւ որպիսի սքանչելի տեսարան էին
ներկայացնում ժողովրդական մասսաները, յուսաւորութեան այդ-
պիսի ադա՜ն ծարաւով թափւած գիտութեան աղբիւրի բաց ակունք-
ների վրայ: Այդ ապացուցում է, որ յեղափոխութիւնը ձեռ-
տում էր ոչ միայն նիւթական բարելաւման, այլև հոգեւոր աղ-
բիւրների անհամանշի ոյժերին: Այժմ պէտք է լոնն ուս պրոլե-
տարիաւոր մտաւոր ստոր մակարդակի մասին ամեն խօսակցու-
թիւն: Ռուս պրոլետարիատը այդ կողմց ևս իր յետև թողեց արև-
մտեան երկրների բանւորներին՝ որոնց նա գերազանցեց թէ քա-
ջութեան, թէ անձնութեան և թէ պրոլետարական այլ յատ-
կութիւններով:

Իհարկէ, սոցիալիստական շինարարական աշխատանքը չէր կա-
րող առաջնքներով հին իրաւակարգի պաշտպանների ամենակատաղի
գիմաղբութիւնը յեղափոխութիւնը խեղակլու համար: Նրանք կանգ
չէին առնում ոչ մի միջոցի առաջ: Սարսափ, դաւադրութիւն,
դաւաճանութիւն, բանւորների զեկավարների սպանութիւն, գին-
ւած բռնկումներ—ահա հակա-յեղափոխութեան բնորոշ մեթոդ-
ները: Բուրժուազիան թորհրդային Հանրապետութեան արինար-
բու և անխիղճ ներքին թշնամի՜ եղաւ: Թշնամի, որի հետ կա-
րող էր իր հաշիւը տեսնել միայն երկաթի զիկատատւան: Բացի
այդ, հանրապետութիւնը ստիպւած էր արտաքին պատերազմ
մղել— սկզբում կենտրոնական պետութիւնների հետ, որոնք
Ռուսաստանի վրով փաթաթեցին Բրեստի խաղաղուակ հաշտու-
թիւնը, իսկ յետոյ Անտանտի և վերջինիս հլու՝ Ռուսաստանի
սահմանակից պետութիւնների հետ, որոնց Անտանտը թու-
նաւորում էր Սոցիալիստական Հանրապետութեան դէմ,
ինչպէս թունաւորում են արինարբու շների վո՛ւմակի յետադընդ-
ւած զոհի յետեից: Ամեն մի մտածող մարդու համար պարզ է,
որ ուս պրոլետարիաւոր ամբողջ հոանդը պէտք էր ծախուէր
անհամար գիշատիչների դէմ ուղղած ինքնապաշտպանութեան դէմ:
այդ իսկ պատճառով ստեղծւեցին գրեթէ անյաղթելի դժարու-
թիւններ ներքին յեղաշրջման խաղաղ և յաջող աշխատանքի հա-
մար: Երկու տարւայ մէջ անկարելի է, նոյնիսկ ամենամեծ կա-

բողոքութիւններն ներկայութեամբ, սահմանել իղէալական հասարակական կարգ: Եւ այդ խնդիրը դառնում է աւելի անկարելի, երբ բոլոր ֆրոնտներում շարունակուած է պատերազմի հրդեհը, երբ երկրի ներսում թագնւած է սնողոք թշնամին, իսկ ցարիզմից ժառանգութիւն է մնացել փտած և կաղմալուծւած պետական շէնք:

Փառք և պատիւ ուսւ պրոլետարիատին այն բանի համար, որ նա—հակառակ այս բոլոր անբարեխաջող պայմաններին, հակառակ այն բանի՝ որ միւս բոլոր երկրների բանւորները թոցին նրան և նա ստիպւած էր միայնակ տանել տիտանական կռիւ նրան ոյժերով գերազանցող համաշխարհային կապիտալի դէմ,—այնուամենայնիւ կարողացաւ այդքան հետևողական և նպատակաշարժար կատարել իր սոցիալական-շինարարական աշխատանքը: Նրա մատուցած ծառայութիւնը ոչ միայն չի նեւեմանում, այլ կրկնապատկուած է այն սճրագործ անտարբերութեան շնորհիւ, որ ցոյց են տւել միւս երկրների սոցիալ-պատրիոտներից յիմարացած բանւորական շրջանները իրանց ուս ընկերների գործի վերաբերմամբ: Անտանտի Գերագոյն խորհրդի զլխաւորութեամբ հենց այս օրերին համաշխարհային սէակցիան պատրաստում է նոր փորձ՝ շարունակելու իր սկսած աշխատանքը և խեղտել ազատ Ռուսաստանը: Ո՛հ, ինչպէս են նրանք ատում այդ երկիրը, այդ բոլշեիկներին, որոնք ապստնում են գիշատիչներին ու պարագիտների խաղաղ ապագային: Նրանք գիտեն, որ Ռուսաստանում բարախում է համաշխարհային յեղափոխութեան սիրտը, աշխատում նրա ուղեղը: Նրանք գիտեն, որ եթէ ուսական յեղափոխութիւնը մնաց անյաղթ, ապա վաղ թէ ուշ նրա ալիքները կողոպեն նաև արեմուտքի կապիտալիստական պետութիւնները: Սարսափն ու կատաղութիւնը պատում է այդ կապիտալիստներին, երբ նրանք յիշում են հրաբուգիի բռնկման մօտալուստ լինելը:

Մահ բոլշեիկներին—ահա միջազգային կապիտալի լողունգը:

Եւրոպական և ամերիկական պրոլետարիատը պէտք է շտապի օգնել Ռուսաստանի պրոլետարիատին: Բոլշեիկները երբէք չեն փակել իրանց աչքերը այն բանի վրայ, որ ուսական յեղափոխութեան բազզը կախւած է Անգլիայի և Ամերիկայի բանւորներից: Եթէ մեռած մասսաները արթնանան այնտեղ ևս, ա-

պա միջազգային պրոլետարիատի յաղթանակը ապահոված է։ Իսկ եթէ նրանք մեան իրանց զերեզմաններում, թոյլ տան իրանց կառավարութիւններին շարունակել բոկազան և մատակարարել Ռուսաստանի թշնամիներին զինւորական մթերքներ և դրամ, ապա նրանք կլինեն ուսւ Խորհրդային հանրապետութեան դահիճները։ Այսպէս հաստատում է հիմնական սոցիալիստական սկզբունքը, թէ բանւոր դասակարգի ազատագրումը հնարաւոր է միայն միջազգային համերաւոյութեան ուղիով։

Կապիտալիզմի վերջնական անկումը դարձել է պատմական անհրաժեշտութիւն և ոչ մի բանի ոյժ չի կարող նրան վերականգնանայնել։ Կապիտալիզմի անբաժան ուղեկիցն է ամենուրեք քաղաք, ընտրական քայքայումը, զոդութիւնը։ Միայն սոցիալիստական հիմունքների վրայ կարող է ստեղծւել այն իսկական հասարակական կարգը, որի ժամանակ հնարաւոր կարող է լինել արդիւնաբերութեան զարգացումը, կուլտուրայի ծաղկումը։ Այդ պատճառով բոլշեւիզմի վերջնական յաղթանակը կատարւածից դուրս է, եթէ միայն մարդկային ցեղին վիճակւած չէ ընդհանրապէս կորչել վերջնականապէս։

Փառք և պատիւ մեր ուսւ ընկերներին ազատագրական դործի մէջ նրանց մտքրած անմահ գանձի համար, այն վիթխարի յեղափոխական մղումի համար, որ երբեք չի խեղդւի ժամանակի ալիքներում և վերջապէս կարթնացնի մեռած քնից բոլոր պրոլետարներին և կառաջնորդի ղէպի ազատ և եղբայրական կեանք։

Դեկտ. 1919.

Զ. Խեզումեղ

ՔԱՂԼՔԱԿԱՆ ՊՈԹՆԻԿՆԵՐ

(Քրիշխսի դաշնականների «գեկլարացիայի» առիթով)

«Կարմիր Աստղ»-ի ապրիլի 2-ի համարում տպագրւած էր Քրիշխսարնակ մի խումբ դաշնակցականների «գեկլարացիան» (ստորագրւած Ղազազեանի, Թոփչեանի, Աւետիսեանի, Զօրեանի*) և մի երկու այլ պատուելի պարոնների կողմից), որի կողքով չի կարելի լուռ թեամբ անցնել Այդ «գեկլարացիան», անկասկած, յաւակնութիւն ունի «նոր» բան ասելու Դաշնակցութեան բռնած գիրքի (պողիցիայի) մասին, նոր բան՝ որովհետև հին բաներ ասելու ժամանակը չէ այժմ, երբ պրոլետարական յեղափոխութեան հարածների տակ փլոււծ են հին կուռքերը, ոչնչանում վերջին երեք տարւայ ընթացքում մենշէրկինների, դաշնակցականների ու մուսաւաթիստների ստեղծած «արժէքները» Անդրկովկասում:

Հանգուցեալ «Աշխատաւոր» թերթի շուրջը համախմբւած ջոջերը փողոց հանելով կուսակցութեան ներսում տեղի ունեցող «տարածայնութիւնները», որոնց փորձում են «սկզբունքային» գունաւորումն տալ, ճշնում են ապացուցել, թէ աւանտիւրիստ Սիմէօն Վրացեանի և մի «շատ լաւ տղայ» Կորիւն Ղազազեանի մէջ, թէ Համօ Օհանջանեանի և Բագրատ Թոփչեանի, թէ Արշակ Զամալիանի և Տիգրան Աւետիսեանի, թէ դաշնակցական ժամդարձերիայի պետ Լևոն Քալանթարեանի և նոյն ժամդարձերիայի Վրաստանի բաժնի գեկավար Դաւիթիսանեանի մէջ անանց-անելի, գրեթէ «գասակարգային» ներհակութիւն կայ...

Քրիշխսարնակ այդ դաշնակցական խմբակի գեկլարացիան, որ քաղաքական «չ մի ուէալ արժէք չունի» քանի որ ինքն

* Չօրեանը «Правда Грузии» օրաթերթում յետագայում յայտարարեց, որ նրա ստորագրութիւնը կեղծւած է և նա գուրս է եկել դաշնակցական կուսակցութիւնից:

իբան «աշխատաւորական» յորջորջող խմբակի յետեր ալլես չեն երևում այն միամիտ ու խաբւած հայ մասսաները, որոնց անունից նա սովոր էր խօսել, — մեղ տոբ է տալիս մի փոքր կանգ առնելու փլւած կուսակցութեան աջ ու ձախ թևերի խնդրի վրայ, մի աւելորդ անգամ մերկացնելու Ղազազեանների, Թոփչեանների, Աւետիսեանների հիդւիթութիւնն ու ստութիւնը, որ այնքան բնորոշ է զազափարապէս սնանկ, զտաակարգային շիտակ մտածելակերպից ու զործելակերպից զուրկ մի կուսակցութեան համար:

Հանգուցեալ «Աշխատաւոր» թերթի շուրջը խմբածների «զեկլարացիայի» մէջ կայ երկու կէտ, որի վրայ մենք կը ցանկանայինք առանձնապէս կանգ առնել.

Նախ և առաջ — ինչ օրինատացիա է ունեցել զաշակցական այսպէս կոչւած «աշխատաւորական» թեր:

Երկրորդ — արդեօք իսկապէս եղել է որեւէ հիմնական տարածայնութիւն Երևանի և Թիֆլիսի, վրացեանների և Ղազազեանների վարքագծի մէջ Խորհրդային Ռուսաստանի վերաբերմամբ:

Սկսենք առաջինից:

Թիֆլիսաբնակ զաշակցականների խմբակը պնդում է, որ նա միշտ ունեցել է յեզափոխական Ռուսաստանի օրիննատացիա, ահա այդ կէտը (§ 17).

«Աշխատաւորական թեր միւս պաշտպանել է (ВЕСТНИК 1333) Յեզափոխական Ռուսաստանի օրիննատացիան...»:

Ստերի ստագոյնն է:

Նախ «Յեզափոխական Ռուսաստան» բառերի տակ շատ բան կարելի է հասկանալ. թէ ինչ է ուզում առել այդ բառերով հանգուցեալ «Աշխատաւորի» խմբագրութիւնը — Ալլահը գիտէ. այս բովանդակութիւնը կարող է ընդհանրապէս «վերաբերում» են Խորհրդային Ռուսաստանին. բայց ոչինչ չի խանդարում «պատեհ առիթին» Դենիկինին կամ Լոյդ-Ջորջին յայտարարել (այդ բանը կանեն Եւրոպայում նստած «աշխատաւորականները»), թէ «Յեզափոխական Ռուսաստան» ասելը՝ դեռ չի նշանակում Բանտորագիւղացիական իշխանութիւն ասել:

Մենք գիտենք, որ յեզափոխական պրոլետարիատի կուսակ-

ցութիւնը նրանով է տարբերուած մանր-բուրժուական և մեշտանական կուսակցութիւններից, որ առաջինը զնոական և անհաշտ կոխ է յայտարարել կապիտալի տիրապետութեան և առանց վեժապաշտութեան զիմուած է իր մեծ նպատակին. մինչդեռ վերջինները վախենում են և անկարող են այրել իրանց նաւերը, պայթեցնել կամուրջները... Գուցէ մի օր կարիք լինի սոցիալ-դաւաճանական, սոցիալ-համաձայնական քաղաքականութեան... մի գիտէ...

Բայց թողնենք այդ «փոքրիկ» նրբութիւնները...

Ուրեմն, աշխատաւորականները—պնդում են, թէ իրանք միշտ պաշտպանել են «յեղափոխական Ռուսաստանի օրիննտացիան»:

Փէք անդէկ. այս բոլորիս տեսնենք, թէ ինչպէս են նրանք պաշտպանել այդ գաղափարը:

Յայտնի է, որ Վրաստանի դաշնակցական կենտրոնական կոմիտէն ընդորում է նոյն կուսակցութեան Վրաստանի ռաշոնական ժողովի կողմից: Այդ ժողովը գերագոյն արտայայտիչն է Վրաստանի սահմաններում ապրող դաշնակցականների կամքի: Ահա թէ ինչ է ասել անցած դեկտեմբերի 9-ին բացւած Նինգլորոյ ռաշոնական ժողովում պատուելի պարոն Տիգրան Աւետիսեանը—Վրաստանի կենտ. կոմիտէի կողմից ժողով բացողը և տխրահոշակ զեկլարացիայի ստորագրողներից մէկը:

«Այս ռաշոնական ժողովը պէտք է մշակի այն վարքագիծը, որով պէտք է ընթանան ապագայ կենտրոնական կոմիտէն և մեր կուսակցութեան միւս կազմակերպութիւնները:

«Այսօր Դաշնակցութիւնը հեռացած է իր ժողովրդից և նրա իշխանութիւնն անցել է հայ աշխատաւորութեան համար ոչ-հարադատների ձեռքը:

«Դիտեցէք այսօրւան պատկերը. մի կողմից Անտանտն է առաջները սրում այդ երկրի վրայ, միւս կողմից «յեղափոխական» իմպերիալիզմն է իր աւինը խրել մեր կուրծքը...

«Մենք ունեցել ենք սեփական ոյժերի վրայ հիմնւած օրիննտացիա, ուրեմն սեփական օրիննտացիա: Եւ որպէս հետեւում այդ բանի՝ մենք կողմնակից, նոյնիսկ պէտք է զէմ լինենք Անտանտին:

«Մենք դէմ ենք եղել և «յեղափոխական» իմպերիալիզմին: Անա այս կուուսմ մենք կորցրինք Վահան Խորենուն, Ն. Զուլախեանին և ուրիշներին:

«Դաշնակցութեան վրաստանի կենտրոնական կոմիտէն կուսել է Անտանտի դէմ, կուսել է և «յեղափոխական» իմպերիալիզմի դէմ իր սեփական օրիննտացիայի համար, մեր կուսակցութեան ծրագրի համար, մեր յեղափոխական տրագիգիայի համար:

«Եւ նրանք, որոնք հարազատ չեն մեր կուսակցութեան համար, որոնք հեռանում են մեր կուսակցութեան անցեալից, ոգուց, ապագայից, որոնք չեն ուզում կուսել մեզ հետ կուսակցութեան ոգով, կուսակցութեան ծրագրի ու նպատակների համար, պէտք է հեռանան մեր շարքերից:

«Պէտք է հեռանան աջերը, որովհետև Անտանտը տեղ չունի մեր մէջ. պէտք է հեռանան և նրանք, որոնք քեմալական զաշինքն ու համագործակցութիւնը համարում են սոցիալիստական գործ, համաշխարհային յեղափոխութեան առանցքը, և պէտք է մնայ Դաշնակցութիւնը, որ իր 30 տարւայ յեղափոխական գործունէութեան ընթացքում միջազգային յեղափոխութեան մեծ գործ է կատարել արեւելեան աշխատաւորութեան համար: Պէտք է մնայ Դաշնակցութիւնը իր «մահ կամ ազատութիւն» լուղունգով: (Ծափեր):»²⁾

Մենք առաջ բերինք «աշխատաւորական» թևի «դեկլարացիայի» հեղինակներից մէկի մի քանի ամիս առաջ արտասանած ճառի էական կտորները: Օրիգինալ ոչ միայն միջ, այլ բառ անգամ չէք գտնի Աւետիսեանների, Ղազարեանների, Թոփչեանների ասածներում: «Ориентация на самого себя» — զեռ տարիներ առաջ ասել են այլ հակա-յեղափոխական տարրերի ներկայացուցիչները³⁾, որոնք պարագներում սիրում էին իրանց սեփական ոյժը ցուցադրել՝ միամիտներին տւելի լաւ մոլորեցնե-

²⁾ Տես «Աշխատաւոր» № 8, յունւարի 11-ին—1921 թ.

³⁾ Տես, ի միջի այլոց, մենշևիկ Օսիաշիլու ճառը Անդրկովկասի Սէյմում, 1918թ.

լու և խաբելու համար: Նոր չէ նոյնպէս, թէ բուլշեփուսթիւնը «յեղափոխական» խմբերիալիզմ է (յեղափոխական բառը անպայման չափերաներուով), խմբերիալիզմի վատագոյն տեսակը... Որ պէտք է կուսի «կարմիր խմբերիալիզմի» դէմ, որ այդ կուսւմ հակա-յեղափոխականները ունեցել են իրանց զոհերը և այլն և այլն:

Այս բոլորը մենշեփիստան տրամաքանութեան և բառախաղերի հայերէն թարգմանութիւնն է, սակայն այն տարրերութեամբ, որ օրիգինալը պահել է օրիգինալի բոլոր թառախութիւնները, իսկ թարգմանութիւնն ունեցել թարգմանութեան բոլոր պակասութիւնները, որ մենշեփիստները, որպէս խելօք-բուրժուական և նացիօնալիստ քաղաքագէտներ, կուսելով քաղաքական իշխանութեան համար (ինչ միանգոսմայն բնական է)՝ վրաց ժողովրդի գլխին այն աւանտիւրիստական խաղերը չրերին, ինչ գաշնակցական յիմարներն ու ոճրագործները...

Ինչ խորհուրդներ է տալիս պատելի պարոն Տիգրան Աւետիսեանը իր ունկնդիրներին հինգերորդ ուսոյնական ժողովում:

Նա ասում է.

«Զպէտք է մոռանալ Դաշնակցութեան դեվիզը—«մահ կամ ազատութիւն».

Պէտք է հեռանան ձախերը.

Պէտք է հեռանան աջերը.

Պէտք է շարունակել գործել Դաշնակցութեան ոգուն և անցեալին, երեսնամեայ անցեալին համապատասխան կուսակցական տրադիցիայով:

Խորհրդային Ռուսաստանը «իւր սիւններն է խրել մեր կուրծքը». հայ ժողովրդի կուրծքը:

Առցիալիստական շարժումը օտար է հայ ժողովրդական մասսաներին և Խորհրդային իշխանութիւնը «ոչ-հարազատների» իշխանութիւն է... և այլն:

Արեմն պարզուով է, որ այսպէս կոչւած «աշխատաւորականները» ձախ թեր չեն եղել (այդ առասպելը իրանք իրանց բերնով ջրում են), այլ բնդհակառակը նրանք նոյնիսկ լայն բացել են դռները ձախերի առաջ՝ վերջիններից ազատելու համար: «Աշխատաւորականները» ուզեցել են պահել *juste milieu*-ն, բռնել միջին հանուպարհը և իբրեւ ազատել աջերից ևս, թէև պարզ

չեն ձեռակերպում թէ ովքեր են այդ աշխարհը.— նրանք, որոնք իմպերիալիստներից սակի են ստացել... Բայց չէ՞ որ «Աշխատաւորը» դեկտեմբերի վերջին ապացուցում էր «Կարմիր Աստղին», թէ պե՛տ է վնասել պարսկեր, Եւրոպայում կասաբա՛սած փախուսիւնները, և վրդովու՛մ, որ Կասեանի կառավարութիւնը ոչնչացրել է Դաշնակցութեան կնքած փոխառութիւնները...

Գուցէ աշխարհը ստելով «աշատաւորականները» հասկանում են բիրտ ու անգիտակ խմբապետներին ու զինուորներին, որոնք սոսկ զօրծիք են եղել Վրացեանների և Ղազարեանների, Լեոն Գալանթարեանների և Դաւիթխանեանների ձեռքին...

Բայց մենք հետացանք դուռն խնդրից. մեզ հարկաւոր է ցոյց տալ, որ թիֆլիսաբնակ դաշնակցական խմբակը շատ որոշ հակա-յեղափոխական օրինաւացիա է ունեցել, որովհետեւ նա զէմ է եղել թորհրդային Ռուսաստանի օրինաւացիային:

Մեզ կարող են առարկել, թէ մի Տիգրան Աւետիսեանի անհատական խօսքը փաթաթում ենք ամբողջ խմբակի վզին: Ահա մի այլ փաստ, որ նոյնպիսի անհերքելիութեամբ ապացուցում է, որ Ռուսաստանի Բանտրա-դիւղացիական իշխանութեան մէջ ոչ մի պրօգրէսիւ բան չեն տեսել երբէք «Աշխատաւորի» շուրջը համախմբւած բոլոր պարտները և նրանց աչքում թորհրդային կառավարութիւնը միայն շարունակօղն է եղել «նախկին ցարական սեփմի քաղաքականութեան»... Այո, այո, բառացի ասւած է՝ «ցարական սեփմի քաղաքականութեան»:

«Արեւելեան դիւանադիւտութիւն» առաջնորդողը պնդում է.

«Թորհրդային Աղբրեջանը, համաձայն բուլղարական ագրեսիւ հոգեբանութեան, ամենաակտիւ աշխատանքներն է մղում Հիւսիսային Պարսկաստանն ընդգրկելու իր քաղաքական իմպերիալիստական ձգտումների մէջ և հետևողական կերպով վարում է նախկին ցարական սեփմի քաղաքականութիւնը Պարսկաստանի նկատմամբ: Անգլո-ռուսական մրցման խնդիրը և երկու մեծ պետութիւնների իմպերիալիստական ձգտումները տարիներ շարունակ քայքայել, թուլացրել և աւերել են պարսիկ աշխատաւոր մասսաների խաղաղ կացութիւնն ու կեանքի նորմալ ընթացքը: Այսօր էլ Թորհրդային Ռուսաստանը, որդեկրկնով հին սեփմի իմպերիալիստական աննեքսիոնիստական քաղաքականութիւնը,

իր ծանր թաթն է զրել Հիւսիսային Պարսկաստանի վրայ։
«Ռուսաստանի և Անգլիայի իմպերիալիստական
շահերի հակադրութիւնը ստեղծում է պարսիկ աշխատաւոր
մասսաների համար ամենածանր կացութիւն... Խորհրդային
իշխանութիւնը, որը սովորութիւն ունի խօսելու մասսաների
ազատագրութեան և ազգերի ինքնորոշման տնտեսից, պար-
սաւոր է վերջ տալու իր իմպերիալիստական քաղաքականու-
թեանը»...)

Արդեօք պարզ և ազդու չէ՞ դուած թիֆլիսաբնակ դաշնակ-
ցական խմբակի «օրինատացիայի» լինդիրը։ Ինչ ընդհանուր բան
կարող է լինել «հին սեմիմի» շարունակողների, «աներսիոնիստ-
ների» և կոյսի նման անաղարտ «Խտերնացիոնալի» հայկական
հատուածի» մէջ... Կոմմունիստները «աւելում ու թալանում» են
Պարսկաստանը, Խորհրդային Ռուսաստանը իր «ծանր թաթն» է
զրել Պարսկաստանի վրայ և ձգտում անեքսիայի պնդում են
Թիֆլիսի դաշնակները այն ժամանակ, երբ Մոսկւայի Բանուորա-
դիւզացիական իշխանութիւնը հրաժարում է ջարական բոլոր
արածնութիւններից ու կոնցենսիաներից Պարսկաստանում, երբ
Ռուսաստանի Կոմմունիստական Կուսակցութիւնը ամեն կերպ
օգնում է Իրանի Կոմմունիստական Կուսակցութեան մի կողմից
ազատագրելու երկիրը անգլիական իմպերիալիզմի լծից, միւս կող-
մից թօթափելու շահագործող դասակարգի լուծը։

Բերենք մի վերջին ապացոյց ևս, թէ որքան «աշխատաւո-
րականները» թշնամական վերաբերմունք են ցոյց տալի զէպի
Մոսկւան։

Երրորդ և երկրորդ Խտերնացիոնալների մէջ շարունակ-
ւում է կատաղի պայքարը։ Ոչոք չէր կարող տեսիլ
ստոր ու դաւաճան դեր ստանձնել պատերազմի ընթացքում և
պատերազմից յետոյ, քան զեղին Խտերնացիոնալը, որի բուր-
ժուազիային ծախում լիդերները օգտւելով բանուորների վրայ ու-
նեցած իրանց վազեմի հեղինակութիւնից՝ կասեցնում էին սո-
ցիալիստական յեղափոխական շարժման թափը և այդպիսով ան-
զուգական ծառայութիւն մատուցում բանուոր դասակարգի սխե-

*) Տե՛ս «Հիւստաւոր», № 7, յունւարի 9-ին, 1921 թ.

բիմ թշնամուն—կապիտալին: Կարմիր Ինտերնացիոնալը մեկուսացրեց սոցիալ-դաւաճանների դործունէութեան բացասական ազդեցութիւնը և ազատեց պրոլիտարական մասսաները օպորտունիզմի ճնշումից: Այդ երկու հոսանքների, ղեղին ու կարմիր ինտերնացիոնալների հանդէպ «աշխատաւորական թեր» բռնում է շատ որոշ դիրք, որ նոյնպէս մեզ ասում է, թէ թիֆլիսարնակ դաշնակները համակրական զգացմունքներ չեն տածում ղէպի Խորհրդային Ռուսաստանը, ղէպի միջազգային յեղափոխութեան աւանգարդ կուսակցութիւնը:

Պաշնակցական թիֆլիսի խմբակի մի այլ պատւելի ներկայացուցիչ՝ պարոն Բազրատ Թոփչեանը այդ առթիւ գրում է.

«Ռուսաստանի կոմմունիստական կուսակցութիւնը Մոսկւայում հիմք դրեց ներքորդ, այսպէս կոչւած կոմմունիստական Ինտերնացիոնալին, որի շուրջը համալրմբեւած են բացառապէս կոմմունիստական հոսանքներ և որ իր ազանդաւորական բնոյթով, իր անհանգուրժիչ քաղաքականութեամբ անհնարին է զարձնում տարրեր պայմանների մէջ դործող այլ սոցիալիստական կուսակցութիւններին ևս իր շուրջը համախմբելու»:^{*)}

«Այսպէս կոչւած» կոմմունիստական Ինտերնացիոնալը «ազանդաւորական» է և «անհանգուրժիչ» Թոփչեանների, Պաղապեանների, Աւետիսեանների համար:

Մէթէ վերը թւած ազացոյցներից յետոյ էլ պարզ չէ, որ թիֆլիսարնակ դաշնակցական ֆոյները, ինչպէս և նրանց ներսանի ընկերները, տաք զգացմունքներ չեն տածել ոչ ղէպի Խորհրդային Ռուսաստանը և ոչ էլ Ռուսաստանի կոմմունիստական կուսակցութիւնը: Յամենայն ղէպս իրանց ատելութեան մէջ ղէպի Բանուոր գիւղացիական Ռուսաստանը ոչ մի տարածայնութիւն չի եղել «Աշխատաւորական» և «Յառաջական» թերի մէջ, եթէ ընդունենք անգամ, թէ այլ «խոշոր» խնդիրներում եղել են «տարածայնութիւններ»...

Մենք «Աշխատաւոր» թերթի միայն երկու ամսւայ պատահական համարներից քաղեցինք վերը բերած կտորները:

Այդպէս սանձարձակ էին գրում և աւելի սանձարձակ խօ-

^{*)} Տե՛ս «Աշխատաւոր» № 30 (14) փետրւարի 12—1921:

սում «Աշխատատեղի» շուրջը ժողոված ջոջերը վերջին երկու ամսւայ ընթացքում, երբ արդէն Ադրբեյջանում և Հայաստանում Խորհրդային իշխանութիւնն էր հաստատուած. դժւար չէ պատկերացնել թէ ինչպիսի գոհար մաքեր կարելի է գտնել «աշխատատեղականների թերի» մէջ, եթէ ժամանակը ներէր մեզ մեր էքսկուրսիան աւելի խորացնելու, եթէ մենք կարողանայինք թերթել ոչ միայն մի-երկու ամսւայ գրածներն ու ասածները, Թաքուն ու աշխարայ արածները, այլ գէթ մի տարւանը...

II

Այսպէս ուրեմն, «Աշխատատեղի»-ի առաջնորդողների, Թոփշեանների, Ղազաղեանների, Աւետիսեանների և tutti quanti բերանով ամեն բոլէ կարելի է ասպացուցել, որ «աշխատատեղական թերի» բռնած դիրքը ոչ միայն բարեացակամ չի եղել դէպի Խորհրդային Ռուսաստանը, այլև ուղղակի թշնամական:

Այս կասկածից, ամեն կասկածից դուրս է. բայց նոյնչափ և աւելի կասկածից դուրս է և այն, որ Երևանի և Թիֆլիսի դաշնակցական ջոջերի մէջ եղել են աւելի շատ և աւելի շուտ համաձայնութեան, համերաշխ գործակցութեան կէտեր ու կապեր, քան «տարածայնութեան»:

Վերջին մօտ երեք տարւայ ընթացքում, երբ Հայաստանը սկսեց ապրել «անկախ» կեանքով և զաշնակցական կուսակցութիւնը սկսեց իր անկոնտրոլ Թաղաւորութիւնը հայ աշխատատեղութեան վրայ, մեզ չեն կարող մոռնանշել մի վայրկեան անգամ, երբ Թիֆլիսի դաշնակները մի որեէ լուրջ խնդրում խկապէս իրանց վարձագիծն ունենային և այդ վարձագիծով, իրանց յատուկ ըմբռնումով հրապարակ իջած լինէին:

Այո, մեզ կարող են ասել, թէ գոյութիւն ունի կուսակցական դիսցիպլինա և անկարելի է անել այդ:

Ոչ, ներեցէ՛ք. այդպիսի սոփեստութիւններով զաշնակցականները կարող են խաբել ու մոլորեցնել իրանց հաւատացող միամիտներին, եթէ կան դեռևս այդպիսիները: Իսկ մեր բանութեան շարքերում արդէն բոլորն էլ շատ լատ հասկանում են, որ կուսակցական դիսցիպլինան բնաւ չի արգելում, չի խանգարում ոչ միայն մի ամբողջ խմբակցութեան, այլ նոյնիսկ անհա-

տին ունենալ իր հայեցակէտը և պաշտպանել այն կուսակցական սահմաններում բաց-աչքարայ, կուեկ իր համոզումների համար հրապարակով:

Յայտնի է, որ Բրեստ-Լիտովսկի դաշնադրութեան առթիւ մեր կուսակցութիւնը բաժանւել էր երկու խոշոր և ուժեղ հոսանքների—մէկը ընկ. Լենինի հատւածը, որ պահանջում էր վաւերացնել Բրեստի խայտառակ պայմանագիրը, միւսը՝ ընկ. Բուխարինինը, որ դէմ էր ուստիֆիկացիային:

Յայտնի է, որ կոնցենսիանների շուրջը ևս գոյութիւն ունին թեր և դէմ կարծիքներ: Տնտեսական ծրագրի շուրջը կրքոտ վիճում են ընկ. Լենինը և Լարինը, և բայն, և այլն:

Մեր կուսակցութեան մէջ կատարուող կարծիքների, տարաձայնութիւնների, հոսանքների բաղխումները կատարուում են համապատասխանում, կոնֆերանսներում, ժողովներում, թերթերում, բրոշյուրներում և գրքերում: Ամեն ոք միջոց ունի ստուգելու, մօտից ծանօթանալու այդ տարաձայնութիւնների հետ համադրւածարների, կոնֆերանսների, ժողովների արձանագրութիւնների միջոցով:

Բայց, ասացէք խնդրեմ, այդ ճրտեղ և թնշ կարգինաչ հարցի առթիւ «աշխատաւորականներն» ու «յառաջականները» իրար հետ բռնւեցին և հասարակութիւնը, ժողովրդական մասսաներն իմացան, թէ իսկապէս Դաշնակցութեան ներսում երկու կարծիք կայ այսինչ կամ այնինչ սկզբունքային, խոշոր արժէք ունեցող խնդրի առթիւ...

Երբէք և ոչ մի հարցում:

Ճիշտ է, Դաշնակցութեան ժողովում եղել են իսկապէս ձախակոզմեան տարրեր, որոնք շարունակ բողոքել են ու վրդովւել կուսակցութեան զաղափարական շփոթի և հակասական գործելակերպի դէմ: Բայց այդ ձախերը «Աշխատաւոր»-ի ջոջերը չեն եղել և կուսակցութեան դէմ ուղղւած զժգոհութիւնը բղխել է բանւորութեան շարքերից, որի դասակարգային-յեղափոխական ինստիտուցիոն թելադրել է օր առաջ փախչել այն լճացած դանդաժից, որ Դաշնակցութիւն անունն է կրել: Հենց նորերս Վրաստանի դաշնակցականներից երես դարձրին նրա Մնացեալ լաւագոյն տարրերը. բանւոր-գիւղացիական խաւերը արդէն լսել լանգամ չեն ուզում այդ դաւաճան ու իմպերիալիստներին ծախած

կուսակցութեան անունը. իսկ զաշխակցական ինտելիգենտ երիտասարդութիւնը կազմակերպ շարքերով անցնում է կոմսունիստական կուսակցութեան:

Այլ ու ձախ թեւեր—«Անջատականների» հեռանալուց յետոյ—այլեւ չկան Դաշնակցութեան ծոցում. կայ մի զաւաղիր ու աւանախորհաւ գանգաւ, որ ունեցել է շատ որոշ ու մասնաւոր քաղաքականութիւն, որ Թիֆլիսում թէ Երեւանում նոյնն է եղել, նոյնն է ստել ու գործել: Եւ Վրացեանի աւանախորհալի թիւերը պէտք է փնտրել աւելի շուտ Թիֆլիսում, քան Երեւանում, որովհետեւ առանց Թիֆլիսի Երեւանը չէր համարձակի շարժել: «Անխառնութիւն» շուրջը խմբւած պարոնները՝ առանց որեւէ փաստ բերելու՝ պնդում են, թէ Դրոնք չեն բաժանել Երեւանի զաշխակներէ բխորի գիծը: Իհարկէ այժմ հարկաւոր է ստել այդ բայց եթէ Վրացեանի աւանախորհաւ յաջողէր, անպայման այլ երգ կերպէին այդ պարոնները:

Ինչու էին պապանձել Ղազարեանները, Թոփչեանները, Աւետիսեանները, Զօրեանները մինչև օրս... Դաշնակցութիւնը որպէս գերազանցապէս դաւադրական կուսակցութիւն, խուսափել է իր կուսակցական ժողովների, համագումարների ոչ միայն ստեղծագործական արձանագրութիւնները ղնել հասարակութեան առաջ, այլ թէկուզ մօտաւոր հաշիւ տալ իր ժողովներում շօշափող խնդիրների շուրջը կատարւած մտքերի փոխանակութեան մասին: Դաշնակցութիւնն ունի իր ծածուկ ժուրնալները, մատենաները, արձանագրութիւնները, որոնցից նա քաղում է հարկաւոր էջեր հարկաւոր մոմենտներին (յաւուր պատշաճի) և պնդում:

Եւ այս բանն եմ ստել ահա զեռ իմ ժամանակները...

Բայց այդ մեքենայութիւններին զժաւր թէ հաւատացող գանդի մեր օրերին:

Անցած ղեկտեմբերին գումարւած Վրաստանի ռաշոնական հինգերորդ ժողովի առթիւ «Անխառնութիւն» աւելի միայն առաջին նիստի, բացման նիստի մասին տեղեկութիւն, որից և մենք առաջ բերինք Տիգրան Աւետիսեանի ճառը: Այնուհետեւ խորհրդաւոր լսութիւն պահեց «Անխառնութիւն» և ռաշոնական ժողովի մասին այլեւ ոչ մի խօսք չչոսայեց իր օրգանում:

Բայց ծածկել համարութիւնը այնքան էլ հեշտ չէ:

Յայտնի է, որ Հայաստանի սովետիզացիայից յետոյ Դաշնակցութեան Վրաստանի տեղական կազմակերպութիւնները, ստորին խաւերը կողմնակից էին Խորհրդային պլատֆորմայի և հինգերորդ ուսյոնական ժողովում կար այդպիսի տրամադրութիւն: Ո՞վ խանդարեց, որ Վրաստանի դաշնակցական կազմակերպութիւնները շիտակ ու համարձակ, որպէս վայել է ամեն մի յեղափոխական կազմակերպութեան, համակրական զիբք բռնեն համաշխարհային մասշտաբով կատարուող անցքերի հանդէպ:

Մենք պնդում ենք՝

— Միայն և միմիայն «յաւ տղայ» Կորիւն Ղազազեանը:

Նա զնացել էր Հայաստան (մեկնեց դաշնակցականների մօտ, ընկաւ բոլշեւիկների ճանկը) տեսնելու այնտեղի դաշնակ շէֆերի հետ և դրանց թւում ի հարկէ նաև Սիմէօն Վրացեանի, որ ազատ գրօնում էր Նիկոլ Աղբալեանի հետ Աստաֆեան փողոցում: Նրա վերադարձին, նրա տպաւորութիւններին, որպէս «երկնային մանանայի» սպասում էին Թիֆլիսի դաշնակները:

Եւ Ղազազեանի ինֆորմացիայի, նրա ճնշման տակ Խորհրդային պլատֆորմային հակելու խնդիրը մէջտեղից վերացում է, «յետաձգւում»:

Որ Վրաստանի կենտրոնական կոմիտէի և Երևանի բիւրօի, որ Դաշնակցութեան հինգերորդ ուսյոնական ժողովի և ինկերոզ բնդնանուր ժողովի միջ եղիլ է կատարեալ համաձայնեցրած վարքադիժ, վկայում է նաև Բաղրատ Թոփչեանի՝ «գեկկարացիայի» հեղինակներից մէկի յօդածը, տպւած հենց այն պահուն, երբ Կարմիր Բանակը գրաւել էր Լոռայ նէյտրալ զօնը և անցել արդէն Վրաստանի սահմանները:

«Հայ Եկեղափոխական Դաշնակցութիւնը՝ թէ իր IX-րդ ընդհանուր ժողովի բանաձևով և թէ նրա Վրաստանի հատւածի V-րդ ուսյոնական ժողովի որոշման համաձայն՝ որոշակի կերպով հակում է սոցիալիստական բանակի այն հատւածին, որ... խուսափում է ազանդաւորական դարձած կոմմունիստների գործեակերպից» *):

*) Տե՛ս «Աշխատատեղ» փետրւարի 12, 1921, № 30 (14).

Պարզ շեշտւած է, որ ինչպէս Թիֆլիսի, նոյնպէս և Երևանի դիւրեբը բղիւի են կուսակցական բարձրագոյն ատեանների համաձայնեցրած որոշումներէր:

III

Ինչ կարիք կար, մէջ էր հարկաւոր այդ ոչինչ շատող կամ դաշնակցականապէս ամեն բան ասող «դեկլարացիան», որի միայն երկու կէտը շօշափեցինք մենք և աւելի շատ բան կարելի էր ասել միւս կէտերի վերաբերեալ:

Ինչու նրանք պարզ կերպով չեն դնում հարցերը և պատասխանում անկեղծօրէն:

Այո, մեզ ծանօթ են «աշխատատեղական թեր» սովեստութիւնները: Թիֆլիսի դաշնակները անշուշտ կը պատճառաբանեն, թէ Վրաստանի կենտրոնական կոմիտէն իրաւունք չունի առանց ռայոնական ժողովի որոշել կուսակցական հիմնական խնդիրները, որոնց վերաբերեալ Վրաստանի ռայոնական հինգերորդ ժողովը ունի իր հրամայողական վճիռները:

Բայց ասացէք խնդրեմ՝ առանց ռայոնական ժողովի թոյլտուութեան «Աշխատատեղ» խմբակը, Վրաստանի կենտր. կոմիտէն իրաւունք ունի խզել իր կապը երևանի ընտրի հետ...

Ոչ, այստեղ իրաւունքի խնդիր չէ: Այլ գլուխները կարցրած դաշնակները, որոնք սովոր էին կամ վրաց մենշևիկների պոչից դնալ և թուխակի պէս կրկնել նրանց ասածները, կամ Անտանտի ազնեանների հետ փոփոխ ու այնպէս օր-օրի վրայ ապրել, այսօր չգիտեն թէ ինչ շանեն, երբ վրացական մենշևիկմը չախճաճւած է և Անտանտը փախած Անդրկովկասից:

Չկան այլևս հաւատարիմ խորհրդատուներ հրապարակում, իսկ Ղազազեանները, Թոփչեանները, Աւետիսեանները անընդունակ են, — որքան էլ փորձեն հաւատացնելու միամիտներին, «սեփական օրինատացիա» ունենալ...

Ստույթիւնից, կեղծիքից, ճիգլիստութիւնից հիւսւած այդ դեկլարացիան մի սքանչելի «գոկումնետ» է, թէ քաղաքական որպիսի սնանկութեան ու խարդախութեան կարող է հասնել մենշևիկ-մուսաւաթական միջոցաւորում անւած, անգլօ-ֆրանսիական վարձկանների չկոյան հիմնաւորապէս անցած մի «յեզափոխական» խմբակ, որի անդամներից շատերը անհատապէս զուցէ շատ «լաւ տղերք» են (ես խօսք չունեմ այդ մասին, թէն անձ-

նապէս և ոչ մէկին ճանաչելու բաղդը չունիմ), բայց քաղաքական պոռնիկները դեր են ստանձնում, երբ ներկայ հսկայ յեղափոխական բաղխումքների ժամանակ հրապարակ են իջնում նման ողորմելի ու ինքն իրան յարգող մարդկանց անվայել յայտարարութիւնքով:

«Աշխատաւորական թեր» դաւաճան ու հակա-յեղափոխական դիրքը աւելի քան պարզ է. նա կախած չէ եղել Ազգայնականների. Հայաստանի և ոչ էլ Վրաստանի սովետականացիայից: Այդ վարքագիծը շատ պատկերաւոր կերպով ուրազացւած է դաշնակցական աշակերտական միութեան առաջ արտասանած հանդիսար ճառում.

«Կը կուենք և չենք զիջի մեր յեղափոխական դիրքերը անգամ այն ժամանակ, երբ նրանց դրօշակը ծածանուի Թիֆլիսում և Երևանում»^{*)}:

*) Տես «Լոյս» — Վրաստանի Հ. Յ. Դաշն. աշակերտ. միութեան կենտրոնական կոմիտէի օրգանը, — երկուշաբթի, 24 մայիսի, 1920 թ. Թոփչեանի զեկուցումը մոմենտի մասին: Ահա միաձայն ընդունւած բանաձեւը, որ անշուշտ Ղազարեանների, Զօրեանների, Աւետիսեանների խմբագրածն էր և ոչ թէ այն միամիտ աշակերտութեան, օրի առաջ թափում էին իրանց քաղաքական գոհարը դաշնակցական Թիֆլիսի ֆոնքերը.

«Ներկայիս Անդրկովկասի սահմաններին մօտեցած բոլշեիկներն իրանց վարած քաղաքականութեամբ անընդունելի են ամեն մի զեմոկրատիայի համար.

«Որ հենց այդ քաղաքականութեամբ նրանք ջլտաւում են ամբողջ զեմոկրատիայի ոյժը ապագայի ընդհանուր սոցիալիստական զեմոկրատիկ յեղափոխութիւն կատարելու համար և այդպիսով նրանք նախօրօք մատնւած են պարտութեան.

«Որ նրանք ներս խուժելով մեր սահմանները, կառաջացնեն այստեղ ինքնորոշւած զեմոկրատիաների միջև ազգային պատերազմ, որը նոյնպէս անցանկալի է աշխատաւորութեան տեսակէտից»¹.

որոշեց.

1. Հաւանութիւն տալ Հայաստանի կառավարութեան ձեռք առած միջոցներին և ամեն կերպ օժանդակել պաշտպանելու մեր հայրենիքի սահմանները և հայ աշխատաւորութեան ֆիզիքական գոյութիւնը ամեն մի արկածախնդրի

էլ ինչպէս էք դուք—Ղազադեաններ, Քոփչեաններ, Աւետիսեաններ, Ենդում, թէ դուք շէք եղել Երևանի սխրագործութիւնների իսկական հեղինակը, իղէտուգը...

Դուք տեսիլ էք նրանք արեւ են...

Հ. Լոսեան

և հակա-յեղափոխական տարրերի ռանձգութիւններից.

2. Բարեկամական շարաքերութեան մէջ մօտեւ մեր սահմաններին մօտեցող ամեն մի ուժի հետ՝ միացեալ և սնկախ Հայաստանի ինքնորոշման ու սուվերենիտետը նախապայման ունենալով:

Չան, դաշնակցական տղէք-«իղէտուգներ»... Ի՞նչ երևելի էք բնորոշել ձեր և մեր դիրքերը...

ԻՆՏԵՆԻԳԵՆՑԻԱՅԻ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

Ներկայ տնտեսական վերջին Բերնում, Նեկյցարիայում, կը կայանայ ինտելիգենցիայի միջազգային համագումարը: Միևնույն ժամանակ կը ժողովեն Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի և այլ երկրների մտաւորական ոյժերի ներկայացուցիչները: զէմ առ զէմ կը կանգնեն երէկայ թշնամիները—յաղթողներն ու յաղթւածները:

Երևի այդ մարդկանց մէջ կըլինեն նաև բարոյական հեղինակները 14—18 թուականների խայտառակ ոճրագործութեան, որի աննկարագրելի ստորութիւնը,—մերկացնելով բոլոր ազնիւ մտածող մարդկանց թէ մինչև որ աստիճան փտել են կեանքի հին կարգերը,—մի փոքր սանձեց նացիոնալիստական ֆանատիզմը և խախտեց նախապաշարումների անսասանութիւնը,—ֆանատիզմ և նախապաշարումն, որ զրգոելով Եւրոպայի կուլտուրական մարդկանց ընդհանուր վայրենութեան զգացմունքները բռնկաց խայտառակ և արխնոտ համաշխարհային սպանդանոցի մէջ:

Եթէ այդ այդպէս է, եթէ նաև այդպիսի մարդիկ ներկայանան միջազգային համագումարին որպէս բանականութեան ներկայացուցիչներ, ապա այդ կը լինի շափազանց նշանակալից փաստ և, շատ կարելի է, հարուստ խոր սոցիալական արժէք ունեցող հետեանքներով: Խնդիրը, ի հարկէ, նրանում չէ, որ կարտասանեն ուշացած զղջացումների և անհարկաւոր ինքնամերկացման խօսքեր, այլ նրանում, որ համագումարում պէտք է վերջապէս որոշակի և խիստ կերպով զնել ինտելիկտուալ, մտաւորական հիմունքի տիեզերական, համամարդկային նշանակութեան խնդիրը պատմութեան պրոցեսում:

Լուծելով միայն այս խնդիրը, ինտելիգենցիան կարող է

անստատանօրէն հաստատու և միանգամայն որոշակի դիրք ընենլ՝ կամ գլուխ անցնելով ժողովրդական մասսաների, որոնք ձգտում են սոցիալական կեանքի նոր ձևերին, կամ այն դասակարգերի մէջ, որոնք անխմաստ ու հստակ շահերի համար շահագործում են ժողովրդի ֆիզիքական եռանդը, կասեցնելով նրա ոգու, նրա մտքի աճեցումը:

Եթէ ինտելիգենցիան հասկանար և՛ զգար, որ նա մինչև օրս խաղացել է կապիտալիզմի բռնակիր ձեռքերի դերը, — դա կը լինէր հոկայական նշանակութիւն ունեցող փաստ: Ինտելիկատու ոյժերի համեմատաբար համեստ պաշարի անկեղծ միացումը ժողովրդի էմոցիոնալ էներգիայի անհատնելի դանդաժի հետ, ուսումնասիրող և կազմակերպող մտքի ներդաշնակութիւնը անկազմակերպ՝ բայց կեանքի կոչւած կամքի հետ, դա կը տար համամարդկային կուլտուրայի զարգացման պրոցեսին ահագին առաջ՝ մղում և ֆանտաստիկական արագութիւն:

Մի խօսքով — ամբողջ աշխարհի ինտելիգենցիայի առաջ դրւած է համարձակ լուծում պահանջող դաժան հարց՝ կամ ժողովրդի հետ՝ կեանքի բոլոր ձևերի հիմնական փոփոխումով, կամ կապիտալի հետ՝ պաշտպանելու համար հնացած իրաւակարգը:

Արեւմուտքի ինտելիգենցիայի համար պէտք է չափազանց խորատական լինի ուսական ինտելիգենցիայի դերը վերջին երկու տարւայ դէպքերի ընթացքում: Եթէ ուս ինտելիգենտը լինէր հոգեպէս աւելի ամբողջացած և գործնականապէս հեռաւեհ, եթէ նա միանգամից, «բոլշևիկական» յեղափոխութեան առաջին օրերից հետո՝ չփման, կոնստակտի մէջ մտնէր ինտելիգենցիայի այն խմբակի հետ, որը քաջութիւն ունենցաւ բանւորական մասսաների գլուխ անցած իր ձեռքին առնել ցարիզմից և պատերազմից քանդւած երկրի քաղաքական ղեկը — այն ժամանակ էմոցիոնալ փոթորկի թափը չէր կատարի այդքան զաժան աւերումներ արդիւնարեւութեան, տեխնիկայի, կուլտուրայի ասպարէզներում, շատ աւելի քիչ արեւն կը թափէր աւելի, քիչ սխալներ կը կատարւէր և կարտացուէր բանական սկզբունքի սանձող ոյժը:

Եւ ոչ որի չեմ մեղադրում, այլ միայն մատնանշում եմ անվիճելի փաստի վրայ՝ ինտելիգենտական ոյժերի որոշ մասի հեռացումը յեղափոխական պրոցեսի միջից բերեց այն բանի, որ կեանքի որակին վերաբերեալ խնդրի լուծումը անխուսափելի

կերպով հպատակուեմ է յետամնաց մարդկանց,—որպիսին ևս համարուեմ եմ ռուս զիւղացուն,—թւի կարիքներին:

Թուով շատ փոքր ռուս բանւոր դասակարգի վրայ ծանրանում է հակայական խնդիր՝—կրթել զիւղացութեան հարկւրմիրխոնաւոր, բաղմալիզու, բաղմացեղ մասսան: Այդ մասսան ընդունակ է մերկացնել ահագին եռանդ ջախջախման գործում: Բայց զեռ հարց է, թէ արդեօք նա կարող է ստեղծել որեւէ այլ, աւելի վառ բան, բացի մինչև ուղեւորութեան մանր սեփականատէրի հոգեբանութեամբ թափանցած կենցաղի: Այդ տեսակէտից ճիշտ կադմոկերպած խոշոր արդիւնաբերութիւնը,—աւելի քիչ թշնամի է բանւորի և խնտելիղենտների համար, քան անծայր ճահիճը մանր սեփականատէրութեան, սովորաբար օտար և նոյնիսկ թշնամի համամարդկային կուլտուրայի բարձր շահերին:

Ռուսական խնտելիղենցիան աստիճանաբար սկսում է զգալ իր դրութեան տրադիցմը: Թէև նա առաջ էլ ապրում էր հենց այնպէս, զնդանի—ժողովրդի և մութի—իշխանութեան մէջ, բայց ներկայումս այդ զիրքի ճակատագրական անյարմարութիւնը չափազանց պարզ է և չափազանց ցաւոտ նրա համար:

Բայց, կրկնում եմ, նա սկսում է հասկանալ, որ իշխանութեան պիտի կանգնած է ինտելեկտուալ, մտաւորական ոյժ հոգեպէս հարազատ իրան և, հաւանօրէն, մօտիկ ապագայում, Ռուսաստանը հանդիսատես կըլինի կադմակերպ բանականութեան միացմանը բռնկած կամքի հետ,—իսկ այդ երկու ֆակտորները ընդունակ են հրաշքներ գործել: Ահա—իմ կարծիքով—այն մարերը և հարցերը, որոնք չեն կարող չհետաքրքրել ինտերնացիոնալ ինտելիղենցիային:

Անկեղծօրէն հաւատալով ինտելեկտուալ հիմունքների արևմտաեւրոպական ներկայացուցիչների պատւին և խղճին, ես միանգամայն վստահ սպասում եմ, որ համազումարում հարց կը ծագի նաև Ռուսաստանի բոկազայի մասին:

Կարիք չկայ տակու այն մասին, թէ որքան ստոր է այդ բոկազան, որ դատապարտում է ռուս ժողովրդին մեռնելու քաղցից, բժշկական միջոցների պակասութիւնից և այլն: Բայց դուք կարիք կայ մասնանշելու համազումարի անդամներին այն պարագայի վրայ, որ նախևառաջ և ամենից շատ բոկազայի հետեւանքներից տառապում են երեխաները, և ապա՝ գիտական աշ-

խարհի ներկայացուցիչները, որպէս կաթինետի և լաբորատորիայի մարդիկ, գործնական կեանքին վատ յարմարուող և շատ քիչ վարժ մի կտոր հացի համար մղուող կուտամ:

Ապանել քաղցից երեխաներին— ժողովրդի ապագայ ոյժը, ապանել քաղցից ժողովրդի ամբարած ինտելեկտուալ, մտաւորական էներգիան— միզ է ուզում «լուսաւորած», «քաղաքակիրթ» նւրոսն...

Համազումարում պէտք է և անհրաժեշտ է զննել այդ խնդիրը, և հաճաղանց հետաքրքրական է թէ ի՞նչ կը պատասխանեն դրան Անգլիայի, Ֆրանսիայի և միւս երկրների կառավարութիւնները, երկրներ՝ որոնք իրանց համարում են «կուլտուրայի և քաղաքակրթութեան օջախներ»...

Աստիւս Գորկի

Պետրոգրադ, յունւար, 1920 թ.

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԿԱՆՈՆԱԳՐՈՒ- ԹԻՒՆԸ

1864 թ.ին Լոնդոնում ստեղծւեց Բանւորների Առաջին Միջազգային Լճկերութիւնը—Առաջին Ինտերնացիոնալը: Բանւորների Միջազգային այդ Լճկերութեան կանոնադրութեան մէջ առաւել էր.

«Որ բանւոր դասակարգի ազատագրումը կարող է նւաճել միայն ինքը բանւոր դասակարգը.

«Որ պայքարելով իր ազատագրման համար բանւորները պիտի ձգտեն ոչ թէ նոր արտօնութիւններ և մենաշնորհներ ստեղծելու, այլ հաստատելու բոլորի համար հաւասար իրաւունքներ ու պարտականութիւններ և վերացնելու դասակարգային ամեն տեսակի տիրապետութիւն.

«Որ բանւոր դասակարգի տնտեսական հպատակեցումը արտագրութեան գործիքների միահեծան տէրերին, այսինքն կենսական բոլոր աղբիւրների տէրերին, հանդիսանում է ստրկութեան զլխաւոր պատճառը, ստրկութեան բոլոր ձևերի, սոցիալական ողջ շարիքի, հոգևոր ամբողջ աշխատեման և բանւոր դասակարգի քաղաքական հպատակեցման պատճառը.

«Որ բանւոր դասակարգի տնտեսական ազատագրումը հանդիսանում է այն մեծ նպատակը, որին պիտի հպատակեն ամեն քաղաքական շարժում, որպէս միջոց.

«Որ այդ նպատակին հասնելու համար բոլոր ձգտումները մինչև այժմ մնում էին ապարդիւն այն պատճառով, որ առանձին երկրների զանազան պրոֆեսիաների բանւորների միջև պակասում էր համերաշխութիւն և զանազան երկրների բանւորների միջև բացակայում էր եղբայրական միաբանութիւն.

«Որ աշխատանքի ազատագրումը, հանդիսանալով որպէս ոչ-տեղական և ոչ-ազգային խնդիր՝ այլ սոցիալական, շօշափում է բոլոր երկրների շահերը, որտեղ գոյութիւն ունի արդի հասարակական կազմը, և իր լուծման համար պահանջում է ամենից առաջաւոր երկրների տեղական և գործնական համագործակցութիւն։

«Որ Եւրոպայի արդիւնագործական երկրների արդի բանւորական շարժման միաժամանակ վերածնումը մի կողմից առաջացնում է նոր յոյսեր, միւս կողմից լուրջ կերպով նախազգուշացնում է չկրկնել հին սխալները և պահանջում է անմիջական միութիւն մինչև օրս իրար հետ չկապած շարժումների»։

Երկրորդ Խնտերնացիոնալը, հիմնւած 1889 թ.ին Փարիզում, պարտաւորեց շարունակել Առաջին Խնտերնացիոնալի գործը, բայց 1914 թ.ի համաշխարհային սպանդանոցի սկզբին նա կրեց կատարեալ պարտութիւն։ Երկրորդ Խնտերնացիոնալը ընկաւ, կետւած լինելով օպորտունիզմով և սպանւած իր ղեկավարների դաւաճանութեամբ, ղեկավարների՝ որոնք անցան բուրժուազիայի կողմը։

Երրորդ Կոմմունիստական Խնտերնացիոնալը, հիմնւած 1919 թ. մարտին Ռ. Ս. Յ. Ս. Ռ. մայրաքաղաքում, Մոսկւայում, ամբողջ աշխարհի առաջ հանդիսաւոր յայտարարեց, որ իր վրայ է վերցնում շարունակութիւնը և պսակումը մեծ գործի, որ սկսել է Բանւորների Միջազգային Առաջին Ընկերութիւնը։

Երրորդ Կոմմունիստական Խնտերնացիոնալը կազմեց այն մոմենտին, երբ վերջանում էր 1914—18 թւականների իմպերիալիստական պատերազմը, որի մէջ զանազան երկրների իմպերիալիստական բուրժուազիան զոհի մատնեց քսան միլիոն մարդ։

Միտզ պահիր իմպերիալիստական պատերազմը—առաւելին խօսքը, ինչով դիմում է Կոմմունիստական Խնտերնացիոնալը ամեն աշխատաւորի, որտեղ էլ նա ապրելիս լինի և ինչ լեզուով էլ նա խօսելիս լինի։ Յիշիր, որ շնորհիւ կապիտալիստական հասարակակարգի գոյութեան, կապիտալիստական մի փոքր խումբ հնարաւորութիւն ունեցաւ չօրս երկար տարիների ընթացքում ստիպել զանազան երկրների իրար մօրթոսեալութիւն։ Յիշիր, որ բուրժուական պատերազմը Եւրոպա և ամբողջ աշխարհը նետեց ահսելի սովի և չքաւորութեան մէջ։ Յիշիր, որ առանց կապի-

ապրիլի տաղավան կրկնումը աշգրիտ առաջակային պատերազմների ոչ միայն հնարաւոր է, այլ և անխուսափելի:

Կոմմունիստական Ինտերնացիոնալը իրան նպատակ է դրնում պայքարել ամեն միջոցներով, անգամ զէնքով միջազգային բուրժուազիային տաղալիւս համար և ստեղծել Միջազգային Խորհրդային Հանրապետութիւն, որպէս անցողական աստիճան՝ պետութեան կառարեալ ոչնչացման: Կոմմունիստական Ինտերնացիոնալը համարում է պրոլետարիատի զինատարւան միակ միջոցը, որ հնարաւորութիւն է տալիս ազատել մարդկութիւնը կապիտալիզմի սարսափներից: Կոմմունիստական Ինտերնացիոնալը համարում է Խորհրդային Իշխանութիւնը որպէս պրոլետարիատի այդ զինատարւայի աւելի պատմական ձեւը:

Իմպերիալիստական պատերազմը առաւելապէս սերտ կապեց աւելի երկրի բանւորների վիճակը բոլոր երկրների պրոլետարների վիճակի հետ: Իմպերիալիստական պատերազմը աւելորդ անգամ հաստատեց այն, ինչ նստած էր Առաջին Ինտերնացիոնալի կանոնադրութեան մէջ, թէ՛ բանւորի ազատագրումը հանդիսանում է ոչ տեղական և ոչ էլ ազգային խնդիր, այլ միջազգային:

Կոմմունիստական Ինտերնացիոնալը միանգամ բնգմիշտ կտրում է կապը երկրորդ Ինտերնացիոնալի հետ, այն Ինտերնացիոնալի, որի համար դորժնականապէս գոյութիւն ունէին սպիտակ մորթի մարդիկ միայն: Կոմմունիստական Ինտերնացիոնալը իրան նպատակ է դնում ամբողջ աշխարհի աշխատաւորների ազատագրումը: Կոմմունիստական Ինտերնացիոնալի շարքերում եղբայրաբար միանում են սպիտակ, դեղին և սև մորթի մարդիկ, բոլոր աշխարհի աշխատաւորները:

Կոմմունիստական Ինտերնացիոնալը ամբողջովին և անձնուէր պաշտպանում է Ռուսաստանի պրոլետարական մեծ յեղափոխութեան նւաճումները, առաջին յաղթական սոցիալիստական յեղափոխութիւնը համաշխարհային պատմութեան մէջ և հրաւիրում է բոլոր աշխարհի պրոլետարներին զնալ այդ շահով: Կոմմունիստական Ինտերնացիոնալը պարտաւորում է իր բոլոր ոյժերով աջակցել ամեն Խորհրդային հանրապետութեան, որտեղ էլ որ նա հիմնւի:

Կոմմունիստական Ինտերնացիոնալը դիտակցում է, որ որպէսզի շուտով հասնի յաղթութեան, Բանւորների միջազգային

ընկերութիւնը, որ պայքարում է կապիտալիզմի ոչնչացման և կոմ-
մունիզմի հաստատման համար, պիտի ունենայ ներդաշնակ կենտ-
րոնացրած կազմակերպութիւն: Ըստ գործի էութեան, Կոմմունիս-
տական Ինտերնացիոնալը պիտի իրապէս և փաստօրէն ներկայա-
ցնի մի միացած համաշխարհային Կոմմունիստական կուսակցու-
թիւն, որի առանձին սեկցիաները հանդիսանում են կուսակցու-
թիւնների՝ որոնք գործում են ջոկ-ջոկ երկրներում: Կոմմունիստա-
կան Ինտերնացիոնալի կազմակերպչական ապարատը պարտա-
ւոր է ապահովել ամեն երկրի աշխատաւորներին հնարաւորու-
թիւն՝ որ ամեն աւելի մոմենտում նա ստանայ մաքսիմալ օգնու-
թիւն այլ երկրների կազմակերպւած պրոլետարներից:

Այդ նպատակով Կոմմունիստական Ինտերնացիոնալը հաս-
տատում է կանոնադրութեան հետեւեալ կէտերը.

յօդ. 1. Բանւորների Նոր Միջազգային Ընկերութիւնը հիմ-
նւած է կազմակերպելու զանազան երկրների պրոլետարների
միահամուռ գործադուլիւնները, որոնք ձգտում են մի նպատակի,
այն է՝ տապալել կապիտալիզմը, հաստատել պրոլետարիատի
գիկտատուրան և ստեղծել Միջազգային Խորհրդային Հանրապե-
տութիւն՝ դասակարգերը կատարելապէս ոչնչացնելու և օոցիա-
լիզմը իրականացնելու համար. — Հանրապետութիւն՝ որը կոմ-
մունիստական հասարակութեան առաջին աստիճանն է համար-
ւում:

յօդ. 2. Բանւորների Նոր Միջազգային Ընկերութիւնը իւ-
րացնում է «Կոմմունիստական Ինտերնացիոնալ» անունը:

յօդ. 3. Կոմմունիստական Ինտերնացիոնալի մէջ մտնող բո-
լոր կուսակցութիւնները կոչւում են այսինչ երկրի Կոմմունիս-
տական կուսակցութիւն (Կոմմունիստական Ինտերնացիոնալի
սեկցիա):

յօդ. 4. Կոմմունիստական Ինտերնացիոնալի բարձրագոյն
օրգանը հանդիսանում է նրա կազմի մէջ մտնող բոլոր կուսակ-
ցութիւնների և կազմակերպութիւնների համաշխարհային կոնգ-
րեսը (համագումարը): Համաշխարհային կոնգրեսը կանոնադրու-
թեան համաձայն հասարւում է ոչ պակաս, քան տարէնը մէկ
անգամ: Համաշխարհային կոնգրեսը միայն իրաւունք ունի փո-
փոխել Կոմմունիստական Ինտերնացիոնալի ձրագիրը: Համաշ-
խարհային կոնգրեսն է քննում և վճռում ամենաեղարեւոր ձրա՝

գրային և տակտիկական հարցերը, որոնք կապւած են Կոմմունիստական Ինտերնացիոնալի գործունէութեան հետ: Ամեն մի կուսակցութեան և կազմակերպութեան պատկանեալ վճռական ձայներէ թիւը համաշխարհային կոնգրեսում որոշում է կոնգրեսը՝ առանձին որոշումով:

յօդ. 5. Համաշխարհային կոնգրեսը ընտրում է Կոմմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտէն, որը հանդիսանում է Կոմմունիստական Ինտերնացիոնալի ղեկավար օրգանը այն ժամանակաշրջանի ընթացքում, որ տեսում է Կոմմունիստական Ինտերնացիոնալի մի համադրւածարից մինչև միւս համադրւածարը: Գործադիր Կոմիտէն հաշուետու է միմիայն համաշխարհային կոնգրեսի առաջ:

յօդ. 6. Կոմմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտէի տեղը իւրաքանչիւր անգամ որոշում է Կոմմունիստական Ինտերնացիոնալի համաշխարհային կոնգրեսը:

յօդ. 7. Կոմմունիստական Ինտերնացիոնալի արտակարգ համաշխարհային կոնգրես կարող է հրաւիրել կամ Գործադիր Կոմիտէի որոշումով և կամ Կոմմունիստական Ինտերնացիոնալի վերջին համաշխարհային կոնգրեսում ժամանակցող կուսակցութիւնների կէսի պահանջով:

յօդ. 8. Կոմմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտէի աշխատանքների գլխաւոր մասը ընկնում է այն երկրի կուսակցութեան վրայ, որտեղ համաշխարհային կոնգրեսի որոշումով գտնուում է Գործադիր Կոմիտէն: Այդ երկրի կուսակցութիւնը Գործադիր Կոմիտէի մէջ մտնում է իր հինգ ներկայացուցիչներին՝ վճռական ձայնով: Բացի դրանից, Կոմմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտէի մէջ մտնում են մի-մի ներկայացուցիչներ վճռական ձայնով իւրաքանչիւր 10—12 ամենախոշոր Կոմմունիստական կուսակցութիւններից, որոնց ցուցակը հաստատում է Կոմմունիստական Ինտերնացիոնալի ներթափանց համաշխարհային կոնգրեսը: Կոմմունիստական Ինտերնացիոնալի մէջ ընդունւած միւս կուսակցութիւնները և կազմակերպութիւնները իրաւունք ունեն ուղարկել Գործադիր Կոմիտէի մէջ աշխատելու մի-մի ներկայացուցիչ խորհրդակցական ձայնով:

յօդ. 9. Գործադիր Կոմիտէն ղեկավարում է Կոմմունիստական Ինտերնացիոնալի ամբողջ աշխատանքը մի համադրւածարից

մինչև միւսը, հրատարակում է Կոմմունիստական Ինտերնացիո-
նալի կենտրոնական օրգանը (էԿոմմունիստական Ինտերնացիո-
նալը հանդէսը) ոչ պակաս քան չորս լիզուով, հանդէս է դալիս
Կոմմունիստական Ինտերնացիոնալի անունից անհրաժեշտ կո-
չերով և տալիս է ամենի համար պարտադիր դիրեկտիւներ այն
բոլոր կուսակցութիւններին և կազմակերպութիւններին, որոնք
մտնում են Կոմմունիստական Ինտերնացիոնալի մէջ, Կոմմունիս-
տական Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտէին իրաւունք է
տրւում զահանջել արտաքսելու կուսակցութիւններից այն խմբակ-
ներին և անձերին, որոնք խախտում են միջազգային դիսցիպլի-
նան, նոյնպէս և արտաքսել Կոմմունիստական Ինտերնացիոնա-
լից այնպիսի կուսակցութիւններ, որոնք խախտում են համաշ-
խարհային կոնգրեսի որոշումները: Այդ կուսակցութիւնները ի-
րաւունք ունեն բողոք ներկայացնել համաշխարհային Կոնգրեսին:
Անհրաժեշտ դէպքերում Գործադիր Կոմիտէն կազմակերպում է
զանազան երկրներում իր տեխնիքական կամ այլ օժանդակիչ
բիւրոները, որոնք ամբողջովին ենթակա են Գործադիր Կոմի-
տէին: Գործադիր Կոմիտէի ներկայացուցիչները կատարում են
իրանց ստանձնած ֆազաքական յանձնարարութիւնները սերտ հա-
մաձայնութեամբ տեալ երկրի Կոմմունիստական Կուսակցութեան
կենտրոնական Կոմիտէի հետ:

յօդ. 10. Կոմմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր Կո-
միտէն իրաւունք ունի իր մէջ ընդունել խորհրդակցական ձայ-
նով այն կուսակցութիւնների և կազմակերպութիւնների, ներ-
կայացուցիչներին, որոնք չեն ընդունւած Կոմմունիստական Ին-
տերնացիոնալի կազմի մէջ, սակայն ներկայանում են Կոմմու-
նիզմի համակրող կամ մերձեցող կազմակերպութիւններ:

յօդ. 11. Կոմմունիստական Ինտերնացիոնալի մէջ մտնող
բոլոր կուսակցութիւնների և կազմակերպութիւնների ինչպէս և
Կոմմունիստական Ինտերնացիոնալին համակրողներ թւում հաշ-
ւող կուսակցութիւնների օրգանները պարտաւոր են տպագրել
Կոմմունիստական Ինտերնացիոնալի և նրա Գործադիր Կոմիտէի
բոլոր պաշտօնական որոշումները:

յօդ. 12. Ամբողջ Եւրոպայի և Ամերիկայի ընդհանուր սո-
ցիալ-քաղաքական կացութիւնը թելադրում է բոլոր երկրների
Կոմմունիստներին, որ անհրաժեշտ է ստեղծել ոչ-լիզալ Կոմմու-

Նխատական կազմակերպութիւններ՝ զուգընթաց լեզուայ կազմակերպութիւններին: Գործադիր Կոմիտէն պարտաւոր է հսկել, որ այս նորոշումը կեանքում կիրառուի ամենուրեք:

յօդ. 13. Ըստ կանոնի, Կոմմունիստական Լճաերնացիոնալի մէջ մանող կուսակցութիւնների ամենակարեւոր քաղաքական յարաբերութիւնները կատարուում են Կոմմունիստական Լճաերնացիոնալի Գործադիր Կոմիտէի միջոցով: Շտապօղակաւ ղէպքերում յարաբերութիւնները կատարում են անմիջական կերպով, բայց միաժամանակ այդ մասին հաղորդում է Կոմմունիստական Լճաերնացիոնալի Գործադիր Կոմիտէին:

յօդ. 14. Պրոֆեսիոնալ միութիւնները, որոնք կանգնած են Կոմմունիզմի տեսակէտի վրայ, և միացած են միջազգային մասշտաբով Կոմմունիստական Լճաերնացիոնալի Գործադիր Կոմիտէի կոնտրոլի տակ, կազմում են Կոմմունիստական Լճաերնացիոնալի պրոֆեսիոնալ սեկցիան: Կոմմունիստական պրոֆեսիոնալ միութիւնները համաշխարհային կոնգրեսին ուղարկում են իրանց ներկայացուցիչներին տեւալ երկրի Կոմմունիստական կուսակցութեան միջոցով: Կոմմունիստական Լճաերնացիոնալի պրոֆեսիոնալ միութիւնների սեկցիան ուղարկում է իր մի ներկայացուցիչին Կոմմունիստական Լճաերնացիոնալի Գործադիր Կոմիտէի մէջ վճռական ձայնով: Կոմմունիստական Լճաերնացիոնալի Գործադիր Կոմիտէն իրաւունք ունի ուղարկել իր ներկայացուցիչին Կոմմունիստական Լճաերնացիոնալի պրոֆեսիոնալ միութիւնների սեկցիան վճռական ձայնով:

յօդ. 15. Կոմմունիստական Երիտասարդութեան Միջազգային Միութիւնը հանդիսանում է Կոմմունիստական Լճաերնացիոնալի հաւասար անդամը և հպատակում է Գործադիր Կոմիտէին: Կոմմունիստական Երիտասարդութեան Միջազգային Միութեան Գործադիր Կոմիտէն ուղարկում է մի ներկայացուցիչ՝ վճռական ձայնով Կոմմունիստական Լճաերնացիոնալի Գործադիր Կոմիտէի մէջ: Կոմմունիստական Լճաերնացիոնալի Գործադիր Կոմիտէն էլ իրաւունք ունի ուղարկել Կոմմունիստական Երիտասարդական Միջազգային Միութեան Գործադիր Կոմիտէի մէջ իր ներկայացուցիչին՝ վճռական ձայնով:

յօդ. 16. Կոմմունիստական Լճաերնացիոնալի Գործադիր Կոմիտէն հաստատում է Կոմմունիստական Կանանց շարժման Միջազ-

դային քարտուղարին և կազմակերպում է Կոմմունիստական Ին-
տերնացիոնալի Կանանց Սեկցիան:

յադ. 17. Կոմմունիստական Ինտերնացիոնալի ամեն մի ան-
դամը մի երկրից միւսը անցնելիս եղբայրական աջակցութիւն է
դանում Ներքոյդ Ինտերնացիոնալի տեղական անդամներին կողմից:



ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՁԸ

Պրոլետարիատի զիկտատուրայի հարցը արդի բանւորական շարժման հիմնական խնդիրն է՝ առանց բացառութեան բոլոր կապիտալիստական երկրներում։ Այդ հարցի կատարեալ պարզարանութեան համար անհրաժեշտ է գիտենալ նրա պատմութիւնը։ Միջազգային մասշտաբով յեղափոխական զիկտատուրայի ընդհանրապէս և պրոլետարիատի զիկտատուրայի մասնաւորապէս ուսուցման պատմութիւնը միաւորուում է յեղափոխական սոցիալիզմի պատմութեան հետ և յասկապէս մարքսիզմի պատմութեան հետ։ Այնուհետեւ, — և այդ, հասկանալի և ամենից զիսաւորն է, — հարստահարողների դէմ ապստամբւած, ճնշւած և շահագործւած դասակարգի բոլոր յեղափոխութիւնների պատմութիւնը ներկայացնում է ամենից առաջնակարգ նիւթը և աղբիւրը մեր գիտութիւնների զիկտատուրայի հարցի մասին։ Ով չի հասկացել որեւէ յեղափոխական դասակարգի զիկտատուրայի անհրաժեշտութիւնը՝ յանուն նրա յաղթութեան, ապա նա ոչինչ չի հասկացել յեղափոխութեան պատմութիւնից կամ ոչինչ չի ուզում հասկանալ այդ ասպարէզում։

Ռուսական մասշտաբով վերցրած, առանձնակի նշանակութիւն ունի, եթէ խոսելու լինենք թէորիայի մասին, Ռուսաստանի Սոց. Դեմոկր. Բան. կուսակցութեան ծրագիրը, կազմած 1902—03 թւերին „Заря“-ի և „Искра“-ի խմբագրութեան ձեռքով, կամ աւելի ճիշտ, Գ. Վ. Պլեխանովի կազմածը և խմբագրւած, փոփոխած ու հաստատուած այդ խմբագրութեան կողմից։ Պրոլետարիատի զիկտատուրայի հարցը այդ ծրագրում դրւած է պարզ և որոշակի, ընդամին տրւած է հենց կապւած Բերնշտէյնի դէմ պայքարի հետ, օպորտունիզմի, յաւմարելուն դէմ։ Բայց ամենից կարեւոր նշանակութիւն ունի, իհարկէ, յեղափոխութեան փորձը, այսինքն Ռուսաստանում 1905 թւի փորձը։

Այդ տարւոյ վերջին երեք ամիսները՝ հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր, շատ ուժեղ, լայնածաւալ, մասսայական յեղափոխական պայքարի շրջան էին: Այդ շրջանում միացած էին այդ պայքարի երկու ամենից հզօր ձևերը՝ մասսայական քաղաքական գործադուլը և զինւած ապստամբութիւնը:

Փակագծում նկատենք, որ արդէն 1905 թւի մայիսին, բուլղարիկական համագումարը, — «Թուօ. Սոց. Դեմ. Բան. Կուս. Երրորդ Համագումարը» — նախաջեց «պրոլետարիատի կազմակերպելու խնդիրը անմիջապէս պայքարելու միահեծանութեան դէմ զինւած ապստամբութեան միջոցով՝ Կուսակցութեան ամենից զլիաւոր և անյետաձգելի խնդիրներէից մէկը» և յանձնարարեց բոլոր կուսակցական կազմակերպութիւններին «պարզել մասսայական քաղաքական գործադուլների դերը, որոնք կարող են ունենալ լուրջ նշանակութիւն ապստամբութեան սկզբին և նրա ամբողջ ընթացքում»:

Համաշխարհային պատմութեան մէջ առաջին անգամ ձեռք բերեց յեղափոխական պայքարի զարգացման աշխարհի բարձրութիւն և աշխարհի ոյժ, որ զինւած ապստամբութիւնը ասպարէզ եկաւ միացած մասսայական գործադուլի հետ, պրոլետարական այդ առանձնայատուկ զէնքի հետ: Պարզ է, որ այդ փորձը ունի համաշխարհային նշանակութիւն բոլոր պրոլետարական յեղափոխութիւնների համար: Եւ բուլղարիկները ամենայն ուշադրութեամբ և ֆանատիկութեամբ ուսումնասիրում էին այդ փորձը թէ քաղաքական և թէ տնտեսական կողմից: Մատնանշեմ 1905 թւի տնտեսական և քաղաքական գործադուլների ամսական տւեալների իմ անալիզը, մէկի և միւսի կապի ձևերի մասին գործադուլային պայքարի զարգացման բարձրութեան վերաբերեալ, որը երբեք մէկ և եղել բերած աշխարհումս: Այդ անալիզը ես տուի «Просвещение» ամսագրում 1910 և 1911 թւականներին և նա համառոտակի կրկնեց այդ շրջանի արտասահմանեան բուլղարիկական գրականութեան մէջ:

Մասսայական գործադուլները և զինւած ապստամբութիւնը իրանցով օրւայ խնդիր էին դարձնում յեղափոխական իշխանութեան և զիկտատուրայի հարցերը, որովհետեւ պայքարի այդ ձևերը անխուսափելիօրէն առաջ էին բերում — սկզբում տեղական չափով, մասշտաբով — հին իշխանութիւնների վտարումը, իշխանութեան

խլումը պրոլետարիատի և յեղափոխական պատկարզի ձեռքով, պոմեչեիկների քշելը, երբեմն ֆարրիկանների զրաւումը և այլն և այլն: Յիշածս շրջանի մասսայական յեղափոխական պայքարը հեանքի կոչեց համաշխարհային պատմութեան մէջ առաջներում շտեմուած այնպիսի կազմակերպութիւններ, ինչպիսիքն են Բանւարական Պաշտամանութեան ետեւողները, իսկ նրանց հետեւը՝ զինւորական պատգամաւորները՝ խորհուրդները, գիւղացիական կոմիտեները և նմաններ: Ստացւեց այնպիսի փաստ, որ այն հիմնական խնդիրները (Խորհրդային իշխանութիւն և պրոլետարիատի զիկտատումը), որոնք զրաղեցնում են իրանցով ներկայումս բոլոր աշխարհիս գիտակից բանւորների ուշադրութիւնը, արդէն դուած էին գործնականապէս 1905 թւականի վերջում: Եթէ յեղափոխական պրոլետարիատի և չկեղծած մարքսիզմի այնպիսի աչքի ընկնող ներկայացուցիչներ, ինչպիսիք էին Լիւբսեմբուրգը և ուրիշները, իսկոյն գնահատեցին այդ գործնական փորձի նշանակութիւնը և ժողովներում ու մամուլի մէջ հանդէս եկան նրա քննական անալիզով, ապա պաշտօնական սոցիալ-դեմոկրատական և սոցիալիստական կուսակցութիւնների պաշտօնական ներկայացուցիչների ահագին մեծամասնութիւնը, զրանց թւում և ունեւորմանները և ապագայ «կոսցիկիանականների», «լոնգէականների», Խիլկիտի կոզմոսկիցների՝ Ամերիկայում և այլն տիպարի մարդիկ յայտնագործեցին, կատարեալ անընդունակութիւն հասկանալու այդ փորձի նշանակութիւնը և կատարել իրանց յեղափոխական պարտքը, այսինքն ձեռնարկել այդ փաստի դասերի ուսումնասիրութեանը և պրոպագանդին:

Ռուսաստանում և՛ բոլշեիկները, և՛ մենշեիկները 1905 թւի զեկտեմբերեան զինւած ապստամբութեան պարտութիւնից իսկոյն հեթ ձեռնարկեցին այդ փորձի հաշւաւորեան: Այդ աշխատանքը առանձնապէս շտապեցւեց նրանով, որ 1906 թւի ապրիլին կայացաւ Ստոկհոլմի այսպէս կոչւած «Միաւորեցնող Համագումարը Ռ. Ս. - Դ. Բ. Կ.», որին ներկայ էին և ձեականօրէն միաւորեցին թէ մենշեիկները, և թէ՛ բոլշեիկները: Այդ համագումար համար պատրաստութիւնները երկու ֆրակցիաների կողմից տանւում էին չափազանց հաւնադէպ: Երկու ֆրակցիաները մինչև համագումարը, 1906 թւի սկզբին հրատարակեցին իրանց որոշումների նախագիծը՝ ամենապիտատ հարցերի վերաբերեալ: Այդ

Նախագիծը, որոնք արտատպւած են իմ բրոշիւրով «Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանաժարական Կուսակցութեան միաւորեցնող համագումարի մասին զեկուցում»—նամակ Պետերբուրգի բանւորներին—Մոսկւա 1906 թիւ, 110 երեսից բաղկացած, որոնց կէսը կազմում են երկու հատածների բեզոյլիցիանների նախագծերի բնագիրները և համագումարի վերջնականապէս ընդունւած որոշումները,—ներկայացնում են գլխաւոր նիւթ՝ ծանօթանալու համար հարցերի այն ժամանակւայ դրութեան հետ:

Յորհուրդների նշանակութեան վէճերը այն ժամանակ արդէն կապւած էին զիկուսատուրայի հարցի հետ: Բոլշեիկները դեռ մինչև 1906 թիւ հոկտեմբերեան յեղափոխութիւնը զբոյլ էին զիկուսատուրայի հարցը (տես իմ բրոշիւրը «Սոցիալ-դեմոկրատիայի և դեմոկրատիկ յեղափոխութեան երկու տակտիկան», Ժընև, 1905 թ. յուլիս, որը արտատպւած է իմ «Տասնհերկու տարւայ ընթացքում» ժողովածուի մէջ): Մենշեիկները այդ «զիկուսատուրա» լոզունգին վերաբերւեցին բացասական: Բոլշեիկները հաստատում էին, որ Բանաժարական Պատգամաւորների Յորհուրդները «փաստօրէն ներկայացնում են նոր յեղափոխական իշխանութեան սաղմերը», ինչպէս բառացի առւած է բոլշեիկեան բեզոյլիցիայի նախագծում տես «Զեկուցման» 92 երեսը): Մենշեիկները ընդունում էին, խորհուրդների նշանակութիւնը, կողմնակից էին «նրանց կազմելու օժանդակութեան» և այլն, բայց նրանց չէին համարում իրրի սաղմեր յեղափոխական իշխանութեան, չէին խօսում առհասարակ այս կամ այն տիպի «նոր յեղափոխական իշխանութեան» մասին, ուղղակի մերժում էին զիկուսատուրայի լոզունգը: Դժուար չէ նկատել, որ մենշեիկների հետ ունեցած բոլոր տարաձայնութիւններն արդէն սաղմում կային հարցի այդպէս դնելուն մէջ: Դժուար չէ տեսնել նոյնպէս, որ մենշեիկները (և ուսմներ և ոչ-ուսմներ, կաուցկիանականների և լոնգէականների նման) դէմ արտայայտեցին և արտայայտում են տեւայ հարցի դնելու ձևի մէջ, որպէս բեֆորմիստներ և յարմարւողներ, օպորտունիստներ, որոնք խօսքով ընդունում են պրոլետարական յեղափոխութիւնը, իսկ զործնականապէս հետեւում են «յեղափոխութեան» զաղափարի ամենից ետևանք եւ նիւնականք:

Դեռ մինչև 1905 թվի յեղափոխութիւնը, վերև յիշածս «երկու տակտիկա» բրոշիւրում քննեցի մենշեիկների ապացոյցները, որոնք մեղադրում էին ինձ նրանում, որ ես իմ «փոխ եմ գցել աննկատ կերպով «յեղափոխութիւն և զիկտատուրա» զաղափարները (տես «12 տարւայ ընթացքում» եր. 459), ես ապացուցում էի մանրամասնօրէն, որ հենց այդ մեղադրանքով մենշեիկները ցուցադրում են իրանց օպորտունիզմը, իրանց խնկարկան քաղաքական ընոյթը, որպէս ձայնակցողներ լիբերալ բուրժուազիայի, նրա ազդեցութեան ուղիկցողներ պրոլետարիատի միջև, երբ յեղափոխութիւնը դառնում է անվիճելի ոյժ, այն ժամանակ և նրա հակառակորդները սկսում են «ճանաչել յեղափոխութիւնը», ասում էի ես, մասնանշելով (1905 թվի դեռ ամառը) որևէ լիբերալներին օրինակի վրայ, որոնք սակայն մնում էին սահմանադրական-մոնարխիականներ Սլոժմ, 1920-ին, կարելի կը ինէր աւելացնել, որ Գերմանիայում և Իտալիայում ազատամիտ բուրժուաները կամ առնւազը նրանցից ամենից լուսաւորները և ճարպիկները պատրաստ են «ճանաչել յեղափոխութիւնը»: Բայց «ճանաչելով» յեղափոխութիւնը և միևնոյն ժամանակ հրաժարելով ճանաչել որոշ զասակարգի (կամ որոշ զասակարգերի) դիկտատուրան, այն ժամանակայ որևէ լիբերալները և մենշեիկները, այժմեան գերմանացի և իտալացի լիբերալները—Տուրատտիի կոզմիակիցները, կաուցիկանականները հենց զրանով արտայայտում են իրանց բեմքումընդմիջ, իրանց կատարեալ անպէտքութիւնը իրրև յեղափոխականներ:

Որովհետեւ, երբ յեղափոխութիւնը զարձկ է արդէն անվիճելի մի ոյժ, երբ նրան «ճանաչում են» նաև լիբերալները, երբ ղեկավար զասակարգերը ոչ միայն տեսնում են, այլև զգում ճնշւած մասսաների անյաղթելի զօրեղութիւնը, այն ժամանակ ամբողջ հարցը և թէորհաթիկների, և քաղաքականութեան զործական ղեկավարների համար յանգում է մի դրութեան՝ յեղափոխութեան նիւթ զասակարգային սրճուման, Իսկ առանց «զիկտատուրայի» զաղափարի չի կարելի տալ այդ ճիշտ զասակարգային որոշումը: Զը պատրաստելով զիկտատուրայի հոդը զարձկանապէս՝ չի կարելի յեղափոխական լինել: Այդ ճշմարտութիւնը չը հասկացան մենշեիկները 1905 թվին, չեն հասկանում 1920 թվին իտալացի, գերմանացի, ֆրանսիացի և այլ սոցիալիստներ, որոնք վախենում

են Կոմմունիստական Ինտերնացիոնալի խիստ «պայմաններից», վախենում են այն մարդիկ, որոնք խոսեցին ընդունակ են հասնել զինատառուրան, բայց անընդունակ են նրան պատրաստել զործով։ Եւ այդ պատճառով անպատեհ չի լինի նորից վերադադրել մանրամասնորէն Մարքսի հայեացքների պարզարանութիւնների մասին տպագրածը 1905 թւի յուլիսին ընդդէմ ուսման շէկիների, բայց որը վերաբերում է 1920 թւականի նաև արեւմտեան-եւրոպական մենշեիկներին։

Մերինգը իր ձեռքով հրատարակած Կ. Մարքսի «Նոր Հոստոսեան Լրագրի» մէջ տպած 1848 թւի յոգւածների ծանոթութիւններում պատմում է, որ բուրժուական մամուլը ի միջի այլոց անում էր այդ լրագրին հետեւալ կշտամբանքը. «Նոր Հոստոսեան Լրագիրը» իբր թէ պահանջում էր «անյապաղ մտցնել զինատառուրա, որպէս միակ միջոց իրազործելու զեմոկրատիան» (տես Mark Nachlass, հատոր III, եր. 53). վուլգար-բուրժուական տեսակէտից զինատառուրայի գաղափարը և զեմոկրատիայի գաղափարը ժխտում են մէկը միւսին։ Չը հասկանալով դասակարգերի պայքարի թէորիան, սովորած լինելով տեսնել քաղաքական ասպարիզի վրայ բուրժուական զանազան խմբակների և հատուկների մանր-մուշր վէճերը, բուրժուական զինատառուրայի տակ հասկանում է զեմոկրատիայի բոլոր ազատութիւնների և զարանտիւնների վերացումը, ամենատեսակ կամայականութիւն, ամենատեսակ չարագործութիւն իշխանութեան, զինատառուրա անձնական շահերի համար։ Ըստ էութեան հենց այդ զոհնիկ-բուրժուական հայեցակէտը արտացոլում է և մեր մենշեիկների մէջ, որոնք բոլշեիկների սէրը դէպի «զինատառուրա» լողունգը բացատրում են նրանով, որ Լենինը «հիւանդ է ցանկութեամբ փորձել իր բախար» (տես «Искра» № 103). Որպէս զի պարզինք մենշեիկներին դասակարգի զինատառուրայի գաղափարը՝ զանազանելով նրան տնձի զինատառուրայից, և զեմոկրատական զինատառուրայի խնդիրները՝ զանազանած սոցիալիստական զինատառուրայից, անզուտ չի լինի կանգ առնել «Նոր Հոստոսեան Լրագրի» հայեացքների վրայ։

«Ամեն մի ժամանակագոր պետական հաստատութիւն— զրում էր «Նոր Հոստոսեան Լրագիրը» 1848 թւի սեպտեմբերի 14-ին, — յեղափոխութիւնից յետոյ կարօտ է զինատառուրայի և

ընդամենն հասնեցան գիկտատուրայի: Մենք սկզբից կշտամբում էինք Կամպչաուզներն (մինխաորութեան գլուխը, 1848 թ.ի մարտի 18-ի յեղափոխութիւնից յետոյ), որ նա գիկտատուրի պէս չը վարւէր, որ նա խեղճն չփշրեց և չհեռացրեց Նիւնարկութիւններէ մնացորդները: Եւ ահա, այն պահին՝ երբ պ. Կամպչաուզներ սրտբում է իրան սահմանադրական իլլիզիաներով, ջախջախւած հաւանկցութիւնը (այսինքն ընկերայի կուսակցութիւնը) ամբողջեց իր գիրքերը բարձր պաշտանէութեան և զօրքի մէջ, նամարձակութիւն ստացաւ այստեղ - այնտեղ պարզ պայքար սկսելու:

Այս խօսքերում, արգարացի ասում է Մերկնզը, մի քանի գրութիւնների մէջ ամփոփւած է այն, ինչ մանրամասնորէն զարգացնում էր Շնոր Զոհնոսեան Լրագիրը՝ երկար յօդածներում Կամպչաուզների մինխաորութեան մասին: Ապա ինչ են ասում մեզ Մարքսի այդ խօսքերը: Այն, որ ժամանակաւոր յեղափոխական կառավարութիւնը պիտի հանդէս գայ գիկտատուրայէ (մի գրութիւն, որը խելի չկարողացան ընդունել մենչեիկները, որոնք վախենում էին «գիկտատուրա» լոգունդից): Այն, որ այդ գիկտատուրայի խնդիրն է ոչնչացնել Նին հաստատութիւնների մնացորդները (չենց այն, ինչ պարզ ցոյց է տւած Ռ. Ս.-ի. Բ. Գ. բողեիկների III-րդ համագումարի հակա-յեղափոխական պայքարի մասին բեզոլիցիայում, և որը բաց է թողնւած մենչեիկների բեզոլիցիայում, ինչպէս մենք ցոյց տւինք վերևում): Վերջապէս երրորդը՝ այդ խօսքերից հետեւում է, որ Մարքսը հայտնածում էր բուրժուական ղեմակրտաներին շտահմանադրական իլլիզիաներին համար, յեղափոխութեան և աշխարայ քաղաքացիական կուի շրջանում: Թէ ինչ է այս խօսքերի իմաստը, այդ առաւելապէս ակնյայտնի երևում է Շնոր Զոհնոսեան Լրագրի 1848 թ.ի յունիսի 6-ի յօդածից: Ժողովրդական Սահմանադրական Ժողովը՝ գրում էր Մարքսը, —ամենից առաջ պիտի լինի զործօն, ակտիւ, յեղափոխականօրէն ակտիւ Ժողով: Իսկ Յրանկ-Փուրաի Ժողովը պարապում է զպրօցական վարժութիւններով պարլամենտարիզմի մասին և կառավարութեանն է թողնում զործելու ասպարէզը: Ենթադրենք որ այդ գիտական կանաւին կաշտուէր մշակել օրակարգի ամենալաւ ձևը և ամենալաւ սահմանադրութիւնը: Ի՞նչ օգուտ կը լինի այդ ամենալաւ օրակարգից

և ամենալուսաւոյն աստեղծարարութիւնից, եթէ գերմանական կառավարութիւնները այդ ժամանակ աւինն են գրել որակարգի մէջ»։

«Անձ թէ ինչ միտք ունի «գիւտատուրա» լոգունգը»։
«Մեծ խնդիրները ժողովրդների կեանքի մէջ վնասում են միայն այժի միջոցով»։ Բէականն զասակարգերը իրանք են գիտում տառջիւնները սովորաբար այժին, քաղաքացիական կռիւն, սորակարգի մէջ» աւինն են գնում»։ ինչպէս արեց սուսական միապետութիւնը և շարունակում էր անել սխառմատիկորէն և անշեղ, ամեն աեղ և ամենուրեք, սկսած յունարի 9-ից (1905 թ.)»

Եւ քանի որ այդ գրութիւնն է ստեղծել, քանի որ աւինը իրապէս գրել է քաղաքական օրակարգի գլխին, քանի որ ազատամբութիւնը դարձաւ անհրաժեշտ և անյետաձգելի, այն ժամանակ կոնստիտուցիոն իլլիգիաները և զպրօցական վարժութիւնները պարլամենտարիզմի մասին ծածկոց են դառնում յեղափոխութեան, բուրժուական դատանմութեան ծածկոց այն մասին, թէ ինչպէս է բուրժուական «յեա կանգնում» յեղափոխութիւնից, Իսկապէս յեղափոխական դասակարգը այն ժամանակ առաջ պիտի բերի գիւտատուրայի լոգունգը»։ (Տեա «12 ա. ընթ.» II-րդ հրատ. 489-491)։

Այդպէս էին դատում բուլեթիւնները գիւտատուրայի մասին մինչև 1905 թի հսկանքներեան յեղափոխութիւնը։

Այդ յեղափոխութեան փորձից յետոյ ինձ պատահեց մանրամասնօրէն բնեկ գիւտատուրայի հարցը «կաղեանների յագթութիւնը և Բանտրական կուսակցութեան խնդիրները» բրոշիւրում (Պետերբուրգ, 1906 թ. բրոշիւրի տակը կայ ամսաթիւր 1906 թ. մարտի 28-ին)։ Այդ բրոշիւրից ես կը բերեմ բոլոր ամենից նական դատողութիւնները, զգուշացնելով, որ այստեղ սեպական անուն-ազգանունները ես փոխարինում եմ սոսկ ցուցմունքով այն մասին, թէ կաղեանների կամ մենշեկիւնների մասին է վերաբերում խօսքը։ Ընդհանրապէս ասած բրոշիւրը ուղղւած է ընդդէմ կաղեանների և մասամբ ընդդէմ անկուսակցական ազատամիտների, կիսակաղեանների, կիսամենշեկիւնների։ Բայց նապէս գիւտատուրայի մասին բոլոր ասածները վերաբերում է հենց մենշեկիւններին, որոնք իւրաքանչիւր քայլափոխում սայթաքում էին զէպի կաղեանները այս հարցի վերաբերեալ։

«Հենց այն ժամանակ, երբ դադարում էին հրացանա-

Լեզուները Մոսկւայում (1905 թ. դեկտեմբեր), երբ սաղ-
 մա-սասիկանական զիկտատուրան տօնում էր իր կատարի օրդի-
 աները, երբ էկզեկուցիաները և մասսայական շարժարանները
 տարածւում էին ամբողջ Ռուսաստանի վրայ, — կազմաների մա-
 մուլում լսւում էին ճառեր ընդդէմ ձախակողմեանների բռնութեան,
 ընդդէմ յեղափոխական կուսակցութիւնների գործադուլային կո-
 միտներին Դուրասովի (ցարական ղեներալ, որը մշեց ղեկտեմ-
 բերեան ապստամբութիւնը 1905 թ.) հաշով գիտութիւնը առե-
 տուր զարմբած կազնետական պրոֆեսորները այն տեղը հասան, որ
 «զիկտատուրա» խօսքը թարգմանում էին «ուժեղացրած օխրանայ»
 խօսքով: «Դիտութեան մարդիկ» մինչև անգամ իրանց զարդա-
 կան լատիններէնը խեղաթիւրում էին, որպէսզի նսեմացնեն յե-
 ղափոխական պայքարը: Դիկտատուրա նշանակում է — հասկացէք
 միանգամ ընդմիշտ, կազնետ պարոններ, — անսահմանափակ իշխա-
 նութիւն՝ ոյժի վրայ յենւող, ոչ թէ օրէնքի: Բազաքացիական
 կուի ժամանակ իւրաքանչիւր յաղթող կողմ կարող է լինել
 միայն զիկտատուրա: Բայց բանը նրանում է, որ լինում է զիկ-
 տատուրա փոքրամասնութեան մեծամասնութեան վրայ, սասի-
 կանական մի խմբակի՝ ժողովրդի վրայ, և լինում է զիկտատու-
 րա ժողովրդի հակայական մեծամասնութեան մի բուռն բռնա-
 ւորների, կողոպտիչների և ժողովրդական իշխանութեան բռնի
 տիրողների, ուղուրպատորների վրայ: «Դիկտատուրա» գիտա-
 կան գաղափարը իրանց մուլդար խեղաթիւրումով, իրանց աղե-
 խարշ աղաղակներով ընդդէմ ձախակողմեան բռնութեան, — այն
 չքննում, երբ դոյութիւն ունի ամենալպիւր բռնութիւն աջա-
 կողմից, — կազնետները ակնյայտնի ապացուցին թէ որպիսին է
 «համաձայնողների» դիրքը յեղափոխական սուր պայքարի
 միջոցին: «Համաձայնողը» վախկոտօրէն թաղւում է, երբ պայ-
 քարը բռնկւում է: Երբ յաղթեց յեղափոխական ժողովուրդը
 (1905 թ. հոկտեմբերի 17-ը), «համաձայնողը» գուրս է քաշւում
 ծակից պարծենկոտ սիրունանում է, արվիրջ լիզւաշարժութիւն է
 անում, և գոռում է մինչև կատաղութիւն, — «փառաւոր» քաղա-
 քական գործադուլ էր այն: Երբ յաղթանակում է հակա-յեղափո-
 խութիւնը, «համաձայնողը» սկսում է տեղալ յաղթածների
 վրայ կեղծաւոր յորդորներով և խրատներով: Յաղթող գուրս և կած
 գործադուլը «փառաւոր» էր: Յաղթած գործադուլները՝ յանցա-

ւոր էին, վայրենի, անխմտ, անարբիական: Յաղթւած ազատամբույթիւնը խելակորոյսութիւն էր, տարերքի կատաղութիւն, բարբարոսութիւն, անհեթեթութիւն: Մի խօսքով «համաձայնողի» քաղաքական խղճմամբը և քաղաքական խելքը նրա մէջ է կայանում, որ սողայ նրա առաջ՝ ով ներկայումս աւելի ուժեղ է, խցւել կուռղների ստերի միջև, խանգարել այս կամ այն կողմին, բխցնել պայքարը, բխցնել յեղափոխական դիտակցութիւնը ժողովրդի, որը վարում է յուսահատ կոխ ազատութեան համար»: (Տես «Կաղեւանների յաղթութիւնը և Բանաստեղծական Կուս. խնդիրները», Պետերբուրգ, 1906 թ. հր. 13-19):

Առաջ գնանք: Զափաղանց ժամանակակից կը լինի առաջ բերել դիկտատուրայի հարցին վերաբերեալ բացատրութիւնը, որը ուղղած է պարոն Բ. Բլանկի դէմ: Այդ Բ. Բլանկը շարադրում էր մենշեիկական ըստ էութեան, բայց ձեականօրէն անկուսակցական մի կրպորում (1906 թ.) մենշեիկների հայեացքը, զովելով ներանց նրա համար, որ նրանք «ձգտում են ուղղել՝ ոռոսական սոցիալ-դեմոկրատական շարժումը այն ուղիով, որով գնում է միջազգային սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը»:

Այլ խօսքերով, Բ. Բլանկը, ինչպէս և կաղեւանները, հակադրում են բոլշեիկներին, ինչպէս անխելացիների, ոչ-մարքսիստների, բունտապնդիկների—այլ յեղափոխականներին՝ «խելացի» մենշեիկներին, ձեացնելով և գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնը, որպէս մենշեիկական: Դա սովորական ձևն է միջազգային հոսանքի՝ սոցիալ-ազատամիտների, «խաղաղասէրների»—պասիֆիստների և այլն, որոնք ամեն երկրներում գոյում են լեֆոբիստ-օպորտունիստներին, կաուցիկանականներին, լոնգէականներին, իբրև «խելացի» սոցիալիստների, իբրև հակա-կէրո բոլշեիկների «խելառութեան»:

Ահա ինչպէս էի պատասխանում ես յիշած բրոշիւրում Բ. Բլանկին:—«Պարոն Բլանկը հակադրում է ուսս յեղափոխութեան երկու- չըջանները. առաջինը՝ ընդկրգում է մատաւորապէս հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսները 1905 թիւ: Դա յեղափոխական մրկի չըջանն է: Երկրորդը՝ ներկայ չըջանը, որը մենք իրաւունք ունենք, ի հարկ է, կոչել Դումայի ընտրութիւնների կաղեւանների յաղթութեան չըջան կամ, եթէ կուղէք, բիսկ անելով առաջ վաղել, կաղեւանական Դումայի չըջան»:

Այդ շրջանի մասին պարոն Բլանկը ասում է, որ եկել է նորից մաքրի և խելքի հերթը և հարելի է վերադառնալ գէպի գիտակցական, համաշափ, սիստեմատիկ գործունէութեան: Իսկ նաեւ շրջանը պարոն Բլանկը ընտրելու է, ընդհակառակը, որպէս շրջան՝ երբ թէորիան և գործնականը իրարից հեռանում էին: Այդ շրջանում անհետացան բոլոր սոցիալ-գիմոկրատական սկզբունքները և իդեալները, մոռացւած էր այն գործելակերպը, որը միշտ տանում էր սուս սոցիալ-գիմոկրատիայի հիմնադիրների կողմից, մինչև անգամ արմատով պոկւեցին սոցիալ-գիմոկրատական աշխարհայեցողութեան հիմքերը:

Պ. Բլանկի այս հիմնական պնդումը սոսկ փաստական ընտրութիւն ունի: Մարքսիզմի ամբողջ թէորիան գարդուղի ճանապարհով գնաց «պրակտիկի» հետ յեղափոխական մերկի շրջանում:

Միթէ այդպէս է: Ո՞րն է առաջին և զլխաւոր «հիմքը» մարքսիստական տեսութեան: Այն, որ ներկայ հասարակութեան մէջ միակ և մինչև վերջ յեղափոխական դասակարգը, ապա ուրեմն և առաջընթացը ամեն մի յեղափոխութեան մէջ, հանդիսանում է պրոլետարիատը: Հարց՝ չէ իսկ արդեօք յեղափոխական մերկը մարքսիստական աշխարհայեցքի այդ «հիմքը» իր արմատով: Ընդհակառակը, մերկը հաստատաց այն ամենափայլուն կերպով: Հենց պրոլետարիատն էր այդ շրջանի զլխաւոր, սկզբում գրեթէ միակ մարտնչողը: Համաշխարհային պատմութեան մէջ հազիւ թէ առաջին անգամը չէր, որ պայքարի մէջ բուրժուական յեղափոխութիւնը յաւերժացուեց ամենալայն գործադրութեամբ սոսկ բանւորական գործիքի՝ մասսայական քաղաքական գործադուլի, ինչ չէր տեսնւած աւելի զարգացած կապիտալիստական երկրներում: Պրոլետարիատը կուի գնաց, ամբիջական յեղափոխական կուի, և մի այնպիսի ժամանակ, երբ պարոն կաղետները և պարոններ Բլանկներ հրաւիրում էին գնալ Բուլղարիի դուժման (օրէնսդրոգակցական ներկայացուցչական ժողով էր դա, որը ցարը հրաւիրում էր 1905 թւին, նրան սրեց-տարաւ 1905 թւի հոկտեմբերեան յեղափոխութիւնը), այն ժամանակ, երբ կաղետ պրոֆեսորները հրաւիրում էին ուսանողներին յաճախել դասախօսութիւնները: Պրոլետարիատը պայքարի մէջ գործադուլի իր պրոլետական գործիքով նւաճեց Ռուսաստանին այն ամեն՝ եթէ թող

կը տաք տակու՝ «սահմանադրութիւնը», որը այդ օրւանից միայն փշաղցնում էին, կրճատում, խուզում: Պրոկտատարիատը 1905 թւի հոկտեմբերին գործադրեց կուի այն տակտիկական ձևը, որի մասին կես տարի առաջ խօսում էր Ռուս. Ս.-Դ. Բան. Կուս. բուշեիկները III-րդ համագումարի որոշումը, որը ուժգնօրէն ուշադրութիւն էր դարձնում կարեւորութեան վրայ՝ զուգաւորել մասնաշաղկան քաղաքական գործադուլը ապստամբութեան հետ: Հենց այդ լծակցութեամբ է բնորոշում «յեղափոխական մարտի» ամբողջ շրջանը, 1905 թւի ամբողջ վերջին երեք ամիսները: Այդպիսով մանր բուժուողիայի մեր փաստաբանը ինկաթիւրեց իրականութիւնը ամենաամառաժ, ամենաազազակող կերպով: Նա ցոյց չը տւեց ոչ մի փաստ, որը վկայէր մարքսիստական թէորիայի հեռանալը «յեղափոխական մարտի» գործնական փորձից: Նա փորձեց քաղաքակրայ մարտի հիմնական գիծը, որը ամենափայլուն հաստատութիւն տւեց «բոլոր սոցիալ-դեմոկրատական սկզբունքներին և իդէաներին», «սոցիալ-դեմոկրատական աշխարհայեցողութեան բոլոր հիմունքներին»:

Ո՛րն է սակայն իսկական պատճառը, որը զրգեց պ.-ն Բլանկին գույ այդ հրէշաւոր-անճիշտ կարծիքին, թէ իբր «մարտի» շրջանում պնհեա կորան բոլոր մարքսիստական սկզբունքները և իդէաները: Այդ հանգամանքի բնութիւնը շատ հետաքրքրական է. նա մերկացնում է մեր առաջ էլի և էլի քաղաքականութեան մէջ մեշշանականութեան բուն էութիւնը:

Ինչո՞ւն էր կայանում գլխաւոր զանազանութիւնը «յեղափոխական մարտի» շրջանի և ներկայ «կազմական» շրջանի, եթէ նայելու լինենք քաղաքական գործունէութեան զանազան ձևերի տեսակէտից, ժողովրդի պատմական ստեղծագործութեան զանազան մեթոդների տեսակէտից: Ամենից առաջ և գլխաւորապէս այդ զանազանութիւնը նրանում է, որ «մարտի» շրջանում գործադրում էին այդ ստեղծագործութեան մի քանի յատուկ ձևեր, որոնք օտար են քաղաքական կեանքի այլ շրջանների համար: Անա այդ մեթոդներից ամենից կականները. 1. քաղաքական ազատութեան «խելը» ժողովրդի ձեռքով, նրա իրաւորումը առանց որեւէ իրաւունքների և օրէնքների հիման վրայ և առանց որեւէ սահմանափակումների (ժողովների ազատ գումարումներ, թէկուզ համալսարաններում, մամուլի, միութիւնների, համա-

գումարների ազատութիւն և աշխ.). 2. յեղափոխական իշխանութեան նոր մարմինների ստեղծումը — խորհուրդներ բանւորական, գիւնւորական, երկաթուղային ծառայողների, դիւղացիների պատգամաւորների, նոր դիւղական և քաղաքական իշխանութիւններ և աշխ.: Այդ օրգանները ստեղծուած էին բացառապէս բնակչութեան յեղափոխական շերտերի ձեռքերով, նրանք ստեղծուած էին օրէկ օրէնքներից և նորմաներից դուրս, ամբողջովին յեղափոխական ճանապարհով, որպէս արդիւնք ժողովրդական ինքնուրոյն ստեղծագործութեան, որպէս արտայայտութիւն ժողովրդի ինքնագործունէութեան, որը ազատել է կամ ազատուած է քաղաքական հին կապանքներից: Վերջապէս դրանք էին իսկապէս իշխանութեան մարմինները, չնայած իրանց սաղմային լինելուն, տարերքային բնոյթը, կազմի և գործունէութեան անորոշութիւնը: Նրանք գործուած էին որպէս իշխանութիւն, խիւղով, օրինակ, տպարաններ (Պետերբուրգում), ձերբակալելով ոստիկանական պաշտօնեաներին, որանք արգելք էին դնում յեղափոխական ժողովրդին իրագործելու իր իրաւունքները (օրինակներ եղան նոյնպէս Պետերբուրգում, որտեղ նոր իշխանութեան համապատասխան մարմինը աւելի թոյլ էր, իսկ հին իշխանութիւնը ամենից շատ օւժեղ). նրանք գործուած էին որպէս իշխանութիւն, դիմելով համայն ժողովրդին կոչով, փող շտալ հին կառավարութեանը: Նրանք կոնֆիսկացիայի էին ենթարկուած հին կառավարութեան փողերը (օր. երկաթուղիների գործադուլային կամիաւները հարուած) և այդ փողերը գործադրուած էին նոր, ժողովրդական կառավարութեան կարիքների համար: Այն, դրանք, կասկածից դուրս, սաղմեր էին նոր, ժողովրդական՝ եթէ կուղէք՝ յեղափոխական կառավարութեան: Իր սոցիալ-քաղաքական բնոյթով դա ժողովրդի յեղափոխական տարրերի զիկտատուրան էր, սաղմային դրութեան մէջ: Դուք զարմանում էք, պ.-ն Բլանկ և պ.-ն Դիգեվետտեր (վերջինս պրոֆեսոր է, պատմապէս և հրապարակախօս, կաղետ, որը 1905 թիւն յարձակուած էր բոլշեւիկների վրայ, թէ սրանք ընդունում են «զիկտատուրան», իսկ ինքը պաշտպան էր «գեմեկրատիայի»): Դուք սրա մէջ չէք տեսնում ռուսիացւոյն օխրանան, որը բուրժուայի համար համանիշ է զիկտատուրային: Մենք արդէն ասացինք ձեզ, որ դուք ոչինչ հասկացողութիւն չունէք «զիկտատուրա» գիտական պաշտօնի մասին:

Մենք խոսոյն կը բացատրենք այն ևնդ, բայց նախ երբորդ «մեթոդը» գործողութեան «յեղափոխական» մարկիւն չըջանում. բռնութեան գործադրութիւնը ժողովրդի ևնորով ժողովրդի վրայ բռնացողներէի գէտ:

Մեր նկարագրած իշխանութեան օրգանները զիկտատուրա էր սաղմի մէջ, որովհետեւ այդ իշխանութիւնը չէր նանաշուտ ուրիշ որակ իշխանութիւն, որակ օրէնք, որակ նորմա, ումից էլ այն թելադրած լինէր: Անտանման, օրէնքից դուրս, բառիս ամենաուղիղ նշանակութեամբ ոյժի վրայ յեցւած իշխանութիւն,—այդ է զիկտատուրան: Բայց ոյժը, որի վրայ յեցւում էր կամ ձգտում էր յեցւել այդ նոր իշխանութիւնը, սինի ոյժը չէր, որը դաւթել էին մի բուռն զինուորականներ, տուչաստկիւն ոյժը չէր, փողի ոյժը չէր, կամ նախկին, որակ—հիմնարկութիւններէի ոյժը: Ոչ մի նման բան: Նոր իշխանութեան նոր մարմինները չունէին ոչ փող, ոչ զէնք, ոչ հին հիմնարկութիւններ: Նրանց ոյժը—կարող էր երևակայել, պ.-ն Բլանկ և պ.-ն Կիզիվետտեր, ոչինչ ընդհանուր բան չունէր ոյժի հին գործիքներէի հետ, ոչինչ ընդհանուր տուժեղացրած օխրանայիւն հետ, եթէ ի նկատի չունենանք ուժեղացրած պաշտպանութիւն ժողովրդի, որ նրան չը նշեն հին իշխանութեան ոստիկանական և այլ օրգանները:

Բայց ի՞նչի վրայ էր յեցւում այդ ոյժը: Նա յեցւում էր ժողովրդական մասսաներէի վրայ: Անա այդ նոր իշխանութեան հիմնական զանազանութիւնն բոլոր օրգաններէից: Վերջիններս փոքրամասնութեան իշխանութեան հին իշխանութեան օրգաններն էին՝ ծամասնութեան, ժողովրդի վրայ, բանուորական և զիւղացիական մեծամասններէի վրայ: Առաջինները ժողովրդի, բանուորներէի և զիւղացիներէի իշխանութեան օրգաններն էին փոքրամասնութեան վրայ, մի բուռն ոստիկանական՝ բանաւորներէի վրայ, մի բուռն արտահեալ աղնաւականներէի և չինովնիկներէի վրայ: Անա զանազանութիւնը ժողովրդի վրայ զիկտատուրայի և յեղափոխական ժողովրդի զիկտատուրայի միջև, լաւ միտքներդ պահեցէք, պարոն Բլանկ և պարոն Կիզիվետտեր: Հին իշխանութիւնը, որպէս փոքրամասնութեան զիկտատուրա, կարող էր զոյգութիւն ունենալ բացառապէս ոստիկանական նարպիկութիւններով, հետեցնելով միայն ժողովրդական մասսաները իշխանութեան մէջ մասնակցելուց, իշխանութեան վրայ հսկելուց: Հին իշխանութիւնը

սխառեմատիկորէն չէր վստահանում մաստաներին, վախենում էր լոյսից, դիմանում էր սառնութեամբ: Նոր իշխանութիւնը, որպէս հաադին մեծամասնութեան զիկտատուրա, կարող էր գոյութիւն ունենալ և գոյութիւն ունէր բացառապէս ահադին մասսայի օգնութեամբ, ահադին մասսայի վստահութեամբ, բացառապէս նրանով, որ ամբողջ մասսան իշխանութեան մասնակցութեան էր ձգտում ամենից ազատ, ամենից լայն, ամենից ուժեղ կերպով: Ոչինչ ծածուկ, ոչինչ գաղտնի, ոչ մի կանոն, ոչ մի ձեականութիւն: Դու բանաւոր մարդ ես. գու ուզում ես կուել Ռուսաստանի ազատելուն համար մի բուռը օտարկանական բռնակալներից: Ապա դու մեր ընկերն ես: Ընտրիր քո պատգամաւորին, իսկոյն եեթ, առանց ուշացնելու: Ընտրիր, ինչպէս հնարաւոր ես համարում, մենք սիրով և ուրախութեամբ կընդունենք քեզ լիարժեք անդամ Բանւորների Պատգամաւորների Խորհրդի, Դիւզացիական կոմիտէի, Զինւորական պատգամաւորների Խորհրդի և այլն: Իսկ մի իշխանութիւն է, որը բաց է ամենքի համար, որը գործում է ամեն ինչ մասսաների տեսութեան օրոք, որը ուղիղ և անմիջական օրգանն է ժողովրդական մասսայի ու նրա կամքի: Այդպէս էր նոր իշխանութիւնը կամ ճիշտն ասած, նրա սաղմերը, որովհետեւ հին իշխանութեան վերստին յաղթութիւնը ռանատակ աբեց շատ շուտով երիտասարդ-ժողովի շիւղերը:

Դուք կը հարցնէք զուցէ, պարօն կիցեմետտեր, էլ ինչու համար է հարկաւոր «զիկտատուրան», ինչու «բանութիւն»: Միթէ ահադին մեծամասնութիւնը կարօտ է բռնութեան մի բուռն մարդկանց վրայ, միթէ տաճնակ, հարիրաւոր միլիոններ կարող են զիկտատուր լինել մի հազարի, տասն հազարի վրայ:

Այդ հարցը սովորաբար տալիս են մարդիկ, որոնք առաջին անգամն են տեսնում զիկտատուրա տերմինի գործածութիւնը իրանց համար նոր նշանակութիւնով: Մարդիկ սովորել են տեսնել միայն օտարկանութեան իշխանութիւն և միայն օտարկանական զիկտատուրա: Նրանց համար տարօրինակ է թոււմ, թէ կարող է իշխանութիւն լինել առանց օրէկ է պոլիցիայի, կարող է լինել ոչ-օտարկանական զիկտատուրա: Դուք ասում էք թէ միլիոններին պէտք չէ բռնութիւն հազարների վրայ: Դուք սխալ-

ւում էք և այն պատճառով էք սխալուում, որ երեւթը չէք դնում նրա զարգացման ընթացքին: Դուք մոռանում էք, որ նոր իշխանութիւնը երկնքից չէ ընկնում, այլ աճում, առաջանում է հնի կողքին, ընդդէմ հին իշխանութեան, նրա դէմ պայքարի միջոցին: Առանց բռնութեան բռնաւորների վրայ—բռնաւորների՝ որոնք ձեռքում ունեն իշխանութեան գործիքներ և օրկաններ—չի կարելի ազատել ժողովուրդը բռնաւորներից:

Ահա ձեզ ամենահասարակ օրինակիկ, պ.-ն Բլանկ և պ.-ն Կիզեվեւտեր, որ դուք կարողանայիք իւրացնել այս, կազմակերպութեամբ անմատչելի, «զլխապտոյա» կազմակերպման մօքի համար իմաստութիւնը: Երեւկայէք, որ Ալբրամովը խոցուում է և զանակոծում օր. Մպիրիդնովային (Մպիրիդնովան—յայտնի յեղափոխական, ներկայումս ձախ սօց.-յեղափ., որը 1905 թիւն ենթարկւեց զազանային բռնութիւնների ոտտիկան Ալբրամովի ձեռքից): Մպիրիդնովայի պաշտպան, ենթադրենք, կայ մի տառնեակ անդէն մարդ. Ալբրամովի կողմն—մի քանի կողակներ: Ի՞նչ կանէր ժողովուրդը, եթէ Մպիրիդնովայի գանակոծումը կատարէր ոչ բանտում: Նա բռնութիւն գործ կը դնէր Ալբրամովի և ներառ չքախմբի դէմ: Նա գուցէ զոհարեւր մի քանի մարանչողներին, որոնց կը գնդակահարէր Ալբրամովը, բայց այնուամենայնիւ, կը գինաթափէր Ալբրամովին և կողակներին և շատ հաւանական է, կը սպանէր տեղնուտեղը նրանցից մի քանիսներին, այդ՝ այսպէս կոչւած՝ մարդկանցից, իսկ մնացածներին կը դնէր որեւէ բանտի մէջ, որպէսզի խանդարի նրանց անկարգութիւններ անել այլևս և որպէսզի նրանց յետոյ յանձնի ժողովրդեան դատաստանին:

Ահա տեսնում էք պ.-ն Բլանկ և պ.-ն Կիզեվեւտեր, երբ Ալբրամովը կողակների հետ շարշարում էր Մպիրիդնովային, դա զինւորա-ուստիկանական զինատուրա էր ժողովրդի վրայ: Երբ յեղափոխական ժողովուրդը (ընդունակ բռնաւորների դէմ կուի, և ոչ թէ միայն խրատելու, յորդորելու, ափսոսալու, դատապարտելու, լաց լինելու ոչ թէ մեղանական-սահմանափակ, այլ յեղափոխական),—երբ յեղափոխական ժողովուրդը բռնութիւն է գործում Ալբրամովի դէմ կամ Ալբրամովների,—դա կը լինի յեղափոխական ժողովրդի զինատուրա: Դա զինատուրա է, որովհետեւ դա ժողովրդի իշխանութիւն է Ալբրամովի վրայ, մի իշխանու-

թիւն, որը չի սահմանափակւած ոչ որեւէ օրէնքով (մեղշանինը, հրեի, ընդդէմ կը լինէր նրան, որ ոյժով խլեն Ապիրիդոնովային Ավրամովի ձեռքից, իբրեւ «օրէնքով» չէ այդ): Կայ արդեօք մեզ մօտ այնպիսի «օրէնք», որ կարելի լինէր սպանել Ավրամովին: Արդեօք չեն ստեղծել մեղշանականութեան մի քանի իդէոլոգները «չարին մի հակառակիք բռնութեամբ» թէորիան. «դիկատաուրայի գիտական գաղափարը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի իշխանութիւն, որը չի սահմանափակւած ոչ մի օրէնքներով, բացառապէս ոչ մի կաշնոններով չը ներդւած, անմիջապէս յենւած բռնութեան վրայ: Ոչ այլ ինչ, եթէ ոչ այս է, որ նշանակուած է «դիկատաուրա» հակա-ցողութիւնը, լաւ յիշեցէք, պարոն կազեմներ:

Այնուհետեւ, մեր վերցրած օրինակի մէջ մենք տեսնում ենք ժողովրդի իսկ և իսկ դիկատաուրան, որովհետեւ ժողովուրդը, ազգաբնակչութեան մասան, անկերպարան, «պատահմամբ» հաւաքւած աւելի տեղում ինքը և անմիջապէս բնւ է երևում, և կատարում է դատաստանը, վճիռը, զործադրում իշխանութիւն, ստեղծում նոր յեղափոխական իրաւունք: Վերջապէս, դա է դիկատաուրա հենց յեղափոխական ժողովրդի Ինչու միայն յեղափոխական, և ոչ ամբողջ ժողովրդի Այն պատճառով, որ Ավրամովների սխրագործութիւններից մշտապէս և ամենադառն կերպով շարշարող ամբողջ ժողովրդի մէջ կան մարդիկ ֆիզիքապէս ճշնւած, վախեցւած, մարդիկ բարոյապէս ընկած, օրինակ այն ուսուցումով, թէ «մի հակառակիք շարքին բռնութիւնով» կամ պարզօրէն ճշնւած ոչ թէ թէորիայով, այլ նախապաշարմունքով, սովորոյթով, ուստիւնայով, անտարբեր մարդիկ, այն ինչ որ կոչում են «գիւղացի» օրիւտան, մեղշաններ, որոնք աւելի ընդունակ են հեռացնել իրանց սուր պայքարից, կողքով անցնել կամ անգամ թաղնել (եթեւ էլ չը կայնի այս կուսմ): Ահա ինչու դիկատաուրան իրագործում է ոչ ամբողջ ժողովուրդը, այլ միայն յեղափոխական ժողովուրդը, որը սակայն բնաւ չի վախենում ամբողջ ժողովրդից, որը բացում է բոլոր ժողովրդի առաջ իր զործադրութիւնների պատճառները, նրանց բոլոր մանրամասնութիւնները, որը սիրով քաշում է առաջ ամբողջ ժողովրդին մասնակցութեան ոչ միայն պետութեան կառավարելուն, այլև իշխանութեան մէջ և նոյն պետութեան կազմակերպման մասնակցութեան:

Այդպիսով մեր վերցրած պարզ օրինակը պարզապէս է իր

մէջ «յեղափոխական ժողովրդի զիկտատութեան» գիտական գաղափարի բոլոր տարրերը և նոյնպէս «զինւորա-ստիկականական զիկտատութեան» գաղափարը: Այդ հասարակ օրինակից, որը ըմբռնելի է նոյնիսկ գիտական կողմէս պրոֆեսորի համար, մենք կարող ենք անցնել հասարակական կեանքի աւելի բարդ երևոյթներին: Յեղափոխութիւնը, այդ խօսքի նեղ, անմիջական նշանակութեամբ, ժողովրդական կեանքի յիշատի այնպիսի շրջանն է, երբ զարեքով կուտակւած առելութիւնը Ամբամովների քաջագործութիւնների դէմ ժայթքում է դուրս միլիոնաւոր ժողովրդական մասսաների գործողութիւնների միջոցով ոչ թէ խօսքով, այլ գործով և ոչ թէ առանձին անձների: Ժողովուրդը արթնանում է և ոտքի է կանգնում ազատագրելու իրան Ամբամովներից. բռնութիւն է գործադրում Ամբամովների դէմ, իշխանութիւն է, ձեռք բերում Ամբամովների վրայ: Դա կատարւում է, իհարկէ, ոչ այնպէս պարզ և ոչ «խկոյն», ինչպէս մեր բերած օրինակումն է, որը մենք հասարակացրինք պ.-ն պրոֆեսոր Կիզեվետների համար, — դա ժողովրդի կոխն է Ամբամովների դէմ, կոխ նեղ, անմիջական իմաստով. այդ ժողովրդից Ամբամովների դէն շարտելը երկարում է «յեղափոխական մրրկի» ամիսներով, տարիներով: Ժողովրդի այդ իրանից ձգելը Ամբամովների կազմում է նենց իրական բովանդակութիւնը այն բանի, որը կոչւում է Ռուսական Մեծ Յեղափոխութիւն: Այդ դէն շարտելը, եթէ քննելու լինինք պատմական ստեղծագործութեան մեթոդների կողմից, կատարւում է այն ձևերով, որոնց մենք խկոյն նկարագրեցինք, խօսելով յեղափոխական մրրկի մասին, այն է՝ խլումը ժողովրդի ձեռքով քաղաքական ազատութեան, այսինքն այնպիսի ազատութեան, որի իրագործումը արգելք է հանդիսանում Ամբամովների համար: ստեղծումը ժողովրդի միջոցով նոր, յեղափոխական իշխանութեան, իշխանութիւն Ամբամովների վրայ, իշխանութիւն հին ստիկականական կարգերի բռնաւորների հանդէպ: Ժողովրդի բռնութեան գործադրումը Ամբամովների հանդէպ, որ անարեւելեն, զինաթափւեն և անվնաս դառնան այդ վայրի շները, բոլոր Ամբամովները, Դուրնովները, Դուրասովները, Մինները (ցարական ծառաներ, որոնք գազանաբար ձեռնեցին յեղափոխութիւնը 1905—1906 թւերի) և այլք, դրանց նմանները: Լաւ է արդեօք այն, որ ժողովուրդը գործադրում է կուի այդպիսի

անօրէն, անկարգաւորած, անհամաչափ և անսխառնամատիկ ձևեր, ինչպիսին են ազատութեան դաւթելը, ստեղծուած նոր, ձևականօրէն ոչորով չը ճանաչուած և յեղափոխական իշխանութեան. որ նա բռնութիւն է գործադրում ժողովրդի ստրկացնողներէ դէմ: Այո, դա շատ լաւ է. դա-ամենաբարձր արտայայտութիւնն է ժողովրդական պայքարի յանուն ազատութեան: Դա այն մեծագոյն ժամն է, երբ Ռուսաստանի ամենալաւ մարդկանց իղձը ազատութեան մասին վերածուած է գործի մէջ. մի գործ, որը կատարում են ժողովրդական մասսաները, այլ ոչ թէ միաւորներ-հերոսներ: Դա այնպէս լաւ է, ինչպէս լաւ է ամբոխի ազատելը Սպիրիդոնովային Ալլրամովի ձեռքից (մեր բերած օրինակէ մէջ), ինչպէս Ալլրամովի բռնի զինաթափումը և անվնաս դարձնելը:

Բայց հենց այստեղ է, որ մենք մօտենում ենք կաղեւտական թաղցած մօքերի և երկիւղների կենտրոնական կէտին: Կաղեւտը նրա համար է հանդիսանում մեշանականութեան իղէոլոգ, որ նա գործադրում է քաղաքականութեան վրայ, բոլոր ժողովրդի ազատման վրայ, յեղափոխութեան վրայ օբլիւաց, ելի այն հայեցակէտը որը մեր օրինակէ մէջ յետ կը պահէր ամբոխին, խորհուրդ կը տար չը խախտել օրէնքը, չը վնասել պալաչի ձեռքից դռնը ազատելու, պալաչի, որը գործում է յանուն գոյութիւն ունեցող «օրինական» իշխանութեան: Ի հարկէ, այդպիսի գոհիկը մեր օրինակում կը լինէր ուղղակի բարոյական հրէշ: Իսկ մեշանինի բարոյական հրէշութիւնը ամբողջ հասարակական կեանքի վերաբերութեամբ մի յատկութիւն է, կրկնում ենք, որը բոլորովին անձնական չէ, այլ հասարակական, սոցիալական: Նա իր հերթին պայմանաւորուած է, դուցէ գլխում պինդ նստած բուրժուազական-համբակային իրաւունքի գիտութեան վերաբերեալ նախապաշարունակեցողութիւն: Ինչո՞ւ համար պ. Բլանկը համարում է մինչև անգամ ապացոյցներ չպահանջող իր այն հաստատութիւնը, թէ «մարկի» շըրջանում մոռացած էին բոլոր մարքսիստական սկզբունքները: Այն պատճառով, որ նա խեղաթիւրում է մարքսիզմը, փոխելով Բրենտանիզմի, համարելով ոչ-մարքսիստական այնպիսի «սկզբունքներ», ինչպէս ազատութեան խլումը, ինչպէս յեղափոխական իշխանութեան ստեղծումը, ինչպէս ժողովրդի բռնութեան գործադրելը: Այդպիսի հայեացք ցոլում էր Բլանկի ամբողջ յօդուածում, և ոչ միայն Բլանկի, այլ բոլոր կաղեւտների, այն բո-

լորի, որոնք զովում են Պլեխանովին նրա դէպի կադետներն ունեցած սիրուն համար, բոլոր ազատամիտ և արմատական բանակի գրողների մինչև Բերնշտեյնականները, «Без заглавия» շաբաթաթերթի, այդ պ. Գրոկոպովիչի, տ. Կուսկովայի և tutti quauti:

Դննենք, թէ ինչպէս ծագեց այդ հայեացքը և ինչո՞ւ նա պիտի ծագէր:

Ծագեց նա անմիջականապէս արեւմտեան-եւրոպական սոցիալ-դեմոկրատիայի Բերնշտեյնական, կամ աւելի լայն, օպորտունիստական-յարմարութեան հասկացումից: Այդ հասկացումի այն սխալները, որոնց սխտեմատիկօրէն և ամբողջ ընթացքին մերկացնում էին Արեւմուտքում «ուղղափառները»—օրթոդոքսները, տեղափոխւում են այժմ Ռուսաստան՝ «օգուելով աղմուկից»՝ այլ սօցումի տակ և այլ առիթով: Բերնշտեյնականները ընդունում էին և ընդունում են մարքսիզմը, բացառութեամբ նրա անմիջական-յեղափոխական կուրի: Պարլամենտական պայքարի վրայ նրանք նայում են ոչ թէ իրրեւ պայքարի միջոցներից մէկի վրայ, որը պէտքական է առաւելապէս որոշ պատմական շրջանների համար, այլ որպէս պայքարի գլխաւոր և զերթէ բացառիկ ձևի վրայ, որը անհարկաւոր է դարձնում «բռնութիւնը», «նւաճումը», «գիկտատութեան»: Ահա մարքսիզմի այդ անարգ, մեղաշարժական խեղաթիւրումն են տեղափոխում ներկայումս Ռուսաստան պ. պ. Բլանկներ և Պլեխանովի այլ լիբերալ զովաբանները: Նրանք այնպէս են ընտելացել այդ խեղաթիւրմանը, որ անգամ պէտք չեն համարում ապացուցել մարքսիստական սկզբունքների և իդէաների մոռացումը յեղափոխական մարկի շըրջանում:

Ինչո՞ւ պիտի ծագէր մի այդպիսի հայեացք: Այն պատճառով, որ նա ամենախոր կերպով համապատասխանում էր մանր բուրժուազիայի դասակարգային գրութեան և շահերին: «Մարքւած» բուրժուական հասարակութեան իդէոլոգը թոյլատրում է սոցիալ-դեմոկրատիայի պայքարի բոլոր ձևերը, լացի միայն ճրանցից, որոնց գործադրում է յեղափոխական ժողովուրդը «մերկի» քոլան-ճեղում, և որոնց հաւանում է և օգնում է գործադրել յեղափոխական սոցիալ-դեմոկրատիան: Բուրժուազիայի շահերը պահանջում են պրոլետարիատի մասնակցութիւնը ցարական ինքնակալու-

թեան. դէմ պայքարին, բայց միայն այնպիսի մասնակցութիւն, որը չդառնար պրոլետարիատի և զիջազուծեան առաջնութիւն, միայն այնպիսի մասնակցութիւն, որը իսպառ չվտարէր իշխանութեան հին, ինքնակալական-նորատիրական և աստիկանական օրդանները: Բուրժուազիան ցանկանում է պահպանել այդ մարմինները, միայն հպատակեցնելով նրանց իր անմիջական հրահրութեանը, կոնտրոլին. նրանք հարկաւոր են նրան պրոլետարիատի դէմ, որին շատ կը դիւրացնէր նրա պրոլետարական պայքարի ընթացքում այդ օրդանների կատարեալ ոչնչացումը: Ահա ինչու բուրժուազիայի, որպէս դասակարգի, շահերը պահանջում են և միապետութիւն, և վերին պալատ, պահանջում են յեղափոխական ժողովրդի զիկտատուրայի չլինելը: Պայքարիւր ինքնակալութեան դէմ, ստում է բուրժուազիան պրոլետարիատին, բայց մի դիպելիւր իշխանութեան հին օրդաններին. նրանք ինձ պէտք են: Կուիր «պարլամենտօրէն», այսինքն այն սահմաններում, որոնք ևս քեզ կառաջադրեն: համաձայնութեամբ միապետութեան հետ. կուիր նրազմակերպութիւններին միջոցով, միայն ոչ այնպիսիների՝ ինչպիսիք են ընդհանուր զործադուլային կոմիտէներ, բանուրական, զինուորական և այլ պատգամաւորների Թորուրդներ, այլ այնպիսիների միջոցով որոնց ճանաչում է, սահմանափակում է, անվնասակար է դարձնում կապիտալի համար այն օրէնքը, որ կը հրատարակեմ ևս, համաձայնութեամբ միապետութեան:

Հասկանալի է այստեղից, թէ ինչու «մերկի» շրջանում բուրժուազիան խօսում է արհամարհանքով, ատելութեամբ, չարամտութեամբ, անարգութեամբ, իսկ Դուրասովների «սահմանադրութիւնը» պաշտպանման շրջանում—հրճանքով, հոգեզմայլութեամբ, անծայր մեղչանական-քաղքէնիական սիրահարութեամբ դէպի ունկցիւն: Դա—կազեանների միկնայն մշտապես և անփոփոխ յատկութիւնն է, ձգտում յենեւ ժողովրդի վրայ և վախ նրա յեղափոխական ինքնազործունէութիւնից:

Հասկանալի է նոյնպէս, ինչու բուրժուազիան կրակից առաւել է վախենում «մերկի» կրկնութիւնից, ինչու է նա առ ոչինչ դնում և մեղմացնում նոր յեղափոխական կրիգի տարրերը, ինչու պաշտպանում և տարածում է ժողովրդի մէջ սահմանադրական ցնորճները, իլլիզիանները:

Այժմ մենք լիովին բացատրեցինք, թէ ինչու պ.-ն Բլանկը և նրա նմանները յայտարարում են, որ «մարդիկ» շրջանում մոռացւած էին բոլոր մարքսիստական սկզբունքները և զաղափարները: Պ.-ն Բլանկը, ինչպէս և բոլոր մեշյանները, քնդուեցում են մարքսիզմը, համելով նրա յեղափոխական կողմը, ընդունում են սոցիալ-դեմոկրատական ձևերը, համելով ամենից յեղափոխական և անմիջական յեղափոխական ձևերը:

Պ.-ն Բլանկի վերաբերմունքը «մարդիկ» շրջանին վերին աստիճանի բնորոշ է, որպէս լուսարանութիւն պրոլետարական շարժումների բուրժուական անհումակցողութեան, բուրժուական աշխի՛ հանդէպ սուր և կարուկ պայքարի, բուրժուական ատելութեան դէպի սոցիալ-պատմական հարցերի վճռելու այն ձևի, որը կարուկ է, ջարդող հին հիմնարկութիւնները, հաստատութիւնները՝ խօսքիս անմիջական իմաստով յեղափոխականօրէն: Պարոն Բլանկը մատնեց իրան. միանգամից մատնեց իր բոլոր բուրժուական սահմանափակութիւնը: Նա լսել ու կարդացել է, որ սոցիալ-դեմոկրատները մըրկի շրջանում «սխալներ» են գործել, ու ապա անապառնց եզրակացնել ու պարծենկոտութեամբ, ապրումով յայտարարել, անբողբարկու, անհիմնօրէն, թէ մարքսիզմի բոլոր «սկզբունքները» (որոնց մասին նա զաղափար էլ չունի) մոռացւած էին: Այդ «սխալների» առիթով մենք կը նկատենք. միթէ բանուորական շարժման զարգացման մէջ, սոցիալ-դեմոկրատիայի զարգացման մէջ կամ արդեօք այնպիսի շրջան, երբ չանւէին այս կամ այն սխալները, երբ չնկատէին այս կամ այն շեղումները դէպի աջ կամ դէպի ձախ: Միթէ գերման սոցիալ-դեմոկրատական պայքարի պարլամենտական շրջանի պատմութիւնը, մի շրջան, որը ամբողջ աշխարհիս բոլոր տափակ բուրժուաներին թուում է «սահման, որից անցնել չհամարձակւես»— լիբը չէ նման սխալներով: Եթէ պ.-ն Բլանկը կատարեալ տգէտը չլինէր սոցիալիզմի հարցերի մէջ, ապա նա հեշտութեամբ կը յիշէր և Միլլերիզներին և Դիւրինգին և Campfersubvention-ի հարցը, և «Չհաշիւներին» և Բերնշտէյնութիւնը և շատ ու շատ ուրիշ բաներ: Բայց պարոն Բլանկի համար կարևոր չէ սոցիալ-դեմոկրատիայի զարգացման իսկական ընթացքի ուսումնասիրութիւնը, նրան հարկաւոր է միայն ստորացնել պրոլետարական պայքարի թափը, որպէսզի փառարանի իր կաղեմական կուսակցութեան բուրժուական խղճուկութիւնը:

Ժողովուրդը, եթէ գործին նայելու լինինք սոցիալ-դեմոկրատիայի սովորական, ընդամենը շահագործող շահագործողի տեսակետից, ապա մենք կը տեսնենք, որ և այս կողմից էլ «յեղափոխական մեղքի» չըջանը ցուցադրում է, առաջւանի հետ համեմատած, աւելի մեծ, քան թէ աւելի փոքր սերտ կապակցութիւն սոցիալ-դեմոկրատիայի մէջ: Երկու հաւանքների սոցիալ-դեմոկրատները աշխատում էին բանւորների պատգամաւորների խորհուրդներում, սաղմային յեղափոխական իշխանութեան այդ իւրատեսակ մարմիններում, գրաւում էին գործի զինւորներին, գիւղացիներին, հրատարակում էին յեղափոխական մանիֆեստներ միացած մանր բուրժուական յեղափոխական կուսակցութիւնների հետ: Մինչ յեղափոխական շրջանի երբեք մի վէճերը փոխեցին համերաշխութեան՝ գործնական հարցերում: Յեղափոխական ալիքի ուռճանալը յետ մղեց տարածայնութիւնները, ստիպեց ճանաչել ռազմական տակտիկը, եռացնելով Դոմայի հարցը, հերթի դնելով ապստամբութեան հարցը, մօտեցնելով անմիջական, մօտակայ աշխատանքի մէջ սոցիալ-դեմոկրատիան և յեղափոխական բուրժուական դեմոկրատիան: «Հիւսիսի ձայնում» մենշևիկները բոլշևիկների հետ հրաւիրում էին գործադուլի և ապստամբութեան, հրաւիրում էին բանւորներին չը դադարեցնել պայքարը, մինչև որ իշխանութիւնը չընկնի իրենց ձեռքը: Իրերի յեղափոխական դրութիւնը թելադրում էր ինքը գործնական լոզունգներ: Վէճերը վերաբերում էին միայն մանրամասնութիւններին. «Նաչալօն» (մենշևիկական լրագիր 1905 թ.) օրինակ նայում էր բանւորների պատգամաւորների վրայ, որպէս յեղափոխական ինքնավարութեան օրգանների վրայ, իսկ «Նոր Կեանքը» (բոլշևիկական լրագիր 1905 թ.), որպէս յեղափոխական իշխանութեան սաղմային օրգանների, որոնք միացնում էին պրոլետարիատը և յեղափոխական դեմոկրատիան: «Նաչալօն»-ն հակած էր դէպի պրոլետարիատի զիկատաւորան: «Նոր Կեանքը» կանգնած էր պրոլետարիատի և զիւղացութեան դեմոկրատիկ զիկատաւորայի հայեցակէտի վրայ: Բայց միթէ այդպիսի և նման տարածայնութիւններ սոցիալ-դեմոկրատիայի մէջ ցոյց չէ տալիս մեզ եւրոպական ուղածող սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան զարգացման որակ չըջան:

2Է, պարոն Բլանկի գործի խեղաթիւումը, երկուայ օրւայ պատմութեան նրա ազդակող եղծումը բացատրում է միայն և միայն նրանով, որ մեր առաջ է մի նմուշ բուրժուական ինքնագոհ ցածութեան, որի համար յեղափոխական մարկի շրջանները թւում են խելագարութիւն («բոլոր սկզբունքների մոռացում», «գրեթէ անհետանում են ինքը միտքը և հասարակ իմացականութիւնը»), իսկ յեղափոխութեան նշման շրջանները մեշշանական «յառաջադիմութիւն» (Դուրաստիներով պահպանած), — թւում են խելացի, գիտակից և համաշափ գործունէութեան էպոխաներ։ Երկու շրջանների («մարկի» շրջան և կադետական շրջան) այդ համեմատական դնահատութիւնը կարմիր թելով անցնում է պարոն Բլանկի ամբողջ յօդւածով։ Երբ մարդկութեան պատմութիւնը առաջ է ընթանում շոգեմեքենայի արագութեամբ, դա կը նշանակէ «մարկի», «հեղեղ», բոլոր «սկզբունքների» և «գաղափարների» անհետացում։ Երբ պատմութիւնն ընթանում է գիւղական սայլի արագութեամբ, դա կը նշանակէ կատարեալ իմացականութիւն և կատարեալ համաշափութիւն։ Երբ ժողովրդական մասսաները իրանք, իրանց ամբողջ կուսական պարզութեամբ, իրանց հասարակ, կոպտաւուն վնասականութեամբ, սկսում են ստեղծել պատմութիւնը, «սկզբունքները և գաղափարները» կիրառել կեանքում ուղղակի և անմիջապէս, — այն պահին բուրժուան զգում է ահ և հառաչում է, թէ «իմացականութիւնը յետին պլանն է անցնում»։

Արդեօք հակառակը չէ, օ մեշշանական հերոսներ, առաջ դալիս պատմութեան մէջ հենց այդպիսի շրջաններում մասսաների իմացականութեան հետ։ չի՞ դառնում արդեօք հենց այդ ժամանակ մասսայական խելքը կենդանի, գործօն ոյժ և ոչ կարինետային։

Երբ մասսաների անմիջական շարժումը նշւում է գնդակահարութեամբ, էկզեկուցիաներով, անգործութիւնով և սովածութեամբ, երբ ճեղքերից դուրս են սողում բաղինջները, Դուրաստիների փողով պահպանող պրոֆեսորական գիտութիւնը և սկսում են տնօրինել գործերը ժողովրդի նամար, մասսաների անունից, սրանց շահերը ծախելով և դաւաճանելով մի բուռն արտօնեալներին, այն ժամանակ մեշշանականութեան ասպետներին թւում է, թէ հասել է շրջանը հանգարտած և

խաղաղ առաջադիմութեան, «հասել է մտքի և իմացականութեան հերթը»: Բուրժուան ամեն ժամանակ և ամենուրեք հաւատարիմ է իրեն. կը վերցնէ՞ք արդեօք «Բեհեռային աստղը» (Պ. Սարուվէի շաբաթաթերթը, 1905—06 թ. թ.), թէ «Մեր Կեանքը» (կիսակադետային, կիսամենչեկական իրադիր նոյն շրջանում): Կը կարգաքարդեօք Պետր Սարուվէին, թէ Բլանկին,—ամեն տեղ միևնոյնն է, ամեն տեղ նոյն սահմանափակ, պրոֆեսորականօրէն պետանդ, չինովնիկական մեռած գնահատութիւն յեղափոխական և ռեֆորմիստական շրջաններու Առաջինները—խելագարութեան, «խելագար տարւայ», մտքի և իմացականութեան անհետացման շրջաններ են: Երկրորդները—«գիտակից, սխառեմատիկ» գործունէութեան շրջաններ:

Մուռ մի մեկնաբանէք իմ խօսքերը. մի ասէք, որ ես խօսում եմ նրա մասին, թէ պարոն Բլանկները գերադասում են այս կամ այն շրջանները: Բանը գերադասութեան մէջ չէ. մեր սուրեկտիւ գերադասութիւնից չէ կախած պատմական շրջանների փոփոխւելը: Բանը նրանումն է, որ այս կամ այն շրջանի սրտկութեան անալիզի մէջ (միանգամայն անկախ մեր գերադասութիւնից կամ մեր սխառեմատիկներից) պարոն Բլանկները անբարեխղճօրէն խելաքիւրում են նսմաքսութիւնը: Բանը նրանում է, որ հենց յեղափոխական շրջաններն են բնորոշում պատմական ստեղծագործութիւն առաւել լայնութեամբ, առաւել հարստութեամբ, առաւել գիտակցութեամբ, առաւել համաշխարհութեամբ, առաւել սխառեմատիկութիւնով, առաւել համարձակութեամբ և պայծառութեամբ, համեմատած մեշտանական, կաղետական ռեֆորմիստական յառաջադիմութեան շրջանների հետ: Իսկ պարոն Բլանկները նկարագրում են բանը բացառած: Նրանք խելագործներ են ճանաչում, ծախում են որպէս պատմական-ստեղծագործական հարստութիւն: Նրանք խելաւած կամ ճնշւած մասսաների անգործունէութիւնը նկատում են որպէս չինովնիկների, բուրժուաների գործունէութեան «սխառեմատիկութեան» յաղթանակ: Նրանք ազդակում են մտքի և իմացականութեան անհետացման մասին, երբ փոխանակ զանազան կանցելաբական չինովնիկների և քրեքեալ, տողալարձով ապրուստ հարող գրչակների անշնորհ օրինազծեք կազմակերպեղ, զալիս է շրջանը անմիջական քաղաքական գործունէութեան «ռամիկների», որոնք անարուեստ, ուղղակի, անյա-

պատգ Զախճախում են ժողովրդի նշման օրգանները, խլում են իշխանութիւնը, վերցնում են այն, ինչ համարում էր սեփականութիւն ժողովրդի ամեն տեսակ կեղեքիչների, մի խօսքով, երբ իսկապէս արթնանում է միտքը և իմացականութիւնը խեղճացրած միլիոնաւոր մարդկանց, արթնանում է ոչ միայն զբոսայիտներ կարդալու համար, այլև գործի համար, կենդանի, մարդկային գործի համար, պատմական ստեղծագործութեան համար» (տես «Կաղեւոնների յաղթութիւնը և բանւորական կուսակցութեան խնդիրները» երես 44-57)։

Այդպէս էին գիկտատուրայի մասին վէճերը 1905—06 թւականներին Ռուսաստանում։

Գարոն Դիմամաններ, Կառլցկիներ, Կրիսպիններ, Հիլֆերդինգներ—Գերմանիայում, Լոնգէներ և Լոնկերութիւն՝ Յրանսիայում, Տուրատտի և Նրա բարեկամներ՝ Իտալիայում, Մակդոնալդներ և Մնօուդներ՝ Անգլիայում և այլն գիկտատուրայի մասին դատում են, ըստ էութեան, բոլորովին այնպէս, ինչպէս պ.-ն պ. Բլանկը և Կաղեւոնները Ռուսաստանում 1905 թիւն։ Նրանք չեն հասկանում գիկտատուրան, չը գիտեն նրան նախապատրաստել, անընդունակ են իրագործել այն։

Ն. Լեճին

ԵՐՐՈՐԴ ԿՈՄՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱ- ՑԻՈՆԱԼԸ

Յունիսի 22-ին Մոսկւայում բացւեց Երրորդ Ինտերնացիոնալի 3-րդ Համագումարը:

Առաջին Ինտերնացիոնալն ստեղծւել է բոլոր երկրների աշխատաւորների մեծ ուսուցիչ Կարլ Մարքսի ձեռքով դեռ անցեալ դարի 60-ական թւականների սկզբում: Այն ժամանակ բանւոր դասակարգը թոյլ էր, չունէր քաղաքական միութիւններ կամ կուսակցութիւններ—բանւորական շարժման այդ բարձր, լուսադոյն և իսկական ձևը:

Որպէսզի քաղաքական իշխանութեան համար, պրոլետարիատի վարած պայքարի գործում,—այն իշխանութեան, որին պէտք է ձգտի բանւոր դասակարգը—հնարաւորութիւն լինի միացնել բոլոր երկրների իրարից անջատւած բանւորներին, Մարքսը հիմնեց Բանւորական Միջազգային Ընկերութիւն, որ հերոսական արտայայտութեամբ կոչւում է Ինտերնացիոնալ—առաջին Ինտերնացիոնալ:

Առաջին Ինտերնացիոնալը իր դերը կատարեց Հափաղանց յաջող: Ամբողջ տասնեակ տարւայ ընթացքում նա հիմնեց Եւրոպայի և Ամերիկայի համարեա առաջնակարգ բոլոր երկրներում իր ճիւղերը: Նա ցոյց տւեց բոլոր ժողովուրդների և պետութիւնների բանւորներին, որ վերջիններս պարտաւոր են ունենալ իրանց պրոլետարական տմրակուռ քաղաքական միութիւնները, որպիսիք և հետագայում կոչւեցին սոցիալիստական կուսակցութիւններ: 19-րդ դարի երկրորդ կէսը հանդիսանում է մի ժամանակաշրջան, որի ընթացքում ծնունդ առան, կազմակերպւեցին և տմրապնդւեցին մի քանի հերոսական ազգային մեծ պետութիւններ, ինչպէս օրինակ Գերմանիան, Աւստրիան, Յրանսիան,

Խառնուհանդիման և այլն: Այդ երևոյթի հետ միասին, հարկաւ, յիշեալ երկրներէ բանւորներն էլ իրրեւ սոցիալիստական բանակներ, պէտք է որ զարգանային իրանց պետութիւններէ սահմաններում:

Այստեղ արդէն Առաջին Ինտերնացիոնալին այլեւս համարեա ոչինչ չէր մնում անելու, ուստի և նա 70-ական թւականներէ մէջերէն թողեց ասպարէզը:

Մինչև 80-ական թւականներէ վերջերը զանազան երկրներէ և ժողովուրդներէ բանւորները աշխատում էին ամրապնդել իրանց ազգային ու պետական սահմաններում սոցիալիստական կամ սոցիալ-դեմոկրատական կուսակցութիւնները, որոնք այդ ժամանակներն արդէն բաւականին հաստատուն էին դարձել: Հարկաւոր էր նրանց միացնել, հարկաւոր էր նրանց գործողութիւնները միմեանց հետ համաձայնեցնել: Դրա համար էլ ծնունդ առաւ Երկրորդ Ինտերնացիոնալը: 80-ական թւականներէ վերջերից սկսած մինչև 1914 թւի համաշխարհային իմպերիալիստական պատերազմը Երկրորդ Ինտերնացիոնալը կազմում էր բոլոր երկրներէ սոցիալիստական կուսակցութիւններէ կենտրոնն ու զերազոյն քաղաքական օրգանը:

Միւս կողմից նկատի պիտի ունենալ, որ մարդկային պատմութեան մէջ 19-րդ դարի վախճանին և 20-րդ դարի սկզբներին աչքի էր ընկնում այդ ժամանակեայ կապիտալիզմի աւելի քան փարթեամ զարգացումը: Այդ զարգացումն առաջանում էր խաղաղ ճանապարհով, առանց պատմական առանձին խոշոր իրադարձութիւններէ, սակայն չափազանց արագ քայլերով:

Կապիտալիզմի հետ միասին զարգանում էր և նրա ուղեկից համաշխարհային բանւորական շարժումը: Վերջինիս զարգացումն, ի հարկէ, պայմանաւորում էր կապիտալիզմի խաղաղ, ճոխ և բարեյաջող զարգացմամբ:

Շատ սոցիալիստներ և բանւորական կուսակցութիւններէ ու երկրորդ Ինտերնացիոնալի ականաւոր ղեկավարներ իրանց հերթին վարակւում էին այդ բարեյաջողութիւնից: Բռնի յեղափոխութեան միջոցով պրոլետարիատի ձեռք բերելիք զիկտատուրայի մասին Մարքսի ունեցած նշանակալից արտայայտութիւնն արխիւ էր գցել երկրորդ Ինտերնացիոնալի հայրերի կողմից:

Պարոնայք Բերնշտէյները վճռականապէս, իսկ պարոնայք

Պատուցվիներն ու Ազգէրները կողմնակի կերպով սկսեցին պնդել, թէ տեղի է ունենում կապիտալիզմի ներածումը սոցիալիզմի մէջ, թէ մասնաւոր սեփականութեան վերացումը համաձայնական պիտի լինի խաղաղ ճանապարհով և թէ հինը, բուրժուականը պէտք է համաձայնեցնել նորի, պրոլետարականի հետ:

Հասկանալի է ի հարկէ, որ խօսքով այդ մարդիկ իրանց համարում էին մեծ յեղափոխականի աշակերտները և պրոլետարական դիկտատուրայի կողմնակիցներ, սակայն զործի և այդ դիկտատուրայի իրականացման մասին նրանք չէին էլ մտածում, որովհետեւ, — ինչպէս իրանք էին կարծում — զեռ շատ հեռու է սոցիալիստական յեղափոխութեան իրագործումը:

Բանւորներին նրանք օրօրում էին խաղաղ «նւաճութեւրով», ինչպէս, օրինակ, բանւորական օրէնսդրութեամբ ու այլ և այլ յանձնաժողովներում ու պարլամենտներում ունեցած տաքուկ տեղերով: Գարլամենտարիզմը երկրորդ Խնտերնացիոնալիստական անարեղ գիւտը դարձաւ:

Նրա առաջնորդները այն աստիճան տարւել էին պարլամենտարիզմով, որ վերջ ի վերջոյ սոցիալիստական կարգերի իրականացումը փնտրում էին բանւորների պարլամենտներում գրաւելիք քւէսերի մէջ և ձգտում էին այդ եղանակով յայտարարել սոցիալիզմը...

Լատպոյն սոցիալիստները նկատում էին այն կործանարար քաղաքականութիւնը: Ռուսաստանի բոլշեիկները, Դերանխայի առաջնակարգ սինդիկալիստները, Գերմանիայի ձախ սոցիալ-դեմոկրատները և իտալացի սոցիալիստները մեծ մասը զեռ նախքան համաշխարհային պատերազմի սկսելը գիտէին, որ բանւորական դասակարգի կուռ ծանրութեան կենտրոնը այնտեղ չէ, որտեղ այդ փնտրում էր երկրորդ Խնտերնացիոնալը: Նրանք գիտակցում էին, որ վերջինս փոխանակ ղեկավարելու, բարոյալքում է բանւորական մասսաները և ինքն էլ անխուստփելիօրէն՝ դէպի կործանում գնում:

2-րդ Խնտերնացիոնալի սնանկութիւնը փաստ դարձաւ 1914 թւի պատերազմի հենց առաջին օրւանից, երբ սոցիալիստները մեծամասնութիւնը և նրանց պարագլուխները կանգնեցին այն տեսակէտի վրայ, թէ պէտք է բուրժուական հայրենիքը պաշտպանել և կապիտալիստների ու թագակիրների շահերի համար բան-

ւորներին միմեանց ղէմ կուի հանել: Այս մոմենտից արդէն սկըսում է 3-րդ Ինտերնացիոնալի յղացումը, որը երկրորդից տարբերելու համար կոչւում է նաև Կոմմունիստական:

Երկրորդ Ինտերնացիոնալն էր միջադպարն շտաբը հին սոցիալիստական կուսակցութիւնների և նրանց առաջնորդների: Սակայն սոցիալիստական այդ կուսակցութիւնները չեղանցին բանւորական շարժման իսկական ուղիից, նրանց առաջնորդներն էլ դաւաճանեցին պրոլետարիատի գործին: Այս մէկը Երկրորդ՝ սոցիալիզմ բառը ունի ընդհանուր նշանակութիւն, և հասարակական ցնցումների դարաշրջանում մարդկութեան առաջ իր ամբողջութեամբ ծառացաւ Կոմմունիզմը, իրեն աւելի կոնկրետ հասկացողութիւն:

Կոմմունիզմը դա մեր վերջնական նպատակն է, դա այն հասարակական կազմակերպութիւնն է, որ տալիս է մարդկանց լիակատար և իրական ազատութիւն, լիակատար և իրական հաւասարութիւն: Էապէս, բառի սուղ իմաստով վերցրած՝ սոցիալիզմը մի կազմ է, որ տանում է մեզ ղէպի կոմմունիզմ, և նա այդպիսով հանդիսանում է նախապատրաստական կամ անցողական (ղէպի կոմմունիզմ) մի շրջան:

Հին կուսակցութիւններից ու սոցիալիստական առաջնորդներից տարբերելու համար, մեր ուսմունքի էութիւնը որոշող հասկացողութիւնը հշտօրէն սահմանելու և թէ մեր ուսուցչի տեղ-միջնորդիան պահպանելու նպատակով, բոլշևիկները, ժամանակակից բանւորական կուսակցութիւնները և յեղափոխական պրոլետարիատի քաղաքական միութիւնները անւանել են Կոմմունիստական, իսկ իրանց գերագոյն օրգանը՝ Կոմմունիստական Ինտերնացիոնալ: Եւ որովհետև երկրորդ Ինտերնացիոնալը այլևս գոյութիւն չունէր որպէս բանւորական յեղափոխական կազմակերպութիւն, իսկ միւս կողմից բոլոր երկրների պրոլետարներին անհրաժեշտ էր ունենալ մի սեփական գերագոյն յեղափոխական շտաբ, ուստի և Կոմմունիստական Ինտերնացիոնալն յայտարարեց իրան Երրորդ Ինտերնացիոնալ:

Վերջինիս մէջ մտնում են միայն Կոմմունիստական կուսակցութիւնները, այսինքն այն կուսակցութիւնները, որոնք գործնականապէս իրականացնում են այն նրանց համար Կոմմունիզմի իրականացման իրեն միջոց հանդիսանում է պրոլետարիատի

գիկտատութեան, այլապէս ասած՝ բանւոր դասակարգի տիրապետութիւնը, Պրոլետարիատի գիկտատութեան կամ տիրապետութեան տակ հասկացուած է բանւորների ծառայումը ընդդէմ հարուստների, իշխանութեան խումբը կապիտալիստների և կալւածատէրների ձեռքից, այդ իշխանութեան վերածումը Բանւորագիւղացիական և ապա վերջինս միջոցով հին, մասնաւոր-սեփականատիրական, էքսպլուատատորական յարաբերութիւնների վերափոխումը նոր, ամենքի համար հաւասար պայմանների, որոնք, ինչպէս մենք ենք արտայայտուում, կոչւում են գոյութեան կոմունիստական պայմաններ:

Սովորական, պարզ լեզուով ասած, կոմունիստական կեանքի տակ մենք հասկանում ենք մի գրութիւն, որի օրով զործաբանները, երկաթուղիները, արհեստանոցները և նման ձեռնարկութիւնները պատկանում են պրոլետարներին, երբ բոլոր հողերը, արդիւնաժայրերը և նման բարիքները անցնում են աշխատաւորների ձեռքը: Դրա հետ միասին մենք ընդունում ենք ընկերական ընդհանուր աշխատանքի անհրաժեշտութիւնը և նոր հասարակարգի ու քաղաքացիների բոլոր կարիքների բաւարարումը:

Դէպի այդ են տանում մեզ ժամանակակից կոմունիստական կուսակցութիւնները, դէպի այդ է տանում մեզ նրանց շաղկապող 3-րդ կոմունիստական Ինտերնացիոնալը: Այս Ինտերնացիոնալը ծնունդ է առել իմպերիալիստական պատերազմի որոտումների և մրրիկների ժամանակ՝ դեռ ևս 1915 թւին: Նրա առաջին քաղաքական քայլն է եղել ռուսական պրոլետարիատի Հոկտեմբերեան յեղափոխութիւնը: Նրա հիմնաքարերն են Ռուսաստանի կոմունիստական կուսակցութիւնը (բոլշևիկների) և Գերմանիայի կոմունիստական (Սպարտակեանների) կուսակցութիւնը:

Կոմունիստական Ինտերնացիոնալի առաջին համագումարը տեղի ունեցաւ 1919 թ. մարտ ամսին: Այդ իսկ ժամանակ էլ նա համախմբեց իր շուրջը եւրոպական գլխաւոր երկրների բանւորական կուսակցութիւնները:

Կոմունիստական Ինտերնացիոնալի երկրորդ համագումարը կայացաւ նոյն Մոսկւայում, անցեալ տարւայ յուլիս ամսին: Եթէ առաջին համագումարը հիմք դրեց Ինտերնացիոնալին և

բոլոր երկրների աշխատաւորներին կոչ արեց ի մի համախմբուելու յանուն բուրժուական կարգերի անմիջական կործանման, ապա իրկրորդ համագումարը մի խոշոր ցոյց էր, համաշխարհային ցոյց, որի միջոցով աշխատաւորութեան շարքերը պէտք է կազմակերպեն, երբ բանւորները պէտք է մշակէին Դոմմունիզմի գործնականը:

Երկրորդ համագումարին մասնակցութիւն ունեցան համաբնա բոլոր խոշոր երկրների ու վայրերի կոմմունիստ տարրերը: Այդ համագումարը ցոյց տուց, որ այլևս չկայ քիչ թէ շատ տշքի բնկնող ու դարգացած վայր, որտեղ կոմմունիզմը չաղախւած չը լինի: Եւս գեղեցիկ կերպով ապացոյցեց, որ կոմմունիստական կուսակցութիւնը ամենայն տեղ յաղթահարել է արդէն սոցիալ-դեմոկրատական ներխուժ և այսպէս կոչւած «սոցիալիստական» ապականւած կուսակցութիւնները: Կոմմունիզմը դեռ անցեալ տարի ամառը յաղթող տարր էր: Պէտք էր նրան շխտակ ուղղութիւն տալ, կուս կազմակերպութիւն ու յստակ տակտիկա մշակել նրա համար, որպէսզի ապագայում նա դառնայ միակ պրոլետարական ոյժը մատաղուս կոխներում կապիտալիզմին յաղթահարելու գործում: Եւ խկապէս վերջին տարւայ ընթացքում բոլոր երկրների կոմմունիստական կուսակցութիւնները այնքան կազմակերպուեցին, որ դարձան միակ գերիշխող ու յեղափոխական տարրը:

Ո՞րտեղ են այժմ նախկին հումիլու սոցիալիստական կուսակցութիւնները: Ո՞րտեղ են Կաուցկին, Գէդը, Մարտովը և ուրիշները: Ի՞նչ վիճակի մէջ են մանր ժողովուրդների երբեմն ուժեղ կուսակցութիւնները — մենչիկի վրացիները, հայ դուլգուրականները և այլն: Նրանք չքացան, մնաց կոմմունիզմը. ուժեղացան բոլոր ժողովուրդների կոմմունիստ կուսակցութիւնները:

Նրանց ուժեղացման հետ միաժամանակ խառցան, ստաբիլացան և բազմիրանգ դարձան նրանց շարքերը: Միջադպային ու քաղաքական դրութիւնն աւելի ևս լրջացաւ ու խորացաւ: Կուսակցութիւնները ենթարկեցան ստաբիլացման: Ինչպէս սովորաբար լինում է, զուտ տարրերի հետ ներս սողացին, գէպի կուսակցութիւնը դիմիցին և համեմատաբար ոչ-կուս տարրերը: Բացի այդ, մեծ գործը պահանջեց և մեծ, ճկուն, անշեղ տակտիկա: Վերջապէս կոմմունիզմի տեսականը պէտք է ամեն մի կուսակցական անդամի համար պարզ ու հասկանալի լինէր:

Այդ էր պատճառը, որ մի տարւոյ ընթացքում ախպէս Եւսեպոսը ու մեծամեծ խոյընգոսաներով կախում էր կոմմունիզմի մարմնաւարտալիայում, Գերմանիայում և այլ երկրներում այդ աշխատանքը տեղի էր ունենում աւագին թափով, դժարութիւններով ու զոհերով, Հարկ էր այս ամենը հաշի տանել, կոմմունիստ կուսակցութիւնների փորձը վերաբնել, ի մի համախմբել, վերածել տեսականի՝ տաաջիկայում ախ Զրաբէն կիրառելու նպատակով: Երբորդ համագումարը այդ աշխատանքն է, որ կատարելու է:

Այդպիսով նա պէտք է աւելի ևս համախմբի իր շուրջը համայն աշխարհի կոմմունիստական ճիւղերը, վերացնի խոյընգոսանքը, հեռացնի սխալները: Այս այդ կանխ Այսօր միջազգային պարագաները թոյլ են տալիս ամենախ յաջողութեամբ այդ փորձը կատարելու: Այդ իսկ պատճառով ներկայ երբորդ համագումարը մեծ գեր է կատարելու կոմմունիզմի ընդհանրացման, բիրտեղացման և լիակատար կազմակերպման գործում:

Ներկայումս ամբողջ աշխարհը բռնւած է կոմմունիստական պրոլետարիատի յեղափոխութեան հեղաշեւտ ծառայող կրակով: Եւրոպանշիր օրը բերում է մեզ նորանոր տեղեկութիւններ բանուորական մասսաների բարոստացման, ահման մասին: Մարդկութիւնը հսկայական քայլերով ճիշտ որ ընթանում է գէպի կապիտալիզմի լիակատար անկումը, ուրեմն և գէպի կոմմունիզմի յաղթանակը:

Կոմմունիստական Ինտերնացիոնալի 3-րդ համագումարը իրան նպատակ է դնում վերամշակելու աւելի հաստատուն, նպատակայարմար ծրագիր՝ ուղղած կապիտալիստների իշխանութեան դէմ և յօգուտ այդ վերջինի դէմ ըմբոստացող պրոլետարների:

Այս նշանաբանի տակ է շարունակում զարգանալ Եւրոպայի պրոլետարիատը: Մենք, կոմմունիստներս հենց այդ զօշակը ձեռքներին արշաւում ենք առաջ աւելի ևս խորացնելու մեր նւաճումները: Այդ դրօշակի հովանու տակ կոմմունիստական Ինտերնացիոնալի 3-րդ համագումարը առաջ կը շարժի Եւրոպայի և Ասիայի բանուորական շարքերը՝ ընդհանուր ու վերջին ճակատամարտը տալու ամբողջ Ֆրոնտի վրայ:

Այ. Մարտունի-Մեռսնիկեան

ՅԱՐԱԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ՄԱՍԻՆ

Համաշխարհային այս յեղափոխական պրոցեսը, պատմական այս հսկայական տեղանմուտները, — քցին հաւասար մի բան երբէք չեն տեսել մարդիկ, — ամենազանազան տարրերի զարգացման ֆազերի, ճանապարհների, գործելակերպների, պայքարի մեթոդների, ուժերի, իրականացուող յեղաշրջումների մի կոմբինացիա է։ Դրա համար էլ բառերին հասկանալի է, որ զանազան ժամանակաշրջաններում, այս պրոցեսի զարգացման զանազան ֆազերում պրոլետարիատի առաջ կանգնում են զանազան խնդիրներ և առաջին հերթին գործնական բնոյթ ունեցող զանազան խնդիրներ։ Սա միայն պրոլետարական յեղափոխութեան սպեցիֆիկ յատկութիւնը չէ, նոյն բանն ենք մենք տեսնում և այն ժամանակ, երբ ֆէոդալական բեմեր փոխում էր կապիտալիստականի։ Ֆրանսիական յեղափոխութիւնը, որ Սերոպայի ցամաքի վրայ կապիտալիզմի զարգացման համար հիմնովին ճանապարհ հարթեց, նոյնպէս մի շարք ֆազիսներ ապրեց, որոնք չափազանց տարբեր էին իրարից, բայց ունէին միևնոյն համաշխարհային - պատմական, հասարակական-զոստկարգային իմաստը։ Այդ յեղափոխութիւնը սկսեց (եթէ ընդհանրապէս կարելի է այստեղ «սկզբի» և «վախճանի» մասին խօսել) 1789 թ., նա «վերջացաւ» մօտաւորապէս 1815 թ. Նապոլէոնի անկման հետ։ Այդ քառորդ դարի ընթացքում յեղափոխութիւնն անցաւ մի բանի աստիճաններով, որոնցով և բնորոշւում է բուրժուազիայի գործադրած զանազան գործելակերպերն ընդդէմ կաւաժաւորների։

Բուրժուազիան սկսեց գործը ֆէոդալիզմի դէմ ապստամբելով։ Նա յետոյ կազմակերպեց իր դիկտատուրան ազնւականութեան դէմ, անխնայ կտրում էր նրա գլուխը, ամեն մի միջոցով կուռւում էր

դատադրութիւնների, հակայեղափոխական տպաւորութիւնների
զէմ և այլն։ Սրան հետեւեց յեւաղիմական աղաւթին բռնամիներկեց
կառաղի կերպով պաշտպանելու շրջանը, այսպէս ասած միա-
պետների «Սրբազան Դաշնակցութիւնը», որոնց չափազանց դուր
չէր գալիս «ազնւականների կողոպտուելը և թագաւորական գլուխ-
ների կտրուելը»։ Երկրի ներսում, — ինչպէս միշտ անխուսափելի
կերպով վիճում է քաղաքացիական պատերազմներին շրջանում, —
արտադրական պրոցեսը խանգարեց, ամենուրեք թագաւորում էր
աւերումը, ագրաւաութիւնը, ֆինանսները սարսափելի բայցա-
ման հասան, սպեկուլյեացիան ծաղկում էր, չնայած ձեռք առած
բոլոր բանի միջոցներին, ու այս բոլորն աւելի սուր կերպարանք
էր ընդունում շրջափակման և արտաքին, դատակարգային պա-
տերազմի շնորհիւ ընդզէմ հակայեղափոխական պետութիւնների։

Բուրժուազիայի եռանդը (ընդհանրապէս) յաղթահարեց այդ
արգելքները և ամրացնելով իր ապարատը, ստեղծելով իր բա-
նակը, որ առաջ էր գնում յեղափոխական «Մարտիկէզի» հնչիւն-
ների տակ, բուրժուազիան պաշտպանելուց յաճախման գիմեց իր
թշնամիների զէմ։ Ակուեց նոր շրջանը՝ յեղափոխական պատե-
րազմների շրջանը, որոնք ազատագրեցին Եւրոպան։ Իհարկէ աս-
մին մի քիչ թէ շատ զրազէտ մարդ գիտէ, որ այդ ժամանակաշրջա-
նում տեղի ունեցան իշխանութիւնների փոփոխութիւններ, որ
մանր-բուրժուազիայի («եակորինցիներին») փոխարէն իշխանու-
թեան գլուխ անցաւ խոշոր բուրժուազիան, ապա Նապոլէոնի
գինւորա-բուրժուական զիկտատուրան։ Բայց ամեն մէկին նոյն-
պէս յայտնի է, որ Նապոլէոնը, Եւրոպայի միապետների հետ հա-
մեմամատաւ, յեղափոխական ոյժ էր։ Դեռ Հեյնրիխ Հայնէն հիա-
նալի հասկանում էր Նապոլէոնի պատերազմների մեծ պատմա-
կան նշանակութիւնը և ազատագրական բնոյթը։ Այդ պատերազմ-
ները ոչնչացրին Եւրոպայում ճորտատիրութիւնը։ Իհարկէ սոցիա-
լիզմի և պրոլետարիատի հետ համեմատաւ զա հակայեղափոխա-
կան ոյժ էր։ Բայց այն ժամանակ խօսքը վերաբերում էր ոչ թէ
սոցիալիզմի իրականացմանը, այլ կապիտալիզմի յաղթանակի
իրականացմանը ընդզէմ ֆեոդալական ճորտատիրութեան։ Որեւ
բան հասկանալու անընդունակ խաղաղասէրները և առցիալ-
խաղաղասէրները սղորում են պաշտպանելուց յարձակ-
ման անցնելը, տեսնելով դրանում մեծ յեղափոխութեան դա-

դափարները «կործանումը»։ Մարքսիստների համար պիտի հասկանալի լինի, որ հարցն այսպես դնելն ամբողջովին յիմարութիւն է. որովհետեւ միայն յեղափոխական բանակների սիրիներն այն ժամանակ ծակեցին Եւրոպայի ներսւած ֆէոդալական-նոր-տառիքական կեդեր։ Բռնութիւնը այստեղ տատմէրի դերում երեւան եկաւ, երբ ծնւում էր նոր կապիտալիստական հասարակութիւնը։ Եւ բուրժուազիայի, — որը «սահմանադրական ձև էր ստացել իրրեւ պետական իշխանութիւն», — պաշտպանելուց յաջակման անցնելը հենց արտայայտութիւնն էր յեղափոխական սկզբի անման։

Այսպէս էր գործերի դրութիւնը աւելի քան հարիւր տարի առաջ։

Այժմ հարց է առաջ պալիս, թէ թոյլատրելի է կամ հնարաւոր է գործերի այդպիսի դրութիւն պրոլետարիատի գիկտատութեայի ժամանակ։

Այսպիսի ապացոյցն ակնյայտ կերպով անպէտք է։ Դեռ աւելին. նա ամբողջովին օպորտունիստական և (թող ներեն ինձ պարոն խաղաղասէրները) պարզապէս յիմար ապացոյց է։ Շատ վաղուց է, որ պրոլետարիատի յեղափոխական գործեակերպի դէմ առաջ են մղում նման ապացոյցներ. «Ապստամբութիւն», — ասուած ապատի, այդ անում էր բուրժուազիան։ «Բարիկադներ», — «ասուած հեռու պահի. այսպէս պայքարում էր բուրժուազիան։ Պրոլետարիատը մեծամասնութիւն է, նա պէտք չունի այսպիսի դաժան միջոցների»։ «Իրկտատութեան, տերրոր»։ «Այս էլ բուրժուազական է»։ Այսպէս էին ասում, ասում են և կասեն բոլոր համաձայնականները։

Յեղափոխական պրոլետարների համար կարեւոր է ոչ թէ ձևը, այլ գործի դասակարգային եութիւնը։ Եւ ըստինքեան պարզ է, որ բուրժուական և պրոլետարական «լայնացման» միջև, որ բուրժուական և պրոլետարական «անհամբերութեան» միջև ճիշտ այնպիսի տարբերութիւն կայ, ինչ տարբերութիւն որ գոյութիւն ունի բուրժուազիայի և պրոլետարիատի, կոմմունիզմի և կապիտալիզմի միջև։ Սի այս տարբերութիւնը չի հասկանում, նա ուղղակի ոչինչ չի հասկանում, նա անյուսալի է, նրան կուղղի միայն գերեզմանը։

Իհարկէ միջազգային բուրժուազիան խիստ շահագրգռւած

է, որ պրոլետարիատի գեկտատուրան չյայնացնի իր տերրիտորիայ թաղան: Բուրժուազիան գտաւում է շատ հիւսնալի: Ենթէ մի երկրում պատանել է այնպիսի գծրախառութիւն, որ բանւորները զրաւել են իշխանութիւնը, թող գտնէ նրանք նստեն իրենց երկրում, ինչպէս բերանը փակ ջրում, թող նստեն և առաջ չը շարժեն:

Բուրժուազիայի կողմից այսպիսի գտառութիւնը հասկանալի է: Բայց երբ մի մարդ, որ իրեն «սոցիալիստ» է անւանում, անգլուցեօրէն գուրս է գալիս պրոլետարական «անհամբերութեան» զէմ, այն ժամանակ պարզ է, որ նա ամբողջովին զեռ թաղերնի է և ոչ թէ պրոլետարական, յեղափոխական:

Բալտովին անհամ և անմիտ է, օրինակ, այս տեսակի ապացոյցը՝ «սախնը անպէտք է այնպիսի նուրբ զօրծերի համար, ինչպիսին է սոցիալիզմի մեծ զաղափարը»: Սա լիբերալ-բուրժուական երգերի վարիանտներից է: Իսկ ապստամբութիւնը «սախն» չէ: Իսկ յեղափոխութիւնը «սախն» չէ: Իսկ քաղաքացիական պատերազմը նոյն «սախնը» չէ: «Նուրբ» կոմմունիզմը պէտքական է սալոնների համար, որտեղ մարդիկ շատախօսում են. նա անպէտք է լուրջ կեանքի պայքարի համար, որտեղ մարդիկ պայքարում են և մեռնում իրենց զաղափարների համար: Սա է դաժան և լուրջ կեանքը, բայց նա իրականութիւն է և մեծ զաղափարների իրականացում և ոչ թէ պլատոնական հառաջանքներ նրա համար:

«Կոմմունիստական Մանիֆեստի» մէջ ասւած է, որ պրոլետարները կը նւանեն մի ամբողջ աշխարհ: Ինչո՞վ.—Յեղափոխութեամբ, — հետադար և «սախններով»: Ենթէ որնէ երկրում պրոլետարիատը տիրացել է իշխանութեանը և բաւականաչափ ուժեղ է, որպէսզի կարողանայ յարձակել բուրժուական պետութիւնների վրայ, սա նշանակում է, որ յեղափոխութեան ոյժն է մեծ, նրա կազմակերպութիւնն է մեծ, յաղթանակի շանսերը շատ են: Այս բանն ուրեմն վատ է բուրժուազիայի համար: Այս բանն ուրեմն լաւ է պրոլետարիատի համար: Եւ ուրեմն լաւ է բոլոր երկրների պրոլետարիատի համար, որոնց թւում և այն կապիտալիստական պետութեան, որի վրայ յարձակում է պրոլետարական հանրապետութեան յեղափոխական բանակը:

Այստեղ առաջ են գալիս նոր «ապացոյցներ» համաշխար-

հայրեն պրոլետարիատի արդէն յաղթական դուրս եկած ժառի
կողմից աշտպիսի գործեկակերպի նկատելու հնարաւորութեան զէմ:
«Միջամատութիւնը» անկաշուն է: «Արեւատական»ընչ ստեղծւած
և ոչ թէ «օրդանապէս անած» Խորհուրդներին իշխանութիւնը բո-
լորովին անպէտք է: Այդպիսի իշխանութիւնը «բերովի հիմնա-
կութիւն» է, «ներմուծած կամուրջ» և այլն և այլն:

Նախ և առաջ մեզ աշտպիսի հարց տանք. ինչո՞ւ բուրժուա-
զիան «միջամատում» է իրար գործերին և սրանից շտն և ճնանում:

Միթէ դուք կարող էք զանեղ թէկուզ մի հատիկ լեհական
բուրժուա, որն այնքան յիմար վնիւ, որպէսզի բողոքի Ֆրան-
սիական կամ անգլիական օգնութեան զէմ: Միթէ դուք կը զբա-
շտէք թէկուզ մէկ հատ հունգարացի բուրժուա, որը բողոքէր նման
օգնութեան զէմ: Իհարկէ ոչ: Բուրժուաները գործի մարդիկ են:
Նրանք պարզամիտ մարդու նման չեն դատում, թէ լեհական
բուրժուազիան, որպէսզի «օրդանապէս» յաղթի լեհափոխու-
թեանը և կարմիրներին, պէտք է գործի միայն իր ուժերով,
այլ կերպ նա կը կործանուի: Ընդհակառակն՝ նա վերցնում է մար-
դիկ, սպաններ, զենեքաւորներ, տանկեր, հրահանգիչներ, դազեր և
այս «միջամատութեան» օգնութեամբ պայքար է մղում պրոլետա-
րական բանակներին զէմ:

Բուրժուազիան խելօք է: Բայց մի քանի սոցիալ-խաղաղա-
սէրներ խելօք չեն: Այս է դժբախտութիւնը: Սրա մէջ է այն
մեծ սխալը, որի հետ դեռ համաձայն են բանւորների մի քանի
շրջանները: Պէտք է ոչնչացնել այս սխալը: Սոցիալ-խաղաղասի-
րական իդէոլոգիան, որ ըստ էութեան վաղուց հնացած լիբերալ-
բուրժուականն է, պէտք է ջախջախել, որովհետեւ նրանով բան-
ւոր դասակարգը յաղթել չի կարող: Եթէ ժամանակակից բուր-
ժուազիան հիանալի օժանդակում է իրար և չի արհամարհում
փոխադարձ այդ օգնութեամբ օգուելու, այն ժամանակ ինչպէս
կարող է միջազգային պրոլետարիատը հրաժարուել փոխադարձ
աջակցութիւնից և ընկերական միջամատութիւնից յօգուտ սոցիա-
լիզմի և նրա յաղթանակի: Ի հարկէ կարելի է այս կամ այն
դէպքում ենթադրել, որ աջակցութեան ժամանակը դեռ չի հա-
սել, որ դրա համար դեռ պակասում են ուժեր և այլն: Բայց
չի կարելի սկզբունքային նկատառումներ ցուցահանել:

Միւս կողմից, երբ մի անգամ «միջամատութիւնը» արդէն

սկսել է (սկսել է արտաքին «սովետիզացիան»), կոմմունիստական կուսակցութիւնները պարտաւոր են ամբողջ եռանդով աջակցել նրան: Այլ կերպ նրանք պարզապէս դաւաճանում են և դասակարգութիւն անուամբ սկսապէս, միթէ դաւաճանութիւն չէ մի կուսակցութեան կողմից չաջակցել կապիտալի դէմ եղած մի ապստամբութեան, որը անխուսափելի է կամ որն արդէն սկսել է: Նոյն դրութիւնն է նաև կարմիր ինտերնացիայի ժամանակ: Պիտի աջակցել նրան բոլոր միջոցներով: Եւ նա, ով որ ուզում է կոմմունիստ լինել կամ համարոււմ է կոմմունիստ, բայց բողոքում է աջակցի աջակցութեան դէմ, նա ոչ թէ միջազգայնական յեղափոխական է, այլ ազգայնական օպորտունիստ, թէև մի քիչ աւելի «նուրբ» տեսակի:

«Ազգային» տրամադրութիւնների վերադնաճատումը, որի մասին լսում է բանւոր դասակարգի շրջանում, նոյն բանն է, ինչ որ են օպորտունիստների շրջանում լսող ազադականները յեղափոխական ապստամբութեան ժամանակից վաղ լինելու մասին: Բայց այդ ժամանակ էլ կուսակցութիւնները պարտաւոր են պարզելու իրենց սկզբունքային դիրքը, լողալով հոսանքի դէմ և ոչ թէ միջնական չովինդմի ու մանր-բուրժուական քաղաքական խանութպանութեան հունով:

Մենք հարցն այս կամ այն չափով վերացական կերպով դրեցինք: Բայց մեզ համար պարզ է, որ շօշափւած խնդիրները տեսականից գործնականի են փոխուում: Մենք բեկման շրջանն ենք ապրում, պրոլետարական ինքնապաշտպանութեան և կապիտալիստական ամբողջի վրայ արելիք պրոլետարական յարձակման սահմանի միջև: Եթէ ոչ այսօր, վաղը հարցը կը կանգնի մեր առաջ կարուկ կերպով: Բոլորս պէտք է խնդրի մասին տեսական ապարդ հասկացողութիւն ունենանք: Յեղափոխութիւնը կարող է յաղթել միայն իրրև համաշխարհային յեղափոխութիւն: Մենք այս բանը պնդում ենք հազար անգամ: Դրա համար էլ միւս երկրներում կապիտալիզմի կրախը արագացնելու ամեն մի հնարաբարութիւն յեղափոխական անհրաժեշտութիւն է:

Մասսաները, որ յոգնել են պայքարից, հազար անգամ աւելի տանջալի կերպով կը մաշւեն, եթէ ամբողջ պրոցեսը աւելի երկարաձգւի: Մենք խնայած կը լինենք մեր ուժերը, եթէ հնար ունենք (որ, իհարկէ միշտ չի լինում) բուրժուական սխտեմի փրթած շէնքի մէջ մեխելու դինւած պրոլետարական զիկատադրայի պողպատէ տարանը:

Ն. Բուխարին

ՎՐԱՍՏԱՆԸ, ՀԱՅԱՍՏԱՆԸ, ԱՆՏԱՆՏԸ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

I

Յորհրդային Ռուսաստանը վերջանում է Սև ծովի ափի կողմից Սոչիից այն կողմը՝ Գաղրայի մօտ, Քերեքի շրջանի կողմից Վլադիկաւկազից վերև՝ Կազրէկի դազաթի առաջ, իսկ Բաղ-էի կողմից (Յորհրդային Ազրբեջան) Փոլլի կայարանի մօտ, ոչ հեռու Քիֆլիսից։ Մատնանշած սահմաններում, այսինքն Սև ծո-վի ափին գտնւող Գաղրայից սկսած Սուխումը, Բաթումը, Փո-թին, Գուլայիսը և Քիֆլիսը մինչև Փոլլի կայարանը և Կազրէկ լեռն էլ հետը, տարածւում է այսպէս կոչւած «անկախ պետու-թիւն» Վրաստանը։ Նրա կողքին տարածւում է նոյնպիսի «ան-կախ» պետութիւն Հայաստանը, որը շատ կէտերում սահմանա-կից է մուսուլմանական Յորհրդային Ազրբեջանի, Տաճկաս-տանի և Պարսկաստանի հետ...

Վրաստանը «կրակոտ Կոլխիդան» է, իսկ Արմենիան ոչ պա-կաս կրակոտ Հայաստանն է։ Նրանցից իւրաքանչիւրի տերրի-տորիայի վրայ ի հարկէ ազդարնակութեան մեծամասնութիւնը բնիկ է, այսինքն առաջինում վրացիներ են, իսկ երկրորդում հայեր, բայց կան նաև զգալի քանակութեամբ այլ ցեղեր և ազ-գեր. այսպէս օրինակ Վրաստանում հայեր, արխաղներ, օսետի-ններ և այլն, իսկ Հայաստանում քիւրդեր և թաթարներ։

Վրաստանի տերրիտորիան աւելի մեծ է և ազդարնակու-թիւնն աւելի շատ է, քան Հայաստանինը. Սև ծովի շնորհիւ նրա զրութիւնն էլ աւելի ձեռնառու է. նա ունի մի քանի նաւահան-գիսանիւր, որոնցից ամենակարեւորներն են Բաթումը և Փոթին։

Ճարիգմի դէմ յեղափոխական շարժումը Վրաստանում (և

ընդհանրապէս Անգրկովկասում ու Կովկասում) սկսեց շատ վաղ, 30-40 տարի առաջ և, ինչպէս նախկին ցարական կայսրութեան բոլոր ծայրագուսաններում, XX-րդ դարի սկզբին, 1903 թ.ի յեղափոխութեան ժամանակ հասաւ իր գագաթնակէտին: Թարածեց քաղաքներից բոլոր խուլ գիւղերը: Այն ժամանակ նա ազատ էր նաջիւնախոտական խառնուրդից... Եւ այդ բանի շնորհիւ ինչպէս ամբողջ Ռուսաստանում, այնպէս էլ Կովկասում (մասնաւորապէս Վրաստանում), տերրորիտաւորողովոյցիների ոչնչացումից յետոյ, յեղափոխական շարժումն ուժեղ կերպով սկսեց զարգանալ միայն իրրեւ բանւորական շարժում:

1900 թ. սկսած բանւորական գործադուլները և քաղաքական ցույցերը, որ տեղի էին ունենում Թիֆլիսում, Բաթումում և Վրաստանի այլ քաղաքներում, կենդանի արձագանք էին դառնում գիւղերում, առաջ բերելով այնտեղ սակաւահոգ (որոնց թւում նաև «ժամանակաւոր պարտաւորութիւններ» ունեցող) գիւղացիների և վարձաւորների մէջ հողային յուզումներ հողատէրերի դէմ և բոյկոտ բոլոր կառավարական հիմնարկութիւնների, մինչև իսկ եկեղեցու և նրա ծառայողների դէմ, որոնք նկատուում էին իրրեւ պաշտպաններ կալւածատէրերի և հարուստների:

1903 թ. Ռ. Ս.-Դ. Բ. Կ. Երկրորդ Համագումարի ժամանակ Բագրի, Թիֆլիսի և Բաթումի բանւորական կազմակերպութիւնները (յետոյ նաև Գուլթայի-Գուրիայի և Զիաթուրի, ինչպէս օրինակ՝ Իմերեթի-Մինգրելիայի կոմիտէտը և Գուրիայի կոմիտէտը) միացան և կազմեցին «Ռ. Ս.-Դ. Բ. Կ. Սոցիալ-Դեմոկրատական Բանւորական Կազմակերպութիւնների Կովկասեան Միութիւնը»...

«Կովկասեան Միութիւնը», (որ հետագայում «Անգրկովկասեան» կոչւեց) ունէր իր ծածուկ օրդանները՝ «Պրոլետարիատի պայքար» և «Исток В. П.», որոնք հրատարակուում էին կաշոնաւոր կերպով և շարունակ երեք լեզուներով՝ ռուսերէն, վրացերէն և հայերէն: Երջանային կազմակերպութիւնը բռնել էր աւեր... յեղափոխական-մարքսիստական ընթացք: Նա զեկավարեց ի միջի այլոց 1903 թ. Կովկասի առաջին քաղաքական ընդհանուր գործադուլը (այսպէս կոչւած հարաւային ռուսական և կովկասեան ընդհանուր գործադուլը): Անա թէ ինչու կուսակցութեան Երկրորդ Համագումարին Կովկասի երեք պատգամաւոր-

ներից երկուսը բուլղարական տեսակետի վրայ կանգնեցին. Այսպէս էր մինչև 1905 թ. և մի քիչ էլ ուշ 1906 թ.ին, Հենց այս ժամանակահատից սկսում է նախկին ամուր և դիմացկուն կազմակերպութիւնների կործանումը և մենչեիզմի տիրապետութիւնը վրաստանի բանւորական շարժման մէջ:

Պէտք է նկատել, որ ռուսական մենչեիզմը, որի զգալի քանակը կազմում էին վրացական մենչեիկները, մեր այն ժամանակւոյ «ամուր» օտարերկրեայ Ս.-Դ. կազմակերպութիւնների, այսպէս կոչւած «պրոֆեսիոնալ յեղափոխականների», կուսակցութեան «բիրտկրատիզմի և ցենտրալիզմի» դէմ սկսած իր պայքարով, յաջուտ տեղային դամբանների ինքնավարութեան վարած իր պրոպագանդով և այլն, որով նա դառնում էր սպորադիկի մամնավատ մի տեսակը, լայն հնարաւորութիւններ էր օտեղծում, որ յեղափոխականն ընկնի մինչև այն աստիճան, որովսղի հասնի վրացական մենչեիզմի այժմեան «սոցիալ-շովինիզմին», որի դուրս են անցած պ. պ. ժողովրդային, մերեքիկի, Զիւլեյի, Գիգեշկորի և ընկերութիւնը:

Հասարակական-տնտեսական հիմքն այսպէս է. պրոլետարներ վրաստանում համեմատաբար քիչ կան, ազգաբնակչութեան մեծամասնութիւնը միջին-գիւղացիներ և բանւոր-կիսապրոլետարներն են, որոնք ունեն համարեա ամենքը գիւղերում (նաեւ քաղաքներում) հողի մի կտոր և խրճիթ...

Գաղափարական պայքար վարելով մենչեիզմի դէմ զեռ նրա ծագման օրից, երբ նա նոր էր ծնունդ առնում այն ժամանակ զեռեա միացեալ բանւորական կուսակցութեան մէջ, մենք շատ լաւ հաշիւ էինք առնում այս հնարաւորութիւնները, որով և բացատրւում է 1905 թ. և հետագայ տարիների ֆրակցիոնական պայքարի սուր կերպարանքը:

1905 թ. յեղափոխութիւնը և ազաւ տասնամեայ ունկնդրեա Ռուսաստանում, նոյնպէս և 1914—1917 թ. թ. իմպերիալիստական պատերազմն իրեն յաջորդող 1917 թ., փետրւարից մինչև հոկտեմբեր, Ռուսաստանի Մեծ Յեղափոխութեամբ, պարզ նկարեցին ընդհանրապէս ռուսական մենչեիզմի տիպը և մասնաւորապէս վրացականին:

1907 թ. Լոնդոնի համագումարից յետոյ յեղափոխութեան առաջին լիկւիդատորները Ռուսաստանում եղան վրացական մեն-

չեղբները, որոնց պալա էր անցել նոյ ժորդանիան, այժմեան գեղափարը «անկախ» (սոցիալիզմից և յեղափոխութիւնից) մեն-չեղբական Վրաստանի:

Շանգ առնենք կարճատև նրա և նրա մի քանի զինակից-ները պարծունէութեան վրայ որոնք գեղեւ գգրախա բանւորա-գիւղացիական Վրաստանի ճակատագրի անորինողներն են հան-գիտանում:

Սոցիալիստեան բէականայի ժամանակ պ. նոյ ժորդանիան տեղային ժամուշում տասնեակ յողաձների մէջ մերժում էր այն, ինչ որ յեղափոխական էր նրա ուսուցիչ Գ. Վ. Պլեխանովի ուս-մունքի մէջ, թէ Ռուսական յեղափոխութիւնը կը յաղրանակի իւ-րեւ բանւորական յեղափոխութիւն կամ երբեք չի յաղրանակի: Նրան ծափահարում էին Թիֆլիսի և Բագլի բոլոր խոշոր բուր-ժուական շրջանները, յայտարարելով մեր շրջաններից դուրս ե-կած ամենախելօք մարդը:

Իր այս «խելքը» նա ցոյց տւեց նաեւ իմպերիալիստական պատերազմի ժամանակ, այս անգամ երեսն գալով իրրեւ ամենա-հաւատարիմ աշակերտ սոցիալ-շովինիստ և ցարական կայսրու-թեան պաշտպան Պլեխանովի: 1917 թ. Ռուսաստանի Մեծ Յեղա-փոխութիւնն իր բանւորների, զինւորների և այլ պատգամաւո-րական խորհուրդներով, խառնեցին բոլոր կարտերը այս տիպիկ, մինչև ոսկորների ծուծը մանր-բուրժուական իդէոլոգ-օպորտու-նիստի գլխում: Նա գլուխը կորցրեց: Բաւական ժամանակ ան-ցաւ փետրարից մինչև հոկտեմբեր-նոյեմբեր, այսինքն մինչև Պետրոգրադում և Մոսկուայում կատարւած բոլշեիկական յեղա-շրջման մոմենտը: Այս նրան հնար տւեց ուշքի գալ և իր գիւրգը որոշել: Իր ներքին աշխարհում նա միշտ էլ մնացել էր միե-նոյնը: Բայց այնուամենայնիւ իր ներքինը լոյս աշխարհ բերել նա չէր համարձակուում, վախենալով վրացական բանւորներից և գիւղացիներից: Այս վերջինները շնայած հենց իր ձեռքով, նրա մենչեիկական-տաղանդաւոր գրչի միջոցով այս տասն տարւայ ընթացքում լու աշուկած էին և վարակւած նեխուղ օպորտու-նիզմի թոյնով, բայց Մեծ Յեղափոխութեան և բոլշեիկական պայ-ծառ ազիտացիայի միջոգորտում կարող էին նրան չհաւատալ, նրա յետեից չգնալ:

Բայց հրապարակ է իջնում նրա հետ միասին մի այլ տի-

բական անձն. սա Ռուսաստանի Պետական Դումայի նախկին պատգամաւոր Ակակիյ Զիւնկելին է, որ այն ժամանակ Միլիկով և Կերենսկու ժամանակաւոր Կառավարութեան յատուկ կոմիտեան էր կազմակերպուած:

Հենց նա էլ վնասւած է Անդրկովկասի անջատման հարցը Ռուսաստանից (բուլղարիկեան յեղաշրջումից յետոյ), նրա նկարագր և «անկախ Վրաստանի» ստեղծումը:

Նա պնտւած է Արեւմտեան Լեւոնդա, սկզբում հոգ պատրաստելու Վիլնիայում և Բերլինում Դերմանակեան (յաղթմանակի շրջանում), ապա Փաթիլդում, Լոնդոնում և Բրիւսելում քաղաքականապէս նոր, բայց կուրտուրապէս նին երկրի Վրաստանի համար և վերադառնալով աշխարհից հարկազրուած է Վրաստանի պարլամենտին, բոլոր վայրի ցուլերի բուն ծափերի տակ, պատգամաւորութիւն ուղարկել Փարիզ, որի մէջ մտնում են Պետական Դումայից յայտնի սոցիալ-շովինիստներ Զիւլիմէն և Մերկելին, որոնք պիտի մաշէին Վերսայի կոնֆերենցիայի և նրա աւագակներին՝ Կիւմանսօի, Վիլսոնի, Միլլերանի, Լոյզ-Չորջի և այլոց շէքերը: Նա է աճին բան անողը մինիստր-օթարաննիկ Ռամիշուիլիների աջակցութեամբ: Նրա ցուցմունքով է ուղարկւած Արեւմտեան Լեւոնդա Գեղեչկորին, նոյնպէս մի յայտնի պերսոնաժ, Վրաստանի արտաքին գործերի մինիստրը: Եւ զուցէ Բաթումը (նախաւոր է նաև որ Փոթին) արգէն կապալով է արւած անգլիացիներին: Եւ ոչ միայն այս քաղաքներին, այլև ամբողջ Վրաստանի կապալով տալը, նրա եզրագծի զացիան շուտով կը կատարուի, եթէ... Այն, եթէ Անգլիայի, Իտալիայի, Գերմանիայի և այլ երկրներին պրոլետարները նորից զգուշի վրացական մենշիկ-դաւաճաններին բոլոր մերենայութիւնները կը փոխեն (պրոլետարական յեղափոխութեան): Նրանք ծածկուել են, ինչպէս թղենու տերեւով, բանտներին և նրանց Լեւոնդայի զաւաճաններին երկրորդ զեղին Լեւոնդայի զանաւորով: Քննադատով, Վանդերվուդով, Հիւսմանով, զլուխ ունենալով իրեն՝ Կառլցկուն: Փոքրիկ Վրաստանը շահեցնելու համար այս ժամանակակից արդոնաւորները իմպերիալիզմի գիշատիչներին սիրալիր համաձայնութեամբ հանապարհ ընկնելով, փոթորկոտ Սև ծովով հաւեցին մինչև Փոթի և Բաթում, զէպի կրակոտ Կախիզայի այս մարդարիտները, փրնտոնելու համար Ոսկէ Գեղմը, որ կորցրել են նրանք Արեւմտեան

ներդրւում. այսինքն փնտնելու համար փոքրիկ Վրաստանում իրականացւած Զխնկելու, Ժորդանիայի, Մերեթելու և ընկերութեան մեհեռիկեան դեմոկրատիան:

Կառավարութեան անգնատները դեռ մի շարքով առաջ պատրաստութիւններ էին տեսնում նրանց ընդունելութեան համար, զանգահարում հին բոլոր մենշեիկական գանդակները, զարգարում էին քաղաքները, պատրաստում էին շաշիկներ, Կախէթի և հւրոպական շամպայնի գինի, պարտաւորեցնում էին բանւորներին և գիւղացիներին, որ հանդիսաւորապէս գիմաւորեն նրանց... եւ, ճ սարսափ... փոքրիկ նաւահանգստում, Փոթի քաղաքում 600 կազմակերպւած բանւորներից միայն 15 շրանւոր», զուցէ մենշեիկական բիւրոկրատիայից, գիմաւորելու են ելնում կործանւող համաշխարհային կապիտալիզմի ազատարարներին—սոցիալ-դաւաճաններ Վանդերվելդին և ընկերութեանը: Անկլի մեծ նաւահանգստում, Բաթում քաղաքում, կազմակերպւում է հանդիսաւոր նիստ մենշեիկեան վրացական խմբակի կողմէն՝ զխաւորութեամբ մեր Բազաի 26 կոմիսարների յայտնի մատնիչ մենշեիկ Այուօի և փողոցի պարապ ամբոխի ու սպեկուլեանտների: Նոյնիակ Թիֆլիսը, այս ժամանակակից փոքրիկ Փարիզը (եթէ շատե՛ր Բաբելոնը, որ շափաղանց հին է) կը դաւաճանէր, եթէ այնտեղ կենտրոնացած չը լինէին պահնորդական բոլոր ուժերը և մենշեիկական ժանդարմերիան («Յատուկ պօրամասը» և մենշեիկեան միլիցիան, որ բաղկացած են ցարական մարդասպաններից և քրէական ոճրագործներից): Բանւորական Թիֆլիսն իր պրոլետարական մեծամասնութեամբ լրում էր, չէր երեւում հանդէմներին, իսկ ով էլ որ մասնակցում էր, շատ սառն էր ընդունում «թանկագին հիւրերին»... եւ այս մենշեիկեան թագաւորութեան մէջ, նրա մայրաքաղաքում, Թիֆլիսում: Եւ այս այն բանից յետոյ, երբ մի օր առաջ սպառնացել էին բանւորներին, թէ ով որ չը գայ հանդիսին, կը զրկւի աշխատավարձից, կը հեռացւի աշխատանքից, տեղից, նոյնիակ կը բանտարկւի իբրեւ համակրող բոլշեիկների, Խորհրդային Ռուսաստանի Իսկ այն գիւղերում, որոնցով բարեհաճեցին անցնել դեղին Խտերնացիոնալի հերոսները, գիւղացիական կոմիսարները ու միլիցիոնները զօռով քշում էին ժողովրդին նրանց գիմաւորելու: Զէր նկատուում ոչ մի ոգևորութիւն, ոչ մի ուժգին յոյզ, բացի

պաշտօնական, պետական հասերից, որ արտասանում էին հարուստ խորտիկների, Արեմուտքի և Արևելքի խմիչքների սեղանների առաջ...

Իսկ Կաուցկու ընդունելութեան ժամանակ (որովհետև ինքը՝ Եազօնը յետ էր մնացել և եկաւ աւելի ուշ մի ուրիշ խմպերիախտական շոգենաւով) «գեղեզւարները» առաջին հիւրերի ընդունելութեան տխուր փորձից յետոյ, չը փորձեցին էլ հանգիստւոր ընդունելութիւն կազմակերպել:

Միայն հոկտեմբերի կիրակիներից մէկում մենշիկները յայտարարեցին, որ Թիֆլիսի բանւորները ցանկանում են ողջունել Կաուցկուն: Եւ ի՞նչ եղաւ արդիւնքը... Բոլոր երկրների և վայրերի այս սպիտակ զաւրդիականների քաղաքում, ուր այժմ համարեաւ ազգաբնակչութեան թիւը կէս միլիոն է և որտեղ կազմակերպւած բանւորների թիւը պակաս չէ 50—60 հազարից, Երևանան հրապարակը հաւաքւեցին միայն մի քանի հարիւր բանւոր և փողոցի պարապների ու սպեկուլյանտների հետ միասին միտինգ կազմակերպեցին, որին ներկայ էր 700—800 մարդ: Երևաց պատշգամբում ինքը Կաուցկին զեղելու իր շնորհակալութիւններն «իսկական» զեմոկրատիային: Բայց նրան չծափահարեցին նոյնիսկ այն ժամանակ, երբ բարձր և որոշ կերպով «ընկեր բանւորներին» նկատողութիւն արեց ինքը Նոյ Բամիւլիին, մենշիկական Վրաստանի այս Նոսկէն և օխրաննիկը... Միաժամանակ ամբողջ մամուլը, բացի, իհարկէ, կոմմունիստականից, ամեն օր գովաբանում է և փառաբանում կուլտուրայի և ցիվիլիզացիայի ազատիչներին՝ զեղին Ինտերնացիոնալի հերոսներին...

Իսկ ի՞նչ տեսան այստեղ նրանք: Այն, ինչ որ ուզում էին տեսնել՝ հանգիստ (առայժմ) մի երկիր ռոցիալիստական զեմոկրատիայի՝ գլխաւորութեամբ, որ չի զաւաճանել Ս Ինտերնացիոնալի գործեւակեղպին, այլ աւելի է զարգացրել այն, այսինքն գործնականում իրականացրել է Կաուցկու նորագոյն տեսութիւնը—զեմոկրատիզմով գէպի սոցիալիզմ... Մի ռոցիալիստական զեմոկրատիա, որ հետամտում է բոլոր գիտակից բանւորներին և գիւղացիներին միայն այն պատճառով, որ նրանք զրնում են կոմմունիստների յետեից, հաւատում են նրանց, նոյնիսկ միայն համակրում են, որ բանտարկում է նրանց, հեռացնում է հայրենի քաղաքներից և գիւղերից, Վրաստանի սահման-

ներից դուրս անում հաբիրներով և հազարներով... Կամ ամիսներով և տարիներով պահում նրանց բանտերում առանց մեղադրանք ներկայացնելու (որովհետև այլ մեղադրանք չկայ բացի այն, որ նրանք կոմմունիստներ են և պատկանում են այդ կուսակցությանը. թէև վերջինս իբր թէ լեզալ է ճանաչել Մոսկւայի հետ զաշինք կապելուց յետոյ)...

Կարլ Կաուցկին, ինչպէս հաղորդում է հայկական լրագիր «Մշակը», հեռագրել է Արևմտեան Եւրոպա, գուցէ և Լոնդոն, որտեղ նիստեր է ունենում Լոյզ Զորջի թեի տակ զեղին Բնտերնացիոնալի կոմիտէտը, որ անհրաժեշտ է Վրաստանին օժանդակութիւն ցոյց տալ նաև զինուորական ուժերով... Ում ղէմ պատերազմելու համար. գուցէ կոմմունիստներն և նրանց համակրողներն ղէմ...

Ո՛չ, իրենք մենշեիկներն ի հարկէ պատրաստ են յանձնել Բաթումը և Փոթին, նոյն իսկ բոլոր Վրաստանը Անգլիային և Անտանտին իբրև մի նոր բաղա (Ղրիմում Զարգաձ Վրանգելից յետոյ) Բանուրա-գիւղացիական Ռուսաստանի ղէմ պայքարելու համար...

Բայց Ռուսաստանի ղէմ պատերազմելու չեն գնայ վրացական գիւղացիները և բանուորները, ինչքան է՛ր որ նրանք ճշւած վնին մենշեիկական-խմբերալիստական «զեմոկրատական ուժի մով»... Այլ բան է, երբ խօսք է լինում թիւրքերի, հին «պատմական» թշնամիների, այժմ քեմալիստների ղէմ պատերազմելու մասին։ Այսպէս են դատում պ. պ. վրացական մենշեիկները...

Ի՛նք կոմմունիստական մամուլը, ինչքան որ նրան յաջողում է լեզալ կերպով-գոյուլթիւն ունենալ, ընդգծում է իր և՛ ռուսերէն, և՛ վրացերէն, և՛ հայերէն ժողաններում, որ մենշեիկները Զիւէիձէի, Ժորդանիայի և ընկերութեան գլխաւորութեամբ Քեմալի Վրաստան արշաւելու տառապելի աղմուկի տակ հոգ են պատրաստում նոր երկրամասեր միացնելու Վրաստանին Տրապիզոնի կողմից, հին Լազիստանի, որ երբեմն Լորի թագաւորի ժամանակ (նեւրոգութիւն, զեղեցիկ թագուհի Քամարի ժամանակ ՆԱ դարում) գտնուում էր «Կրակոտ Կոլխիդայի» սահմաններում...

Բայց նոյն իսկ մենշեիկական բանուորները և գիւղացիները իրենց ամբողջութեամբ, այսինքն Վրաստանի քաղաքի և գիւղի աշխատաւորները վերջ ի վերջոյ այս մերկնայութիւնն էլ կը

հասկանալու և գուցէ կը հակեն աւելի շուտ նոյնիսկ դէպի Քեմալը և արեւելեան յեղափոխականները և առանձնապէս դէպի Խորհրդային Ռուսաստանը, քան թէ դէպի Կաուցկին, Վանդերվելդը, Միլլըրանն ու Լոյդ Ջորջը։ Մենշևիկական և եւրոպական իմպերիալիստների երեքամեայ վակիսանալիայից յետոյ Վրաստանում և Անդրկովկասում նրանք շատ երկար համբերեցին և անհամբեր սպասում են կարմիր-բանակայինների գալուստին։ Սա փաստ է։ Այս բանը նրանք ապացուցեցին 1918—1919 թւականներին և նոյնիսկ 1920 թ. Նախքան Մոսկւայի հետ դաշինք կոնկրետը Վրաստանի տասնեակ զանազան կէտերում—Դուշեթից մինչև Սուխում և Սամսեթիա (Դուշեթ, Յիւնովալի, Գորի, Սաշխերի, Լենչխուտ, Մինգրելիա, Բաճա, Դուրիա, Սուխում, Հարաւային Օսեթիա և այլն) մի քանի տնգամ իրար յետևից ապստամբում էին մենշևիկների դէմ, որոնք դաւաճանել են Ռուսաստանի յեղափոխութեանը...

Մենշևիկների կառավարութիւնը եւրոպական իմպերիալիստների աջակցութեամբ, — նախ գերմանացիների, ապա և Անտանտի, — զինւորական-տեխնիքական տեսակէտից քաւական լաւ կազմակերպել էր բուրժուական-պետական մասշտաբով և ի հարկէ յաղթում էր վատ զինւած բանւորներին և զիւղացիներին։ Բայց մի քանի վայրերում ապստամբները զիմացան նոյնիսկ ամիսներով, ինչպէս օրինակ՝ Լենչխուտում (Բուժայիսի նահանգի մի գաւառը, Զինւորա-Օսեթական ճանապարհով Բուժայիսից Մամիստի կիրճով դէպի Թերեքի շրջանը տանող գծի վրայ)։

Վրաստանի մենշևիկները, որոնց մօտ Կաուցկին, Վանդերվելդը և Ընկ. տեսան իսկական ղեմովրատիա յեղափոխական զիւղացիներով և բանւորներով լիքը բանտերով, մասնաւոր սեփականութիւնը յայտարարել են պետութեան հիմքը և կալաժառէրերից խլած հողի մասը (օ՝, նրանք կալաժառէրերին չը վերաւորեցին, ամեն մէկին թողեցին 7 և աւելի գեւեատին հող) մեծ կապալաւարձով տալիս են զիւղացիներին... զիւղացիների շնչին տօկոսը (կողակներից և սակաւաթիւ միջակ զիւղացիներից) հող ստացան։

Մասսան առաջւայ պէս անհող է և սակաւահող։ Ի...կ տուֆ, ցարիզմի ժամանակ, մենշևիկները նրանց ինչքան էին խոստանում իրենց ագիտացիայի մէջ... Հասկանալի բան է, որ երբ

գիւղացիական մասսան սուր կերպով զգաց պ. պ. Ժորգանիայի, Զինկելու, Մերեթելու և Զիւէիձէի այս խաբերայութիւնը, ասեց նրանց: Այս և այսօրայ վրաստանի էկոնոմիկայի և կոլլեկտիւ հոգեբանութեան տնօրինելի փաստն է:

Այժմ նրանց անտեսական դրութիւնը մի քանի անգամ շատ տեւելի վատ է, քան մէկ, երկու, երեք տարի առաջ: Վրաստանը հաց ընդհանրապէս ստանում էր զբախց՝ Կուբանից: Սեփական հացը երբէք չէր բաւականանում: Այժմ այդ հացը բոլորովին չբաւարարէ: Իսկ եզրագտացորենն էլ անցեալ տարի վատ բերք էր տուել: Եւ ահա եզրագտացորենի փութը, որ անցեալ տարի (1919 թ.) արժէր 200, 300 կամ 500 ռուբլի, ինչ որ համարւում էր շատ թանկ, այս տարի (1920 թ.) ամառը արժէր 2000—2500 ռուբլի, մի գին, որ բացարձակ կերպով անմատչելի է Վրաստանի բանւորական և գիւղացիական մասսաների որեւէ խաւի համար: Գիւղերը վայրենացել են, հասակաւորները և երեխաները զաշտերում, մարգագետիններում և անտառներում փնտռում են ուտելու համար որեւէ պտուղ, միւրգ: Ժողովուրդն աղքատանում, մուրացկանութեան գիրկն է ընկնում, իսկ բուրժուազիան հարստանում է սպեկուլեացիա անելով ամեն մի ապրանքով: Անտանտի տւած հացով կերակրում են ժողովրդական գաւաղիականներին, բանակին, մենշևիկական թիւրոկրատիային—վրացական բանւորների և գիւղացիների այս արեստոկրատիային: Աշխատավարձի յաւելումը հաւասար է 60%¹, իսկ թանկութիւնը 200%² է և աւել:

Գիւղացութիւնը դրադւում էր մետաքսագործութեամբ, ծխախոտագործութեամբ և գինեգործութեամբ: Բայց մենշևիկներն այս ապրանքները զարձրել են մարգանցի հետ միասին վալիւտային ապրանք և նրանք պետութեան միջոցով ընկնում են հասաւատուն գներով ևւրոպական գիշատիչների ձեռքը: Գիւղացիները և բանւորները նոյնիսկ ոչինչ չէին ստանում և այդ հաստատուն գներով, որովհետեւ մենշևիկների թագաւորութեան մէջ իշխում է սպեկուլեացիան, ազատ առևտուրը: Բաղաճները, ինչպէս օրինակ՝ Թիֆլիսը, Բաթումը և ուրիշները, լցւած են ամեն տեսակ ապրանքով և մանուֆակտուրայով, ուտելիղէներով և խմիչքներով: Իսկ բանւորները և գիւղացիները սոված են, բորիկ և մերկ: Ի՞նչ կայ այլևս զարմանալու, որ աշխատանքի-արտադրականութիւնը անհաստատուի չափերով ընկնում է նոյնիսկ մենշևիկ-

ների մի այնպիսի միջնաբերդում (մինչև այժմ), ինչպէս են Թիֆլիսի երկաթուղու արհեստանոցները: Բազմաթիւ թղթակցութիւնների հետ միասին մենք կը մատնանշենք հենց իրենց մենշնիկների վկայութիւններէ վրայ: Պետութեան զուրը, Ն. Ժորդանիան կառավարական կուսակցութեան (մենշնիկներէ) յատուկ խորհրդակցութեան ժամանակ և նոյնիսկ իրեն կարէ կաուցելու ներկայութեամբ, յուսահատուած յայտարարում է, որ ոչ միայն երկիրը ղիմում է դեպի կասաստրոֆա, այլ կասաստրոֆան ցաւ մեզ առդէն սկսել է: Նոյնն են ասում և մինիստրներէ կարփնեալ այլ իմաստունները, ինչպէս երկրագործութեան մինիստր Ն. Խոմե-րիկին:

Փոքրիկ վրաստանը իբրեւ պետութիւն ոչ մի ոսկու ֆոնդ չունի: Իսկ ծախքեր անում է մեծ պետութեան նման... Իրենց «անկախութեան» առաջին տարիներում (1918—1919 թ. թ.) մենշնիկները դեռևս կարողացան ղիմանալ զանազան տեսակի ապրանքների այն պաշարի շնորհիւ, որ Ձնացել էր նախկին ցարական կայսրութեան կովկասեան ֆրոնտից: Զանազան տեսակի սպեկուլեանտներ և եւրոպական գերմանո-անտանտական իմպերիալիստներ կողոպտեցին այդ պաշարները և մասսային հասան միայն փշրանքները: Սոցիալ-դաւաճանները, որ միանգամ դաւաճանել էին Ռուսաստանի Յեղափոխութեան և բուրժուական պետութիւն կառուցելու ճանապարհի վրայ էին կանգնել, իհարկէ այլ քաղաքականութեան էլ չէին կարող հետևել: Որովհետև հին եառիկը, որ դեռ ձեռիւմ է նրանց կուսակցական զբօսակին սպիտակ գարդիական, նացիոնալիստականի հետ միասին, այսինքն սոցիալ-դեմոկրատական, մենշեւիկական եառիկը, նրանց չի փրկում նոյն ձևով, ինչ ձևով որ դեղին Ինտերնացիոնալի հերոսներին չի փրկում նրանց Բերնը, Ամստերդամը, Ժընևը, որտեղ նրանք իզուր փորձեցին այս երկու վերջին տարիներում վերականգնել նախկին (□) Ինտերնացիոնալը: Եւ նոյնիսկ ինքը կաուցելին չկարողացաւ գտնել, թէ ինչպէս իր սիրելի թոռնիկները (կաուցելին իրեն պատւում է վրացական մենշնիկների պապ տիտղոսով) փոխառութիւն կնքեն, այսինքն ծախեն Անտանտի իմպերիալիստներին: Բայց վալիւտա չունեցող մի երկրի, որ իր գոյութիւնը պահպանում է միայն տպագրական մամուլով և բացի այդ չունի դեռ իր զրամական միաւորը, այլ օգտուում է հին

«ցարական ուրվիով», մի փոխառութիւն կը տայ ներսում կամ գրսում: Դրսում գուցէ միայն *Լոյզ-Ջորջը*, Միլլըրանը և Լենկ... Բայց սրա համար պէտք է, որ Վրաստանը վերջնականապէս ծախսի նրանց, ինչպէս արեւ են սպիտակ Լեհաստանը, Վրանդելը Բալթիկովիչի և Սափենկովի հետ...

Իսկ ի՞նչ կ'աւի այս տոթիւ բանասրահի դաշտական Վրաստանը, որ այնպէս յօշոտւած է անտեսապէս և այնպէս ճնշւած քաղաքականապէս, բայց այնուամենայնիւ դեռ յոյսը չի կորցնում և նայում է դէպի Հիւսիս, Խորհրդային Ռուսաստանի կողմը:

Իսկ անիծեալ բոլշեիկ-կոմմունիստները մենշեիկական ուղղափառ թագաւորութեան մէջ, չնայած այն բանին, որ նրանց մի զգալի մասը բանտերում փթնում է և հարիւրներով ու հազարներով Վրաստանի սահմաններից դուրս վաճառւած, այնուամենայնիւ չեն ոչնչանում, նոյնիսկ լեզալ թերթիւր են հրատարակում, նրանց կուսակցական բջիջները քաղաքներում և ատենանապէս գիւղերում ոչ միայն չեն ոչնչանում, այլ աճում էլ են: Իսկ վերջիվերջոյ, գուցէ բանը այնտեղ կը հասնի, որ նրանց բանտ նստեցնելը և երկրից վաճղելը անհնար կը լինի, որովհետեւ էլ ո՞վ է մնալու այն ժամանակ ուղղափառ մենշեիկական Վրաստանում: Մենակ Զիսնկելիին և Ժորգանիան «միներստական կոլլեգիայի» ընկերների հետ և «Յատուկ զօրամասը», գուցէ և մի քանի գաւաղիականներ: Բայց սրանք կը լինեն գեներալներ ատանց բանակի, կառավարողներ՝ ատանց ժողովրդի:

Մենշեիկները հենց սրանից էլ վախենում են, դրա համար էլ նրանք խուսափում են Խորհրդային Ռուսաստանի հետ կնքած դաշինքը խախտելուց, դեռես համբերատար են դէպի մեր կուսակցութեան որոշ լեզաւութիւնը և դէպի նրա մամուլը, որի տոնը լեզաւութեան շրջանակներում բոլորովին չափաւոր չէ, այլ ընդհակառակը շատ խիստ է և յեղափոխական-մարքսիստական եղանակով հմուտ: Պետութեան գլուխ պ. Ժորգանիան կատաւորաֆայից դուրս գալու ելքը համարում է մինչև պատերազմական հասարակակարգին, գեմեկրատական կապիտալիզմին վերագրանալը, այլապէս, ասում է նա, «մեզ սպառնում է անխուսափելի կորուստ», և այն էլ—ոչ հեռու ապագայում: Բայց դրան են ձգտում նաև իմպերիալիստական ֆարգի յանցաւորները՝ Լոյզ-Ջորջը, Միլլըրանը և միւսները: «Վրաստանի կոմմունիստ» թեր-

թը (լեզու է, հոկտեմբեր 22-ին, № 3) վերլուծելով մենշևիկներին ղեկավարողները նկատում է, որ ոչ մի ղեկավարողական կապիտալիզմ չկայ, այլ կայ յեղափոխութիւն կամ իմպերիալիստական կապիտալիզմ իր պահապան գամփոններով—Միլլըրանով, Լոյդ-Ջորջով և այլն:

«Կամ այս վոնմակի հետ,—ասում է թերթը,—սոցիալիզմի դէմ, կամ այս վոնմակի դէմ դաշնակցած համաշխարհային յեղափոխական պրոլետարիատին և նրա ուղղմիկ աւանգարդին յանձինս Խորհրդային Ռուսաստանի:

«Վրացական մենշևիկները ղեկավարողմի մտած գրոշակի տակ խուսափում են հարցի այն սուր կերպարանքից... Բայց նրանց չի յաջողւի թաղցնել իրենց ծակ և թըշւած մեշուկում բիղը, որն այնպէս կակծացող կերպով խլում է Վրաստանի բանտրա-գիրդացիական մասսաների մարմնի մէջ» (Նոյն տեղում):

Նոյն թերթի հոկտեմբերի 23-ի № 4-ի առաջնորդողը, որտեղ խօսում է Իտալիայում, Անգլիայում և այլ երկրներում 1920 թւականի աշնանը եղած պրոլետարիատի յեղափոխական շարժման մասին, այսպէս է վերջանում.— «և ամեն տեղ ետում է մեծ յեղափոխական կոիւր: Միայն մենշևիկներն են փորձում մի կողմ քաշել նրանից: Բայց յեղափոխական արիութեամբ լի պրոլետարները ամենուրեք իրենցից զէն են շարժում յեղափոխութեան այս աշխամարչւած դասալիքներին:

«Նոյնը պիտի անի և Վրաստանի պրոլետարիատը, եթէ չի ուզում ինքը դառնալ այդպիսի արհամարչւած դասալիք»:

Եւ այսպէս է թերթի բնդհանուր տոնը: Միաժամանակ նրա մէջ տալապրում են Կոմունիստական Թատերնացիոնալի II կոնգրեսի ներկայացուցիչների համագումարի և Բազելի Արևելքի Ժողովուրդների բոլոր մանիֆեստները, բանաձևները և արձանագրութիւնները: Տպագրում են Նոյնիսկ (թարգմանաբար) Լենինի ամբողջ գրքոյկը «ձախութեան» հիւանդութեան մասին: Հրատարակում են բազմաթիւ բրոշուրներ «Կարմիր Աստղ» ֆիրմայի անւան տակ, որոնք մեծ մասամբ թարգմանութիւններ են և բացառաբար ժամանակակից կոմունիստ հեղինակների գրչին են պատկանում (ինչպէս օրինակ՝ Բուխարինի, Լենինի, Չինոֆիև և այլն): Եւ վերջապէս շարունակաբար արտատպւում էին «Прада»-ի, «Известия»-ի առաջնորդողները և ուրիշ սկզբունքային յօդւածները:

Այսպիսի լեզու աշխատանքի շնորհիւ վրացական բանուորները և գիւղացիները զրկւած չեն հոգեոր անդից և հետևաբար քաղաքականութիւնից և գլուխ են հանում, զինւելով պրոլետարիատի գաղափարախօսութեամբ կոմմունիզմով, այսպէս ասած «փնւազատութեան զինով», որն անհրաժեշտ նախապայմանն է «զէնքով բննագաւառութեան» ապստամբութեան, քաղաքացիական պատերազմի, եթէ կամովին կերպով և ժամանակին անձնատուր չը լինեն պ. պ. Ժորդանիան, Գեղեշկորին և Ընկ. Մի խօսքով պետութեան անտեսական դրութիւնը հենց իրենց, մենշևիկական Վրաստանի առաջնորդների խոստովանութեան համաձայն՝ այժմ, վաղը արդէն ճակատագրական է։ Ելքը, նոյ ժորդանիայի և բոլոր միւս «նոյերի» կարծիքով (նոյ Բայիշելիի՝ ներքին գործերի մինիստր։ Նոյ Խոմերիկի՝ երկրագործութեան և էլի մի քանի ուրիշ նոյերի մինիստրներ-օգնականներից և այլն) այն է, որ երկիրը յիս դառնայ դէպի նախապաշտօնագմական դրութիւնը, դէպի դեմոկրատիկ կապիտալիզմը, թէ չէ սպառնում է կործանում, այսինքն Վրաստանի համար անխուսափելի է դառնում պրոլետարական, բանուորա-գիւղացիական յեղափոխութիւնը և ինարկէ գծուծ վրացական մենշեիզմի կործանումը, որ Վրաստանի ամբողջ աշխատաւորութեան ազատագրումն է նեխուղ մենշեիզմի վարակից և միջազգային աւազակային իմպերիալիզմի ճիրաններից։

Դէպի մեր կերթայ Վրաստանը։ Դէպի անգլիական, Ֆրանսական և ընդհանրապէս համաշխարհային իմպերիալիզմը, թէ՛ դէպի համաշխարհային կոմմունիզմը, III կոմմունիստական Ինտերնացիոնալի գիրկը և վերջինիս աւանգարդի՝ Խորհրդային Ռուսաստանի դաշնակցումը։ Ակնյատ է, որ մօտիկ ապագան կը պատառխանի ոչ ոչ հարցին։ Վրաստանը, որ ներկայ մոմենտում ձեռնտու գիրք ունի ստրատեգիական տեսակէտից մօտաւոր Արևելքում պայքարող երկու ուժերի՝ կոմմունիզմի և իմպերիալիզմի համար, մի կողմից յանձինս Խորհրդային Ռուսաստանի, միւս կողմից յանձինս Անտանտի իմպերիալիզմի, արդէն շնորհիւ իր ֆինանսա-անտեսական կատաստրոֆայի չունի երբորդ ելք, ինչպէս մինչև այժմ էր։ Կամ Անգլիայի և ընդհանրապէս Անտանտի գիրկը կամ Բանուորա-գիւղացիական յեղափոխութեան, երբորդ ելք չկայ...

Վրացական մենշեիզմի զեկամարները ինարկէ ձեռք են տալիս

դէպի տառջին կողմը (Ակակիյ Զիսենկիին, ժողովանիան իրենց ընկերների հետ միասին)։ Այս նպատակի համար նրանք ամեն բան արել են՝ փորձել են իրենց զիջքերն ամբողջնել հատուցելու և այլ զեղիւն Խնտերնացիականալիսանների միջոցով, որոնց այնպէս զովորանում են Վրաստանի սե-հարիւրակային նացիոնալիստ վայրի ցուկերը, վերջին չորս տարիների մօրալիզացիոյ, ժողովրդական գաղափարի համազօգւմարով և կոմմունիստներից Բաթումը, Թիֆլիսը և Վրաստանի այլ քաղաքները բացարձակ մաքրագործելով։ Բացի նախկինները Բաթումում բանտարկւած են 400, Թիֆլիսում 200 կոմմունիստներ և այլն։ Իհարկէ վրացական կառավարութիւնը նրանց կոմմունիստներ չի անւանում, այլ մուսուլմաններ, քիմալիստներին համակրողներ կամ քիմալիստներ... բայց սա Խորհրդային Ռուսաստանի և Աղբրեջանի միասիւնների առաջ գործածւող լեզու լեզուն է... Այսպիսի ընդհանուր ձերբակալութիւններ և բանտարկութիւններ անում էր նաև ինքնակալ իշխանութիւնը 1905 և 1917 թ. թ. յեղափոխութիւններից առաջ։

Որ Վրաստանի համար զրութիւնը լուրջ է, այդ պարզ երևում է ընկեր Զիշերինի Վրաստանին և Անգլիային ուղղած նոտաներից, նաև Անսանի բանտրեւելին ուղղած նրա կոչից։

Վրացական մենշեիկների վերից սկսած վերջին չորս տարիների մօրիլիզացիայի վակիսանալիսան շարունակում է։ Տեսնենք, ի՞նչ կը գայ ներքեից...

Ասելի ճիշտ կը լինի ասել, — ի՞նչ կը կատարւի դրսից, այսինքն ի՞նչ տեղի կունենայ Վրաստանից դուրս երկու պայքարող ուժերի՝ Խորհրդային Ռուսաստանի և Անտանտի փոխադարձ յարաբերութիւնների միջև։ Առանց Անգլիայի և Արևմտեան Եւրոպայի միւս գլխաւոր երկրների ու Ամերիկայի պրոլետարների միջամտութեան գործը չի վերջանայ։ Ի՞նչ չափով նրանք ակտիւ կերպով և ի՞ր ժամանակին կարձագանքեն Խորհրդային Ռուսաստանի գիմումին։ Այստեղ է ամբողջ հանգույցը։ Վրացական մենշեիկսի զեկավարները կարող են կանխապէս այս բանը հաշի տանել և գուցէ անձնատուր կը լինեն, ինչպէս արեցին անցեալ մայիսին, երբ նրանք, Դենիկինի ֆարգելուց և Աղբրեջանի սովետիզացիայից յետոյ, վախենալով Կարմիր Բանակի մօտենալուց, Մոսկուայի հետ դաշինք կոնցլին։ Այժմ Վրանդին էլ է ֆարգ-

ւած, Ղրիմն էլ է մաքրւած: Լեհաստանը հաշուած է Խորհրդային Ռուսաստանի հետ...

Հաշի շէն առնի այս բոլորը: Պէտք է հաշի առնեն: Հակառակ դէպքում նշանակում է իւրիւսերը նրանց վերջնականապէս դադարել է սիրելուց ու զրկել է խելքից, թէկուզ առաջւայ միկրոսկոպայի մանր բուրժուական խելքից, որ այնպէս հոգում էր շարունակ ֆիզիքական գոյութեան պահպանման համար և պատրաստ էր ամեն ստորութեան: Յամենայն դէպս մեր լոգունդն է խաղաղութիւն վրացական բանւորների և գիւղացիների խրճիթներին, և պատերազմ զգւելի սրիկաներ ժորդանիայի, Մերեթելու, Ձւէիձէի և Ընկ. պալատներին և արքունիկներին, Միլլբրանի, Քերզոնի, Ձերչիլի, Լյոյդ-Ջորջի այս զինակից-լակէյներին և ազգային խմբերալիզմի միւս աւազաններին:

II

Անցնենք միւս Անգրկովկասեան «անկախ» հանրապետութեան՝ Հայաստանին, որի զլխաւոր քաղաքն է Երեւանը: Սա զաշնակցականների և զինւած քանդանների, մաուզերիստ-զինւորների կալւածքն է (ԵՐԿԻՄԱ): Եթէ տեսնք, որ սրանք հայկական կառավարող մենշեիկներն են, ճիշտ չի լինի, որովհետեւ հայերն ունեն իրենց իսկական մենշեիկները, թէև շնչին քանակով, մենշեիկներ ուստական տիպի, որ մասամբ բաժանւել են վրացական մենշեիկներից, մասամբ էլ նրանց հետ կոնտակտի մէջ են Վրաստանի սահմաններում:

Դաշնակները, զաշնակցութիւնը, զաշնակցականները հին ինտելիգենտական մի կուսակցութիւն են կազմում, որ կրում է «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» անունը և մինչև 1905 թ. զբաղւում էր յեղափոխական-տերրորիստական գործունէութեամբ Տաճկահայաստանի սահմաններում և ապրում էր լիակատար համերաշխութեամբ ուստական ցարիզմի հետ: Բայց նա այնուամենայնիւ ընկաւ 11-րդ Ինտերնացիոնալի մէջ ուստական էս-էրների և հանգուցեալ ժորէտի աջակցութեամբ:

1906 թ. սկսած այս կուսակցութիւնը սկսում է աշխատել կազմակերպւած և խրատեստել յեղափոխական ձևով նաև ուստահայերի շրջանում: 1917 թ. յեղափոխութեան սկզբին նա հանգէս է գալիս իբրև մի խոշոր ոյժ, որ մրցում է Անգրկովկասում, նոյնիսկ նենց Թիֆլիսի մէջ վրացական մենշեիկների հետ:

Ռուսաստանից բաժանուելու հետ միասին, մենշեիկներին յետևից և նրանց ազդեցութեան ու ճնշման տակ զաշնակները կազմակերպում են իրենց պետութիւնը Վրաստանի կողքին և մեծ հաճոյքով չէ, որ տեղափոխուում են Թիֆլիսից Երևան, նոր պետութեան՝ Ռուսական Հայաստանի մայրաքաղաքը։ Նրանք յոյս ունեն, և իրօք Թղթի վրայ Վերսայլի կոնֆերենցիայից խոստում ստացան ընդարձակել այժմեան պետութիւնը մինչև որ ստեղծւի մեծ Հայաստան։ զրա համար պիտի միացեն այն բոլոր տաճկական հողամասերը, որտեղ երբեմն հայերը ապրել են իբրև մեծամասնութիւն։

Ի՞նչը նրանց այսպէս ազդեցիկ դարձրեց։ Այս գինտիլիգներներին գրուպպան, որը ճիշտ է, բաւական բազմաթիւ էր և շատ էլ կուլտուրական, այսպիսի վստահութեան արժանացաւ համարեա հայ ժողովրդի բոլոր խաւերի կողմից այն բանի շնորհիւ, որ ընդհանուր առմամբ նարոգնիկական տենդենցների էր հետամուտ, շահագործում էր Հայաստանի բոլոր գետակարգերի արամադրութիւնը, մինչև իսկ խոշոր-կապիտալիստականինը, — մի արամադրութիւն, որ առաջ էր եկել չին բեժիմի ժամանակ տաճկահայերի կեղերման շնորհիւ։ Այս պիտի ասել, որ զաշնակները սկզբում անպայման յեղափոխականներ էին, որոնք ձգտում էին իրենց ժողովրդի ազատագրմանը և ամբողջ ազգի միացմանը։ Եւ նրանք կարողացան ստեղծել խոշոր, գինւորա-յեղափոխական կազմակերպութիւն։

Բացի սրանից հայերի մէջ ունեցած նրանց յաջողութեանը նպաստեց և այն, որ մենք, այսինքն Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանւորական Կուսակցութիւնը հայերի մէջ շատ թոյլ կերպով էինք աշխատում, այն էլ միայն քաղաքներում՝ գլխաւորապէս Բաքում և Թիֆլիսում։ Հայերի մէջ աշխատելու համար պատրաստուած ընկերներ էլ մենք սակաւ քաջատութեամբ, — ինչպէս էին հանգուցեալ ընկերներ Ստեփան Շահումեանը և Արշակ Զոհրաբեանը, — երկար ժամանակ չուէինք։

Երկու հարեան հանրապետութիւնների հասարակական-տնտեսական բազան մօտաւորապէս միատեսակ է. ազգաբնակչութեան մեծամասնութիւնը, այն էլ ահագին մեծամասնութիւնը միջակ գիւղացիներ են և կիսապրոլետար բանւորներ, որոնք ունեն մի կտոր հող և խրճիթ գիւղերում, երբեմն նաև քաղաքնե-

բում: Թողոր արտագրութիւն նրանցից ոչ մէկի մէջ համարեալ կայ, բացի երկաթուղային գործից, այնպէս որ արդիւնաբերական պրոդուկտները համեմատաբար շատ քիչ են:

Ահա թէ որտեղ է թաղւած այս երկու մանր բուրժուական սպորտիւնիստական հոսանքների՝ հայկական դաշնակցութիւն և վրացական մենշեիզմի ծագման պատճառը: Բայց նրանք իրենց շրջանն արդէն ապրել են: Ռուսաստանի բոլշևիկական, Հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ այս երկու կուսակցութիւնները վերջնականապէս դառնում են յետադիմական, հակայեղափոխական. Ռուսաստանի Յեղափոխութիւնը զաւաճանելով և իրենց երկրներում իշխանութիւնը ձեռք ձգելով ու հետևաբար զաւաճանելով իրենց երկրների բանւորների և գիւղացիների արմատական շահերին, դաշնակները, ինչպէս և մենշեիկները նախկին յեղափոխական ֆրազներից յետոյ զլիտպառոյտ արագութեամբ դուրսում են յետադիմական շովինիզմի ամենամուսլ ճահիճի մէջ:

Իշխանութեան տէր դառնալով դաշնակները, ինչպէս նաև մենշեիկները, գրաւում են իրենց կողմը բանւորների և գիւղացիների վերին խաւերին և տեղաւորում նրանց գործարաններում, գաւոռներում և արհեստանոցներում վարպետների պաշտօնով-սպաներին տեղաւորում են բանակում և ինտենդանտութեան մէջ, պաշտօնեաներին՝ պետական և հասարակական հիմնարկութիւնների մէջ, մի խօսքով այն բոլոր տեղերում, որտեղ ցարիզմի ժամանակ համարեա ամենուրեք ուսանք էին և որոնք այժմ դուրս են արւած: Անվարժ բանւորների և յատկապէս գիւղացիների մասսան, որ հոգ չի ստացել, կամ ստացել է անմատչելի մեծ կապալազնով, աղքատութեան գիրկն է ընկած, մուրացկանութեան մատնւած:

Դաշնակները, ինչպէս և վրացական մենշեիկները կազմակերպել են իհարկէ բուրժուական հանրապետութիւն, իբրև հիմք ընդունելով մասնաւոր սեփականութիւնը և դառնելով Անտանաթի հովանաւորութեան սակ, որը նրանց աջակցում է և զէնքով, և գինսամթերքով, և պարէնով:

Հայաստանում էլ աշխատանքի արտագրականութիւնն անհաւատալի չափերով ընկել է, սպեկուլիւնացիան սոսկալի չափերի է հասել և բուրժուազիան հարստանում է աւելի քան երբեքէ: Երկիրը կառավարւում է չէքեթով, գրամական միաւորը նոյնպէս

առասական ցարական սուրբին է, վախճանայի «ոսկու ֆոնդի» քաղցակայութեան պատճառով չէքերի գինը հետզհետէ բնկնում է, կեանքի թանգութիւնը հրէշաւոր շափերի է հասել, իսկ տարիֆային գումարները ողորմելի են, այնպէս որ ժողովուրդը ոչ թէ կուշտ չի ուտում, այլ ուղղակի սովում է: Գաշնակները մինչև այժմ աղատուել են իրենց ժողովրդի զայրոյթից շնորհիւ, այն բանի, որ այս 2—3 տարւայ բնիացեալում համարեա անընդհատ սահմանային ընդհարումներ են ունեցել հարեան մուսուլմանների հետ, որի համար նրանք վարպետօրէն վառում էին շովինիստական կրքերը: Բայց կասկած չկայ, որ այս հիպոթէզն էլ արդէն անցնում է ինչպէս Հայաստանի հայ բանւորների և գիւղացիների, այնպէս էլ նրանց Վրաստանի եղբայրակիցների համար: 1920 թ. մայիսի ապստամբութիւնը Ալէքսանդրապոլում, Կարսում և Հայաստանի այլ վայրերում, որ տեղի ունեցաւ մեր բնկերների զեկափարութեամբ, այս է ապացոյցանում:

Սաոր գաշնակներին յաջողեց Տաճկահայաստանի փախտականներին իրենց լաւ գինւած աւաղակախմբերի, հայկական այն սպիտակ գւարդիականների միջոցով ողողել իրենց ամբողջ երկիրը արիւնով և աղատուել: Բազմաթիւ ապստամբներ գնդակահարւեցին, բանտերը լցւած են, այս փոքրիկ երկրից հարիւրներով և հազարներով վառւած են մեր բնկերները: Սպիտակ տերրորը, որ աւելի վատթար է Հունդարիայի դահճ Խորաթի տերրորից, թագաւորում է փոքրիկ Հայաստանում և մենչեկական Վրաստանը իհարկէ ծափահարում է իր գաշնակցին կոմմունիստների վերաբերմամբ ձեռք առած այսպիսի բռնութիւնների համար:

Բայց գաշնակների կողմից խեղաւած Հայաստանում կենդանի է կոմմունիզմը, ինչպէս նա կենդանի է Վրաստանում: Վրաստանի քաղաքները և խուլ գիւղերի կոմմունիստական բջիջները Հայաստանի սպիտակ տերրորի դէմ առանհակներով բողոքի և զայրոյթի բանաձէներ են ընդունում: Մեր կուսակցութեան Թիֆլիսի կոմիտէն կոչով գիմում է (տպւած լեզուլ թերթում) բոլոր ազնիւ յեղափոխականներին, բանւոր-գիւղացիական մասսաներին և կոմիտէներին, որ իրենց ձայնը բարձրացնեն հայկական գաշնակ-սպիտակ գւարդիականների գազանութիւններէ դէմ, որանք վերջերս էլի գնդակահարեցին 11 կոմմունիստներ: Բայց իհարկէ մենակ բողոքները և բանաձէները չեն ոգնի: Հայկական

գաշնակներին սպասում է նոյն վիճակը, ինչ որ վրացական մենչեխներին: Ժողովրդական մասսաների հասարակական-տնտեսական դրուժիներ և ֆինանսա-տնտեսական կրախը վերջնականապէս հոգ են պատրաստել Հայաստանի սովետիզացիայի համար:

Ընդհանուր առմամբ Հայաստանում և Վրաստանում ազգաբնակչութիւնը բաժանւած է երկու բանակի. մի կողմը կանգնած է ինտելիգենցիան, որ փոխարինում է սուսական շինսփնիկներին և սպաներին ու սիրում է ազնւականներից, տէրւէների տղաներից, վաճառականների որդիներից, պլիւս բանւորների կրթւած վերին խաւը և գիւղացիական կուլակներից դուրս եկած որոշ աւարները, որոնք բռնել են երկու հանրապետութիւնների մէջ վարպետների և արտօնեալ ծառայողների տեղերը, իսկ միւս կողմը կանգնած են գիւղացիների մեծամասնութիւնը և անվարձ բանւորները: Առաջին բանակը Խորհրդային իշխանութեան ղէմ է և այժմեան կառավարութիւնների՝ գաշնակների և մենչեխների կողմն է ազգային կուսակցութիւնների զրօշակի տակ: Երկրորդ բանակը՝ բանւորները և գիւղացիները իրենց հակայ մեծամասնութեամբ Խորհրդային Ռուսաստանի, Խորհրդային իշխանութեան կողմն են և ղէմ են գաշնակներին ու մենչեխներին, որոնց ներքանք առում են:

Ինչպէ՛ք մինչև այժմ երկու «անկախ» հանրապետութիւններն էլ՝ Վրաստանը և Հայաստանը օգտւում են Անտանտի աջակցութիւնից և նրանց ձաղատաղիքը կախում է երկու պայքարող ուժերի՝ միջազգային կոմմունիզմի և միջազգային կապուալիզմի: Խորհրդային Ռուսաստանի և Անտանտի ուժերի փոխյարաբերութիւններից: Երկու ուժերն էլ ուշիմ նայում են այժմ ղէպի Արևելք, որտեղ խճճւում են ու խճողւում միջազգային յարաբերութիւնների նոր հանգոյցները:

Յեղափոխական Արաբիան, Լիբիպոստը, Սիրիան, Միջագետքը, Հնդկաստանը, Պարսկաստանը և յատկապէս յեղափոխական Տաճկաստանը ի ղէմս Քեմալի, որը կոմմունիստ չէ, այլ ազգային ազգմիկ է իմպերիալիստների ճիրաններից իր ժողովուրդը փրկելու համար, անպայման հանդիսանում են Խորհրդային Ռուսաստանի գաշնակիցները: Այն անողոր պայքարի մէջ, որ վարում են Ռուսաստանի պրոլետարական յեղափոխութեան անկող նորա-

տի շնորհիւ արթնացած Արեւելքի կեդեքւած ազգերը ընդգլմ Արեւմտաքի կեդեքիչ իմպերիալիստներին, մենշեիկական Վրաստանը և զաշնակեան Հայաստանը կարող են ժամանակաւորապէս և միայն էպիզոդիկ կերպով օգնական ոյժ հանգիստնալ Անտանտի իմպերիալիզմի համար, եթէ միայն նրանք վերջնականապէս և ձեռակաւորէն կը մանեն Անգլիայի և Յրանսիայի հովանաւորութեան տակ։ Բայց պարտնայք Լոյդ-Ջորջերը և Միլլըրանները արգիտք կը կարողանան կամ օգտակար կը գտնեն իրենց համար նրանց ծառայութիւնն բնորոշել։

Վրաստանի և Հայաստանի բանւորներին ու գիւղացիներին վերին խաւերին իհարկէ նրանք կարող կը լինեն կաշառել, եթէ նրանց տան պարէն և պէտք եղած մանուֆախտւորան...

Բայց Հայաստանի և Վրաստանի բանւորներին և գիւղացիներին սոված և բորիկ մասսաները իրենց տնտեսական գրութեամբ և արաժադրութիւններով անպայման մերն են։

Բայց յեղափոխական Կարմիր Բանակի մերձեցումը կը ներշնչի նրանց յեղափոխական ոգի և կայծակի արագութեամբ կը միացնի նրանց ու կը զարձնի մի անկղ, վրիժառու ոյժ գաշնակներին, մենշեիկներին և աշխարհի բոլոր իմպերիալիստներին դէմ։

Նրանք—վրացական և հայկական այս պրոլետարները և ազգաւոր գիւղացիները կը գտնան Համաշխարհային Յեղափոխական Կարմիր Բանակի—Կոմիւնիստների արժանի մասնակները...

Մոսկւա
1920

Մ. Յիսակյան

ՀԱՄԱԹԻԱՐՀԱՅԻՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԵՆԹԵԻԻԶՄԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ

I

Միջազգային մեհենիզմի «նոր խոսք».

Երբ 1917 թվ. հեղափոխությունը ուսումնականները և գիտաշխատողները խորատակելով բուրժուազիայի տիրապետությունը՝ իշխանությունն առան իրենց սեփական ձեռքը, այս պատմական դեպքը զննատանց աջ-մենշեիկների, ասցիալ-հայրենասերների հոգմից իրեն ոճրագործություն, իսկ ձախ՝ Մարքսի տիպի մենշեիկ-ինտերնացիոնալիստների կողմից՝ իրեն քաղաքական աշխատեցրաւ։ Մենշեիկների ծափով պար եկաւ հարկ հաւաքկին «Իրկ-տատուքա և պեմոկրատիա» բրոշյուրի մէջ, որ հրատարակւած է 1918 թ. ամառը։ Այդ Ինտերնացիոնալի նախկին թէօրեթիկ մերժում էր ընդունել ուսանական յեղափոխությունը։ Այս ժամանակից անցաւ էլի երկու տարի։ Խորհրդային իշխանությունը մէկը միւսի յետևից ջախջախեց իր թշնամիներին և զարձաւ միջազգային քաղաքականութեան ամենակարեւոր, ամենախոշոր դերժոնը։ Ռուսական մենշեիկները ստիպւած եղաւ Խորհրդային իշխանությունը ոչ միայն իրեն պատմական, այլ նաև առաջադիմական փաստ ընդունել։ Խորհրդային իշխանութեան և հակաիշխափոխութեան միջև յետևի ունեցած մենամարտի բոլոր մոմենտներում մենշեիկները ստիպւած եղան կոչ անելու իրենց զաղափարակիցներին՝ պաշտպանել Խորհրդային իշխանութիւնն իրեն յեղափոխական օրդանի։ Պրոլետարիատի ղեկաւարտութեան, առում

էին մինչ այդ մենչեկները, կը տանի մեզ զէպի կալւածատիրական, կապիտալիստական հակայեղափոխութեան յաղթանակը: Նրանց աչքում այժմ Խորհրդային իշխանութիւնը բանւոր դասակարգի պատարն է կապիտալիստական, կալւածատիրական հակայեղափոխութեան զէմ, մինչդեռ այսպէս կոչւած ղեմակրատիան և Դերձանիայում, և Աստարիայում տանում է զէպի հակայեղափոխութեան յաղթանակը: Միաժամանակ տեսնում է միջազգային պրոլետարիատի համակրանքը զէպի Խորհրդային իշխանութիւնը, նա դառնում է նրա ուղեկից տատղը:

Խորհրդային իշխանութեան քաղաքականութիւնը մերժելու ձայնը, նրա զէմ սկսած պայքարը, որ վարում էր Կաուցկին, այն արդիւնքն է ունենում, որ բանւորները լքում են մենչեկական կուսակցութիւնները շարքերը: Միջազգային մենչեկիզմի ու մերից վեր է արդէն պաշտպանել Կաուցկու դիրքը, նա լքում է այն, որպէսզի մենչեկիզմի հիմնական իդէալի համար պայքարն առաջ տանի աւելի նուրբ ձևով: Եթէ մի կողմ զցննք զանազան գրական-քաղաքական նուրբ տարբերութիւնները, այն ժամանակ կարելի է բոլորը վերածել բնօրմիտական այն իդէալի պաշտպանմանը, թէ պրոլետարիատի համաձայնութիւնը բուրժուազիայի հետ անհրաժեշտ է զէպի սոցիալիզմ տանող ուղիի վրայ:

Օտտո Բաուէրը, որ Կարլ Կաուցկու աշակերան է, Ռուդոլֆ Հիլֆերդինգի, Կաուցկու ուղղութեան զլիսւոր. թէօրեակի հետ միասին, հրատարակել է մի բանի ամիս սրանից առաջ գերմաներէն լեզուով մի գիրք—«Բողեկիզմը թէ սոցիալ-դեմոկրատիան» վերնագրով, որ այս նոր ձևի պայքարի մի նմուշ է՝ ուղղւած ռուսական յեղափոխութեան իդէաների, ժամանակակից կոմունիզմի իդէաների զէմ: Բաուէրի այս փորձը՝ «նոր ձևով» հիմնաւորել մենչեկական զործեկակերպը, ընդունելով որ բողեկիզմը առաջադիմական զործօն է Ռուսաստանի, բայց մերժելի է Եւրոպայի համար, վերջացաւ, ինչպէս կը տեսնի ընթերցողը, նոյն-պիսի սնանկութեամբ, ինչպէս և նրա ուսուցիչ Կաուցկու փորձը՝ պարզապէս «չը ճանաչել» բողեկիզմը:

II

Ո. Բաուէրի հայեացքներ.

Ռուսաստանի սոցիալական վարդապետան ժափն պատմական

Ներածութիւն տալուց յետոյ, որտեղ Բառէլը բաղմամբի մէջ-
բերումներով և թւերով ապացուցանում է, որ ինքը «սովորել է
կամաց-կամաց, որոշ բաներ և որոշ շափով», անցնում է ուսա-
կան յեղափոխութեան սոցիալական բովանդակութեանը և գալիս
է այն համոզմունքին, որ «պրոլետարիատի քաղաքական յող-
թութիւնը ոգնեց գիւղացութեանը հասնելու իր սոցիալական
նպատակներին»:

Գիւղացութիւնը այն պատճառով ոգնեց պրոլետարիատին
սչնչացնելու կալւածատէրերի և կապիտալիստների տիրապետու-
թիւնը, որ պրոլետարիատը աջակցեց նրան ստանալու կալւածա-
տիրական հողը և լիւրիզացիայի ենթարկելու ֆէոդալիզմի մնա-
ցորդները: Պրոլետարիատը՝ ի գէժս կամմունիստական կուսակ-
ցութեան՝ փորձեց աւելի առաջ գնալ, անցնել հողի մասնաւոր
սեփականութիւնից՝ խորհրդային անտեսութիւններ ստեղծելու
միջոցով՝ հողի խնկական սոցիալիզացիային, բայց հանդիպելով
գիւղացութեան եռանդուն դիմադրութեանը, հրաժարեց այդ
նպատակից և հենց այդ հրաժարման վրայ էլ հիմնուում է խոր-
հրդային իշխանութիւնը:

Ռուսական գիւղացին դեռ քաղաքականապէս գիտակից էակ
չէ միայն կալւածատիրական հողի համար պայքարելը նրան քա-
շեց պատմութեան յորձանքի մէջ: Հենց որ նա ձեռք բերեց կալ-
ւածատիրական հողը և նրա սեփականատերը դարձաւ, վերադառ-
նում է քաղաքականապէս անտարբեր դրութեանը: Եթէ գիւ-
ղում խորհրդային իշխանութիւնը չի գիպում նրան, նա չի հո-
գում այն մասին, թէ այդ իշխանութիւնը ինչ է անում քաղա-
քում: Գիւղացին մի կողմ է քաշում պատմական պայքարի
դաշտից, նա նորից փակուում է իր զուտ տեղային նեղ շահերի
ընթանակի մէջ, նա վերադառնում է պատմական շարժութեան
խորքերը: Պատմական հրապարակի վրայ են Տեում մենակ
պրոլետարիատը և բուրժուազիան: Այս է Ռուսաստանում պրո-
լետարիատի տիրապետութեան հիմքը: Եւ միայն այն ժամանակ,
երբ հակադեղափոխութիւնը սպառնում է պրոլետարիատի տիրա-
պետութեանը և թւում է, որ նրա զօրքերի յետիւց նորից կը
վերադառնայ կալւածատէրն գէպի իր կալւածքները, պրոլետարիա-
տի հետ միասին վեր է կենում գիւղացին գէն շարտելու ընդ-
հանուր Բշնամուն (42 էջ):

Յորհրդային սահմանադրութիւնը, Բաուէրի կարծիքով, իր մէջ արտացոլում է և միաժամանակ ամրացնում է այս գրութիւնը, գիւղացութեանը Յորհրդներում տակի քիչ իրաւունքներ տալով, քան բանւորներին: Բայց նոյնիսկ այս սահմանադրութիւնը կարող կը լինէր գիւղացութեան թաւկան գերադասութեան հետ նրա տիրապետութեան գէնքը զառնալ, եթէ Յորհրդային իշխանութիւնը ախպէս հիմնականօրէն նշանակէր բուրժուազիային, որ նա արդէն չէ կարող գիւղացութեան սեփականատիրական շարժումներէ կազմակերպող կենտրոնը դառնալու: Իսկ գիւղացութիւնն ինքը չափազանց քիչ կուտարական է, որպէսզի պրոլետարիատի տիրապետութիւնը կարողանայ յաղթանակել:

Բայց հետզհետէ, երբ Յորհրդային իշխանութեան աշխատանքի ազդեցութեան տակ կանէ գիւղացութեան գիտակցականութիւնը, նա յինչելով Յորհրդային սահմանադրութեան վրայ իշխանութեան կը հասնի և կը ստեղծի Ռուսաստանում դեմոկրատիա: Իսկ ինչ սոցիալական բնոյթ կունենայ դեմոկրատիան: Այս հարցին Բաուէրը պատասխանում է մենշևիկական սովորական պատկերով, որով նրանք պատկերացնում են բանւոր դասակարգի զարգացման ընթացքը Յորհրդային իշխանութեան ժամանակ: Բանւոր դասակարգի մի մասը կը վերադառնայ գիւղ, մի մասը կ'ոչնչանայ գէնքը ձեռքին պաշտպանելով Յորհրդային իշխանութիւնը, միւս մասն էլ կը մտնի Յորհրդային բուրժուատիայի շարքերը: Մնացած մասսան անկարող կը լինի պէտք եղած չափով եռանդ և ինքնուրոյնութիւն երևան բերելու, ինչքան որ պէտք է սոցիալիստական տնտեսութիւն կազմակերպելու համար:

Այս պատճառով Յորհրդային կառավարութիւնը ստեղծում է արդիւնաբերութեան բուրժուատիկ վարչութիւն: Ռուսաստանում սոցիալիստական հասարակութիւն է ստեղծում, որովհետեւ Յորհրդային իշխանութիւնը խլել է կապիտալիստներէջ արտադրութեան միջոցները, ազատագրել է աշխատանքի պրոցեսը և ինքն է կազմակերպում այժմ, ըստ իր հայեցողութեան ու պլանի գործադրելով արտադրութեան միջոցները և բանւորական ոյժը, անմիջական, հասարակական տնտեսութիւն՝ աշխատանքի արդիւնքների համաչափ, անմիջական, հասարակական բաժա-

Նաև Բայց եթէ սա սոցիալիզմ է, ապա իրայատուկ տեսակի բու-
նակալական սոցիալիզմ է: Որովհետեւ Ռուսաստանում սոցիա-
լիզմը ցոյց չի տալիս պրոլետարիատի տիրապետութիւնը ար-
տադրութեան միջոցների վրայ, ցոյց չի տալիս, թէ ինքը պրո-
լետարիատը զեկամարում է աշխատանքի պրոցեսը, ոչ էլ այն,
որ ինքը պրոլետարիատը բաշխում է աշխատանքի արդիւնքը:
Այդ սոցիալիզմը ցոյց է տալիս, որ պետական իշխանութիւնը
ընդհանրացել է ժողովրդից, նա նրա մի փոքրիկ մասն է, որ
բարձրացել է ժողովրդական մասսաներից. նա է բաշխում ար-
տադրութեան միջոցները, աշխատանքի արդիւնքը, բանւորական
ոյժը և բռնի միջոցներով հարկադրում է աշխատատեղի մասսա-
ներին ենթարկուել իր բանւորական պլանին, իր աշխատանքային
կազմակերպութեանը (էջ 63):

Իսկ յետոյ: Մերժում է Բաուէրը նման քաղաքականու-
թեան անհրաժեշտութիւնը, համարում է այն վերադարձ գէպի
արակէնդիկնա, ինչպէս այս առում էին մենշեկները աշխատան-
քի բանակների մասին եղած վիճարանութիւնների ժամանակ:
Ոչ, Կիսաքաղցր-կիսաթթու գէմբի արտոյայտութեամբ իր նկա-
րագրած պատկերը նա բացատրում է ռուսական երիտասարդ
պրոլետարիատի կուլտուրայի ցած մակերեւոյթով և զրում է. «Եւ
զեմոկրատիայի սկզբունքները յաւեօժեմական ճշմարտութիւններ
չեն. զեմոկրատիան միայն պատմական զարգացման արդիւնք է
և նրա մի աւտիճանը, միայն արտադրութեան միջոցների պատ-
մական զարգացման, դասակարգային պայքարի, մասսաների
կուլտուրական հասունութեան որոշ ազդեցմանի վրայ զեմոկրա-
տիան ննարաւոր է դառնում: Որտեղ բացակայում են այս նախա-
դրեալները, այնտեղ առաջագիմական փոքրամասնութեան բռնա-
կալութիւնը անցողիկ շրջանի պատմական անհրաժեշտութիւնն
է, պատմական պրոցեսի ժամանակաւորապէս անհրաժեշտ գործիքը
(էջ 63): Այս ինչ որ այժմ տպւորւմ է Ռուսաստանը, նոյն է,
ինչ որ Մարսը 1847 թ. սպասում էր Գերմանիայում:

Բայց ինչ կը լինի բռնակալական սոցիալիզմը, եթէ զեդ-
ջուկի կուլտուրական մակերեւոյթը բարձրանայ և նա հաստատի,
ինչպէս գուշակում է Բաուէրը, իր տիրապետութիւնը:
Մատանան գիտէ,—պատասխանում է Բաուէրը, ամենայն հա-
ւանակութեամբ նա կը ներկայացնի մի խառնուրդ, որ բաղկա-

ցած կը լինի հոգի մասնաւոր սեփականութիւնից, ստաբիլի-
ացի կոնցիստանսի տէրերի մասնաւոր կապիտալիստական սեփա-
կանութիւնից և խորհրդային իշխանութեան կողմից մոլորած պե-
տական կապիտալիզմից:

Ահա մենշեիկական նոյն փիլիսոփայութիւնը, որ ըստ էու-
թեան նոյն է, ինչ որ Կաուցկու փիլիսոփայութիւնը, ինչքան էլ
Բաուէրները, Հիլֆերզինգները և մենշեիկական Ոլիմպոսի աւելի
մանր աստուածիկները հրաժարեն Կաուցկուց, նրանք հիմնա-
կանում ընդունել են նրա հայեացքը ուստական յեղափոխու-
թեան մասին, որը համարում են մի անցողիկ շրջան գէշի բուր-
ժուական կարգը: Մենշեիկական լոգունդը— զարձ գէշի կապի-
տալիզմը, որ հրապարակ է նետել 1918 թ.ին, մի լոգունդ, որից
խօսքով հրաժարել են ուստական մենշեիկները, Բաուէրի
համար իր ոյժը ամբողջովին պահել է: Բաուէրի և Կաուցկու մէջ
եղած ամբողջ տարբերութիւնն այն է, որ խորհրդային Ռուսաս-
տանի երկու ու կէս տարի իր թշնամիների գէժ վարած յաղթա-
կան պայքարից յետոյ, պ. Բաուէր ստիպւած է հրաժարել խոր-
հրդային Ռուսաստանը պատմական մի աւանտիւրա գիտելուց, և
ստիպւած է նրան գիտական վկայական տալ, ընդունելով նրան իր-
րե պատմական զարգացման մի անհրաժեշտ շրջան: Պատմական
տեսակէտից մենք կարող ենք հրաժարել որևէ բանականից Բաու-
էրի հետ, որովհետև աւելի բարձր վկայական, քան խորհրդային
Իշխանութեան գործունէութեան ճանաչումը, իրրե միակ հնարա-
ւոր յեղափոխական քաղաքականութիւն, ոչ ոք չի կարող պա-
հանջել. անհնարաւոր քաղաքականութիւն չէ որ անկարելի էլ է
վարել, բայց որովհետև խնդիրը վերաբերում է ոչ թէ խորհրդա-
յին իշխանութեան վկայականներին, այլ իրեն՝ մենշեիզմի մեր-
կացմանը, դրա համար էլ արժէ կանգ առնել Եւրոպական մեն-
շեիզմի առաջնորդի պատմութիւնը չըմբռնելու կարողութեան այս
նմուշի վրայ:

III

Հողային հարցը ուստական յեղափոխութեան մեջ.

Այն կոնիւկատւրան, որի ժամանակ բանւոր դասակարգը
Ռուսաստանում իշխանութիւնը իր ձեռքն առաւ, բացառիկ է:
Հողիւ թէ երրեկից է կրկնւի այն դրութիւնը, որի ժամանակ գին-

ւած գիւղացիական մասնաների խաղաղութեան ծարար և հոգի ծարար ի մի ձուլէին պրոլետարիատի խլիանութեան համար վարած պայքարի հետ: Միջազգային յեղափոխութեան զանգուղ զարգացման պատճառների մեր բոլոր գնահատականների մէջ մենք միշտ մասնանշում էինք, որ ոչ մի տեղ բանւոր դասակարգը չի գտնի յազդութեան ախպրի հետ պայմաններ, ինչպէս Ռուսաստանում: Բայց հենց այստեղ էլ վերջանում է աւստրիական մենշեիկների կողմից արած սուսական յեղափոխութեան անալիզի պատմական հշարտութիւնը: Երկու կենտրոնական հարցերում՝ համաշխարհային յեղափոխութեան մէջ պրոլետարիատի գէպի գիւղացութիւնն ունենալիք յարաբերութեան հարցում և պրոլետարական յեղափոխութեան անտեսական շինարարութեան հարցում, մենշեիկ Բաուէրը ոչինչ չի հասկացել և պէտք է հակաշեղափոխականների բանակին մերացրել, չնայած իր կիսաբողոք-կիսաթիւ ֆրագմենտին շրտնակալական սոցիալիզմի պատմական անհրաժեշտութեան մասին:

Ամբողջ աշխարհում ամենուրեք գիւղացութիւնը շատ աւելի պահպանողական, շատ աւելի սեփականատիրական բուրժուական մասսա է, քան Ռուսաստանում: Ի՞նչ է մտադիր անել մենշեիկներ այս մասսայի հետ եւրոպական յեղափոխութեան ժամանակ: Նախիկ փոքրամասնութիւն լինելով, ինչպէս է Գերմանիայում, այդ մասսան բաւականին ոյժ է ներկայացնում, որպէսզի պրոլետարիատը անկարող լինի պնտական բռնութեան տկոթ միջոցով նրա վզին փաթաթելու արտագրութեան սոցիալիստական մեթոդը: Այդ պատճառով էլ նա ստիպւած է լինելու առայժմ հանգիստ թողնելու գիւղացու հոգի սեփականութիւնը: Եթէ Բաուէրը չարախնդութեամբ հարցնում է՝ իսկ ձրտեղ է ուստական գիւղի սոցիալիզմը, այն ժամանակ նա հարւածում է ոչ թէ ուստական, այլ միջազգային յեղափոխութիւնը, որովհետեւ նա իր առաջին երջանում ոչ մի տեղ անկարող չի լինի գիւղացի-սետրեան սոցիալիզացիան իրագործելու: Սոցիալիզմի համաշխարհային զրականութեան մէջ չկայ ոչ մի լուրջ հեղինակ, որ հաշի առած չը լինի այս: Բայց արդեօք կարող է յաղթանակող պրոլետարիատը գիւղը հանգիստ թողնել, թոյլ տալ ապրանքային արտագրութիւն և երկրագործութեան մթերքների ազատ առտուր: Նա չի կարող, բանւորական յեղափոխութեան սովամա-

հաթիւն սպանեալքի տակ, այս բանն անել, Այս պատճառով
 նա հարկագրւած է լինելու տասնիմանների բաժանել գիւղացու-
 թիւնը, նրա կապիտալիստական մասի վրայ գիկտատուրա նա-
 տառել, փորձել նոր հզարածամութեան միջոցով, որտեղ այդ
 հարաւոր է, իր կողմը գրաւել մանր գիւղացութեանը և յենել
 սանջարային անտեսութիւնների կազմակերպութիւնների վրայ:
 Գիւղացիա-բուհեցրային մասսայի քաղաքական անհաւատարու-
 թիւնը անհրաժեշտութիւն կը լինի և համալրարկային յեղափո-
 խութեան համար, որովհետեւ զա համապատասխան է այն
 փաստին: որ գիւղացութիւնը միշտ զնկում էր սովի սարսափի
 տակ: Այս անհաւատարութիւնը, որ հակառակ է ձեռնան գեմո-
 կրատիային, համապատասխանում է ոչ միայն պրոլետարիատի
 դասկարգային շահերին, որ չի կարող գեմոկրատիայի գեղեցիկ աշ-
 քերի համար թոյլ տալ գիւղացի-բուրժուային պատապարտել իրեն
 սովամահութեան, այս անհաւատարութիւնը միաժամանակ համա-
 պատասխանում է և պատմական տաշտագիմութեան շահերին և
 հենց պրանով վերջ իշվերջոյ միջին գիւղացութեան շահերին: Կա-
 պիտալիզմը արդէն այժմ ոչ միայն թոյլ չի տալիս վարդապետել և
 բարձրացնել երկրագործութիւնը տեխնիկապէս հարաւոր բարձ-
 րութեան վրայ, այլ նաեւ պահում է անկույտութեան, սապու-
 շային կեանքի մակերեսի վրայ նոյնիսկ ունեւոր գիւղացուն:
 Միայն գիւղի և քաղաքի միջի անգունդի ոչնչացումը, զէպի որը
 գնում է կամուրջով, միայն զա ազատ հարաւորութիւն կրա-
 տեղծի գիւղացիական մասսաների մարդկային զարգացմանը:
 Անա պրոլետարիատի զիկտատուրայի պատմական իրաւունքը նրա
 գիւղացիական հակառակորդների վրայ: Ինքը Բաուէրը ստիպւած
 է խտտովանել, որ ժեթէ Ռուսաստանը գեմոկրատական հան-
 րապետութիւն լինէր, այն ժամանակ ուստական գիւղացութիւնը
 զո՞հ կը դառնար ամեն մի բուրժուական գեմոկրատիայի» (էջ 47):
 Իսկ ինչ է գրութիւնը Տիրոյի կամ Բաւարիայի գիւղացու մաս:
 Միթէ Բաուէրը կը կարողանար իր չգեմոկրատական Աւստրիա-
 յումն յենել գիւղացիական մասսայի վրայ, միթէ այդ մասսան
 բուրժուական գեմոկրատիայի զո՞հ չէ դառած, որին նրանք ծա-
 խում են եւրոպական կապիտալիստներին: Բայց, պատասխանում
 է պ. Բաուէրը, չէ՞ որ Խորհրդային Ռուսաստանը գիմանում է
 միայն այն պատճառով, որ նա հրաժարել է օգտել իր գիկ-

տասութայից, հրաժարել է գիւղացիական տնտեսութեան սոցիալիզացիայի իդէալից: Նոյն պ. Բաուէրը տեսնում է մեր պատենաւորման քաղաքականութեան մէջ բանւորական զիկտատութայի արտայայտութիւնը գիւղացութեան վրայ, որ իրօք այդպէս էլ է: Իսկ ինչ վերաբերում է նրան, թէ մենք միայն դանդաղօրէն ենք զարգացնում հոգային տնտեսութեան բարձր ձևերը, որ մենք կարող ենք նոյնիսկ առժամանակ հրաժարել ունեւոր գիւղացութեան դէմ մղւող պայքարի առանձնայատուկ ձևերից, պիտի ասել, որ այդ հրաժարումը միայն տակաւիկական մի միջոց է:

Բաուէրի այն պնդումը, թէ «բոլշեիկները լոյս ունէին, որ մանր կապիտալիստական տնտեսութիւնը յաղթելով խոր ֆէոդալական-կապիտալիստականին, արագ կերպով կը փոխի խոշոր սոցիալիստական տնտեսութեան» (էջ 36), միանշանակ մտացածին է:

Մանր գիւղացիական տնտեսութեան զարգացման ու խոշոր սոցիալիստականի փոխման մասին կարող էին մտածել միայն էսէրները: Բաուէրը չի կարող ցոյց տալ ոչ մի կոմմունիստ հեղինակ, որը համաձայնէր հաստատել նրա առաժը: Մանր գիւղացիական տնտեսութեան փոխելը խոշոր սոցիալիստականի հնարաւոր կը լինի միայն բանւորական իշխանութեան ամրապնդման հետ միասին: Միայն այն ժամանակ, երբ նա ամբողջովին կիրականացնի կեանքում հացի մոնոպոլիան, միայն այն ժամանակ, երբ նա ոչ միայն կը կենտրոնացնի իր ձեռքում արդիւնաբերական արտադրութեան բոլոր միջոցները, այլև այնքան առաջ կը մղի այն, որ կարող կը լինի կօօպերատիւ և կոլեկտիւ օգտագործման համար տալու գիւղին երկրագործական զարժիքներ, միայն այդ ժամանակ պրոլետարիատը կարող կը լինի երկրագործութիւնը սոցիալիստական ըշխմանի վրայ փոխադրելու աշխատանքին գիմել:

Ռուսական յեղափոխութիւնը զեռ անկարող էր այդ անելու: Լինելով առաջին յեղափոխութիւնը, որ շրջապատւած է ամեն կողմից կապիտալիստական թշնամիներով, նա հարկադրւած է իր ուժերը կենտրոնացնել զլիաւոր թշնամու դէմ, հարւածել եւրոպական ֆինանսական կապիտալին, որն առայժմ նրա համար աւելի վտանգաւոր է, քան մանր գիւղացիական կապիտալիստը:

Այն ժամանակ, երբ Խորհրդային Ռուսաստանին կը յաջողէ յաղթել Ֆիննանսական կապիտալի կողմից սպառնացող վտանգը գիւղացութեան օգնութեամբ, որն իրաւամբ Խորհրդային իշխանութեան մէջ տեսնում է իր զէնքը ուղղւած ֆէոդալական-կապիտալիստական հակայեղափոխութեան դէմ, Խորհրդային իշխանութեան առաջ իր ամբողջ հասակով կը կանգնէ երկրագործութեան մէջ զէպի սոցիալիստական տնտեսութեան ձեւերն անցնելու հարցը: Խորհրդային իշխանութեան ամբողջ աշխատանքը, որ բանձրացնում է գիւղացութեան կուլտուրական մակերեսը, ստեղծում է այս նախադրեալն երկրագործութեան սոցիալիզացիայի համար:

Բայց չէ՞ որ գիւղացիական կուլտուրայի բարձր մակերեսը, յայտարարում է սոցիալ-դեմոկրատ Բաուէրը, անհնար կը դարձնի պրոլետարիատի զիկտատուրան գիւղացութեան վրայ: Մենք առայժմ կանգ չենք առնի այն բանի վրայ, որ պրոլետարիատի զիկտատուրան միաժամանակ գիւղացութեան մի մասի, այսինքն՝ ամենաազգատ մասի զիկտատուրան է:

Այստեղ մեզ հետաքրքրում է հետեւելը՝ թէ ինչպիսի պայմաններում գիւղացութեան զիտակցութեան զարգացումը կարող կը լինէր սպառնալ պրոլետարական զիկտատուրային: Միայն այն պայմաններում, երբ համաշխարհային կապիտալիզմը ամբողջովն էր, միայն այն ժամանակ, երբ համաշխարհային կապիտալին, որը կամրապնդէր Արեւմտեան Արտաշայում, յաջողէր թուլացնել Խորհրդային իշխանութիւնը, խորտակել նրա արտաքին տնտեսւթի մոնոպոլիան, մատակարարել ռուս գիւղացութեանը մաքսանենգութեան և մասնաւոր առևտրի միջոցով արդիւնաբերական գործածքներով, ուժեղացնել մեր կողմից ջանջախւած բուրժուական ռուսական հակայեղափոխութեան կենտրոնները, — միայն այդ ժամանակ ռուս գիւղացութեան կուլտուրականութեան աճումը կը գառնար Ռուսաստանում բուրժուական վտանգի աճում: Այլ կայ որեւէ աւելի բնորոշ բան մենք եւիկ Բաուէրի համար, քան այն, որ նա խօսում ընդունելով միջազգային յեղափոխութեան անումը, նրա զարգացումը, զորով չի կարողանում ռուսական յեղափոխութեան զարգացման համար այլ հանգամանքներ պատկերացնել, քան կապիտալիզմի յաղթութիւնը Արտաշայում:

Որ Խորհրդային Ռուսաստանին կը վիճակէր կործանել

Եւրոպայում կապիտալիզմի յաղթանակի դէպքում, այդ նա հիւանդի գիտէ և շարունակ իր վրայ նայում է իրրեւ համաշխարհային աճող յեղափոխութեան աւանգարդի վրայ, որի ճակատագիրը կապւած է Արեւմտեան Եւրոպայի պրոլետարիատի պահեստի իր ժամանակին օգնութեան համեմուտ հետ: Գ. Բաուէրը չի կարողանում պատկերացնել, որ այդպիսի հրաշք տեղի ունենայ: Թողնենք նրան իր մենշեիկական անհաւատութիւնը, բայց նա էլ չի կարող ժխտել, որ վերը շեշտուած հանգամանքի հետ ոյժ են ստանում կամ ոչնչանում նրա բոլոր խմաստութիւնները Ռուսաստանում բանւորի վրայ ունենալիք բռնուցքի յաղթանակի վերաբերեալ:

Փոխանակ հոգային յարաբերութիւնների խոր գիտունի տեսքով,—որ խմանում է թէ ձիերը զարի են ուտում,—գրելու Ռուսաստանի հոգային զարգացման տենդենցների մասին, նա կարող կը լինէր իւր բոլոր փիլիսոփայութիւնը վերածել մի սարկային բացականչութեան. «Ինչ՞նչ գուք, ուսւ բանւորներ, գէնք վերցրիք, համաշխարհային կապիտալիզմը անյաղթելի է, նա ձեզ կը խեղտի»:

1917 թ. սա մենշեիկ Բաուէրի համոզմունքն էր, երբ նա իրրեւ գիււորական զերի գտնում էր Ռուսաստանում և իր զբոքոյիլի մէջ, որ հրատարակել էր Վերեր կեղծ անունով, ապացուցանում էր, որ Ռուսաստանում բանւորական զիկատուրան անկարելի է: Բայց բանւորական զիկատուրան փաստ դարձաւ, Բաուէրը հարկադրուած է նոյնիսկ այդ փաստը առաջադիմական համարել: Բայց մի ժամանակ նա փորձում էր ապացուցանել ուսւ բանւորին, որ պատմութիւնը նրանց վրայ ծիծաղում է, որ նրանց դիկաստուրայի անւան տակ հաստատել է կոմմունիստական կուսակցութեան զիկաստուրան պրոլետարիատի վրայ:

Այս երգը Վիէննայի «Ինքնուրոյն» զիտնականը իւրացրել է Կաուցիուց, իսկ սա էլ պարտական է զրա համար ուսւ մենշեիկներին, իսկ ուսւ մենշեիկներն էլ վերցրել են այդ երգը ուսւ բոլորժուգիայից, որը, ինչպէս յայտնի է, հրապարակ նետեց ամբողջ ուսւ ժողովրդի վրայ կոմիսարների իշխանութեան, կոմմունիստների կուսակցութեան ինքնակալութեան մասին եղած կոչումը:

Մենշեիկ Բաուէրի փիլիսոփայութիւնը մենք գտնում ենք

Դեմոկրատի, Կուլյակի քոլոր կոչերի մէջ, միմիայն այն զանազանութեամբ, որ Վիլննայի մենչեիկ փիլիսոփայի այս համախոհները աւելացնում են, թէ ուսու կամ մտնականների կուսակցութիւնը, որը բանադատում է ուսու ժողովրդի կամքը, ամբողջովին կազմած է հրէաներից: Բառէրը, որ վերջերս անտիսեմիտների հետ նստում էր յայտնի աւստրիական դեմոկրատական հանրապետութեան միմիայնական կարինետում, որն ապրում էր Անտանտի ոգորմութեան հաշին, բնածին ազնութեան շնորհիւ թորհրդային գիկտատուրայի «ջուղական» բնոյթի մասին եղած այդ փաստից չի օգուտում: Եւ դրա մէջ է Բառէրի ուսական յեղափոխութեան մասին ունեցած — փիլիսոփայութեան ամբողջ զանազանութիւնը Վրանգելեանից, Բանն ինչեմն է, Ռրտեղից է ըզխում այս նմանութիւնը, որ դրդում է մենչեիկների մի մասին նոյնիսկ զէնքը ձեռքին աւտի պայքարի դուրս գալու: Թորհրդային իշխանութեան գէտ:

Մենչեիկների մի մասը իջնում է մինչև կոզակովչինա, որովհետեւ համոզւած է, որ Ռուսաստանում այլ հատարակարգ անհնարին է, բացի կապիտալիստականից, ստիպւած է, — ուզում է նա այդ թէ չէ, այդ միենոյն է — ընկնել բուրժուազիայի բանակը: Բայց մենչեիկների միւս մասը աչքի է ընկնում այլ տեսակի բխմամութեամբ, որ աւելի «նուրբ» տեսակի է՝ նա տնկարգ է հասկանալու յեղափոխական աւտեգարդի դերը գործի գլուխ տնկած գասակարգի վերաբնունմը: Այս երկրորդ կատեգորիային է պատկանում Օտտո Բառէրը:

Երբ Վրանգելը գոտում է կոմիսարների իշխանութեան մասին, այդ բառինքնան հասկանալի ձեով նշանակում է, թէ ինքն է ուզում ինքնակալ կերպով բացատրել կալաւածատէր գասակարգի անունից: Երբ Օտտո Բառէրն է խօսում Կոմմունիստական կուսակցութեան գիկտատուրայի մասին պրոլետարիատի վրայ, այդ նշանակում է որ նա չի հասկանում ոչ բուրժուական յեղափոխութեան մեխանիզմը, ոչ էլ պրոլետարական յեղափոխութեան տրամաբանութիւնը: Միթէ Ֆրանսիական յեղափոխութեան ժամանակ բուրժուազիայի ամբողջ մասսան ինքն էր վարում յեղափոխական պայքարը, ինքն էր ղեկավարում այն: Բուրժուազիայի անտեսապէս առաջաւոր մասը կապւած էր հին կարգի հետ, կապւած էր ֆեոդալիզմի հետ այնքան, որ ձգտում էր

միայն հին կարգը բարենորոգելու. նրան յարմարացնելու ոչ թէ կապիտալիստական զարգացման, այլ բանկիրների, կալւածատէրերի սեփական խմբական շահերի համար: Բուրժուական յեղափոխութեան գործը զանաւում էր մանր-բուրժուական մասսաների ձեռքում, որոնք իրականացնում էին յեղափոխութեան նպատակները բուրժուազիայի տնտեսապէս ղեկավարող խաւի ղէմ պայքարելով: Բայց սխալ կը լինէր կարծել, որ նոյնիսկ բուրժուազիան իբրեւ դասակարգ ամբողջովին ղեկավարող յեղափոխական զեր էր խաղում: Բաւական է միայն ծանօթանալ դասակարգութեան հետ,— չէ՞ որ յեղափոխական իշխանութիւնները հարկադրւած էին դրա ղէմ յուսաճատ պայքար մղել, — որ ընդգրկել էր հենց այն գիւղացութեան մի նշանակալի մասը, որին յեղափոխութիւնը ազատութիւն էր տւել. բաւական է ծանօթանալ այն գիրքի հետ, որ բռնել էին չրեղութեան առարկաների արտադրութեան հետ կապւած մանր-բուրժուական խաւերը, բաւական է վերլիշել այն շարժումների մասին, որ սուսջ էին գալիս թանգութեան շնորհիւ, բաւական է լաւ մտածել եակոբինցիների և «կատաղիների» ամբողջ քաղաքականութեան մասին, որպէսզի մարդ հասկանայ, որ նոյնիսկ այն յեղափոխութիւնների մէջ, որոնց նպատակն էր հենց զեմոկրատիայի հաստատելը, ժողովրդական մասսան, որի շահի համար և որի անունով զարգանում էր պայքարը, յեղափոխութեան բոլոր մեծ կոիւններում վճռական զեր էր խաղում առաջաւոր եակոբինեան կուակցութեան ղեկավարութեան, ողլութեան եւ երկաթի զիկսաութեան ղեկ: Յեղափոխութեան մէջ վճռական նշանակութիւն ունեն մասսաները: Միայն այն դասակարգն է յաղթում, որ, ներկայացնելով պատմական զարգացման տենդենցիան, կարողանում է վճռական մոմենտներին իր շուրջը հաւաքել ռազմիկների համեմատական մեծամասնութիւնը: Պէտք է ընդգծել, որ բանը ոչ թէ ձեական թւարանական մեծամասնութեան մէջ էր, այլ ամենաակտիւ, ամենաեռանդուն, ամենազիրաշարժ նացիոնալական տարրերի գերազանցութեան մէջ: Այդ տարրերը, որ ղեկավարում են հենց իրենց կողմից ստեղծւած կուսակցութեամբ, ենթարկում են իրենց ղեկաւարութեան ոչ միայն թշնամի դասակարգներին, այլեւ անփական դասակարգին այն մոմենտներում, երբ նա լի է անվերականգնութեամբ, հասնելու է, երբ նա ազատութեան ազդեցութեան

ակ յոյսը կհրում է յաղթանակից եւ պատարաս է դառնանելու իր սեփական գործին, իր անպագայի գործին, Յեղափոխական դասակարգի առաջադր մասի ղեկաւարտան ոչ միայն չի հակասում դասակարգի ղեկաւարտային, այլեւ այդ ղեկաւարտայի պատմանն է։ Միայն հաւաքելով իր բոլոր ուժերը հակորինհան կուսակցութեան երկաթէ բռունցքի մէջ, միայն ենթարկւելով այդ կուսակցութեան զիկտատութային, բուրժուազիան կարող էր յաղթել ֆէոդալական կարգին։

Իսկ ինչպէս է բուրժուազիայի զիկտատութեան սուր պայքարի շրջանում։ Միթէ նա իշխում է իբրեւ ամբողջութիւն, միթէ նա իբրեւ ամբողջութիւն է իրականացնում իր զիկտատութեան։ Նա իր զիկտատութեան իրականացնում է կեանքում իր ամենայն-տաղիմական, ամենահաստատուն, ամենավճռական տարրերի միջոցով, որոնք իրենց քաղաքականութիւնը առաջ տանելու համար յաճախ ստիպւած են զիկտատոր դառնալ նոյնիսկ իրենց սեփական դասակարգի որոշ մասի կամքի հակառակ։ Ի՞նչ է ցոյց տալիս Անգլիայի ձախ տարրերի պայքարը Չերչիլի, Կերզոնի քաղաքականութեան դէմ, որ աշխատում է քղաքակել Լոյդ-Ջորջը։ Դա այն է ցոյց տալիս, որ Անգլիայի կապիտալիստական դասակարգի որոշ մասը կասկածելով կապիտալի բացարձակ զիկտատութեային հնարաւորութեան վրայ, ընդդիմադրութիւն է ցոյց տալիս այդ զիկտատութեային ձեռք առած անհրաժեշտ միջոցներին։ Բուրժուազիայի զիկտատութեան իրագործումն է ոչ միայն բանւոր դասակարգի վրայ, այլ նաեւ բուրժուազիայի աւելի վճռական տարրերի կողմից աւելի անվճռականների վրայ։

Կարճ է յեղափոխութեան ժամանակ առաջաւոր մասի վերաբերմունքը դէպի ամբողջ դասակարգը սկզբունքօրէն այլ լինել, քան այդ էր նախկին յեղափոխութիւնների շրջանում։ Հնա-րաւոր է ամբողջ բանւոր դասակարգի ղեկաւարտան, այսինքն այն զիկտատութեան, որ իրականացւում է ոչ միայն յոգուս ամբողջ դասակարգի, այլեւ իրականացւում հենց նրա միջոցով իբրեւ ամբողջութիւն։ Բաւական է վերջիշել այն այրուքնական ճշմարտութիւնը, որ բանւոր դասակարգի հասկացողութեան հիմքը միայն այն է, որ որոշ կատեղորիայի մարդիկ կապիտալիստական հասարակութեան արտագրութեան մէջ որոշ գեր են խաղում, այսինքն բանւորական ոյժը վաճա-

Բողոքների դերը Այս միացնող նշանից դուրս մենք գտնում ենք
 բանւոր գասակարգի մէջ գանազան խաւեր կեանքի գանազան
 մակերևոյթով, կուլտուրայի գանազան մակերևոյթով, գանազան
 պատմական աւանդութիւններով: Տնտեսական զարգացման պրո-
 ցեսը նշանակալի չափով հատարեցնում է բանւոր գասակարգի
 և տնտեսական դրութիւնը, և հոգեբանութիւնը: Նա բանւոր գա-
 սակարգի մեծամասնութեանը զգում է այնպիսի դրութեան մէջ,
 որ նա միաժամանակ մատուցօրէն զարգացած է, ի քաղաքական
 հետաքրքրութեամբ և նիւթապէս անապահով: Բայց այս պատ-
 մական պրոցեսը լիովին չի վերացնում այս գասակարգի միջից
 արտօնեալ խաւի գոյութիւնը, որ կապւած է և շահերով, և ա-
 ւանդութիւններով բուրժուազիայի հետ, չի ոչնչացնում նաեւ պրո-
 լետարիատի մէջ այնպիսի խաւերի ներկայութիւնը, որոնք այն-
 քան ճշմարտ և ստորացած են, որ նոյնիսկ չեն կարող պայ-
 քարի մասին մտածել: Ինչ պիտի լինի առաջագէտ բանւոր-
 ների, բանւորական աւանդարդի վերաբերմունքը զէպի պրոլե-
 տարիատի արխատկրատական խաւերը, որոնք չեն ուզում պայ-
 քարի բուրժուազիայի դէմ և զէպի ստորացած, ճնշւած խա-
 ւերը, որոնք անկարող են պայքարել: Ինքնբաւերական հա-
 կանալի է, որ նախ և առաջ պիտի փորձի ազդեցութեայի միջո-
 ցով բարձրացնել այդ մասնաներին մինչև իր մակերևոյթը, մինչ-
 չև պատմական խնդիրների հասկացողութիւնը իր ամբողջու-
 թեամբ, ապա միւս կողմից նա պիտի պատրաստ լինի քաջա-
 խելու այն տարրերի ընդգիմութեան ոյժը, որ կապւած են բուր-
 ժուազիայի հետ: Վերջապէս նա պիտի փորձով, դորձով յի-
 ստաղէտ խաւերի մէջ հաւատ գարթեցնի զէպի յաղթանակը:
 Պրոլետարիատի զիկտատուրան յեղափոխութեան մէջ մինչև նրա
 վերջնական յաղթանակը պրոլետարիատի առաջաւոր տարրերի
 զիկտատուրան կը լինի: Այն հանգամանքին նայած, թէ ինչքան
 ուժեղ կը լինի պրոլետարիատի առաջաւոր մասը ամբողջ գասա-
 կարգի համեմատութեամբ, լուծում կատանայ նշանակալի չա-
 փով այն հարցն եւ, թէ յեղափոխութիւնը բանւոր գասակարգին
 զէպի յաղթանակ, թէ՛ զէպի պարտութիւն կը տանի: Ով ժխտում
 է պրոլետարիատի առաջաւոր մասի իրաւունքը՝ իրականացանելու
 իր զիկտատուրան ամբողջ բանւոր գասակարգի վրայ, նա ժր-
 տում է հենց պրոլետարիատի զիկտատուրան:

Բառուէրը կարող է ասել. «Այո, չէ՞ որ ես պրոլետարիատի գիկտատուրայի հակառակորդ եմ, բայց ես դեմոկրատիայի կողմնակից եմ»։ Մենք նրան կը պատասխանենք՝ դուք սխալուած էք, քաղաքացի, դուք կանար շատ անգամ կարգացել էք, փիլիսոփայութեամբ էք զբաղուել, բայց ուսական յեղափոխութեան մասին արած ձեր փիլիսոփայութիւնը բանի պէտք չէ։ Ձէ՞ որ դուք ասացիր, որ Հոկտեմբերեան յեղափոխութիւնը և նրա ստեղծած խորհրդային կարգը ոչ միայն պատմական անհրաժեշտութիւն էին ներկայացնում, այլև Ռուսաստանում կալւածատիրա-ֆէոդալական կարգը լիկիւզացիա անելու միակ ճանապարհն էին։

Ձեռք սկսի ձեզ հետ վիճել և այն մասին, որ նրանք հանգիստնում են նաև միակ ճանապարհը Ռուսաստանում սոցիալիզմը իրականացնելու համար։ Կանգ առնենք միայն այն պատմական խնդրի վրայ, որ դուք բարեհաճել էք ճանաչել ուսական յեղափոխութեան՝ վաստակը։ Մենք հարցնում ենք՝ իսկ ի՞նչ ձեռով կարելի էր Ռուսաստանում լիկիւզացիայի ենթարկել կալւածատիրական կարգը, չը ջախջախելով բանւոր զասակարգի այն մասի ընդգրկմանը, որ դնում էր մենշեիկներին կուսակցութեան և էսէրներին յետեից, երբ մենշեիկները և էսէրները կոալիցիոն քաղաքականութեան կողմնակից էին, կապւած էին կալւածատէր զասակարգի հետ։ Դուք ընդունում էք, որ խորհրդային իշխանութեան մեծ գործը բանւոր զասակարգի տարած յաղթանակն է կալւածատիրական և կապիտալիստական հակայեղափոխութեան վրայ, Իւզենիչի, Կոլչակի, Դենիկինի և նրանց յետեւ կանգնած Ատանտի վրայ։ Բայց այն ժամանակ ի՞նչպէս է, որ դուք կարողանում էք պրոլետարիատի առաջւոր խաւերի երեսին յանդիմանութիւն չպրտել այն մասին, որ նրանք ի դէմս կոմմունիստական կուսակցութեան, իրենց քաղաքականութիւնն են փաթաթում պրոլետարիատի այն մասի վրէժ, որոնք յետ են մնացել իրենց աւանգարդից, հալուածաւ են եղել ցրտից ու սովից և զուցէ իրենց սեփական ձեռներեցութեամբ բաւականին եռանդոտ դիմադրութիւն ցոյց չէին տալ, բաւականին եռանդով չէին կուր։ Ետեւ Հոկտեմբերեան յեղափոխութեան պատմական արհրաժեշտութեան և նրա առաջադիմական նշանակութեան մասին և միաժամանակ առաջւոր բանւորներին յանդիմանել կոմմունիստական կուսակցութեան գիկտատուրան հաստատելու մէջ, — այս

Նշանակում է կամ կեղծաւորութիւն անել կամ անմիտ կերպով շատախօսել:

Իսկ եթէ այս հիմնական յանդիմանութիւնը սխալ է, եթէ կոմմունիստական կուսակցութեան ղեկաւարտութեան Ռուսաստանում ուսանեան պրոլետարիատի ղեկաւարտութեան է, այն ժամանակ անպէտք շատախօսութիւն է այն բոլոր մնացածը, ինչ որ Օտտօ Բաուէրը ասում է բրնձակալական սոցիալիզմին, շրիւթկրատիայի յաղթանակի մասին և այլն, և այլն: Խորհրդային իշխանութիւնն երեք տարի պատերազմի մէջ է: Կոմմունիստական կուսակցութեան առնւազն մի երրորդ մասը, բանւոր զստակարգի ամենաեղանկուն, ամենալաւ ներկայացուցիչները ճակատենքում են, իսկ քաղաքացի Բաուէրը, որ իբրեւէ համակրում է այս պայքարին, հարցնում է—«Իսկ ճիշտեղ են ձեր Խորհուրդները»: Խորհուրդները պրոլետարիատի առաջաւոր մասն են, լաւագոյն կազմակերպողները, լաւագոյն ազիւտատորները ուսանական բանւոր զստակարգի: Ո՞րտեղ են նրանք: Ճակատում են: Նրանք այնտեղ ղեկավարում են բանակի ամբողջ ապարատը: Նրանք բանակի հոգին են: Այն, պատերազմը նշանակալի շափով պրոլետարիատի ղեկաւարտութեան խորհրդային ձեւը շեղել է իր հունից, նա կրճատել է բոլոր վարչական բանւորական օրգանները: Նա առաջ է բերել բիւրոկրատական ապարատի չափազանց զարգացումը, որը սակայն չէ կարող վերացնել Խորհրդային Ռուսաստանի պրոլետարական ընդթիւր, որովհետեւ այն բոլոր օրգանները, որոնք ուղղութիւն են տալիս նրա սոցիալական, անտեսական և արտաքին-քաղաքականութեանը, զուրա են եկել բանւոր զստակարգից, կապւած են նրա հետ, գտնւում են կոմմունիստական կուսակցութեան անմիջական հսկողութեան տակ, այն կուսակցութեան, որ ուսանական պրոլետարիատի ամենայնզաւիթիական մասն է:

Որ այդ կուսակցութիւնը յոյս չի դնում յեղափոխական բիւրոկրատիայի, այլ բանւոր զստակարգի կազմակերպութեան վրայ, բանւորական ղեմկրատիայի վրայ, դրա լաւագոյն ապացոյցը հետեւեալ փաստն է—երբ հենց որ սկսում է թւալ, թէ պատերազմի ալիքը յետ է քաշւել, կոմմունիստական կուսակցութիւնը հերթական հարց է դարձնում բանւորական ղեկաւարտութեան օրգանների զարգացման հարցը: Առաջին հարցը, որ նա ա-

առջ մղեց այս տարի գարնանը, երբ կարծում էր, որ խաղաղութեան գործը մօտ է, անտեսական շինարարութեան մէջ միութիւնների ունենալիք դերի հարցն էր։ Առաջին լողունը, որով նա դիմում է պրոլետարիատին վրանդելին շախմատի մոմենտում, դա բանւորական դեմոկրատիայի ամրապնդման և ընդլայնման հարցն է, բիւրոկրատիայի վտանգի դէմ պայքարելու հարցը բանւորական դեմոկրատիայի օրգանները ամրապնդելու հզանակով։ Բառէրը մասնանշում է մեր ազգայնացւած արդիւնաբերութեան սահմանադրութեան վրայ, նա պնդում է, որ դա բանւոր դասակարգի ինքնավարութիւնն է։ Բայց եթէ նա բուրժուական մասնագէտ տեխնիկներին սոցիալիստական արտադրութեան մէջ օգտագործելուն սկզբունքներն հակառակ է, — ինչ որ կը լինէր ոչ միայն լիակատար ապուշութիւն, այլև կը հակառէր Բառէրի բոլոր հայեացքներին — էլ ի՞նչ այլ եղանակ կարող է հնարել Բառէրը արտադրութիւնը կառավարելու համար, բացի նրանից, որ գոյութիւն ունի Ռուսաստանում վարչութեան կազմակերպումը բանւորական պետութեան ներկայացուցիչներից և արհեստակցական միութիւններից, Միակ մտածելի ձևը, որ Ռուսաստանում գոյութիւն ունեցածից զանազանէր, դա արդիւնաբերութեան յանձնումն է արհեստակցական միութիւններին։ Բայց չէ՞ որ Բառէրը Կառուցելու հետևող է և ոչ թէ օրնդիկալիստ և չի կարելի ենթադրել, որ նա դարձել է օրնդիկալիստ։ Եթէ բանն այսպէս է, այն ժամանակ ի՞նչ զրական բան է թագնւած նրա քննադատութեան տակ։ Ոչինչ, բացի լիակատար անհասկացողութիւնից, բացի ուրից, որ քողարկւած է կիսաքաղցր-կիսաթթութեան ֆրազներով պրոլետարական յեղափոխութեան մասին։

«Ձեր մամուլը լիքն է բիւրոկրատիզմի մերկացումներով, որ մշտն է Խորհրդային Ռուսաստանի Խորհրդային անտեսական շինարարութիւնը», կը պատասխանի քաղաքացի Բառէրը։ Սա ապացուցանում է, որ նա Ռուսաստանում սովորել է ռուսաց լեզուն, բայց զժրախտաբար չի սովորել մտածել։ Գիտութիւնը ոչ միայն փաստերի իմացութիւնն է, այլ նաև պատճառները։

Բիւրոկրատիզմի խոցի պատճառը, որի դէմ Խորհրդային իշխանութիւնը և Կոմմունիստական կուսակցութիւնը պայքարում են, այն փաստն է, որ նա հարկադրւած էր իր լուսազոյն կազմակերպիչներին գործադրել ոչ թէ անտեսական շինարարութեան,

այլ յեղափոխութեան կեանքը պաշտպանելու վրայ: Այլ այս չի հասկացել, նա ոչինչ չի հասկացել և չի ցանկանում հասկանալ:

Քաղաքացի Բաուէրը ըստ երևոյթին մի քայլ առաջ է զընացել հաուցեկէ՛ց՝ ընդունել է Թորհրդային Հանրապետութիւնն իբրեւ առաջադիմական գործօն. բայց իրօք նա չի հասկացել ոչ նրա էութիւնը, ոչ նրա մեթոդները, ոչ նրա հեռանկարները: Իրօք նա ոչ մի քայլ առաջ չի գնացել իր ուսուցչից: Նա միայն կտրժանւած կայսերական-թագաւորական Աստրո-Հունգարիայի միապետութիւնից ժառանգել է սիրալիր կեղծաւորութիւնը, որով չի կարող թագցնել իր հակայեղափոխականութիւնը: Եւ այդ հակայեղափոխականութիւնն երևան է գալիս էլ աւելի պարզութեամբ, երբ պարոն Բաուէրը ռուսական յեղափոխութեան անսլիզից անցնում է համախարհային յեղափոխութեան հեռանկարներին:

IV

Ֆիլիպակամ սոցիալիզմն իբրեւ փրկութիւն.

Նրա գրքոյկի երկրորդ մասը նւիրւած է եւրոպական յեղափոխութեան հարցերին: Բայց իրօք այս յեղափոխականի խորամիտ խորհրդածութիւնների նիւթը բոլորովին ուրիշ բան է: Եւրոպական յեղափոխութեան համար ոչ-ռուսական ճանապարհներ փնտռելու պատրուակի տակ նա փորձում է ապացուցանել ոչ աւելին, ոչ պակասը՝ թան էյն, որ Եւրոպայում պրոյեստական յեղափոխութիւնն քնդհանրապէս անհնար է:

Բաուէրն սկսում է ըստ սովորականի հակադրելով ուժերի փոխադարձերութիւնը Ռուսաստանում և Արեւմտեան Եւրոպայում: Ռուսաստանում գիւղացութիւնը ձգտելով հող ստանալ, գնաց բանւորների ետեւից. Արեւմտեան Եւրոպայում նա անընդհատ ճակատ է ուղղւած բանւորների դէմ: Ռուսաստանում, ասում է Բաուէրը, բուրժուազիան վատ էր կազմակերպւած, իսկ Եւրոպայում նա հիանալի է կազմակերպւած: Արեւմուտքում ինտելիգենցիան տասն անգամ աւելի ամուր է կապւած կապիտալիզմի հետ, քան Ռուսաստանում, իսկ «առանց ինտելիգենցիայի անկարելի է ղեկավարել պետութիւնը, անկարելի է կառավարել գործարանը, անկարելի է կազմակերպել տնտեսութիւնը»:

Բառուէրը ինտելիգենցիայի ընդդիմութիւնը համարում է ներդաշնու պրոդեմարական յեղափոխութեան ամենասարսափելի արդեւթը: Ռուսաստանում, ստում է նա ապա, բանւորները ազգաբնակչութեան մի աննշան մասն են, հոգային տարածութիւնը ահագին է և կարելի է մի կերպ ընկելիցիլոն քաղաքականութեամբ կերակրել: Այլ է դրութիւնը Արեւմտեան Եւրոպայում. աշխույժ արդ անտեսական տպարատի ամեն մի ցնցում կը տանի դէպի քաղցած կատարարօքան, որի մէջ կոշնշանայ յեղափոխութիւնը: Ռուսական յեղափոխութիւնը արմատապէս ոշնշացրեց հին պետական մեխանիզմը. — բայց աշխույժի բռնի, երկարատև օպերացիա, որը կոշնշացնի անտեսական և պետական տպարատի աշխատանքի անընդհատութիւնը, կարող կը լինի տանել միայն երկրագործական երկրի տնտեսական մարմինը: Արդիւնաբերական երկրի աւելի զգայուն օրդանիզմը կոշնշանար աշխույժի օպերացիայից: Արեւմտեան և կենտրոնական Եւրոպայում պրոդեմարական յեղափոխութիւնը պիտի մտածի այն մասին, որ նիւթերի փոխանակութեան սոցիալական պրոցեսը կընդհատուի: Այս պատճառով նա չի կարող ոշնշացնել կապիտալիստական կազմակերպութիւնը, մինչև որ հասնի նրա փոխարէն սոցիալիստական կազմակերպութիւն, որն ընդունակ լինի առաջինի դործառնութիւնները կատարել: (81 էջ):

Բայց սա միայն յեղափոխութեան ներքին զժաբութիւնն է. կայ արտաքինն էլ: Ի՞նչպէս, — հարցնում է պ. Բառուէրը. — ներդաշնու երկիրները կարող են ապրել առանց ամերիկական բամբակի, առանց աւստրալիական բուրդի, առանց ամերիկական կոստիւմի: Նրանք արդէն այժմ զժաբութեամբ են ստանում այդ, որովհետև Եւրոպայի քայքայած անտեսութիւնը էկսիւանտներ չի տալիս այդ նիւթերի հետ փոխանակելու համար: Իսկ ի՞նչ կը լինէր ապա բռնի յեղափոխութեան գէպում: Այս պատճառով պէտք է հրաժարել... ընդհանրապէս սոցիալիզմից, — հարցնում ենք մենք: Ո՛հ, ասուած չանի, պատասխանում է Բառուէրը, պէտք է միայն այնպիսի յեղափոխութիւն տանել, որ ցաւ չպատճառի կապիտալիստներին և կալաժառէրներին: Այս առաջարկում է ոչ աւելին և ոչ պակասը, քան միայն այն արդիւնաբերութեան ճիւղերի զանդազ, աստիճանական ազգայնացումը, որոնք լիովին նախապատրաստուած են դրա հա-

մար, բնդ սմին որոշ գէպքերում կապիտալիստը առաջիկայում է կառավարում է զործարանը, Միայով միայն հասարակական հաշուառման տակ, այլ գէպքերում՝ վարչութիւնն անցնում է պետական օրգաններին, որոնց մասին յետոյ խօսք կը լինի: Յամենայն գէպս կապիտալիստն ստանում է վնասների կատարեալ հատուցում: յաւելեալ արժէքի վրայ ունեցած նրա իրաւունքը ապահովւած է: Ինքն ըստինքեան հասկանալի է, որ բոլոր իպոտեկները, բանկային գեպոգիտները և մնացած բոլորը, որոնք մար են տալիս կապիտալիստներին առանց աշխատանքի ապրել, այդ բոլորը մնում են անձեռնմխելի: Միայն այս եղանակով կարելի է խուսափել յեղափոխութեան կործանումից, որ կը լինի անարխիայի միջոցով: Նախքան պ. Բաուէրի «կանոնաւոր» յեղափոխութիւնն աւելի մօտիկից քննելը, մենք ուզում ենք կանգ առնել նրա նախադրեալները վրայ:

Յեղափոխական քաղաքականութեան պայմանը միշտ իրականութեան արթուն գնահատութիւն է. այս պատճառով ժամանակակից կոմունիզմը փորձում է ամենաոպտիմալ կերպով, ամենայն բարեխղճութեամբ ուսումնասիրել ամեն մի երկրի դրութեան առանձնայատկութիւնները: Նա երբէք աչք չի փակում այն գծարութիւնների հանդէպ, որ սպառնում են յեղափոխութեանը: Բայց իրական յարաբերութիւնների զգաստ հաշուառութիւնը մի բան է, իսկ ուրիշ բան է միջազգային կապիտալով զախեցած մանր-բուրժուայի երկշտութիւնը, որ օգտուում է «մարքսիզմով», միայն նրա համար, որ համոզի և իրեն, և ուրիշներին յեղափոխութեան անհնարինութիւնը: Բայց այս երկար զործը վերջացնելուց յետոյ, նա յիշում է, որ ինքը չէ՝ որ յեղափոխութեան կողմնակից է՝ և այդ ժամանակ դիմում է ամենամասսուած խորամանկութեան, ներս է խցկում յեղափոխութեան փոխարէն ինչոր ուրիշ բան, այսինքն սովորական մեշխանական համաձայնութիւնը կապիտալիզմի հետ:

Գ. Բաուէրը լայն բաց է արել մի աչքը և տեսնում է, թէ ինչպէս ուժեղ է բուրժուազիան Արեւմտեան Եւրոպայում: Բայց նա որոշակի կերպով կոչը՝ է երկրորդ աչքից, որով կարող կը լինէր տեսնել պրոլետարիատի ոյժը, և նա զալիս է հետեւեալ հրէշաւոր եղբակացութեանը՝ գոչութիւն ունի կապիտալի կազմակերպութեան անաղին ոյժը և չկայ պրոլետարիատի ոյժը, չը

նայած իւրաքանչիւր ոք, ով որ գիտէ մարքսիզմի այրուքներ, հասկանում է, որ անհնարին է կապիտալի կենտրոնացումը առանց պրոլետարիատի հզօրութեան համապատասխան կենտրոնացման:

Քաղաքացի Բաուէրը տեսնում է և գիտէ, որ ունեւոր գիւղացութիւնը համախմբւած է, պահպանողական է, տեսնում է ժամանակակից կապիտալիստական հողատէրերին, բայց չի տեսնում գիւղական պրոլետարիատին, որն հանդիսանում է պրոլետարիատի աւելի յուսալի զաւնակիցը, քան գիւղացութիւնը: Բայց գիւղացութեան մասին էլ նա արտայայտւում է իրրեւ տիրացու և զոկտրինեւոր, ամբողջովին անհնար է համարում սակաւահող գիւղացիներին ինչպէս խոշոր կալւածատերական տնտեսութեան հող բաժին հանելը: Այս գործում պրոֆեսորը զբոսերից գիտէ, որ տնտեսութիւնը խոշոր կալւածներում աւելի արտադրական է, քան մանր գիւղացութիւնը: Սրանից նա այն եզրակացութիւնն է անում, որ յանուն առաջագիմութեան, արտադրական ուժերի զարգացման և այլն, և այլն, մենք չենք համարձակւի, անէծքի սպառնալիքով, գիւղացիներին հող բաժանել: Այս մարքսիզմը մարքսիզմ չէ, որովհետեւ վերջինս այն չէ, որ մարդ բերանացի անի մի գիտութիւն և այն էլ շատ տափակ գիտութիւն այն մասին, թէ կալւածատիրական տնտեսութիւնը տնտեսապէս աւելի բարձր է գիւղացիականից: Մարքսիզմը, իբրեւ գիտութիւն պրոլետարիատի դասակարգային պայքարի, սովորեցրել է և սովորեցնում է, որ պրոլետարիատի մասնաւոր շահերը պիտի ենթարկւեն նրա ընդհանուր նպատակներին: Եւ հրահրաւոր են հաղարաւոր դրութիւններ, որոնց ժամանակ պրոլետարիատը միանգամայն գիտակցաբար յանուն իր յաղթանակի, ընդհանրապէս մարդկութեան արտադրական ուժերի բարձրացման այս միակ պայմանի համար, քաղաքական համաձայնութեան կերբայ, որն որոշ շրջանում, որոշ ժամանակամիջոցում կարող է նշանակել տնտեսութեան աւելի բարձր ձևի փոխարինումը աւելի պակաս բարձրով:

Աւելի վատ վիճակում են Բաուէրի պատկերացումները ինտելիգենցիայի գէպի միջազգային յեղափոխութիւնն ունենալիք յարաբերութիւնների մասին: Նրա այն պնդումը, թէ Արեւմուտքում ինտելիգենցիան անպայման աւելի թշնամաբար էր վերաբեր-

ւի ղէպի պրօլետարական յեղափոխութիւնը, քան այդ տեղի ունեցան Ռուսաստանում, ոչ մի հիմք չունի: Նա հաշիւ չի առնում այն փաստը, որ մինչդեռ Ռուսաստանում վերջին տասն տարիների կապիտալիստական զարգացումը բաց արեց ինտելիգենցիայի առաջ, որը մինչ այդ դատապարտւած էր անաշխատեան և զուրկ էր հացից, իբրև անտեսութեան կապիտալիստական վարչութեան մէջ մշտնակցողների համայն արտօնեալ զրութեան փայլուն հետանկարները, մինչդեռ մարտեան յեղափոխութիւնը բաց արեց նրա առաջ տեսութեան աղարատը ձեռք զցնելու հետանկարը, այդ ժամանակ կապիտալիստական եւրոպայում ինտելիգենցիան ապրում է խառնաշփոթութեան և պրօլետարիզացիայի պրոցեսը: Նրա անտեսական զրութիւնը փառաշուք է անդուստլ թափով: Նա տեսնում է, որ կապիտալիստական դասակարգը չը կարողանալով խուսափել պատերազմից, անկարող է խաղաղութիւն կնքել, որ հնար կտար անտեսութիւնը վերափոխելու: Սկզբում նրան թւում էր, որ այս խառնաշփոթութեան պրոցեսը հետեանք է բանուր դասակարգի «անվերջ» պահանջների: Բայց ինչքան աւելի է Արեւմտեան եւրոպայում կապիտալիստական խառնաշփոթութեան և աճող թանկութեան ազդեցութեան տակ արւում դասակարգային պայքարը, այնքան աւելի լաւ է բուրժուական ինտելիգենցիան սկսում հասկանալ, որ յեղափոխութիւնը իմպերիալիստական կրախի անխուսափելի հետեանքն է, որ յեղափոխութիւնը մարդկութեան միակ ելքն է աճող աղքատութիւնից, աճող անկազմակերպութիւնից, աղաքայ սոցիալական քաոսից: Եւ մենք ամենուրեք հերձուած ենք նկատում ինտելիգենցիայի մէջ — ֆէոդալ-կապիտալիստական հակա-յեղափոխութեան բանակը մի կողմը և պրօլետարական յեղափոխութեան բանակը միւս կողմը: Ամենուրեք ինտելիգենցիան դադարաւորական ճգնաժամ է ապրում, նա ճամբարաժամի վրայ է կանգնած, նրա մէջ թափառում են յեղափոխական դադարաւորները: Հասկանալի է, որ նրա յեղափոխական մասն էլ դեռեւ մեր յուսալի դաշնակիցը չէ: Բայց անկասկած է, որ նրա մասին ասել, թէ նա ամբողջովին հակայեղափոխական մասաւ է, ծիծաղելի կը լինէր: Կասկածից դուրս է, որ եթէ, օրինակ, պրօլետարիատը Դերմանիայում այժմ իշխանութիւնը գրաւէր, ինտելիգենցիայի մի նշանակալի մասը նրա կողմը կանցնէր:

Բայց եթէ Արեւմուտքում պրոլետարական յեղափոխութեանը սպասող դժարութիւններէ մասին խորհրդածելիս Բաուէրը միայն ի նկատի չէ լռեցում գիւղում և ինտելիգենցիայի մէջ գոյութիւն ունեցող տնտեսականները, պրոլետարական յեղափոխութեան զէպքում Արեւմտեան Աւստրիայի բանւորներին սպառնացող սոված կատառտրոֆայի մասին նրա զրամ հարցը ուղղակի ծիծաղաշարժ է։ Դա լիովին յիշեցնում է Գոդոլի հերոս ինտատակովի պատճառարանութիւնը, որ բնկել էր հիւրանոց լի տխրածակով, բայց առանց փողի և հիւրանոցատիրոջից ճաշ էր պահանջում, փաստարանելով որ այլ կերպ չէ որ ինքը սովամահ կը լինի։ Կանգնած լինելով մի ահագին դժարութեան առաջ, ինչպիսին, անկասկած, Արեւմտեան Աւստրիայի յեղափոխութեան համար հացի խնդիրն է։ Բաուէրը չէ փնտրում այս հարցի լուծումը յեղափոխութեան զարգացող ուժերի մէջ, այլ գիտում է կապիտալիստներին այս յայտարարութեամբ. — «Պարոն կապիտալիստներ, եթէ մենք բաց ճակատամարտի դուրս դանք ձեր գէմ, բոլորովին սովալլուկ կը լինենք. թոյլ տւէք, որ ձեզ խաղաղ ու առանձնաբար մարթենք և մեր ապնութեան հանդէպ երախտագէտ դուրս գալու համար կերակրեցէք յեղափոխութիւնը»։ Նա իր կարծիքով յեղափոխութեան սպառնացող սոված կատառտրոֆային չէ հակադրում երկրորդ զճաղարկող պայմանական ելքը, այլ հակադրում է նրան իր վիշաք յեղափոխութեան համար, որի ժամանակ ստիպւած կը լինի քաղցած մնալ։ Մենք հետազայում կը տեսնենք, որ այն ինչի մէջ որ Բաուէրը տեսնում է մի փրկարար միջոց յեղափոխութեան ժամանակ սովից ազատելու համար, այլ բան չէ՝ եթէ ոչ սղորմելի ինտելիգենտի երկշոտ ցրնորք, որը վախից, չնայելով իր բխամտութեանը և կարճամտութեանը, ցնորոգ և ուստպիստ է դառնում։

Այժմ մենք ուզում ենք կանգ առնել նրա միայն յեղափոխութեան պարենաւորման պրոբլեմների մասին արած զատուղութիւնների վրայ։ Բաուէրը ի նկատի չէ ունենում, որ Արեւմտեան Աւստրիայի պրոլետարիատը, վերցնելով իշխանութիւնն իր ձեռքը, տիրանալով հսկայական զինւորական և տնտեսական միջոցների, Ռորհրդային Ռուսաստանի հետ զաշնակցած, իր տրամադրութեան տակ կ'ունենայ Բալկանների, Հունգարիայի, Ռումինիայի, Սկրայնայի, Կուր-նի և Սիրիի հացի շրջանները։ Բաուէրի

համար, Արևմտեան Եւրոպայի յեղափոխութեան հետանկարները դիտելիս, գոյութիւն չունի երկրագործական Արեւելքը և Հարաւ-Արեւելքը, ինչպէս որ ռուսական յեղափոխութեան վերլուծման ժամանակ գոյութիւն չունի եւրոպական պրոլետարիատի հնարաւոր օգնութիւնը: Երբ նա խօսում է այն մասին, թէ Եւրոպայում պրոլետարական յեղափոխութիւնը դեռ կարիք կունենայ գոյութիւն ունեցող կապիտալիստական երկրներէ հետ առևտրական յարաբերութիւններ պահպանել, նա միայն հաշիւ է առնում այն հանգամանքը, որ յեղափոխական Եւրոպայի պրոլետարները կարիք կը զգան ամերիկական բամբակին, աւստրալիական բուրդին և այլն. բայց չէ նկատում մեղալի հակառակ կողմն էլ՝ չէ որ Ամերիկայի և Աւստրալիայի կապիտալիստներն էլ կարիք ունին գնորդի, եթէ նրանք չեն ուզում կանգնեցնել իրենց արգիւնաբերութիւնն ու վաճառականութիւնը և անգործութեան շնորհիւ իրենց երկրում արագացնել յեղափոխութիւնը:

Այն, Արևմտեան Եւրոպայի պրոլետարիատը ստիպւած կը լինի շատ տանջուել, շատ բան կրել, մինչև որ աղքատի կործանւող կապիտալի ճիրաններէց. բայց ով որ ասում է նրան միայն դժարութիւնները և լուծ է նրա ուժի մասին, չէ մատնանշում զրութեան անելանելիութիւնը յեղափոխութիւնից հրաժարւելու դէպքում, նա գործում է գիտակցաբար կամ անգիտակցաբար իբրև հակայեղափոխութեան ազնետ, ինչպիսին որ իրօք հանդիսանում է պ. Բաուէրը: Բայց ներեցէք,—կը պատասխանէ նա մեզ,—չէ որ ես ունեմ կապիտալի էքսպրոպրացիայի խաղաղ, անախիւս գեղատոմս, խաղաղ յեղափոխութեան գեղատոմս:

Դիտենք մօտիկից այդ գեղատոմսը: Մինչև համաշխարհային պատերազմը յեղափոխական գաղափարներէ մեծ լարօրատորիան համարւում էր Գերմանիան, մի երկիր՝ որ ծնել է Մարքսին և Էնգելսին, Այն յեղափոխական գաղափարները, որոնք յաղթանակ տարան Եւրոպայում, made in Germany: Այժմ Գերմանիան սարուկ ընկած է: Քաղաքացի Բաուէրը, որ մինչ այդ աշխատում էր մարքսիզմի մէջ, այժմ սկսել է Անգլիայում արտադրւած ապրանքները տարածել. ուրիշ ինչպէս կարելի է, չէ որ Անգլիայի ապրանքները ամենալաւերն են Եւրոպայում:

Պարոն Բաուէրը ծախում է այժմ այսպէս կոչւած գիլգիական սոցիալիզմի գաղափարական երկերը: Նա ստիպւած է խոստո-

վանել (էջ 92), որ ապրանքը ծախում է մանր-բուրժուական մանր գործարանից: Բայց, ինչպէս ամեն մի ծախող, Բաուէրը բեկլւած է անում նրա մասին և յայտարարում, որ «գիլղիական սոցիալիզմը վերջին տասնամեակներում այնպիսի դարգացման հասաւ, որ հետզհետէ դարձաւ անգլիական բանւորական շարժման ամենախոշոր գաղափարական ոյժը (էջ 52): Ամեն մի շարժաւոր, որ ծախում է իր միակ փրկարար միջոցը, ստիպւած է նրա մասին ամեն տեսակի մտայածին բաներ պատմել, — ուրիշ ճար չկայ, որովհետեւ էլ ինչպէս կարող եւ ծախել սովորական ջուրը կեանքի էլէկտրիկ փոխարէն ու միաժամանակ սուտ չափելու Գիլղիական սոցիալիզմը ոչ մի ազդեցութիւն չունի անգլիական բանւորական մասնաճիւղերի վրայ: Դա միայն մի հոսանք է, որ համակրանք է դնում անգլիական սոցիալ-լիբերալական ինտելիգենցիայի շրջանում և անգլիական արեւ-իւնիոնների ղեկավարների մի աննշան մասի մօտ, ինչքան որ այդ յարգոյարժան մարդիկ բացի վիսկիից (օգի) պէտք են ունենում սրտապնդեալ համար նաեւ այլ միջոցներէ զիմել: Գիլղիական սոցիալիստներ պ. պ. Պենտի կօլ և միւս բոլորը, Սիդնէյ Ուէրրի, բանւորական հարցի՝ հին Ֆարիանական մասնագէտի այս աշակերտները, որոնք յոյսները կտրեցին բանւորներին խաբել լիբերալ բեֆորմների խոստումներով, այժմ փորձում են քսել բանւորների ձգտումին կապիտալիստական էքսպլուատացիայից ազատելու գործի ճանապարհին: Այս մանր բուրժուաները հնարել են հետեւալ կոմբինացիան: Արտադրութեան միջոցները պատկանում են պետութեանը, նա վճարում է այժմեան տէրերին նրանց ընտան. արդիւնաբերութեան ամեն մի հիւղ ազգային սեփականութիւն է և կառավարում է տեւալ հիւղի արհեստական միութեան ներկայացուցիչների կողմից: Արտադրական պլանը և միջոցների գները որոշում են արհեստակցական միութեան կողմից պետութեան, քաղաքային ինքնավարութեան օրգանների և սպառողների ներկայացուցիչների հետ միասին: Այս բոլորը միասին վերցրած ստացւում է բանւորների «սեփականութեան ինքնավարութիւնը» և ազանդվում է նրանց ազատութիւնը:

Մինչդեռ, — ասում է պ. Բաուէրը, — Ռուսաստանում արդիւնաբերութիւնը կառավարում է յեղափոխական բիրոկրատիան, գիլղիական սոցիալիզմը տալիս է բանւորական կազմակերպու-

թիւններէ ձեռքը արդիւնաբերութեան կասափարութիւնը: Վերջինից՝ բանւոր գասակարգի զազափարախօսներէ սոցիալիզմ է, որոնց համար պրոլետարիատի մասնայական շարժումը սոցիալական իրաւունքներէն համար միայն մի գործիմ է: Նրանք շխտափնջին յեղափոխական պայքարի մէջ ոչ մի անձնական գոհից, նրանք ուզում են իրենց իրաւունքները իրաւունքներէն կենսաբան, ինչ գնով էլ որ լինի, նոյնիսկ այն դէպքերում, եթէ մասսան զրա համար ստիպւած լինի անցնելու սովի, ցրտի, պետական սարկութեան և պատերազմի անապատի միջոցով, միայն թէ հասնի ուխտեալ երկրին: Իսկ արդիւնաբերական դեմոկրատիայի իրաւունքներէն հետեւի է տեղի հենց իրեն՝ պայքարող պրոլետարիատի մէջ: Երբ բանւոր գասակարգը իր պրոֆեսիոնալ պայքարի մէջ ամեն որ աւելի է ուժեղացնում իր ազդեցութիւնը արդիւնաբերութեան վրայ, նրա մէջ աճում է արդիւնաբերութեան վրայ հակոգութիւնը շարունակարար ուժեղացնելու մարի անհրաժեշտութիւնը, մինչև տոնջիկայի այն մոմենտը, երբ պրոլետարիատը ինքը կը վերցնի իր ձեռքը այդ արդիւնաբերութիւնը: Եւ այնպէս, ինչպէս որ բանւոր գասակարգը ուժեղացնում է իր արհեստական պայքարը կուսակցութեան քաղաքական գործողութիւններէ միջոցով, մի պայքար, որ ստեղծում էին արհեստակցական միութիւնները, պահպանելով իրենց ինքնավարութիւնը արդիւնաբերական խնդիրներում, — այնպէս էլ նրանք պատկերացնում են ազազային սոցիալական պետութիւնը՝ իրեն ազգային զիլզիաների ինքնավար ֆեդերացիա: Սա զազափարախօսների սոցիալիզմն է, որոնց համար պրոլետարիատը միայն զազափարների մի գործիք է, ծա սոցիալիզմն է հենց իրեն՝ բանւորական շարժման, որն ստեղծում է իր համար ամենօրեայ պայքարի փորձի մէջ, այդ պայքարի դարձնոցում սեփական զազափարը» (էջ 96):

Այսպիսով ներկայացնելով զիլզիական սոցիալիստների մանր-բուրժուական իրաւունք, որ ծագել է կէս գիւծին զրոյներէ ինտելիգենտական շրջանում, իրեն բանւոր գասակարգի ծնունդ, իրր նրա պայքարի արտայայտութիւն, Բաուէրը ժամում է ազգային փիլիսոփայութեան շրջանը. անզիլական բանւորը, ասում է նա, որ մեծացել է հին կուլտուրական երկրում, մի անձն է, որ ինչ է ազատութեան ձգտումներով: Նա առաջ է մղել ազատ

սոցիալիզմի իդէալն: Ռուսական պրոլետարիատը, որ երեկոյ
 Հորա քիչացաւ զուսմին է, մի խումբ զապախարախաների ձեռ-
 բում գործիք է, որոնք շատ սղփա են, պատրաստ են զահարե-
 րութեան յանուն բանւորական գործի, բայց այնուամենայնիւ
 յեղափոխական բուրսկրտաններ են: Բառէրի այս փոխոտփայու-
 թիւնն երկու ծակ ունի, նախ, ինչպէս ասել ենք, զիլլիական
 սոցիալիզմը անգլիական բանւորական շարժման զարգացման
 արտացոլութիւնը չէ, այլ մի իդէալ, որ մտցւած է այդ մասսայի
 վերին խաւերի կողմից, ինտելիգենցիայի մի խմբակի կողմից,
 որ բացարձակ կերպով կարեւոր է բանւորական մասսայից, եր-
 կրորդ՝ անգլիական բանւորին շարտիզմի շրջանից յետոյ ներկա-
 յացնել իրեն մի անձնատուութիւն, որ Էդուարդ է ազատութեան,
 նշանակում է բուրժուազիայի լակէյին, որ գնում է իր տիրոջ
 հին շորերը և ցիլինդրները, ազատ մարդու մարմնացում համա-
 բել: Մի ժամանակ Կաուցկին իր ուսումնական և ամերիկական բան-
 ւորի մասին գրած յօդածներում, հակադրում էր յեղափոխու-
 թեան ռազմիկ սուս բանւորին, անգլիական ստրկին, արխաուկ-
 բառ բանւորին: Ժամանակներն այլ են, երգերն էլ այլ... Հա-
 կայեղափոխութեան ճանինը զարւած Կաուցկու հոտանքը ամուր
 զանում է ողորմելի կիտալիքերու անգլիական ինտելիգենտների
 մեռած, ինչպէս այդ կը տեսնենք, ուսուցիան և նրա հոգևոր
 կղկզանքը գէտ-գէն քսելով յայտարարում է՝ սա պրոլետարիատի
 ամենաազատ մասի ստեղծագործութիւնն է, սա անգլիական պր-
 օլետարիատի, ազատութեան այս յայտնի չեմպիոնի ստեղծա-
 գործութիւնն է, Ի պատիւ անգլիական յեղափոխական պրոլե-
 տարիատի պիտի ասել, որ նա ոչ մի կապ չունի այն իդէայի
 հետ, որը իր հին տեղում անձեռնմխելի է թողնում կապիտա-
 յիստական պետութիւնը, որը ամբողջովին թողնում է բուր-
 ժուա զատակարգին բանւորից յաւելեալ արժէքը մղելու իրա-
 ւունքը, որը բուրժուական կառավարութեան ներկայացուցիչնե-
 րին իրաւունք է վերապահում չոշնչացած բուրժուազիայի միւս
 ներկայացուցիչների հետ որոշելու անտեսական պլանը և գնոր
 նշանակելու, և իրօք թողնում է ամբողջ իշխանութիւնը բուրժուա-
 զիային: Անգլիայի յեղափոխական պրոլետարիատը երեսը շուտ
 կը քար այս իդէայից, և թէ ծանօթ լինէր նրան, որովհետեւ սա
 թարմ-տաքացրած միայն հին, գտնիկ ֆարիանեան իդէան է

կապիտալիզմի պաշտպանման մասին, որ պիտի ի կատար ածւի այսպէս կոչւած զործարանային սահմանադրութեան օգնութեամբ, այսինքն բանւորներին իրաւունք պիտի տրւի խօսել արդիւնաբերութիւնը կառավարելու մասին այն ժամանակ, երբ իրօք բուրժուազիան է կառավարում այն:

Մենք թողնում ենք պ. Բաուէրին հիացմունքով նայելու անգլիական պրոլետարիատի թիկունքի վրայ, իբրեւ գիլդիական սոցիալիզմի ծագող արեւի: Զէտր Լամանշեցի դժբախտ ասպետը ընկել էր իր գրկում ախտի գարշահոտ հերոսունուն այն համոզմամբ, որ դա զեղեցիկ թաղաւորական ազնիւ Դուլցիէան է: Բայց մենք հարցնում ենք մեր գիլդիական սոցիալիզմի Դոն-Քիշոտին՝ որեւից է երևում թէկուզ ամենափոքրիկ նշանը, որ անգլիական բուրժուազիան նոյնիսկ այն փոքրիկ զիջումը կանի, ինչ որ առաջարկում է գիլդիական սոցիալիզմը: Եթէ մենք կոմունիստներս փորձում ենք համոզել բանւորներին, որ աշխարհը գնալու է այն ճանապարհով, որ մենք ենք գուշակում, լաւ թէ վատ մենք մատնանշում ենք զարգացման տենդենցիայի վրայ, մատնանշում են փաստերը: Մենք մատնանշում ենք կապիտալիստական աշխարհի տնտեսական քայքայման վրայ: Մենք մատնանշում ենք որ բուրժուազիան անընդունակ է յաղթահարել այն: Մենք մատնանշում ենք դատակարգային պայքարի սրելու վրայ, նրա ուժեղանալու վրայ, որ հասել է հակայական պատերազմի սահմաններին: մատնանշում ենք բուրժուազիայի լիակատար անընդունակութեան վրայ սպառնացող սոցիալական յեղափոխութեան հանդէպ պրոլետարիայի գէժ միջադէպին Ֆրոնտ կազմակերպելու: Կոմունիստական հորիզոնները և կոմունիստական բազմանքները մեր անհամբերութեան արտայայտութիւնը չեն, ինչպէս որ մեր ժամանակակից ցանկութիւնների հետեանքն էլ չեն: Իսկ Բաուէրը գնում է այլ ճանապարհով. մեր նմուշի սոցիալական յեղափոխութիւնը նրա համար այլ բան չէ, քան մի սարսափ և այդ պատճառով, ասում է նա, — կեցցէ գիլդիական սոցիալիզմը: Ինչ ճշշում էլ որ զործ գնէք Բաուէրի վրայ, այնուամենայնիւ չէք կարող նրանից ստանալ որեւէ տւեալ, որ մատնանշէր, թէ զոնէ միայն մեծակ Անգլիայում զարգացումը ընթանում է նրա, թոյլ աւելք ասել, զեմոկրատական սոցիալիզմի ուղղութեամբ:

Դառնանք վերջին ժամանակների Ռուսաստանից դուրս կա-
տարած հանգամանքներին: Գերմանական Աստրիայում պարս-
նայք սոցիալ-դեմոկրատները իշխանությունից հեռացեցին: Կա-
պիտալիստական սկսկիցիան հրապարակ եկաւ պարզ կերպով երե-
սակալը վերցրած և մեկնեց ձեռքը Հունգարիայի դահիճ Մորախին:
Գերմանիայում սոցիալ-դեմոկրատիան բնարությունների ժամա-
նակ խնկական պարտություն կրեց, որի պատճառով նա ստիպւած
էր դուրս գալ կառավարությունից: Գերմանիան ստացաւ
հակադեմոկրատական կապիտալիստական կառավարություն, որի
դէմ պայքարելու համար բանւորների յեղափոխական մասսաները
միանում են, կազմելու համար մէկ մեծ կոմիտեիստական կուսակ-
ցութիւն: Բանւորական շարժման կենտրոնը, — անկախ սոցիալ-դե-
մոկրատիան իր պրոլետարական մեծամասնութեամբ անցաւ
կոմիտեիկոմի կողմը: Բաուէրի հետքով գնացող փոքրամասնու-
թեան համար միտում է մի ընտրութիւն՝ կորուստ մեծակութեան
մէջ կամ մահ: Եւլյոհեմանի գրկում: Իտալիայում պրոլետարիատի
և բուրժուազիայի միջև տեղի ունեցող պայքարը մատենում է
հանգոյցին: Իտալիան կանգնած է իր Հոկտեմբերեան յեղափո-
խութեան տուօյ: Բաուէրի հոգևոր եղբայրները, այս բոլոր Տու-
րատներէն, Տրեվենները, Դարապոնները կարող են երկարացնել
այդ պրոցեսը, բայց վերջնականապէս կանգնեցնել չեն կարող:
Փրանսիայում վայրագում է կապիտալիստական դիկտատուրան,
որ ցանում է բանւորների զլիններում և սրտերում պրոլետարա-
կան դիկտատուրայի գաղափարները: Իսկ ի՞նչ վիճակում են գոր-
ծերը Անգլիայում, որտեղ առաջին անգամ հորիզոնի վրայ երե-
ւաց գիւղիական սոցիալիզմը: 1919 թ. ամառը Բաուէրը հրա-
տարակեց մի անոնիմ բրոշուր համաշխարհային յեղափոխու-
թեան մասին: (Այն ժամանակ նա գերմանա-աւստրիական ներ-
քին գործերի միութիւն էր և սարսափելով Անտանտից չհամար-
ձակեց սեփական անդունդ գրել): Նրա մէջ նա փորձում էր
ապացուցանել, որ անգլիական բուրժուազիան կոմպրոմիսների
իր հին և խելացի քաղաքականութեան հետեանքով, տրամադիր
է բանւոր դասակարգին մի շարք գիշտութեան անել: Նա ապացու-
ցանում էր, որ լեոնային արգիւնաբերութիւնը կազդայնացի-
ւորիչ շատ բան էլ կը պատահի: Որը աստիճանաբար, բայց հաս-
տատուն կերպով կը տանի դէպի անգլիական կապիտալի վերա-

ցումբու Այն ժամանակներից անյայտութեան դիրկն է գործել մէկ և կէս տարի, բայց Բաուէրի գուշակածներից ոչ մի բան չի իրականացել: Անգլիական բուրժուազիան պրոլետարիատին նոյնիսկ մի չնշին գիջում չարեց և ընդունեց, որ նա որեւէ դեր խաղայ արգիւնաբերութեան զեկավարման մէջ: Անգլիայում սոցիալական կոնֆլիկտները աճում են, բուրժուազիան և պրոլետարիատը միշտ աւելի վճռական կերպով են գուրս գալիս իրար գէմ:

Կարճ, բանաձևում եմ — միջազգային գրութիւնը էլ աւելի սուր բնոյթ է ընդունում, ոչ մի կոմպրոմիս հնարատու չէ, հարցը կարելի է լուծել միայն բռնի ճանապարհով: Բաուէրի աչքին սարսափներ են երևում, նա իր նկարագրում զեմոկրատիայի բուլտը պերիպեաիաներից յետոյ, յայտարարում է, որ նոյիսկ այն ժամանակ, երբ զեմոկրատիայի միջոցներով պրոլետարիատը իշխանութիւնը իր ձեռքը վերցնի, բուրժուազիան կը կարողանայ վերագարծնել իրեն իր տիրապետութիւնը: Նա կապտատմբի զեմոկրատական պետութեան գէմ, նա կը թելադրի նրան իր օրէնքները և ամեն կերպ սարսափի կենթարկի սեպհական վարչութիւնը, չենց որ զեմոկրատիան կը փոխի պրոլետարական զեմոկրատիայի: Այն ժամանակ զեմոկրատական պարլամենտն էլ կը իւրացնի գրկտատուրական իշխանութիւն, որի ժամանակ նա հարկադրւած կը լինի ճշելու սարսափը և բուրժուազիայի կողմից հնարատու եղող ակտիւ բմբոստութիւնները ոչ միայն գրկտատուրայի միջոցով, այլև տերրորով, չենց որ նման պարլամենտը զաւնայ բանուր զստակարգի տիրապետութեան գործիքը (էջ 113): Բարեհաճէցէք տեսնել ինչ գուրս եկաւ «հասարակական նիւթի անընդհատ փոխանակութիւնից»... Ի՞նչ կը լինի քաղցի հետեանքները, որ Բաուէրը համարում է քաղաքացիական պատերազմի անխուսափելի արգիւնքը: Այժմ այս կատաւարոփաները ցնցումների ձև են ընդունում, բայց այս ցնցումները, Բաուէրի մարդարէութեան համաձայն, այնքան ծանր չեն լինի, որովհետեւ լցրած թնգանօթները զեմոկրատիայի կողմն են. այն զէպրում, երբ բանուր զասակարգը իշխանութեան հասնի զեմոկրատական ուղիով, այսինքն երբ նա կոնանայ իր յետեից ազգաքնակութեան մեծամասնութիւնը, պրոլետարիատի իշխանութիւնը բռնութիւն գործ կը գնի ոչ թէ իշխանութեան սոցիալա-

կան գործածներէ վրայ, այլ փոքրամասնութեան վրայ, որ նրա
 գէտ է գնում: Ինչ է ցոյց տալիս այս «սոցիալիստական» շահա-
 կրատութիւնը: Բառէրը սակայն խօսում է զարգացման ձգտումի
 մասին, որ նկատուում է արդիւնաբերական երկրներում, որտեղ
 պրոլետարիատը և նրան յարող սոցիալական խաւերը ազգաբնա-
 կութեան մեծամասնութիւնն են կազմում: Գործը արդեօք յաղ-
 քութեան կը հասնի՝ բնարտութիւնների մէջ, քայլ աչք չի ու-
 շնչացնի բուրժուազիայի թշնամական վերաբերմունքը: Պրո-
 լետարիատի գեմակրատական դիկտատուրան հետամուտ կը լինի
 միևնոյն նպատակին՝ նայնիսկ այն մասնանակ, երբ նա գեմակրա-
 տական ճանապարհի վրայ կանգնի, այսինքն, Բառէրի ժաղա-
 նով արտայայտուելով, սոցիալական պայքարի փոխադրութեան
 արմատական անկումը: Պրոլետարիատը կը փորձի խլիւղ բուր-
 ժուազիայից արտագրութեան գործերը: Ինչպէս համար այս գէտ-
 քերում բուրժուազիայի ընդդիմութիւնը աւելի թոյլ կը լինի և
 քաղաքացիական պատերազմը աւելի քիչ ծանր: Ինչպէս օտարեր-
 կրեայ կապիտալը չի շտապի օգնութեան հասնել իր կեղեքած
 եզրայրներին: Միթէ միայն այն պատճառով, որ էքսպրոպրիա-
 ցիան հաստատուած կը լինի պարլամենտի կողմից: Բառէրը իրա-
 նից պարլամենտական կրեախնդմը պցում է ամուսի, երկաթի և
 բամբակի թագաւորների վրայ, որ խկուպէս արժանի չեն գեմա-
 կրատական էշերի այն դերին, որի մէջ նրանց նկարագրում է
 նա տանջւած աշխարհի առաջ: Բայց Բառէրի աչքին երևում է
 զեռ տեղի մեծ գործարարութիւն, նա նախատեսում է զեռ մի
 քայքայում էլ: Նա գրում է՝ ի հարկէ պատմութիւնը այսպիսի
 եղանակով թոյլ չի տայ պրոլետարիատին գեմոկրատիայի միջոց-
 ներով քաղաքական իշխանութեան գրաւումից յետոյ իրականա-
 ցնել իր դիկտատուրան, այսինքն գեմոկրատական պարլամենտի
 և տեղային ինքնավարութեան գեմոկրատական օրգանների ձեռ-
 կան դիկտատուրան: Հեշտութեամբ կարող է պատահել, որ դա-
 տակարգային պայքարի զարգացումը կը հարկադրի պրոլետա-
 րիատին դիմելու դիկտատուրայի այնպիսի եղանակի, որի ժամա-
 նակ նա կարող չի լինի տիրապետելու, եթէ ուզենայ օգտուել
 գեմոկրատիայի միջոցներով: Իշխանութեան համար մղած վճառ-
 կան պատերազմի շրջանում՝ բուրժուազիայի և պրոլետարիատի
 միջև դատակարգային թշնամանքը յամենայն գէտ կը սրի: Նրա

սուր կերպարանք ընդունելը կարող է պատճառ դառնալ զեմուկրատիայի ոչնչացման: Կարող է վրայ հասնել մի այնպիսի դրութիւն, երբ բուրժուազիան բաւականին՝ ոչ չի ունենայ, որպէսզի յազթահարի պրոլետարիատին, որն իր հերթին անկարող կը լինի յազթիկու բուրժուազիային դեմոկրատիայի միջոցներով և երբ իշխանութեան բաժանումը այդ երկու դասակարգի միջև կ'աւելի կընդգծի դասակարգային թշնամանքի սրութիւնը, — անկախ այն հանգամանքից՝ թէ ի՞նչ ձև կընդունի իշխանութեան այդ բաժանումը՝ բուրժուազիայի և արդիւնաբերական կուսակցութիւնների կօալիցիայի ձևը, ինչպէս գերմանական Աւստրիայում, թէ պրոլետարիատի կողմից կամովին կերպով բուրժուազիական տիրապետութեան ճանաչման ձևը, ինչպէս Իտալիայում: Եթէ դեմոկրատական ապարատը անկարող չէ գործառնութեան համար, այն ժամանակ բուրժուազիան կամ պրոլետարիատը պէտք է ոյժով վերականգնեն իրանց դասակարգային տիրապետութիւնը: Այսպիսի դէպքում պրոլետարիատի զիկտատուրան կը հանդիսանայ միակարգելը բուրժուազիայի կողմից հակայիգոփոխական զիկտատուրայի դէմ: Բառէքը երևակայում է, թէ ինքը թո՛ղը հնարաւորութիւնները կանխատեսելու մեծ գուշակ է, երբ անմեղ կերպարանքով ենթադրում է, թէ որ դէպքում բուրժուազիան չի համաձայնացած եւ այն մոմէնտին, երբ պրոլետարիատը նրան կըկկանի խաղաղ դեմոկրատական սոռուսով: Իսկ իրօք նա իրեն ամբողջովին մերկացնում է, որովհետեւ պրոլետարիական կուսակցութիւնը աւելոր չէ, որ հետեւում է թղթախաղին և խաղի բոլոր գէպերում խորհուրդներ է տալիս խաղացողներին: Նա պիտի օրատրաստ լինի վատագոյն դէպքում ամենաժանր և վտանգաւոր պայքարի դուրս գալ: Եթէ պատմութիւնը նրա արամադրութեան տակ կը գնի պայքարի բարեյաջող պայմաններ, աւելի լաւ. նա այն ժամանակ հարկադրւած չի լինի գէնք գործածել, սակայն այդ գէնքը նա պիտի ունենայ: Մի՞նք կոմմունիստներս երբէք չենք ենթադրել, որ ամեն երկրի պրոլետարիատը կարող է իշխանութեան հասնել միայն սուս քաղաքացիական պատերազմի միջոցով: Մենք, օրինակ, տեսանք, որ Ռուսաստանում պրոլետարիատը իշխանութեան հասաւ առանց ծանր քաղաքացիական պատերազմի, — դեռ չը խօսենք Հունգարիայի մասին, որտեղ պրոլետարիատի զիկտատուրան հաստատուեց այսպէս ասած լեզալ

կերպով: Մենք հնարաւոր ենք համարել, որ առանձին կիսակրակրագործական երկրներում, որտեղ գիւղացիները զժողո՛ւն կապիտալի իշխանութիւնից, բանւոր դասակարգը կարող է իշխանութեան հասնել ընտրութիւնների մէջ հաղթանակելու ճանապարհով: Հարցի էութիւնը հետեւեան է՝—Բնշ ձեռով կարող է բանւոր դասակարգը իշխանութիւնը իր ձեռքում պահել. այս հարցին մենք պատասխանում ենք՝ միայն բռնութիւն գործ զնելով բուրժուազիայի վրայ: Իսկ ի՞նչ է պատասխանում այս հարցին Բաուէրը. նա գտնում է, որ պրոլետարիատի կողմից իշխանութիւնը նւաճելու ամենահաւանական և ամենացանկալի ձեւը ղեմակրատական ճանապարհն է, սակայն հնարաւոր է համարում որ կարող է բռնի կերպով էլ իշխանութիւնը նւաճել: Իսկ Բնշ ձեռով պրոլետարիատը կը պահի իշխանութիւնը: Բաուէրը պատասխանում է՝ թէ մէկ և թէ միւս դէպքում պրոլետարիատը կարող կը լինի իշխանութիւնը պահել միայն ղիկաւատուրայի միջոցով: Նա ասաց հետեւալ մեզմ խօսքը.—Բաուէրը և նրա մտերիմ, ստոր բարեկամներ, որ պրոլետարիատի դաւաճաններն էք, լաւ մտածեցէ՛ք՝—գիտուն մարքսիստը խորապէս համոզւած է, որ պրոլետարիատը կարող է յաղթել միայն քաղաքացիական պատերազմի միջոցով և այս գիտակցութեամբ նա ձեռք տում է իր և միջազգային կուսակցութեան միջոցով, համոզել բանւոր դասակարգին, որ ղիկաւատուրայի պրոպագանդը, բուրժուազիայի բռնութիւնը պրոլետարիատի բռնութեամբ ջախջախելու պատրաստակամութիւնը, կարճ ասած, ամբողջ կոմմունիստական քաղաքականութիւնը միասուն է պրոլետարիատին: Բաուէրը զինաթափ է անում պրոլետարիատին զինւած թշնամու առջ մեծ կոխերի նախօրեակին: Իւրաքանչիւր զինեալ, եթէ այսպէս վարէր, կը զնդակահարէր, իսկ Բաուէրը շատ կը վիրաւորէր, եթէ—մենք նրան դաւաճան անւանէինք: Մենք չենք կասկածում, որ նա իրեն համարում է անարգարացի կերպով անարգւած մի անմեղ: Մենք արդէն սկզբում յիշեցինք, որ Բաուէրի գրքոյկը, չնայած ղեմակրատական մամուլի խառնաչփութեանը, աւելի առաջ է գնում քան ինքը Կաուցկին: Մենք մեղմացնում ենք մեր դատաւճիռը: Բաուէրը հասցրեց Կաուցկու ուսմունքը լիակատար զաղափարական խառնաչփութեան, որովհետեւ իր գրքոյկի 100 երեսում նա Կաուցկու անալիզը վե-

բանարարական յետոյ, վերջիվերջոյ բնկնում է հակաառիւթիւնների փախուստ մէջ, որից փորձում է դուրս գալ մի թախչում, որ նրան հարկադրում է բնգունել ոչ միայն պրոլետարիատի գիկատառութեան, այլ նախնակ տերրորր: Սրանով նա ապացուցանեց, որ այն հիմնական անապկար, որ ինքը և իր ուսուցիչը փորձում էին հակադրել կոմունիզմին, քննադատութեան չի գիմանում: Կուսակուսամունքի գիտուն հետեորդները թաղեցին իրենց ուսուցչին, գրեկով նրան և իրենց սեփական եզրակացութիւնները ազնիւ քաղաքական գոյնից: Բառէրը վերցրեց Կուսակուսարբանական գիմակը, որ նախնակ ամենակոյր հետեորդները լուրջ չէին համարում և այս պատճառով զարմանալի չէ, որ մանր-բուրժուական սարսափը յեղափոխութեան և հակայեղափոխութեան առաջ վերջանում է այնտեղ, որտեղ այժմ գտնուում են գերմանական բուրժուազիայի ամենակրկոտ և ամենադիւրահաւատ տարրերը:

Բառէրը իր գրքոյիւ վերջացնում է գերմանական ժողովրդին ուղղած մի գիմումով: Գերմանական բուրժուազիան և գերմանական իմպերիալիզմը իրենց բռնադատող քաղաքականութեամբ հասցրին գերման ժողովրդին անդունդի ծայրը: Այժմ գերմանացի բանուորները պիտի ստրուկ դառնան գերմանական և Անտանտի կապիտալին: Գերմանական պրոլետարիատի միակ փրկութիւնը պրոլետարական յեղափոխութիւնն է, որը ղէն կը ձգէր կապիտալի լուծը Գերմանիայում և միաժամանակ Անտանտի երկրներում առաջ կը բերէր յեղափոխութիւն: Ի հարկէ այսպիսի ազատութիւնը չի կարող իրադործւել առանց խոշոր դահերի: Ըստ Բառէրի այդ խելագարութիւն կը լինէր, որովհետեւ նրա համոզմունքով դա Գերմանիան կը դարձնէր մի ասպարէզ ուսաների և Ֆրանսիացիների պայքարի համար: Նա դուրս է գալիս Լիւզէնգորֆի և Լենինի դաշնակցութեան դէմ: Մենք հարցնում ենք մեր երէկւայ դաշնակցներին, սիրելի անտիսիմիտներին՝ «Բնչ կարծիքի էք դուք, պ. Բառէր, գերմանական և ուսական պրոլետարների դաշնակցելու մասին: Այս հարցից Բառէրը ձգնում է մի կերպ ազատւել: Նա բացատրում է, որ գերմանական և ուսական պրոլետարների միաբան ազատագրական պայքարը, Գերմանիայի համար հնարաւոր կը լինէր սովի, քաղաքացիական պատերազմի և արշաւանքների գնով:

Այսպէս արեւմտեան Պերմանիայի պրոլետարները, հետագայում էլ ձեռք բերեցին թողնել Օրդիշի ձեռքը, թողնել, որ գեմոկրատական սպեկուլանտները ձեռք բացեն մանւանդ, կրէք ֆրանսիական տրաւանները առանց տրաւանի, — ահա այն ձեռնարկը, որ կը տանէ զէպի գիւղիական սոցիալիզմը և զէպի «խաղաղ» գեմոկրատական զարգացումը, եթէ սրանով զուր չը համէք գեմոկրատական սոցիալիզմին, այլ համէք նրան, որ Պերմանիան Անտանտի զաղութը դառնայ, դրա փոխարէն զուր կարող էք միմիայն ձեռք առնել հալածող գիտակցութեամբ, որ զուր ազատեալ էք պետութեան ուժի և ամենակարողութեան մասին եղած նախազգացումներէն: Մի նոր միջոց է քարոզում է ձեռք առնալի պաշտամունքը: Դուք կարող էք պահպանել այն, և այն ժամանակ երբ Անտանտի կապիտալը իր շղթաները կը դնէ ձեռք վրայ, Բաուէրը ցանկանում է, որ իրեն համար Վէյմարում Դեմոկրատիկ կողմին մի արձան կանգնացնեն, այն Դեմոկրատիկ զէպի որը մեծ յարգանք էր տաժում Պերմանիայի ֆախշախողը՝ Նապոլէոնը: Վերջինս իր հետ ման էր ածում խեղճ Վերթերի ասանջանքների մասին դրամ գիրքը: Մենք համոզւած ենք, որ մարշալ Զոլը չի տանում իր բազմի հետ Բաուէրի գրքոյկը, բայց եթէ նա կարգացել է այն, չէր տատանուի խախտուել: Մի գերմանական սոցիալ-դեմոկրատ, որ կրկնակի կեղեքւած (իր և օտար բուրժուազիայից) պրոլետարիատի առաջ անարգում է յեղափոխական շարժման մասին եղած միտքը, իբրեւ Արեւելեան էլքսի և Պոստդամի ոգու ժառանգութիւն, իհարկէ կարող է արժանանալ Անտանտի շնորհակալութեանը: Նրա առաջ երգրագրելը Բաուէրի գրքոյկի մտաւոր իմպոտենցիայի տրամաբանական հետեւանքն է, մի գիրք՝ որ միջազգային մենշեիզմներ կտրելի է համարել, որ ծագել է պրոլետարիատի ուժերի վրայ եղած անվստահութեան շնորհիւ, որ տանում է զէպի կապիտալիզացիայ բուրժուազիայի առաջ և՛ ազգային, և՛ միջազգային մասշտաբով: Նոյն խել իր գրքոյկի վերջին, եզրակացութիւնների մասում Բաուէրը երևան է գալիս իբրեւ Կաուցկու հաւատարիմ աշակերտ, Կաուցկին պրոլետարիատի գիկատատուրայի զէմ սկսած պրոպագանդի հետ միաժամանակ սկսել էր իր պրոպագանդը յօդուտ վիւսնիզմի: Վերսայի խաղաղութիւնից յետոյ իհարկէ Բաուէրը չի կարող զոգարանական հիմքեր երգել ժողով կաթաւածաւարին, բայց

կարող է շարունակել փոքրոգի սարսուփի և անարդ տատանման
պրոպագանդը, որ ոչ ոքի չի փրկի ու չի ազատի, և այս բանը
նա կը շարունակի մինչև այն ժամանակ, քանի դեռ ունկնդիր-
ներ է գտնում պրոլետարիատի մէջ: Մենք յոյս ունենք, որ այս
երկար չի շարունակուի:

Կարլ Բաղեկ.

ԱՄՍՏԵՐԴԱՄ, ՄՈՍԿԻԱ, ԼՈՆԴՈՆ

Այն խորին խմորումը, որը ընդգրկել է եւրոպական բան-
ւորների լայն խաւերը, չափազանց քրեց այն նգնաժամը, կրիզի-
սը, որի մէջ զանաւում է միջազգային պրոֆեսիոնալ շարժումը:
Դեռ պատերազմի ընթացքին երկու կօալիցիաների սոցիալիստ-
ազգասէրները փորձում էին սարքել իրանց պրոֆեսիոնալ Ին-
տերնացիոնալը, սակայն դրանից, ինչպէս յայտնի է, ոչինչ դուրս
չեկաւ: Հենց որ պատերազմը վերջացաւ և շովինիստ ղեկավար-
ների վերին շերտերը զգացին մասսաների կողմից գործազուտ
ճնշումը, իսկոյն ձեռնարկեցին վերաստեղծելու պրոֆեսիոնալ
միութիւնները, որոնց կազմաւումեց պատերազմը և ղեկավար-
ների Ինտերնացիոնալին դաւաճանութիւնը: Այդ նպատակով
1919 թւի փետրւարին Բեռնում կոնֆերանս հրաւիրեց, որը հոգ
պատրաստեց Ամստերդամում կազմելու պրոֆեսիոնալ միութիւն-
ների Միջազգային համաժողով, կոնգրես:

Այդ համաժողովը բացեց յուլիսի վերջին և այստեղ հիմք
դրեց այն կազմակերպութեան, որը յայտնի է Պրոֆմիութիւն-
ների Ամստերդամի Ինտերնացիոնալի անւան տակ: Նոր հիմնադ-
րութիւն կառուցող որմնադիրների թւում մենք տեսնում ենք
մեր հին ծանօթներին, զանազան երկրների ուսաւաղդասէրներին,
որոնց գործունէութիւնը պատերազմի ամբողջ ընթացքում նրա-
նում էր կայանում, որ բանւորներին զարձնեն հայրենի կապի-
տալի անլեզու և հլու գործիք:

Այդ տեսակէտից կոնգրեսը ներկայացնում էր իրանից, ինչ-
պէս և միւս կողմերով, Երկրորդ Ինտերնացիոնալի ճշգրիտ
պատճէնը, Ինտերնացիոնալի՝ որի զժբախտութիւնն այն է, որ
նրա մէջ կան շատ շովինիստներ, ազգամոլներ և շատ սակաւ սո-
ցիալիստներ:

Ազգայնական տեսակէտը ամբողջ ժառանգակ խանգարում էր աշխատանքին: Բելգիացիները և ֆրանսիացիները, որպէս յաղթողներ, պահանջում էին, որ յաղթածները, այսինքն գերման և աւստրիացի պրոֆեսիոնալ միութիւնները խոստովանեն իրանց մեղքը, իսկ իրենք շարունակոււմ էին կարծել, որպէս թէ իրանց զիջքերը անարատ էին, որովհետեւ նրանք պատերազմում էին յանուն «քաղաքակրթութեան», մշակների և դեմոկրատիայի: Բաղաքավարի և զատարկ ֆրանսիացի զինակի տակ քոչարկոււմ էր նացիոնալիստական ստոր էութիւնը, որը իր հերթին, — երբ ծանօթանում ես այդ համաժողովի անկենդան ու ստոր, կրտսծ, ներքինացրած արձանագրութիւնների հետ, — առաջացնում է խորին նողկանքի զգացումներ: Բելգիայի ներկայացուցիչը յարձակոււմ է, գերմանացի ներկայացուցիչը պաշտպանոււմ է, իսկ Գոմպերաները, Ժուճները և Էպիլաոնները — իրանց կառավարութիւնների այդ լակէյները, հանդիսանում են որպէս դատաւորներ և կկայիրտներ այն հարցի վերաբերեալ, թէ համապատասխան էր գերման պրոֆմիութիւնների գործունէութիւնը միջազգային համերաշխութեան զաղափարին, թէ ոչ: Զատենրախը խօսք է վերցնում և շատ զգոյշ զարմամներով յայտարարում է. «Գերման պրոֆմիութիւնները միշտ խոստովանում էին, որ Բելգիայի հանդէպ կատարեց ծայր անարդարութիւն: Գերման միութիւնները համոզւած էին, որ Գերմանիան վարում է պաշտպանողական պատերազմ և եթէ նրանք իմանային, որ պատերազմը պաշտպանողական չէ, ապա նրանք ի հարկէ կը բողոքէին կտրուկ կերպով այդ պատերազմի դէմ»: Մատնանշելով ապա, որ երկու կողմերն էլ վատ իմֆորմացիա ունէին, որի շնորհիւ կատարեցին մի շարք սխալներ, Զատենրախը վերջացրեց այսպէս. «այն, ինչ կատարել է, եղել է գերման ժողովրդի կենսական շահերին ծառայելու նպատակով, առանց ցանկութեան անարդարութիւն կատարել օրիշ երկրների բանասրների հանդէպ և խախտել մեր միջազգային պարտականութիւնները»: Այս յայտարարութիւնը մեծ փոթորիկ առաջ բերեց գերման պատուիրակների շարքերում, պատուիրակների մի մասը չէր ընդունում Զատենրախի ասածները, իսկ համաժողովը ընդունեց այսպիսի ռեզոլուցիա. «Ի նկատի ունենալով, որ պրոֆմիութիւնների միջազգային կոնգրեսի զլխաւոր խնդիրը կայանում է պրոֆեսիոնալ Ինտերնացիոնալի վերատեսչման մէջ,

որպէսզի ապագայում ևս չկարողանան կրկնել այն անցքերը, որոնք եղան պատերազմից անմիջապէս առաջ և նրա ընթացքում, և լսելով գերման պատուիրակութեան ներկայացուցիչների յայտարարութիւնը, — համաժողովը ընդգծում է այդ յայտարարութեան մէջ արւած ափսոսանքը և անցնում է հերթական գործերին»:

Այդ եզրակացութիւնը պէտք է արդարացնէր դաշնակից ազգասէրների քաղաքականութիւնը և դատապարտէր գերման ազգասէրների քաղաքականութիւնը, բայց հենց որ վերջացաւ Ամստերդամի կատակերգութիւնը, Գերմանիայի Ընդհանուր Յանձնաժողովը հինգ օրից յետոյ որոշեց, թէ նա «իրանից ձգում է սրիկ պատասխանատուութիւն — Զառնրախի յայտարարութեան համար»:

Սակայն դաշնակից սոցիալ-ազգասէրները, այդ արժանի վերստյիցիները, պոկելով իրանց գերման ընկերներից այդ կեղծաւոր յայտարարութիւնը, այնուհետեւ ամեն քայլափոխում զգուցնել էին ստալիա գերմանացիներին, որ նրանք յաղթած կողմն են և տապալիցին Լեհինի ընտրութիւնը մինչև անգամ երկրորդ փոխնախագահի պաշտօնի համար, թէև նա, Լեհինը, տուար զլիսով բարձր է, քան ժուան և էպելստոնը միասին վերցրած: Լեհինը իսպառ հրաժարեց մանել նախագահութեան մէջ: Դաշնակից սոցիալ-ազգասէրները այն ժամանակ առաջարկեցին Ամստերդամի Ինտերնացիոնալի նախագահութեան տեղը աւստրիական պրոֆմիութիւնների ղեկավար Գիւրբերին, բայց սա, գերմանացիների հետ համերաշխութեան պատճառով, հրաժարեց և յայտարարեց. «մենք միասին տանջոււմ ենք, միասին էլ կը մեանք»:

Ձեռք չը վերցնելով ազգայնական այդ կրծոցից, համաժողովը բեզուլիւցիա ընդունեց մասնակցելու Վաշինգտոնի կոնֆերանսին. ընդունեց և ազգայնացման սկզբունքը: Ազգայնացման յանձնաժողովը առաջարկեց, իսկ համաժողովը հաստատեց հետեւեալ նշանակալից բեզուլիւցիան, որը ամբողջովին առաջ ենք բերում.

«Յանձնաժողովը առաջարկում է համաժողովին արտայայտել այն մտքով, որ պատերազմի հետեանքով առաջացած և սրբւած տնտեսական քայքայումը տպացուցանում է, որ կապիտալիզ-

մը անկարող և կազմակերպել մասսաների կեանքի համար անհրաժեշտ արդիւնաբերութիւնը: Ընդունելով, որ միութիւնները մեծ աշխատանք են կատարում բանւորների համար առհասարակ, և կազմակերպւած բանւորների համար մասնաւորապէս, համաժողովը յայտարարում է, որ պրոֆմիութիւնները համդիւսանում են որպէս նախապայման և հիմք պետականացման իրադրոժման, որ անհրաժեշտ են բոլոր երկրների պրոլետարիատի ձգտումները և զործած մասնակցութիւնը ուղղել արտադրական միջոցների պետականացումը իրականացնելու համար:

Այդ նպատակով համաժողովը առաջարկում է Գրոֆմիութիւնների Զեդերացիայի Միջազգային Բիւրոյին հաւաքել բոլոր նիւթերը պետականացման հետեւանքների մասին այն երկրներում, որտեղ նա կիրառւած է արդիւնաբերական այս կամ այն ճիւղում և տեղեկացնել զրա մասին մնացած երկրներին պրոֆեսիոնալ կենտրոնները: Յանձնաժողովը առաջարկում է համաժողովին ընդունել, որ արդիւնաբերութեան պետականացումը և ընդհանուրիշու առհասարական բարօրութեան իրականացումը հնարաւոր է միայն, երբ զոյութիւն ունի նորմալ, պիտանկանօրէն կազմակերպւած և պրոդրեսիւ զարգացող արդիւնաբերութիւն: Միայն այդ նախապայմանով պետականացումը կը լինի նպատակաշարժար և հնարաւոր: (առն շկորեսպոնդենցըրատս թերթի № 32, 1919 թ. օգոստոսի 9-ից):

Այս բեզուլիցիայից մենք իմանում ենք շատ հետաքրքրական բաներ և ամենից առաջ, որ պետականացումը վատ բան չէ, եթէ նաեւանտնաւոր և գիտականօրէն է կազմակերպւած, որ նա շատ լուրջ գործ է և ապա ուրեմն հետը պիտի վարւել շատ զգոյշ: Բայց կոնգրեսը, որ յաւակնութիւն ունի ղեկավարելու բոլոր աշխարհի պրոֆեսիոնալ շարժումը, չը գտաւ աւելի էական մի բան, քան ասել, որ հարկաւոր է բանւորների ուշադրութիւնն «ուղղել» ղէպի այդ հարցը և յաճնարարեց Գրոֆմիութիւնների Միջազգային Զեդերացիային միայն նիւթեր «հաւաքել», մոռանալով աւելացնելու, ապա ինչպէս իրականացնել համազումարի առաջակարկած սոցիալիզացիան: Նման լուութիւն պատահական չէ: Այդ առիթով նրանք այլևս ասելիք չունէին, որովհետեւ զատակարգային աշխատակցութեան վերաբերեալ բոլոր խօսքերը առած էին և բանւորները այլևս չէին ցանկանում լսել զրա մասին: Ստիպ-

ւած էին գիտական խօսքերով՝ «պրոգրեսիւ զարգացող արդիւնաբերութիւն», մաքսանկեղօրէն անցկացնել սոցիալիզմը իրականացնելու համար պայքարից հրաժարումը: Այդ կատարուեց այդ պարտնների յատուկ նարպիկութեամբ, իսկ որպէսզի ոչ ոք չը կարծի, թէ Պրոֆմիութիւնների Միջազգային Ֆեդերացիան ունի «ազմիկ խնդիրներ» պետականացումը իրադրոծելու ասպարիզում, համազումաբը յանձնարարում է նրան... «հաւաքել զրա մասին տեղեկութիւններ»: Այդպիսով պարզ է, որ ստեղծւած է ոչ թէ յեղափոխական դասակարգային մի կազմակերպութիւն, այլ առ առաւելն մի նոր փոստային արկղ: Պրոֆմիութիւնների Միջազգային Ֆեդերացիայի այդ ոչ-ազմիկ և ոչ-գասակարգային բնոյթը ընդգծւած է կանոնադրութեան մէջ:

Պրոֆմիութիւնների Միջազգային Ֆեդերացիայի ծրագիրը, համաձայն կանոնադրութեան, հետեւեալն է.

ա. Փոխանակութիւն բանւորական շարժման վերաբերեալ լուրջ տեղեկութիւնների.

բ. Միատեսակ վիճակագրութեան նիւթերի հաւաքումը և մշակումը.

գ. Փոխադարձ օգնութեան ձեռնարկումը և ի կատար ածելը.

դ. Աջակցութիւն պրոֆեսիոնալ ազիտացիայի հարեան երկրներում, համապատասխան պրոֆմիութիւնների կենտրոնների խնդրելու դէպքում.

ե. Միջնորդութիւն տարածայնութեանց դէպքում.

զ. Աջակցութիւն զարգացնելու պրոֆեսիոնալ շարժումը այն երկրներում, որոնք չեն յարել Ֆեդերացիային.

է. Նիւթեր հաւաքել սոցիալական օրէնսդրութեան վերաբերեալ բոլոր երկրներում և աջակցել բոլոր երկրներում սոցիալական օրէնսդրութիւնը անցկացնելու և բարելաւելու ձգտումներին.

ը. Կանոնաւորել ներգաղթը և արտագաղթը պրոֆեսիոնալ միութիւնների շահերի տեսակէտից.

թ. Փոխադարձ պայմանների կնքում յանուն միութիւնների անդամների շահերի, որպէսզի կարգաւորուի մի երկրի միութիւնից միւս երկրի միութեան անցնող անդամի հարցը.

ժ. Միջազգային հանդէսի հրատարակումը:

Գրելով գործունէութեան այդպիսի ծրագիր, իրանք հեղի-

նակները անշուշտ երկրայեցին նրա այժմէութեան մասին և անկացրին միտող ևս, որը կոչուած է. «Արտֆեսիոնալ Միութիւնների Միջազգային Ֆեդերացիայի նպատակը»։ Ինչ է այդ նպատակը։ Ահա թէ ինչպիսի մանրամասն ծրագիր պիտի ունենայ միջազգային պրոֆեսիոնալ միութիւնը նրա ղեկավարների կարծիքով. մի մոտանաք, որ դա կազմուած է անլսելի պատերազմից յետոյ կարգէն պարզապէս սկսող սոցիալական յեղափոխութեան շրջանում։

1. Նպատակել յարակցող կազմակերպութիւններին յանուն նրանց շահերի և ձգտութիւնների ազգային և միջազգային հոգի վրայ։

2. Օգնել պրոֆեսիոնալ շարժմանը՝ ազգային և միջազգային, այն երկրներում, որոնք դեռ չեն յարել միջազգային միութեան։

3. Նպատակել գործողութիւնների միութեան այն բոլոր հարցերի վերաբերեալ, որոնք շոշափուած են ընդհանուր պրոֆեսիոնալ շահերը։

4. Պայքար միջազգային գործադուլ խանգարողների դէմ։

5. Ստեղծել միջոցներ իրականացնելու համար վերը մատնադրուած և այլ պրոֆեսիոնալ նպատակները, որոնք արտայայտուած են զոտել այս կանոնադրութեան ուրիշ յօդւածների մէջ»։

Ահա այն ամենը, ինչ կարողացան ասել պրոֆեսիոնալ միութիւնների խնդիրների վերաբերեալ և սրանց միջազգային շտաբի մասին պարոններ՝ Լենիններ, Ժուզոներ, Էպելստեյներ, Ուզեգեստեր, Տորրերզեր և արեւմտեան Եւրոպայի պրոֆեսիոնալ միութիւնների այլ ղեկավարներ։ Ինչպէս պատահեց, որ Եւրոպայի և Ամերիկայի ամենաաչքի ընկնող պրոֆեսիոնալ տըլեմարների կազմած երկու համագումարների և խորհրդակցութեան արդիւնքը ստացւեց գործունէութեան այսպիսի իրայատուկ ծրագիր։ Յիշեցէք, որ կանոնադրութիւնը դիտաւորեալ մոտանում է սոցիալիզմի հարցը։ «Սոցիալիզմ» խօսքը ոչ միտեղ չի յիշատակուած անգամ և ամբողջ կանոնադրութիւնը այնպէս է կազմուած, որ նրան ընդունել կարող է ամեն միջազգային սպարսիվ ընկերութիւն կամ ասիական խոլերայի դէմ մաքառող մի միջազգային կազմակերպութիւն։ Այդ անգոյն ծրագիրը ամենից լաւ է ընտրուում այն մտաւոր իրարանցումը, որ գոյութիւն ունի բո-

Ջոր երկրների պրոֆեսիոնալ շարժման մէջ: Իսկապէս, ինչ կարող էին տեսի առցիալից մի կամ զատակարգային պայքարի մասին այն մարզիկ, որոնք իրանց երկրներում մասնազւեաներ են դարձել զատակարգային գործակցութեան, համաշխատակցութեան մէջ, ինչ կարող էր տեսի զատակարգային պայքարի մասին Լէնինը, որը հանդիսանում է որպէս հոգևոր հայր Թերմանիայի «բանուորատեփականատիրական աշխատուորական միութիւնների», որոնց մէջ բանուորները և արդիւնաբերողները օգտւում են «հաւասար» ձայներով: Ինչ կարող է տեսի յեղափոխութեան և յեղափոխման պայքարի մասին նախկին յեղափոխական-սինդիկալիստ, ապա Թրանսիայի կառավարութեան լակէյ դարձած Լէոն ժուան, — Աշխատանքի Ընդհանուր Ֆեդերացիայի այդ քարտուղարը: Մարզիկ, որոնք իրանց տանը պարապում են այդպիսի բարեպաշտ գործունէութիւնով, ուրիշ բան չէին կարող նշարել, բան ձագարների որսի սիրողների ընկերութիւն, կամ միջազգային փոստային արկղ:

Հիմնելով այդպիսի նշանաւոր հաստատութիւն, լիզերները, զեկավարները զբաղեցին, ինչպէս մենք վերև տեսանք, այն հարցով, թէ մասնակցել արդեօք Վաշինգտոնի այն կոնֆերանսին, որը հրաւիրում է Ազգերի Լիգան: Համաժողովը վճռեց մասնակցել նրան, բայց պայման դրեց, որ այնտեղ թոյլ տրւի մասնակցել նաև յաղթւած երկրների պրոֆեսիոնալ միութիւնների ներկայացուցիչներին: Վաշինգտոնի կոնֆերանսը (1919 թիւ, հոկտեմբեր), որը հրաւիրւած էր համաձայն վերստյի պայմանագրի պարագրաֆներին մէկի, բաղկացած էր, ինչպէս յայտնի է, կառավարութիւնների, արդիւնաբերութիւնների և բանուորների ներկայացուցիչներից: Ինչու համար պրոֆեսիոնալ միութիւնները մասնակցում էին նրան: Դրա բացատրութիւնը մենք զբնուում ենք ֆրանսիական Աշխատանքի Ընդհանուր Ֆեդերացիայի սրտուեաններից մէկում: Եւ այն չափով, որքան Թրանսիայի սոցիալ-ազգասէրները բաւական «զեղեցիկ» են շարադրում զատակարգային գործակցութեան տակտիկը և ընդունակ են զարգարել իրանց դաւաճանութիւնը զեղեցիկ դարձաւնեւում, մենք խօսքը կը տանք նրանց, որպէս Ամստերդամի Թատերնացիոնալի տաշանդաւոր փաստաբանների: Ընտրելով իրանց ներկայացուցիչ Վաշինգտոնի կոնֆերանսի համար ժուան և տալով նրան որպէս

«տեխնիկական խորհրդակիցներ»՝ Դիմիտրի, Բիզզարին, Լե-
նուարին և Ժաննու Բիվլին, Ֆրանսիայի Աշխատանքի Ընդ-
հանուր Ֆեդերացիան ընդունեց մի երկար բեզոլիցիա, որի մէջ
ի միջի այլոց կարգում ենք.

«Զը հրաժարելով այն կրիտիկայից, որը ձևակերպեց մեր
ներկայացուցիչը խաղաղութեան կոնֆերանսի աշխատանքի յանձ-
նաժողովում և շարունակելով հետապնդել Վերսայլի պայմանա-
գրի ուղղումը՝ համաձայնութեամբ բանւորական այլ ազգային
կազմակերպութիւնների հետ, — Աշխատանքի Ընդհանուր Ֆեդե-
րացիան կը գնայ Վաշինգտոն ամուր ցանկութեամբ՝ իրազոր-
ծելու աշխատանքի միջազգային կազմակերպութիւնը, հիմնւած
պրոլետարական պահանջների վրայ, որոնք արտայայտուել են
Բեռնի պրոֆսիութիւնների միջազգային կոնֆերանսում:

«Հաւատարիմ այն սկզբունքներին, որոնք հաստատուած են
պատերազմի ընթացքում կայացած կոնֆերանսներում և որոնք
իրանց վերջնական արտայայտութիւնը գտան Բեռնում, — Ֆրան-
սիական պրոլետարական կազմակերպութիւնը յայտարարում է
աշխատանքի պայմանների միատեսակութեան անհրաժեշտու-
թիւնը ամբողջ աշխարհում և ազգաբնակիցներու ու գաղութիւնների
միմիմումի իրականացումը բանւորների համար:

«Պրոլետարիատը, կազմակերպւած Խնտերնացիոնալի մէջ,
յայտարարեց և կառավարութիւնները ու դիպլոմատները հար-
կադրւած էին խոստովանել, որ այդ սկզբունքի պահպանումը
անհրաժեշտ պայմանն է երկարատե խաղաղութեան հաստատման
համար: Զի կարող հաւասարակշռութիւն լինել ամբողջ աշխար-
հում, երբ բոլոր երկրների բանւորները չեն օգտուում հաւասար
իրաւունքներով և չեն գտնուում միատեսակ պայմանների մէջ:

«Ահա այն դրութիւնները, որոնց համաձայն են զանազան
երկրների ընդհանուր պրոֆեսիոնալ կենտրոնները և որոնց Աշ-
խատանքի Ընդհանուր Ֆեդերացիան պիտի պաշտպանի Վաշինգ-
տոնում: Ուղարկելով ներկայացուցիչներ այդ կոնֆերանսին, Ֆե-
րանսիայի պրոլետարիատը չի յանգում այն ցանկութեան, որ
կոնստիտ համաձայնութիւն ստեղծել կառավարութիւնների
կամ տէրերի ներկայացուցիչների հետ, այլ արտայայտում է ու-
րոշ կամք բոլոր երկրների բանւորների՝ խաղալ վճռական դեր,
ունենալ գործօն մասնակցութիւն ի կատար ածելու մշտադաւ

խակական կոնսուլու նոր միջազգային կազմակերպութեան գործառնութեան մէջ։

«Միւս կողմից, նա չի մոռանում, որ Աշխատանքի միջազգային կազմակերպութիւնը անբաժան մասն է Ազգերի Լիգայի։ Այդ կազմակերպութիւնը, ամբողջ աշխարհի պրոլետարիատի հետ միասին, նա համարում է հրամայողական-անհրաժեշտ և շնորհիւ բոլոր ազգերի ու կազմակերպւած բանւորների միասնական ջանքերի՝ կարող է միանգամ ընդմիջա՝ վերջ տալ գինական և տնտեսական տարածայնութիւններին։

«Վաշինգտոնի միջազգային կոնֆերանսը Ազգերի Լիգայի արտայայտութեան առաջին սկզբնաւորութիւնն է և այդ պատճառով չենք կարող չհետաքրքրել նրանով։ Բանւորները առաջին բաւարարութիւնն են գտնում այն հանգամանքի մէջ, որ կոնֆերանսին թոյլատրւած են մասնակցելու զեռ երէկ թշնամի երկրները և նրանում, որ բանւորներին յաջողւեց իրագործել իրանց հայեացքները, որոնք նպատակ ունին հաշտեցնել բոլոր ազգերը միասնական գործունէութեան ճանապարհով, առաջադիմութեան, արդարութեան և խաղաղութեան հոգի վրայ։

«Աշխատանքի Ընդհանուր Ֆեդերացիան կը գործի համաձայնութեամբ բանւորական Ինտերնացիոնալի, որպէսզի ճանաչին աշխատանքի իրաւունքները ամբողջ աշխարհում և բոլոր պրոլետարների անկաշխանդ գործողութիւնները — և զրանց թուստուս պրոլետարիատի, — պրոլետարիատի՝ որ ոգևորւած է մի իդէալով — ազատագրել միջազգային աշխատանքը։

Շատ յիմարութիւններ են դուրս տւել Աշխատանքի Ընդհանուր Ֆեդերացիայի ղեկավարները պատերազմի ամբողջ ընթացքում, բայց դատարկ Ֆրազների այս շարանը գերազանցում է ամեն ինչ։ Մեր առաջ բաց և միանգամայն առանց տարածայնութեան հաստատում է կապը Ազգերի Լիգայի և Պրոֆեսիոնալ Միութիւնների միջև, միաժամանակ Ազգերի Լիգային վերագրում է աւելի առաքինութիւններ, քան թէ այդ մասին կարծում էր իր գատարկախօսութեան լաւ ժամանակին աշխարհիս երկու կիսագունդերի փարիսեցի Վիլսոնը։

Ամստերդամի Ինտերնացիոնալի «յաղթութիւնը» Ազգերի Լիգայի վրայ, որը արտայայտեց սկզբունքօրէն թոյլատրութեամբ գերման - աւստրիական պրոֆմիութիւնների մասնակցութեան

Վաշինգտոնի կոնֆերանսին, պրորիմատիկ գուրս եկաւ. կոնֆերանսի կազմակերպողները գործն այնպէս տարան, որ Վաշինգտոն ձգտող լեւինը ոչ մի կերպ չկարողացաւ դնալ այնտեղ, բայց փոխարէնը՝ հաստատութեան սկզբունքը պահպանեց և բանւոր գասակարգը բաւարարութիւն ստացաւ: Վաշինգտոնի կոնֆերանսը մշակեց, ինչպէս յայտնի է, բանւորական օրէնսդրութեան մի երկար ծրագիր, միաժամանակ կոնֆերանսի ամբողջ մեքենայութիւնը այն եղաւ, որ բանւորական արդէն կարճ օր ունեցող երկիրները ցանկացան բարեբարել աւելի յետաձեռն երկրներէ բանւորներին և արդիւնատէրերին: Վաշինգտոնի լեզուարժութեան միակ զգալի արդիւնքն եղաւ Աշխատանքի Միջազգային Բիւրօի հիմնադրութիւնը, որը ձեռնարկուեց 1920 թ. յունւարին: Վերջնական կերպով նա կազմեց այսպէս.

Չեռնակողները. — Գերինը (Ֆրանսիա), Մադուսօրբանը (Անգլիա), Նագաշը (Չեխո-Սլովակիա), Շինդլերը (Շէկիցարիա), Կարլին (Բելգիա), Գրեյլին (Իտալիա), ամենքն էլ խոշոր ձեռնարկողներ և ղեկավարներ անտեսական կազմակերպութիւնների:

Պրոֆեսիոնալ միութիւնների կողմից. — Փուսն- (Ֆրանսիա), Սոգեկատը (Հոլանդիա), Ստիւարտ Բենինդ (Անգլիա), Տորրերը (Շէկիա), Լեւին (Գերմանիա) և մէկն էլ Աւստրալիայից — բոլորն էլ վաստակաւոր թշնամիներ դասակարգային պայքարի և իրանց կառավարութիւնների լակէյներ:

«Չեզոք» — կառավարութիւններից բարուն Մայոր զը Պլանը (Իտալիա), սըր Մալկոմ Դեվիլնդը (Անգլիա), կոմս զը Էդան (Սաքսիա), Նագայական (Եսպանիա), Բուֆինախաը (Շէկիցարիա), Սոկալը (Լեհաստան), պրոֆեսոր Մազէյմը (Բելգիա), Դը Օլվէօրը (Արգենտինայ) զը Լէյմանը (Գերմանիա) և Բեզելը (Իտալիա):

Այդ միջազգային շայկան, որը իբրեւ հաւաքել է բարեւաւելու բոլոր երկրների բանւորների վիճակը, իր հիմնադրութեան վերապահուչ ընտրեց Ալբեր Տոմային, որ մասնագէտ է դարձել սոցիալիստական սկզբունքները ցեխոտելու մէջ:

Ինչպիսիք է ազա զբաղւած Աշխատանքի Միջազգային Բիւրօն, որոնք են նրա ֆունկցիաները: Յայտնի է, որ 1920 թ. յունւարին որոշեց անկետային յանձնաժողով ուղարկել Ռուսաստան. միաժամանակ Ամատերգամի Ինտերնացիոնալը պէտք էր ուղարկէր նրա

էնտ իր պատուիրակին հաւ Աշխատանքի Բիւրոն ծագային կոնֆե-
րանս հրաւիրեց Ձեռագրում, որը շարունակեց 1920 թ.ի յու-
նիսի 15-ից մինչև յուլիսի 15-ը և վերջացաւ, ինչպէս յայտնի է,
մեծ սկանդալով, երբ Անգլիայի նախաստիճանները պահանջեցին, որպէս-
զի հետաքննեն գերման նախաստիճանները: Մի ամբողջ ամսուայ աշ-
խատեցր չափեց անգամ Աշխատանքի Ընդհանուր Ֆեդերացիայի
անասկետից չանկայի հետեւանքներ, որովհետեւ աթմամայ
բանւորական երբ մերժեց 48 ծայնով բնոյզէմ 25-ի, 7 Հարկա-
ւոր էր ծայնների երկու երրորդականը, գրաւում է Աշխատանքի
Ընդհանուր Ֆեդերացիայի պաշտանական հաշիւ մէջ, — ապականեց
միայն մի ծայն, հազարգում է տիմար հաշիւ կազմողը Աշ-
խատանքի Միջազգայն Բիւրոն այլեւ պարտւում է ներքին հա-
ւաքելով, սոցիալական օրէնսդրութեան հարցերի վերաբերեալ
զրքերի հրատարակութեամբ և այլն, որա հետ, ինչպէս հազարեց
Ալբեր Տաման Բերլինի մոգովում, Աշխատանքի Բիւրոն իր աշ-
խատանքի մէջ յենւում է պրոֆմիութիւնների վրայ: Որպէսզի
հաշիւ տանք մեզ, թէ ինչ է ներկայացնում իրանից այդ Բիւրոն,
որի վերաանուշը ստանդում է բնդամներ միայն 220,000 Ֆրանկ
(կամ մէկ միլիոն մարկ) սոնիկ, թող խօսք տանք ֆրանսական մի
պահպանողական հանդէսին, որը իր սեպտեմբեր 25-ի համարում
(1920 թ.ի) գրում է.

«Աշխատանքի Բիւրոն պաշտպանում է բանւորներին, ապա-
հովելով նրանց համար բոլոր երկրներում, մինչև անգամ այն-
տեղ՝ որտեղ բանւորների կազմակերպութիւնը անբաւարար է:
ապրուստի միմիմալ չափը և աշխատանքի մարդավայել պայման-
ները: Բիւրոն ձգտում է զարգացնել սոցիալական օրէնսդրութիւնը,
պաշտպանելով բանւորներին ազգայնական յետադիմութիւնից և
ապահովելով նրանց բոլոր առաւելութիւնները խաղաղ ճանա-
պարհով, այսինքն առանց տանջանքների, որոնք տալիս են բան-
ւորներին աշխատանքի հետ պատահած կոնֆլիկտը»:

Աշխատանքի միջազգային կազմակերպութիւնը սեփական
նաաւերիքին ապահովում է էլ աւելի առաւելութիւններ, որովհե-
տեւ արդիւնաբերող երկրների մեծ մասի բանւորները կարող կը լի-
նեն իրանք ձեռք բերել այն, ինչ նրանց ալիս և Բիւրոն, Ընդհա-
կառակը, միջազգային սոլիդ, լուրջ կազմակերպութիւնից դուրս սե-
փականաւորները ո'չ մի միջոց չունեն խոստովել զիջումների այն

բայնայիչ հետեւաններէից, որոնք բանւորները հնաւ ունեն խիլ եր-
բանցից, երբ վաղը անհետանայ այդ կազմակերպութիւնը, ապա զե-
րերը անհամեմատ օտոտ աւելի կը կորցնեն, քան բանւորները:
«Որպէսզէն իսկապէս միջազգային լինի, Աշխատանքի Բիւրօն
պիտի յենի այլ կազմակերպութիւններէ վրայ, որոնք ունեն նոյն
ընդամենը, ինչպէս իրանն է: Բանւորական ինտերնացիոնալը գո-
յութիւն ունի (հեղինակը ի նկատի ունի Ամատերդամի Ինտեր-
նացիոնալը — ծանօթութիւն Լօզովսկու), տէրերի ինտեր-
նացիոնալը սկսում է արդէն գոյութիւն ունենալ, Վերջին մի
քանի ամիսներէ ընթացքում կարելի է հաստատել, որ շարժում
կայ սեփականատէրերի միջև յօգուտ նրանց համախմբման
Բացի Աշխատանքի Միջազգային Բիւրօի, անհամեմատ է մի ինչ
որ աւելին՝ միջազգային համերաշխութիւն և միջազգային բարի
ցանկութիւն՝ ազգերի և կառավարութիւնների, եւ բուռնաւ, սրա-
միտ հանաք չէ այն խօսքերը, որոնք ասաց Ալբեր Տոման բել-
գիական կայսրին. — «Զերդ մեծութիւն, բանւորական ինտերնացի-
ոնալը ինձ օժանդակում է, տէրերի Ինտերնացիոնալը ինձ օժան-
դակում է, ես դիմում եմ կայսրներէ Ինտերնացիոնալին»: (Տե՛ս
Հիւմանիթէ 1920 թ. համար անպտ. 25-ի):

Մեզ թւում է, որ Աշխատանքի Միջազգային Բիւրօի այդ
ընդորոշմանը մեզ աւելացնելու էլ բան չի մնում: Բուրժուական
լրագրողի զստակարգային հոտառութիւնը շօշափեց արդիւնաբե-
րօղների տեսակէտից ամենատեղի տեղը այդ Բիւրօի, որը կազմ-
ւեց Ամատերդամի Ինտերնացիոնալի մասնակցութեամբ, և որի
մէջ մինչև օրս էլ գործօն և նշանաւոր մասնակցութիւն ունեն
Պրոֆեսիոնալ Միութիւնների Ամատերդամեան Ֆեդերացիայի ղե-
կավարները՝ Ժուսն, Ուղեղեստը, Լեհինը, Տօրբերգը և ուրիշները:
Երբ ես նորվեգական պրոֆեսիոնալ միութիւնների քարտուղա-
րութեան հետ բանակցութիւնների ժամանակ մասնաւորապէս այդ
յանցաւոր կապի վրայ, այն ժամանակ նորվեգական քարտու-
ղարութեան նախագահ Լիանը ասաց. — «Աշխատանքի Միջազգա-
յին Բիւրօի մէջ մասնակցութիւնը այս կամ այն ղեկավարի նրա
մասնաւոր գործը պիտի նկատել: Ես պատասխանեցի նրան. —
«Մէքէ նորվեգացի բանւորները Լիանի մասնաւոր գործը կը հա-
մարէին այն հանգամանքը, եթէ նա պարտապէս զբաղմանն զու-
թեամբ Ինարկէ, ոչ ուրիշ, և ոչ ուրիշ, որ մենք պրոֆե-

սխնայ միութիւնների զեկավարների մասնաւոր գործ համարենք քաղաքական կեղծ դրամներ շինելը»:

Իմ համեմատութիւնը համարուեց «ծայր կոպիտ և անտական»:

Պրոֆեսիոնալ միութիւնների ռազմիկ ինտերնացիոնալի բացակայութիւնը ստիպեց ռուս պրոֆմիութիւններին և այլ երկրների յեղափոխական տարրերին հարց զինել հիմնելու պրոֆեսիոնալ միութիւնների իսկական Ինտերնացիոնալ Նախաձեռնութիւնը ընկաւ ռուսների բաժինը: Պրոֆեսիոնալ միութիւնների այդ ուղղութեամբ գործունէութեան ելակէտ ծառայեց Պրոֆեսիոնալ Միութիւնների Համառուսական կենտրոնական Խորհրդի 1919 թւի հոկտեմբերի 10-ի կոչը Վաշինգտոնի կոնֆերանսի առիթով: Այդ կոչի մէջ առաջարկ կար ստեղծել յեղափոխական պրոֆեսիոնալ միութիւնների նոր կենտրոն: Նրանից յետոյ, երբ պրոֆեսիոնալ միութիւնների III-րդ համառուսական համագումարը որոշեց մտնել կոմմունիստական Ինտերնացիոնալի մէջ, Արեւմտեան Եւրոպայի բոլոր յեղափոխական տարրերի համար ակնյայտ զարձաւ, որ Ամատերզամի և Ռուսաստանի պրոֆեսիոնալ միութիւնների միջև վիճը նոյնքան մեծ է, ինչպէս II-րդ և III-րդ Բանւորական Ինտերնացիոնալների միջև: Պրոֆեսիոնալ միութիւնների՝ անզլիացի, իտալացի, բուլղար, ֆրանսիացի, սերբ զեկավարների Ռուսաստան ժամանումը 1920 թւի ամառը, հարցը փոխադրուեց գործնական հոգի վրայ և մի շարք խորհրդակցութիւններից յետոյ մշակուեց նախնական համաձայնութիւն, որի հիմնական կէտերը առում են.

«1) որ բանւոր դասակարգի պարտականութիւնն է հանդիսանում ի մի հաւաքել բոլոր կազմակերպւած ոյժերը ուժեղ յեղափոխական դասակարգային միութեան շուրջ, միութեան՝ որը աշխատելով կողք կողքին կոմմունիստական պրոլետարիատի ինտերնացիոնալ կազմակերպութեան հետ և սերտ շտղկապւած ներքան, կը կարողանայ ծաւալել իր բոլոր ոյժերը՝ վերջնականապէս յաղթանակ տալու սոցիալիստական յեղափոխութեան, որպէսզի հաստատուի Խորհուրդների համաշխարհային հանրապետութիւնը:

2) որ տիրող դասակարգերը, չը խնայելով իրանց ոյժերը,

ձեռնարկում են բոլոր միջոցները, որպեսզի խեղդեն շահագործ-
ւածների ազատագրական շարժումը:

3) ուր բուրժուազիայի գրկատառությամբ պիտի նակագրել,
որպէս անցողական և փոքրիկ միջոց, պրոլետարիատի գրկատա-
ռութեան, որը միայն ընդունակ է ֆախշտիկ շահագործողներին
գրկազրուծելու, ապահովել և ամրապնդել պրոլետարական իշ-
խանութեան նւաճումները:

4) ուր պրոֆիտաբիւնների Ամստերդամի Միջազգային մեղե-
րացիան անընդունակ է իր ծրագրով և իր տակոխելով ձեռք բե-
րել վերը թւած ակզրունքների յաղթանակը և ապահովել պրո-
լետար մասնանների յաղթութիւնը բոլոր երկրներում:

Այդ պատճառով խորհրդակցութիւնը որոշեց.

ա) գտառագարանի գոյութիւն ունեցող պրոֆեսիոնալ միու-
թիւններից առաջնակարգ յեղափոխական տարրերի հետանալու
առկաթիկը: Այդ վերջիններք, ընդհակառակը, պարտաւոր են ձեռք
առնել բոլոր միջոցները վտարելու միութիւններից բոլոր յար-
մարտներին, օպորտունիստներին, որոնք աշխատակցել են և
աշխատակցում են բուրժուազիայի հետ:

բ) վարել իրանց պրոֆեսիոնալ միութիւնների շրջանակում
կոմմունիզմի հետևողական պրոպագանդ, ստեղծելով ամեն կադ-
մակերպութեան մէջ կոմմունիստական և յեղափոխական բնի-
նք՝ պրոպագանդ մզելու և մեր ծրագիրը հաստատելու համար:

գ) կազմակերպել ռազմիկ միջազգային կոմիտէ վերաշինե-
լու այդ իմաստով պրոֆեսիոնալ շարժումը: Այդ կոմիտէն գոր-
ծում է որպէս Պրոֆեսիոնալ Միութիւնների Միջազգային Խոր-
հուրդ և վարում է իր գործերը համաձայնութեամբ ու սերտ զաշ-
նակցութեամբ Երրորդ Կոմմունիստական Ինտերնացիոնալի Դոք-
տագիր Կոմիտէի հետ այն հիմունքներով, որոնց կը մշակի Կոմ-
միստերնի Երրորդ կոնգրեսը:

Նոր ստեղծւած յեղափոխական պրոֆեսիոնալ միութիւնների
միջազգային կազմակերպութիւնը չէր կարող սահմանափակել
միայն այս զեկլարացիայով և կանոնադրութեան մէջ զծնց այն
նպատակները, որոնց համար նա առաջ եկաւ: Այդ նպատակները
ժամանակաւոր կանոնադրութեան մէջ ձեռկերպւած են
այսպէս:

«1) Մզել լայն պրոպագանդ և ազդեցիկ յեղափոխական-դա-

ների Միջազգային Խորհուրդը իր առաջին կոչում, որ բաց թողեց օգոստոսի մէկին, որում, ի միջի այլոց, կարգում ենք.

«Բուրժուազիան ուժեղ է ոչ միայն իր դասակարգային դիտակցութեամբ, կազմակերպութեամբ և խորը հասկացողութեամբ, որ ծաւալող պայքարն ունի միջազգայնութեան բնոյթ, նա նա առաւել ուժեղ է լայն խաւերի յետամնացութեամբ, դասակարգային անկրթութեամբ և որ զլիաւորն է՝ նրանով, որ բուրժուազիան իր պայքարում ընդդէմ բանւորների յենում և բանւորական կազմակերպութիւնների վրայ: Դա հրէշային է, բայց դա փաստ է:

«Յեղափոխական պրոֆեսիոնալ շարժման նոր ընդհանուր շարքը, — որը միացնում է արդէն ութ միլիոն անդամներ, — սկսելով իր գործունէութիւնը, դիմում է բոլոր աշխարհի միութիւններին կոչով՝ վերջացնել հաշիւները և կտրել կապերը նրանց հետ, որոնք վարում են համաձայնութեան յանցաւոր քաղաքականութիւնը բուրժուազիայի հետ, և կանգնել անողոր դասակարգային պայքարի դրօշակի տակ, պայքարի՝ որ մղում է ճնշւած մարդկութեան ազատագրման համար:

«Ոչ թէ խաղաղութիւն, այլ սուր է բերում իր հետ պրոֆեսիոնալ և արտադրողական միութիւնների Միջազգային Խորհուրդը բոլոր աշխարհի բուրժուազիային և գրանով որոշում է մեր գործունէութեան էութիւնը: Մեր ձրադիրն է՝ ոյժով տապալել բուրժուազիան, սահմանել պրոլետարիատի դիկտատուրան, մղել անգութ պայքար միջազգային և ազգային մասշտաբով, ծաւալով, և սերտ, անքակտելի միութիւն կումունիստական Ինտերնացիոնալի հետ:

«Ով կարծում է, որ բանուր դասակարգը կարող է վճռել սոցիալական հարցը բուրժուազիայի հետ բանակցութիւնների միջոցով կամ համաձայնութեամբ, ով կարծում է, որ բուրժուազիան կամովին կը յանձնի արտադրութեան բոլոր գործիւնները պրոլետարիատին, եթէ միայն բանւորութիւնը ձեռք բերի պարլամենտական մեծամասնութիւն, ով ենթադրում է, որ հին յարաբերութիւնների ամենամեծ փարդման շրջանում՝ երբ զնուում է երկրիս բախար՝ միութիւնները կարող են «չէզոք» մնալ, ով քարոզում է խստազոյն քաղաքացիական կռիւ մեր ապրած շրջանում, սոցիալական խաղաղութիւն, — թող այդ բոլոր պարոնները, որոնք կանգնած են պրոֆեսիոնալ կազմակերպութիւնների

պիսին իմանան, որ մենք նրանց հաշոււմ ենք իրրև մեր քաղաքական-դասակարգային թշնամիներ և մենք անողոք կռիւ կը մղենք նրանց դէմ, ինչպէս և նրանց ստեղծած միութիւնների դէմ:

«Պրոֆեսիոնալ և արտադրողական միութիւնների Միջազգային Խորհուրդը և պրոֆեսիոնալ միութիւնների Ամատերգամի Ֆեդերացիան գտնուում են բարբիկաղի զանազան կողմերում: Բարբիկաղի մի կողմէ և սոցիալական յետադիմութիւնը. միւս կողմում՝ սոցիալական յեղափոխութիւնը: Պրոլետարին, ազնիւ յեղափոխականին դժւար է ընտրութիւն անել»:

Հարցի այդպէս պարզ և կտրուկ դնելը, ի հարկէ, չէր կարող դուր գալ նրանց, որոնք ձգտում են յղկել միջազգային բանուորական շարժման բոլոր հրատապ հարցերը: Եւ ի պատասխան այդ առաջին դիմումի երևաց մի կոչ, որ ստորագրւած էր Էպելտոնի-Ժուսի, Մետինսի, Ֆիմէնի և Ուդեկիտի կողմից, որի մէջ այդ յարգելի պարոնները հաստատում են. 1) որ նման Պրոֆեսիոնալ Միութիւնների Միջազգային Խորհուրդ գոյութիւն չունի և նա միայն խաբէութիւն է. 2) որ մանիֆեստի անանուն կազմողները գիտակցական ստախոսներ են կամ թշուառ տղաներ. 3) որ Պրոֆեսիոնալ Միութիւնների Միջազգային Ֆեդերացիան անկախ է Ազգերի Լիգայից և Աշխատանքի Միջազգային Բիւրօից. 4) որ Ֆեդերացիան ստիպեց Ազգերի Լիգային խոստանալ զերման և աւստրիացի ազգերին հաւասար իրաւունքներ, որոնք ունին ուրիշ երկրների բանուորները. 5) որ Ֆեդերացիան օգնել է աւստրիացի բանուորներին իրանց ահռելի կարիքի ժամանակ. 6) որ նա բոյկոտ է յայտարարել Լուսզարիային. 7) որ նա ընդդէմ է արտայայտել Լիհազտան ռազմական պաշարներ տեղափոխելու հարցում. 8) որ Ամատերգամի Պրոֆեսիոնալ Միութիւնների Ֆեդերացիան ընդդէմ է ամեն տեսակ գիկտատուրայի, որտեղից էլ նա ծագի, և Մոսկւայի տենդենցին ճեղքւած առաջ բերել քաղաքական մոտիւններով՝ նա հակադրում է պրոլետարական լոզունգը՝ «պրոլետարներ բոլոր երկրների, միացէ՛ք» (տե՛ս «Կորեսպոնդենց-Ֆլատ» 1920 թւի հոկտ. 20-ի համարը):

Եթէ Պրոֆեսիոնալ Միութիւնների Միջազգային Խորհուրդը հնարածին բան բլիճի լինէր, ապա հագիւ թէ այնպիսի յարգելի պարոններ, ինչպիսին է Ժուսն և Ընկ., ժամանակ կը վատնէին պայքար վարելու ֆիկցիաների դէմ: Պրոֆեսիոնալ Միութիւններ-

ընդ Միջազգային Խորհուրդը մի այնպիսի ֆիկցիա է, ինչպես և պրոֆեսիոնալ շարժումը Ռուսաստանում, Բաղլիայում, Բոլգարիայում, Հարաւ-Սլաւիայում, Չեխո-Սլովակիայում, Ռումանիայում, յեղափոխական-դասակարգային շարժումը Ֆրանսիայում, Գերմանիայում, Ամերիկայում և այլն։ Նա այնպիսի ֆիկցիա է, ինչպէս ԱՄ-ը Պամմունդիտական Բնակրնացիոնալը և ինչպէս աւերադային ոչմով ծաւալող սոցիալական յեղափոխութիւնը։ Դա՝ յեղափոխական ժամանակի արգիւնք է, հետեւեալ խորը խրժոժումը, յազմումքի պրոֆեսիոնալ կազմակերպւած մասսաների և նրանց աւելի ու աւելի աճող անբաւականութեան զէպի պրոֆեսիոնալ շարժման հին զեկաժարների դաւաճան քաղաքականութեան։ Իզուր չէ բոլոր երկրներում այժմ սուր կերպով դրւած հարցը.— Մասկան թէ Ամատերդումը, եթէ այս աշխարհագրական տեղանքները թարգմանելու լինինք դասակարգային պայքարի լեզուով, դա կը նշանակէ, հետ թէ ընդզէմ սոցիալական յեղափոխութեան, հետ թէ ընդզէմ պրոլետարիատի գիկաւատութիւնը։ Հերքել, որ բոլոր երկրներում սաքի են կանգնում պրոֆեսիոնալ-կազմակերպւած քանդորների լայն խաւերը, որոնք իրանց յեղափոխական պայքարի փաստով կանգնում են Ամատերդումի զէմ, հերքել, որ բոլոր երկրների պրոֆեսիոնալ շարժումը ապրում է խոր ճգնաժամ և որ երկիր երկրի հասկից, միութիւն միութեան հասկից անցնում են յեղափոխական դասակարգային պայքարի տեսակէտին և այդպիսով ուղիղ ճակատին են խփում դասակարգային գործակցութեան քաղաքականութեան, որի առաքեալներն են հանդիսանում էպիստոնը, Էնէինը, Ժուժն և այլն, չը տեսնել, որ Պրոֆեսիոնալ Միութիւնների Միջազգային Խորհուրդը հիմնւում է այդ բոլոր ահագին յեղափոխական շարժման և բոլոր երկրների յեղափոխականացող պրոֆեսիոնալ միութիւնների վրայ.— չը հասկանալ և չը տեսնել այդ—աղամարդութիւն է... յուսահատութիւնից։

Պրոֆեսիոնալ Միութիւնների Միջազգային Խորհուրդը մեղադրւում է յետոյ նաև նրանում, որ նա իզուր է կասկածի առկ դրել Միջազգային Ֆեդերացիան, որ նա կապ ունի Ազգերի Լիգայի և Աշխատանքի Միջազգային Բիւրօի հետ։ Բանից զուրա է դալիս, որ Ամատերդումի Բնակրնացիոնալը «անկախ» է, և որ նա ոչ մի ազգակցութիւն չունի այդ երկու կազմակերպութիւն-

ների հետ, որոնք ֆաշիզմում են յիմարներին: Մենք արդէն տեսանք, թէ որչափ ճիշտ է այդ պնդումը. բայց կարող ենք բերել էլի երկու փաստեր, որոնք բնորոշում են Աշխատանքի Բիւրօի և եւրոպական արդի պրոֆեսիոնալ շարժման զեկափարների փոխ-յարաբերութիւնները: Պրոֆեսիոնալ միութիւնների համագումարը Օրլէանում (սեպտ. 25-ին) ընդունեց բեզուլիցիտ, որի մէջ հաւանութիւն է տրուում Աշխատանքի Ընդհանուր Ֆեդերացիայի մասնակցութեանը Ազգերի Լիգային կից Աշխատանքի Միջազգային Բիւրօի մէջ: Հոկտեմբեր ամսին, 1920 թւին, երբ Ալբեր Տոման եկաւ Քերլին, նա զեկուցում կարգաց Բիւրօի մասին՝ «ազատ» ինկերեան և «քրիստոնեայ» միութիւնների զեկափարների ժողովում: Փերմանիայի պրոֆեսիոնալ միութիւնների ընդհանուր միութեան նշաշատական ներկայացուցիչ Կոհենը, ի պատասխան Տոմայի ճառի, ասաց. — Աշխատանքի Միջազգային Բիւրօի օժանդակութիւնը Փերմանիայի պրոֆեսիոնալ միութիւններին բաւականապէս հասկանալի է:

Կարելի է, ի հարկէ, որքան ուզես հրաժարել Ազգերի Լիգայից, կարելի է զրել արջիւ ցատումով առողորում մանիֆեստներ, բայց փաստերը անողոր են. Ազգերի Լիգայի և Պրոֆեսիոնալ Միութիւնների Միջազգային Ֆեդերացիայի (Ամառերգումի) միջև կապը պարզ է: Արդի պրոֆեսիոնալ շարժման զեկափարների ստեղծած սեպհականաւաւերի հետ միասին կազմակերպութիւնը բոլոր երկրների բանւորներին խաբելու համար, կրբում է Աշխատանքի Միջազգային Բիւրօ անունը: Նրա վրայ ծախսող փողը բաց է թողնում Ազգերի Լիգան: Բաւական է մասնանշել, որ պարոն Ալբեր Տոման, այդ հիմնարկութեան (Բիւրօի) զեկափարը, ստանում է տարեկան 220,000 Ֆրանկ տարեկան ուճիկ: Միթէ Ֆրանսիացի, անգլիացի և ամերիկացի կապիտալիստները ծախսում են այդպիսի գումարներ Ալբեր Տոմայի, Լեհինի, Ժուօի, Ազեգեստի և այլոց սիրուն աշխերի խաբեր միայն...

Պրոֆեսիոնալ Միութիւնների Միջազգային Ֆեդերացիան, ցանկանալով բացատրել իր մասնակցութիւնը վաշինգտոնի կոնֆերանսին, պնդում է, որ նա ստիպեց Ազգերի Լիգային «խոտանալ» զերման և աւատրիացի ազգերին հաւասար իրաւունքներ միւս երկրների բանւորների հետ: Շատ կարելի է, որ Ժու-

ած, էպելտոնք և ուրիշները «ստիպեցին» խզուանալ հասարակարանները, բայց պիտի ունենայ իսկ որ պնդվե ճակատ և դիտարկեալ շտեմնել անցուդարձը, որպէսզի հաստատու Սպիտակ Լիգայի խոստումներին. պիտի անհետ քննել Վերսայի խաղաղութեան դաշը, անուր առաջակութիւնը, բանդիտիզմը այսպէս կոչուած Սպիտակ Լիգայի, այն հրէշային ծանրոցը, որը նա զրեւել գերման ժողովրդի վրայ, — այդ բոլորը պիտի դիտարկուած մասանալ, որպէսզի ունենաս տխուր տղամարդութիւն պարզապէս պարծենալ բանուորների առաջ, որպէս յաղթանակող, Սպիտակ Լիգայի աւած որեւէ խոստումներով:

Էպելտոնք, ժուռն, Սպիտակտը և Ֆիմներ ապա պնդում են, որ նրանք կուէ էին անում բոյկոտի ենթարկել սպիտակ հունգարիային և մերժել սպիտակ Լեհաստանի համար զինուորական մթերքներ փոխադրելու: Դա ճիշտ է: Բայց ինչով բացատրել հետեւեալ երևոյթը. Թորհրդային հունգարիան Զախարաւեց 1919 թ. օգոստոսին, իսկ հունգարական թէակցիայի բոյկոտի հրաւերը կայացաւ միայն 1920 թ. ին, հունգարական սպիտակ գաւաղիայի յաղթութիւնից ութ ամսից յետոյ: Միթէ հարկաւոր եղաւ այդքան ամիսներ, որպէսզի հասկանալ հունգարական բանուորների տրագիկ դրութիւնը: Միթէ հարկաւոր է սպասել, մինչև որ հունգարական պարտաւորները վճարեն իրանց արիւնը, և ապա սկսել միջազգային ազդեցիկան: Ի հարկէ, ոչ, եթէ Ամստերդամի Պրոֆեսիոնալ Միութիւնների Միջազգային Ֆեդերացիան լոկց այդքան երկար, պատճառը նա էր, որ նրա ժուռն և էպելտոնի պէս ղեկավարները, պաշտպանելով իրանց կառավարութիւնները, բարոյապէս մեղաւոր են հունգարիայի Զախարաւեան գործում, դուրս գալով ի պաշտպանութիւն նրա միայն այն ժամանակ, երբ այլևս չէր կարելի լոկ սեփական երկրի պրոլետարիատի առջև, երբ քարերն էին ազադակում հունգարական սև հարիւրակների յանցագործութիւնների դիմաց: Ապա բոյկոտը երկու շաբթից յետոյ վերցւեց: Զամենայն դէպս հունգարիայի թէակցիայի բոյկոտը, որը ի հարկէ արժանի է հաւանութեան, ժուռն, էպելտոնի և այլոց սոցիալ-ազգասէրների ձեռքբերում միայն զատարկ, այն էլ ուշացած խօսք էր: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա աւելի լաւ կը լինէր, եթէ Պրոֆեսիոնալ Միութիւնների Միջազգային Ֆեդերացիայի ղեկավարները հարց չը

բարձրացնեն, թէ ի՞նչպիսի են նրանք օգնում մարտնչող ռուս պրո-
լետարիատին: Մենք, առհասարակ, մեծ նշանակութիւն չենք
տալիս խօսքերին, որոնց ետեւը չկան դործեր, բայց անգամ բե-
զողիւցիաների, կոչերի, մանիֆեստների և ազդեցութեայի տեսա-
կէտից ռուս յեղափոխութեան օգտին ոչինչ չի արւած:

Վերջապէս, Ամատերգամի պատասխանը կատեգորիկ կերպով
յայտարարում է, թէ ժուօն, Լենինը, Սպիլսոնը, Ֆիմենը և ու-
րիշները պայքարում են զիկատատուրայի դէմ՝ որտեղից էլ որ նա
զալիս լինի: Մի բիշ թեթեւ, պարոններ: Մինչև օրս մենք
չենք տեսել. որ դուք կուսիս լինէք բուրժուազիայի զիկ-
ատատուրայի դէմ: Մենք շատ կուզենայինք իմանալ, թէ ինչպէս
էր արտայայտուած այդ կոխը: Շատ-շեռաքրքրական կը լինէր.
եթէ դուք բոլոր երկրների պրոֆեսիօնալ-կադմակերպած բան-
ւորներին տեղեկացնէք նրա մասին, թէ ինչպէս էին պայքարում
բուրժուազիայի զիկատատուրայի դէմ՝ ժուօն, Լենինը, Էյկստոնը
և նրանց կողմնակիցները: Ոչոք չզիտէ բուրժուազիայի զիկատ-
ատուրայի դէմ պայքարի մասին, իսկ յայտնի է... յայտնի է, որ
այդ պարոնները փոքրիկ են սրբազան միութիւն աշխատանքի
և կապիտալի միջև, և այդպիսով վերցրել են իրանց վրայ բա-
բոյական պատասխանատուութիւն միջազգային սպանդանոցի հա-
մար: Յայտնի է, որ նրանք հանդիսանում են որպէս սոցիալա-
կան խաղաղութեան, այսինքն բուրժուազիայի դիկտատուրայի պակ-
սկանման կողմնակիցներ: Այդպիսով ձեր յայտարարութիւնը այն
մասին, թէ դուք ընդդէմ էք ամեն ճեսակ զիկատատուրայի՝ փարի-
սեցութիւն է: Դուք դէմ էք միայն պրոլետարիատի զիկատ-
ատուրայի, իսկ ով հակառակ է պրոլետարիատի դիկտատուրային,
նա կողմնակից է բուրժուազիայի դիկտատուրային:

Ամատերգամի Պրոֆեսիօնալ Միութիւնների Ֆեդերացիայի
զիկավարների վերաբերեալ ծայր աստիճան բնորոշ է նրանց
ձգտումը՝ յայտարարել իրանց ոչ միայն սոցիալիստներ, այլև մին-
չև անգամ «յեղափոխական» սոցիալիստներ: Այսպէս այդ ֆեդե-
րացիայի քարտուղար Ֆիմենը իր զեկուցման մէջ, որը անցեա-
լում կարդացել էր Պրագայում (տես «Յիւլիուս» 15 հոկտ. 1920
թ.), յայտարարել էր. — «ձեր Լեոնինացիներն ալ յեղափոխական է
և սոցիալիստական ոչ թէ խօսքով, այլ գործով և այդ պատ-
ճառով Վաշինգտոնում մեզ յարգում էին (?)»... Այժմ բանւոր

զատակարգը, պատասժ պատերազմի նեղութիւններէց, պայքարում է արդարութեան միջոցների ազգայնացման համար: Մենք արդէն այնքան ուժեղ ենք, որ եթէ պատերազմ ծագէր, մենք հնարաւորութիւն կ'ունենանք կանգնեցնել նրան միջազգային գործադուլի միջոցով: Մենք ցանկանում ենք սոցիալիզմ, բայց զրա համար պիտի կազմակերպւել և սոցիալիստօրէն կրթել այն բանւորական մասսաները, որոնք մեր կողմն են անցել պատերազմից յետոյ: Յեղափոխութիւնը չի կարող կատարւել և չի կարող գոյութիւն ունենալ անզրադէտների միջոցով. նա հնարաւոր է միայն, երբ գոյութիւն ունի կուլտուրական և դիպլոմատիաւորաւ պրոլետարիատ: Մեր միջազգային աշխատանքը մենք ցանկանում ենք տանել ուսւ ընկերների հետ միասին, մենք պայքարում ենք Խորհրդային Ռուսաստանի նաւապաշարման գէժ, ձեռք ենք մեկնում ուսւ ընկերներին և պատրաստ ենք ներանց մօտ սովորելու, բայց մինչև այժմ ուսւ ընկերները չը բռնեցին մեր ձեռքերը և վիրաւորում են մեզ. նրանք չեն ցանկանում յարել մեր Լուսերնացիներին, նրանք ցանկանում են ոչնչացնել նրան: Մինչև այժմ մենք լուի էինք, բայց եթէ մեզ հարկադրում են կուի, մենք ստիպւած կը լինենք ցուօք սրտի ընդունել այն: Ֆրամների այս յայտարարութիւնը չափազանց հետաքրքրական է. նա տալիս է մեր ձեռքը բանալին՝ հասկանալու արդի բեֆօրմիստական պրոֆեսիոնալականութիւնը: Արտագրութեան գործիքների ազգայնացումը դա իհարկէ սոցիալիստական լոզունդ է, բայց և լաւ լոզունդներով, ինչպէս և բարի մտազրութիւններով սալայատակւած է դժոխքը: Ամբողջ հարցը կայանում է նրանում, թէ ինչպէս իրականացնել արդիւնարեութեան այդ սոցիալիզացիան. բուրժուազիայի հետ համաձայնութեան ուղիով թէ տապալելով նրան: Եւ հենց այդ հիմնական հարցին Ամստերդամի Պրոֆօրմիստիւնների Ֆեդերացիան տալիս է մի պատասխան. — շարդիւնարեութեան սոցիալիզացիան կարող է արդիւնք լինել բուրժուազիայի հետ համաձայնութեան: Մինչդեռ մեր կարծիքով նա կարող է իրականանալ միայն բուրժուազիայի բռնի տապալումից և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատուելուց յետոյ: Կարելի է արդեօք համաձայնացնել, հաշտեցնել այս երկու հայեցակէտերը: Ոչ մի դէպքում, որովհետեւ մենք ապրում ենք մի այնպիսի ժամանակ, երբ սոցիալիզմը

ժերացական թէորիայի հարց չէ, այլ կենդանի, կոնկրետ կեանքի հարց է։ Պրոլետարիատը խառնազոյն դասակարգային հուսի մէջ պիտի յազմի կամ մարդկութիւնը կը չպարտի տասնեակ տարիներով գէշի յետ։ Ինչ օգուտ պրոլետարիատին սոցիալիզմը խառնով ընդունելուց։ Ինչ արդիւնք լայն խոստումներ տուող ծրագիրներէց և երկդիմի յայտարարութիւններից։ Նրանք ծառայում են միայն մասսաները խաբելու համար։ Ֆիմինը հաստատում է, որ Ամստերդամի Պրոֆմիութիւնների Ֆեդերացիային յարում են 27 միլիոն անդամներ, և որ այդ ֆեդերացիան միջազգային գործադուլի միջոցով կարող է խանգարել պատերազմը։ Դա լիճակազրական ցնորք, միբայն է։ Այդ 27 միլիոն անդամների մէջ մտնում են թէ յեղափոխական, թէ բեֆորմիստական միութիւններ, այսինքն պայքարի մէջ փոխադարձ իրար ժխտող տարրեր։ Իհարկէ, Գերմանիայում կայ ութ և կէս միլիոն անդամ, բայց այդ միլիոնների մէջ կան այնքան պահպանողականներ և անգամ յետադիմականներ, որ նրանց հետ ոչ մի պետականացում չես անցկացնի։ Եթէ հաշուել իսկական քանակը պրոֆեսիոնալ կազմակերպւած բանւորների, որոնք տակաւիկայով և ծրագրով միացած են Պրոֆմիութիւնների Միջազգային Ֆեդերացիայի մէջ, եթէ հանենք ամեն երկրների յեղափոխական փոքրամասնութիւնները, ապա այդ 27 միլիոնը կը փոքրանայ, առնուազը երկու անգամ։ Առհասարակ մեծ քանակի վրայ ցոյց տալը մի բան չէ, որովհետեւ ինչ օգուտ այդ թւարանական մեծութիւններից, եթէ նրանք ուղմընդունակ չեն, եթէ ազգայնական զգացմունքը զեռ գետակշռում է շատերի մէջ, առաւել զեկտփարների մէջ, միջազգայնութեան զգացմունքի վրայ։ Իլլիւզիաներ պէտք չեն, եթէ եւրոպայում լինէին 27 միլիոն իսկական կազմակերպւած գիտակից բանւորներ, որոնք գիտեն թէ ինչ են իրանք ցանկանում, ապա սոցիալիզմի հարցը արդէն վճռւած կը լինէր։ Բայց ցար նրանում է, որ միութիւնների միլիոնաւոր կազմակերպւած անդամների մէջ զեռ տիրապետում են բեֆորմիզմի և քաղաքացիական հաշտութեան իդէաները, իսկ մինչև այն ժամանակ, որքան Ֆիմինի, Ժուսի, Ուղեգիտի և Լեհինի օրտերին սիրած իդէաները կը տիրապետեն պրոֆեսիոնալ միութիւնների մէջ, — կարելի է հաւատարի ասել, որ ոչ մի միջազգային գործադուլ, մինչև անգամ պատերազմի դէմ, անկարելի է։

Ֆիմենը ասում է, որ նա ուզում է ընթանալ ուսու ընկեր-
ների հետ, որ նա մեկնում է ձեռքը նրանց, իսկ սրանք չեն
ընդունում այն։ Ռուս յեղափոխականները ոչ մի մեկնած ձեռք չեն
մերժել և պատրաստ են գնալ ամենքի հետ, ով կուում է սոցիա-
լիստական յեղափոխութեան ճակատում։ Եթէ մենք մերժում
ենք մեկնած ձեռքը, ապա միայն այն դէպքում, երբ մեզ առա-
ջարկում են խօսել սոցիալիզացիայի մասին, բայց ոչինչ չեն
անում գրա համար, սրպէսզի դա կիրառուի կեանքի մէջ, երբ
մեզ փոխանակ դասակարգային պայքարի, առաջարկում են քա-
ղաքացիական հաշտութիւն, երբ մեզ առաջարկում են միջազգա-
յին մասշտաբով այն, ինչ արգէն սնանկացել է ազգային մաս-
շտաբով։ մի խօսքով երբ մեզ փոխանակ սոցիալիստական հացի,
առաջարկում են բեֆորմիստական քարը։

Մենք կուում ենք ոչ անձերի դէմ, այլ ծրագրի դէմ,
տակտիկայի և ամբողջ իդէօլոգիայի դէմ և այդ մտքով մեկնած
ձեռքը, իհարկէ, կը մնայ կախւած օդում։ Ոչ մի գիջում, կոմ-
պրոմիս, ոչ մի համաձայնութիւն նրանց հետ, ով փնտռում է
սոցիալական հարցի լուծումը բուրժուազիայի հետ համաձայնու-
թեան մէջ։ Յամառ և խստիւ կոխ մասսաների վրայ ազդեցու-
թիւն ունենալու համար և նւաճելու պրոֆեսիոնալ միութիւն-
ները, նրանց յեղափոխականացնելու և դարձնելու զործիր սոցիա-
լական յեղափոխութեան,—ահա ամեն յեղափոխականի, ամեն կոմ-
մունիստի խնդիրը։

Ահա քէ ինչու մենք այնքան թշնամարար ենք վերաբեր-
ւում Գրոֆեսիոնալ Միութիւնների Միջազգային Ֆեդերացիայի
ամբողջ իդէօլոգիային և ամբողջ քաղաքականութեան։ Ահա ինչու
մենք ստեղծում ենք իբրեւ հակակշիռ այն կազմակերպութիւն-
ներին, որոնք կանգնած են դասակարգային հաշտութեան տեսա-
կէտի վրայ, այնպիսի միջազգային պրոֆեսիոնալ կազմակերպու-
թիւնների, որոնք կանգնած են դասակարգային կոխ տեսակէտի
վրայ։ Բայց ահա դալիս են մարդիկ և ասում. — «Միջազգային նոր
միութեան ստեղծումը բաժանումն է առաջացնում պրոֆեսիոնալ
շարժման մէջ, եթէ դուք դէմ էք պրոֆեսիոնալ շարժման բաժան-
ման, ապա ինչու ինքներդ բաժանում էք առաջ բերում Ամստեր-
դամի Ինտերնացիոնալում։ Լաւ չի լինիլ արդեօք մնալ նրա մէջ և
դէպի իր կողմը գրաւել ձախ տարրերը և նրա միջում պայքա-

բիւ սեփական իղէաների համար: Դրան մենք պատասխանում ենք. — «Մենք մնում ենք այն կազմակերպութիւնների մէջ, որոնք կապւած են մասսաների հետ և այդ պատճառով հրաւիրում ենք յեղափոխականներին չը քանդել միութիւնները և դուրս չը գալ ազգային միութիւններից: Մենք նոյնպէս հակառակ ենք նրան, որ պրոֆեսիոնալ միութիւնները և նրանց խմբաւորումները հեռանան ընդհանուր պրոֆեսիոնալ կենտրոններից, ինչպէս դա պատահեց Թրանսիայում, որտեղ Բուշ-դը-Բօն հաշմանդի օրնդիկաւորները Թրանսիայում, որտեղ Բուշ-դը-Բօն հաշմանդի օրնդիկաւորները միութիւնը դուրս եկաւ Աշխատանքի Ընդհանուր Կոնֆեդերացիայի միջից: Մենք ապա ընդդէմ ենք, որ միութիւնները դուրս գան իրանց միջազգային միութիւններից: Մետաղագործները, մանուածք գործողները, հանքա-բանւորները և այլն անպայման պիտի մասնակցեն իրանց միջազգային միութիւններին: Բայց Ամատերդամի վերին շերտերը, ղեկավարները ոչինչ ընդհանուր գործ չունին բանւորական մասսաների հետ: Դրանք քաղաքական շտաբն են կազմում, դրանք են Ուրդ Ինտերնացիոնալը՝ ամենավատ պրոֆեսիոնալ հրատարակութեամբ: Նման շտաբ միջազգային պրոլետարիատին պէտք չէ: Նա պրոլետարիատի համար վնասակար է և այդ պատճառով նրան պիտի քանդել:»

Երբ մենք մատնանշում էինք, որ Ամատերդամի Ինտերնացիոնալը վատ պրոֆեսիոնալ հրատարակութիւն է Ուրդ Ինտերնացիոնալի, մեզ պատասխանում էին, որ ոչ մի կապ չկայ այդ երկու կազմակերպութիւնների միջև, որ Պրոֆեսիոնալ Ինտերնացիոնալը անկախ կազմակերպութիւն է և ոչ մի կազմակերպչական կապ չունի Ուրդ Ինտերնացիոնալի հետ: Բայց իսկապէս կապը կայ և աւելի մեծ, քան կարծում են շտաբերը: Երկրորդ Ինտերնացիոնալի վերջին համաժողովը, որը կայացաւ ժընևուս, անցնում էր նախազգութեամբ Տոմ Ծօուի, որը անգլիական պրոֆեսիոնալ շարժման ամենից ակնյայտի ղեկավարն է: Ծօուն, ինչպէս հաստատում է Ադոլֆ Բրօունը, մեծ տակտով ղեկավարում էր կոնդրեսը: Գերմանացի սոցիալ-ազգասէրը մեզ չի հազորդում, թէ ինչու՞նք են կայանում Տոմ Ծօուի «տակտը», բայց մենք էլ լաւ գիտենք թէ բանը ինչու՞նք է. համաժողովը կազմւած էր կատաղի նացիոնալիստներից և բուրժուական կասաւորութիւնների ծառաներից. այդ պատճառով միջոյցը

լիփ-լիցուն էր նացիոնալիստական թոյնով և ամենափոքր ան-
զգոյշ խօսքը կարող էր յարուցել ազգայնամոլական մրրիկ: Տոմ
Շօուն ճարպիկօրէն նաւարկում էր և մինչև վերջ հասցրեց կոն-
գրեսը, որը կեղծում էր ամենայնա ֆաշիստական բանւորների միջազ-
գային համերաշխութիւնը: Կոնգրեսի մասնակիցների համար
պարզ էր, որ Ուրդ Ինտերնացիոնալը — մեռած հիմնարկութիւն է
և աշտուկ Վանդերվելդէի մէջ ծագեց փայլուն միտք՝ տեղափո-
խել Ուրդ Ինտերնացիոնալը Լոնդոն և յանձնարարել Անգլիայի
Բանւորական Կուսակցութեանը, իւր Ինտերնացիոնալի ամենից
ուժեղ կուսակցութեանը իր վրայ վերցնել բոլոր երկրների աբ-
նանկացած սոցիալ-ազգասէրների միջազգային քաղաքականու-
թեան ղեկավարութիւնը: Անգլիական «տրեդ-ունիոնները», որոնց
արտացոլումն է մանացիան է այդ Բանւորական կուսակցութիւ-
նը, հանդիսանում է աշգլխով Ուրդ Ինտերնացիոնալի հիմքը:

Երբ Ամատերդամի Ինտերնացիոնալը համոզուեց, որ գործը
դառնում է աւելի և աւելի վատ, ապա նրա ղեկավարների միջև
ծագեց նոյն փայլուն միտքը: Պիտի ասել, որ անգլիական պրո-
ֆեսիոնալ միութիւնները շատ էլ քնքոյշ վերաբերմունք չը ցոյց
տան Ամատերդամի Ինտերնացիոնալի նախապահ Էպիլտոնին:
Իրրե ղեկավար Աշխատանքի Անգլիական Ֆեդերացիայի, որը
միաւորացնում է Անգլիայի կազմակերպւած բոլոր բանւորների
մի վեցերորդական մասը, Էպիլտոնը ներկայացնում էր իրանով
անգլիական միութիւնները Ամատերդամի Ինտերնացիոնալում:
Անգլիական պրոֆեսիոնալ միութիւնների վերջին կոնգրեսում
(Պարամուտ, 6—9-ը սեպտեմբերի) կատարուեց, ինչպէս արտա-
յայտուեց «Դէյլի Հերալդ» լրագիրը, ապենդիցիտի անդամահա-
տութիւնը: Կոնգրեսը շատ կտրուկ դատապարտեց Էպիլտոնի
հակա-բանւորական քաղաքականութիւնը, որը ամենանողկալի
յօդւածներ էր գրում ընդդէմ գործադու անող ամխանների
բանւորների և կոնգրեսը որոշեց, թէ նա չի ընդունում, որ Ֆե-
դերացիան, որի ղեկավարն է հանդիսանում Էպիլտոնը, իրաւունք
ունենայ ներկայացնել պրոֆեսիոնալ կազմակերպւած անգլիական
պրոլետարիատը: Ապա համապատասխան որոշեց, որ անգլիական
պրոֆեսիոնալ միութիւնները մասնակցել կարող են Պրոֆեսիոնալ
Միութիւնների Միջազգային Ֆեդերացիայի մէջ այն մարմիննե-
րի միջոցով, որոնց կընտրի կոնգրեսը: Այդ անդամահատու-
թիւնը,

նից յետոյ Ամատերգամբի Խաւերնացիոնայլը ընկաւ բաւական յիմար զրութեան մէջ. նախազան էպիլոսոնը ապաստի կերաւ, բայց չմից, անգլիական շափաւոր տրեկ-ուներնաւորի կողմից, պէտք էր մի որեւէ ելք գտնել: Նա քանակց այն բանի մէջ, որ որոշեց այս տարւայ նոյնմերի 25-ին կոնգրես հաւաքել Լոնդոնում, ուր կը գրէի հարցը՝ տեղափոխել պրոֆեսիոնալ շարժման միջազգային կենտրոնը Ամատերգամբի Լոնդոն: Այդպիսով անգլիական տրեկ-ուներնաւորը, որոնք իրանց վրայ են վերցրել անշնորհակալ խնդիր՝ կաշի տակ սրտկում կատարել Ա-րդ Խաւերնացիոնային, կը հանդիսանան միաժամանակ նաեւ փրկիչներ Ամատերգամբի Խաւերնացիոնայի: Այն ժամանակ հակադրութիւնը մեծ Մոսկւայի և փոքրիկ Ամատերգամբի կրթիւնի. այն ժամանակ պիտի երկընտրանք, ալտերնատիվ գնել, Մոսկւան թէ Լոնդոնը:


Անցքերի այդ տեսակ շրջադրութիւն նախատեսելով զերմանական պրոֆեսիոնալ մասուլը արդէն ձեռնարկել է այս հարցի բնունութեան. Մոսկւան թէ Լոնդոնը: Այդ հակադրութիւնը տասնմէնախորժակով գնում են զերման պրոֆեսիոնալ շարժման գեկաւարները, որոնք մեր, սուսներին գէտ հակադրում են անգլիական տրեկ-ուներնաւորի հին, փորձած գործելակերպը:

Ինչ տակ կուզէ, որ մենք չենք հրաժարուում նման հակադրութիւնից, որովհետեւ թարգմանելով ներկայ պայքարի լեզուով դա կը նշանակէ բեֆորմիզմը թէ յեղափոխական սոցիալիզմը, դասակարգային կոմունը թէ դասակարգային զորժակցութիւնը, սոցիալական յեղափոխութիւնը, թէ սոցիալական յեղափոխութիւնը, պրոլետարիատի զիկտատուութիւնը թէ բուրժուազիայի զիկտատուութիւնը, և հետեապէս նրա պրոֆեսիոնալ միութիւնները, իրանց երեք տարւայ կուով ընդդէմ համաշխարհային իմպերիալիզմի և բեֆորմիզմի ապացուցին, որ նրանց բնորոշ ուղին ճիշտ է: Եթէ բոլոր երկրների բեֆորմիստները Մոսկւայի գէտ դուրս էին բերում առաջ ժընեւը, յետոյ Ամատերգամբ, իսկ այժմ Լոնդոնը, պատճառաբանելով իրանց չկամութիւնը ենթարկել Մոսկուական զիկտատուութիւնը, այդ բացատրում է նրանով, որ նրանք Ռուսաստանի յեղափոխութեան մէջ անսնում էին ամենամեծ վտանգ իրանց ծրագրի և տակտիկայի համար: Մենք մի բողէ չենք կատարում, թէ

ով յաղթող կը Ֆեայ այդ վէճում—Մոսկւան թէ Ամստերդամը։
Դա կը նշանակէ—յեղափոխութիւնը թէ բէական։ Եւ որ չա-
փով յեղափոխութիւնը անխուսափելի է, այն չափով և Մոսկւայի
յաղթութիւնը նոյնպէս անխուսափելի է։

Ներկայումս շատ են ազմուկ բարձրացնում, առաւելապէս
Գերմանիայում և Ֆրանսիայում «Մոսկւայի ղրկատառութիւն» մա-
սին։ Բայց մտաբերենք, թէ ինչպէս էր գործի ղրութիւնը մինչև
պատերազմը միջազգային պրոֆեսիոնալ և սոցիալիստական շար-
ժումի վերաբերեալ։ Այդ ժամանակ ղրկատառութիւնը պատկանում
էր Գերմանիային։ Ինչո՞ւ. որովհետև գերման կուսակցութիւնը և
գերմանական պրոֆեսիոնալ միութիւնները ամենից ուժեղն
էին։ Նրանք ոգևորում էին միջազգային բանուորական շարժումը,
զեկաւարում էին նրան մտաւորապէս և այդ պատճառով ստացեց
գերմանական սոցիալ-դեմոկրատիայի և գերման պրոֆեսիոնալ
միութիւնների «զրկատառութիւն»։ այժմ ամբողջ միջազգային
բանուորական շարժումը ոգևորում է ռուսական յեղափոխութիւ-
նով, այստեղից է առաջ գալիս նաև Մոսկւայի ղրկատառութիւն։ Իս-
կապէս գոյութիւն չունի անձերի որեւէ ղրկատառութիւն, այլ կայ
յեղափոխութեան ղրկատառութիւն։ Բայց դա անխուսափելի է. կատա-
րեցէ՛ք ձեզ մօտ սոցիալական յեղափոխութիւն, — ասում ենք մենք
գերմանացիներին, անգլիացիներին, ֆրանսիացիներին, — և դուք կը
զրաւէք առաջնակարգ տեղ Բնտերնացիոնալի մէջ։ Իսկ մինչև
այդ՝ բոլոր զրոյցները Մոսկւայի ղրկատառութիւնի մասին կը լի-
նի անփայլ ամբողջութիւն, դեմագոգիա։

Ա. Լոգովսկի



ՍՈՑԻԱԼԻՍՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ես խնդրում եմ «Humanité»-ի ընկերներին, որ ինձ հիւրընկալեն *), խնդրում եմ թոյլ տան ինձ Ժրենց թերթի էջերից դիմելու կուսակցութեան բոլոր անդամներին և իմ հայեացքներն արտայայտել այն պայքարի առթիւ, որն այժմ պառակտում է առաջացրել Ֆրանսիական սոցիալիստների ընտանիքի մէջ:

Երիտասարդ կամ ծեր կուսակցական մարտիկները թող ինձ չհամարեն մի կողմնակի անձն, որ անապատելի կերպով խառնւած է իրենց վէճին, որովհետեւ սովորաբար ես չեմ մասնակցում ուղղակի և անմիջականօրէն քաղաքական խնդիրներին, իսկ այն երկու կազմակերպութիւնները, որոնց ես ամբողջովին ներքում եմ իմ ուժերը — «L'Internationale des anciens combattants» և «Clazté», — աշխատում են բոլորովին ինքնուրոյն, անկախ կերպով և կապ չունեն որեւէ քաղաքական կուսակցութեան հետ:

Ի հարկէ այս չի նշանակում, որ նրանք, որոնց անունից եղբայրական անկեղծութեամբ ես խօսում եմ — երբ ինձ վիճակւում է նրանց անունից հրապարակ գալ — բոլորովին չի դրադւում քաղաքականութեամբ: Միթէ այդ հարաւոր է գրական, ժամանակակից գէպքերի հղօր մըրիկով բռնւած մարդկանց համար: Քաղաքականութիւնը հասարակական առեակէտից կատարելութեան մեխանիկան է: Նա սերտ կերպով կապւած է մարդկութեան ճակատագրի հետ: Քաղաքականութիւնը դատել անուստկան, սոցիալիստական, բարոյական հարցերից կը լինէր, ինչպէս ինձ թւում է, երեխայութիւն և սովետութիւն: Մենք յաճախ ստիպւած ենք եղել յանդիմանել մի քանի ձախ ինտելի-

*| Հանրի Բարբիւսի այս յօդածը պոպղուած է «Humanité»-ի 1920 թ. հոկտեմբերի 24-ի № 6058-ի մէջ:

զինաների այն բանի համար, որ նրանք չափազանց կտրուկ կերպով են անջատում ցնորքը իրականութիւնից և խաղում են ինչ որ արխատակրտտ-անարխիստաների դեր, որոնց մասին կարելի է ասել, — եթէ մենք արտայայտենք, — որ անպէտք մարդիկ են:

Այս նոյնպէս չի նշանակում, որ մենք սկզբունքօրէն տարբերում ենք ուղղափառ սոցիալիստներից: Ընդհակառակն, մեզնից իւրաքանչիւրն այստեղ, երկրի վրայ ունի իր կոչումը և իր գործը, իսկ հենց ընդհանուր իդէալին համեկու շահերի տեսակէտից պահանջում է, որ բոլոր* ուժերը ձգտեն նրան ներգաշնակ միութեամբ և չը գործեն քառասկան անկարգութեամբ: Մենք «Clairé» և «Ancients Combattants» կողմակերպութեան անդամներս աշխատում ենք գրական և փաստաթղթերով հաստատում պրոպագանդի միջոցով տարածել գործերի և իդէաների մասին ճիշտ հասկացողութիւններ. մենք աշխատում ենք հասարակութեան այս փոշիացած ամբոխի տատանող մտքերը դէպի ճշմարտութեան ճանապարհն ուղղել: Սա մատուր և բարոյական նախապատրաստութեան աշխատանքն է. այս ճշմարտութեան իդէալների անուսով սկզբնական և անհրաժեշտ աշխատանքը, պէտք է ասաջ տարւի իր ասանձին մեթոդներով, անմիջական քաղաքականութեան շրջանակից դուրս, մինչև այն երջանիկ ժամանակը, երբ ճշմարտութեան և արդարութեան գաղափարները իրականութիւն կը դառնան և երբ ճշմարիտ ու արդար քաղաքական կուսակցութիւնները իրենց ցանածը կը հնձեն նայնիսկ այնտեղ, որտեղ նրանք այսօր իրենք ցանելու նտրուարութիւնից զրկւած են:

Սոցիալական կրօնի մասին մեր ունեցած հայեացքները և նրանց հայեացքները, որոնք քարոզում են, — ոչ եկեղեցիներում և մատուռներում, — աստուածային ճշմարտութեան կրօնը, հարկադրում է մեզ խոհուն կերպով վերաբերւել դէպի այն մարդիկ, որոնք այսօրւայ քաղաքականութիւն են վարում և դէպի այն մարդիկ, որոնք վաղը կը վարեն:

Մեզ թւում է, որ եկել է տարրական ճշմարտութիւններն ասելու ժամանակը, ինչ շատ սոցիալիստներ աչքաթող են անում: Մենք տեսնում ենք, թէ ինչպէս այդ սոցիալիստները թաղւել են բանակութիւնների մէջ, որոնք հետզհետէ ունիւրջ երկարում են, բաժան-բաժան լինում, մանրանում: Նրանք կարեւոր հարցերի-

հետ չփոթում են այնպիսի հարցեր, որոնք ոչ մի նշանակութիւն չունին, մինչդեռ ամենակարևոր գաղափարը, որ կազմում է բոլոր ազնիւ մարդկանց սեփականութիւնը, վտանգի է ենթարկւում: Այս քառսի մէջ պէտք էր պարզութիւն, եթէ նոյն իսկ զրա համար ստիպւած լինենք կոպիտ ուժի դիմել:

Ներկայումս սոցիալիստի պարտականութիւնը նոյնքան պարզ է, որքան որ հրամայական է և անյիտաձգելի: Բոլոր անկեղծ սոցիալիստները առանց որևէ վերապահութեան պէտք է միանան ծայրայեղների հետ, որովհետեւ նշմարաւթիւնը նրանց կողմն է:

Նրանց ուսմունքը բոլորովին ճիշտ է: Միջազգային կոմունիզմը պահանջում է բացարձակ միջազգայնութիւն: Նրանց ուսմունքի այս միակ կէտը միաժամանակ հանդիսանում է նաև ամենակարևորը, նա իր մէջ պարունակում է լրիւ ամբողջութեամբ և ուժով կեանքի ամբողջ նոր ձևը: Կապիտալիզմի փթեցնող ազդեցութիւնը կեանքի վրայ ամբողջովին հիմնւում է մարդկութեան ազգերի բաժանւած լինելու հանգամանքում: Ազգերի մըրցութեամբ արդարացւում են բոլոր պատերազմները. նա է իբրև պատրւակ ծառայում նաև ամեն մի կեղեքման համար:

Միջազգայնութիւնը ոչ մի վերապահութիւն չի ընդունում: Չը խուսափենք նրանից: Գոյութիւն չունի կիսատ նացիոնալիզմ:

Հայրենիքի գաղափարը հակասում է մարդկութեան գաղափարին: Ամբողջ մարդկութեան այս մեծ, միակ զործով ազգի պաշտպանութեան խնդիրը ընդհանրապէս ոչ մի նացիոնալիստական բան չի կարող ի նկատի առնել: Աշխարհում չկան այնպիսի ընկերակցութիւններ, ոչ էլ այնպիսի անհատներ, որոնք այնքան տարբերւէին իրարից, որ արդարութեան օրէնքները ոմանց համար աւելի յարմար լինէին, քան միւսների:

Նրանք արդարացի են, և դուք բոլորդ պէտք է սրա հետ համաձայն լինէք, երբ ընդունում են, որ արտադրութիւնը հասարակութեան միակ իրական բաղան է և այդ պատճառով ձրգտում են մի հարստծով վերջ տալ աշտծութիւններին և վերջապէս կործանել փողի արեւստականօրէն ստեղծւած ու մոռյլ քոնակալութիւնը: Նրանք արդարացի են և այն բանում, որ

ցանկանում են գոտակարգային պարագիտութեան հետ միասին արմատախիլ անել պարլամենտների և կոտափարութիւնների պարագիտութիւնը: Բացի այս սկզբունքներից, որոնց վրայ հանգչում է կոմմունիզմը, նրա թնայած թեղիները երկրորդական են, նրանք կախած են արդէն՝ հանգամանքներից և ոչ թէ գոկտրինի հիմնական սկզբունքներից. նրանց մէջ կարելի է ուղղումներ և նորութիւններ մտնել:

Մնում է բարիքների քանակական բաշխման հարցը. բայց նրա քիչ կարեւորութիւնը և յարաբերութիւնը միանգամից ակնյայտ է դառնում, երբ որ ընդունում է ախ կարեւոր և անպայման պահանջը, որն ասում է, թէ ամեն մի բարիքի ձեռք բերումն պէտք է ուղիղ յարաբերական լինի Անտանտի կողմից թափած իրական աշխատանքի հետ: Այս պատճառով չպիտի շփոթել երկրորդական հարցերը իդէալական աշխատանքի մեծ նպատակների հետ և չպիտի անմտօրէն խառնել այս հարցերը. չգանազանելով առաջադրած խնդիրների ակնյայտ ճշտութիւնը նրանց զործնական լուծման գծարութիւններից: Այս կը նշանակէր դիտմամբ ազատագրել մի գոկտրինա, որն ըստ էութեան անհերքելի է: Սիստեմն ըստինքեան արամօրանական է, ուղղագիծ և յուսալի. նա հաշտեցնում է (սպասածից աւելի մեծ յաջողութեամբ) անհատական շահը հասարակական շահի հետ: Նա սոցիալիզմի, հակակապիտալիզմի ամենաանկեղծ արտայայտութիւնն է: Մայրաքիչ սոցիալիստները ամեն բանում միանգամայն արգարացի են, բոլորովին ճիշտ է նրանց գոկտրինան և ուժգին զործնականը: Այդ մոսկուացիները լաւ են արել, — եթէ իրօք այս նրանք են ճարել, — որ կարողացել են զինւած ուժով երեք տարւայ ընթացքում պահպանել բանականութեան զիկտատուրան: Ամեն մի յեղափոխութիւն ուժով է հաստատում իր սահմանադրութիւնը: Ինչպիսի գերմարդկային և կախարդական ամենապիտութիւն կարող է որոշել ախ մոմենտը, երբ նոր կարգի պաշտպանութիւնը կը զաղարի արգարացի լինելուց:

Նրանք արդարացի են, երբ ասում են, որ եթէ ուղում են գոտակարգերի վերացումը՝ պէտք է ձգտել պըոյետարիատի զիկտատուրային: Ոճրագործ միամտութիւն կը լինէր ենթադրել, որ կարելի է բոլորի և ամեն մէկի սոցիալական հաւասարութիւնը իրականացնել որեւէ այլ ճանապարհով:

Նրանք արգարացի են, երբ ասում են, որ համաշխարհային յեղափոխութիւնը անհրաժեշտ է և որ պէտք է ձգտել զէպի նա. բայց նրանք երբէք չեն ասել, թէ յեղափոխութիւնը պէտք է անմիջապէս ասաջ գնաց և այնտեղ, որտեղ նրա համար դեռ պատրաստ չեն: Զէ որ անխուսափելիութիւն դեռ չի նշանակում վաղահասութիւն, այսպիսի արտուրդ ենթադրութեան նրանք, ակնյայտ է, չէին էլ կարող համենլ:

Մի ուսմունք, որ կարող է համարուել խաղաղութեան և համերաշխութեան կողմակիքիման իրական գաղափար, միշտ կը քարոզի տաեկութիւն զէպի բռնութիւնը. բայց չէ որ բռնութիւնը կեղեքւածների կողմից հնարւած չէ: Փաղաքացիական պատերազմը մեզ հետամտում է դարեր շարունակ: Հին հասարակութեան զոհերը բռնութիւն գործադրելով և վերցնելով իրանց ձեռքը սուրը, որի վրայով դեռ հասում է իրենց սեփական արիւնը, միայն պաշտպանում են իրենց:

Պէտք է վտանգաւոր միտտիցիդմի զոհ դառնալ հաւատարմ. համար, թէ բռնութիւնը երբեիցէ կամովին իր տեղը կը զիջէ բանականութեան գեղեցկութեանը, միայն բանականութեան գեղեցկութեանը:

Նրանք արգարացի են, որ անհամբերատար և անհաշտ են զէպի բեֆորմիզմը: Բեֆորմիզմը այն ինտրիզան է, որի շնորհիւ կարող է կործանուել սոցիալիզմը: Բեֆորմիզմը ասանձնայատուկ թոյն է սոցիալիզմի համար: Հարկադրել նրանց, ովքեր ուզում են սոցիալական կարգի պայմանները փոխել, հաւատալ, որ այդ հոյակապ և արմատական փոփոխութիւնը կարող է տեղի ունենալ դիւանագիտական կոմբինացիաների միջոցով, որի ժամանակ հին կարգից կը պահպանւեն նրա ասանձին մասերը, այսինքն նա կը պահպանւի իր հիմունքներով, — բայտ էութեան նա կը պահպանւի ամբողջութեամբ, — կը նշանակի այլանդակել նրանց դիտակցութիւնը: Ազնիւ մարդը իրաւունք չունի նոյնիսկ իր երեակայութեան մէջ թոյլ տալու այնպիսի հասարակակարգի գոյութիւնը, որը կապահովէր և կը վարձատրէր խարերայութիւնը: Այս բոլոր կիսամիջոցները միայն թատրոնական ներկայացումներ են, որոնք ասաջ են բերում խորէական իլլիդիաւներ, մինչդեռ այդ ժամանակ կուլիւսների յետը շարունակուում է

պահպանելի status quo ante և հասունանում են նոր կառավարութաներ։ Այսպէս էր գրութիւնը «պարողքեստիւ» բեմի վերջին 30 տարիների գոյութեան ընթացքում, որ բաժանում են 1870 թ. պատերազմը 1914 թ.ականի պատերազմից։ Չնայած իրենց չքեղ անուններին, ինչպէս են՝ «Ազգերի Լիգա», «ազգայնացում», «Աշխատանքի Միջազգային Բիւրօ», այս բոլոր ձեռնարկութիւնները իսկական պահպանողական բնույթ են կրում։

Նրանք վերջապէս արգարացի են և այն բանում, որ սահմանել են իսկական սոցիալիստական միութիւն կազմելու համար հզօրիս պայմաններ։ Այն խիստ ցածրամասնականները, որոնք տկճայալ կերպով հակասում են նրանց անմիջական շահերին, բոլշևիկների զարմանալի իմաստութեան ազատցոյցը կարող են համարուել։ Միթէ անհրաժեշտ չէ, որ այն միութիւնը, որը պիտի ստեղծել մի քանի անգամ անյաջողութեան հանդիպած և տերւած համաձայնութիւններից յետոյ և որին վիճակած է աճել ու երկից է ընդգրկել իր մէջ ամբողջ աշխարհը, — միթէ անհրաժեշտ չէ, որ նա լինի լուրջ և անբիծ։ Միթէ չի խորտակի իրականութեան հետ չփոխու հենց տառջին անգամից առկն մի այլ միութիւն, որն արեւատականօրէն կը ստեղծւի փոխադարձ համաձայնութեան և գիշումների հիման վրայ։ Միթէ պէտքական է քանակը, երբ նա տանում է ղեպի կործանում։ Մի կուսակցութեան մէջ, որն ուզում է ապրել, մեռնողները անդ չունեն։ Թող նրանք գնան կաթածահար-ղեմակրատների և սեռագոյն յետադիմականների մօտ։ Պէտք է մարդ իրեն ցոյց տայ այնպէս, ինչպէս որ նա է իրօք, պէտք է մարդ ցոյց տայ իր իսկական երեսը։ Նրանք արգարացի են. նրանք հաւասարակշռւած են, գիտականօրէն - հետեղական են և ուղղապիծ. նրանք արմատական են, որովհետեւ լրջմիտ են և եթէ նրանք հաւատացնում են, որ շարունակ և բոլոր ղեպքերում քննում են խնդիրները իրենց ամբողջութեամբ, այդ նրանից է, որ նրանք զործնական քաղաքագէտներ են և ունեն ստեղծագործական հանճար։

Երբորդ Խոտերնայիոնալի կանոնադրութեան մէջ անկեղծ սոցիալիստար և ազնիւ քաղաքացին չի գտնի որեւէ այնպիսի բան, որ անհնար լինէր ընդունել ամբողջ սրտով — ուրախութեամբ և երախտագիտութեամբ։

եթէ մի մարդու համար, որ ամենօրեայ պայքարի իրարանջումից, վէճերից, լրագրական բանակախններից հեռու է կանգնած, դժուար է հասկանալ, թէ ինչպէս է, որ Ֆրանսիական սոցիալիստական ամբողջ կուսակցութիւնը անկարող է ընդունելու ուրիշների վերաբերմամբ այն ճշմարտութիւնը, որը հենց ինքն է քարոզում, ժիաժամանակ այնպէս ցանկալի է համոզել այն բանում, որ այս մարդիկ այնքան են կուրացած, որ չեն տեսնում այն, ինչ որ կարելի է սոցիալիզմի իրականութիւնը անուանել:

Սոցիալիզմը դեռ համարեա գոյութիւն չունի: Նա անցնում է իր զարգացման այն աստիճանին, երբ արդէն այնքան է ձեւորւած, որ նրա թշնամիները հասկացան, թէ ինչ է նրա էութիւնը: Իւրաքանչիւր երկրում կայ ընտրեալների մի փոքրիկ խմբակ, որը պայքարում է, որին հետամտում են, ճնշում են այնտեղ՝ որտեղ դեռ նա բոլորովին չէ ոչնչացւած, այլ միայն խեղդւած է: Նրան փաթաթում են գեմոկրատական կեղծիքով, որով իր նպատակի համար օգտւում է կապիտալիզմը: Կապիտալիզմի հետ համեմատած սոցիալիզմը դեռ մանկան նման թոյլ է: Մեր ընկեր-ամերիկացիներից մէկը յայտնեց մեզ հետեւեալ սարսափելի դարձածքը, որ արտասանել է կապիտալիստը և որը վկայում է կապիտալիստական պրոպագանդի նգորութիւնը. «Մեր ձեռքում է եկեղեցին, դպրոցը, լրագիրները, նշանակում է մեր ձեռքում է ընտրողը, կառավարութիւնը, բանակը և դատարանը»: Սա բացարձակ ճշմարտութիւն է: Դեռ ամենուրեք կապիտալիզմի ձեռքում է գտնւում բացարձակ գերագոյն իշխանութիւնը և իրական ոյժը: Սոցիալիստական կուսակցութիւնը, որ հրէշաւոր անարդարութեան դէմ կարծէք համախմբում է վրդովւած մարքի և զրացմունքի բոլոր տռաձին բռնկումները, դեռ ևս երեան է գալիս միայն անորոշ, մութ ցնորքներով, որոնք լի են միստիքական հաւատով: Մենք չառ լաւ գիտենք, որ վերջիվերջոյ արտադրութիւնը յաղթանակելու է, որ փոքրիկ ամպիկը կաճէ ու կը գառնայ խոշոր ամպ մրրկի նման պայթելու: Համար և որ ապագան մեզ է պատկանում: Բայց ծանր է գիմանալ այս ապաստական շրջանին: Դեռ չառ հեղեղներ, կատակլիզմ բաժանում են մեզ ապագայ գրախտից, իսկ առայժմ մեր ապաստումը հիւսւած է վշտից, տանջանքից և արիւնից:

Բայց շնայելով այն բանին, որ մեր ժամանակում աշխարհը

զեռ խեղդուում է բարբարոսութեան մէջ, որը խոր թափանցել է մարդկանց մաքերի ու սրտերի մէջ և նոյնակ գերել է մարդկային խիզճը, գանկից մի երկիր՝ որակց պատանձումների կախարդական խաղով մարդկութեան մեծ ցնորքը փարթում ծագիկ տեղ, մարդկութեան համար, որ զեռ կորացած է անանգութիւնների բեռի տակ և որի ձեռքերի վրայ զեռ մնում են սպիտակ շղթաների հետքերը, ազատագրումը եկաւ ժամանակից առաջ, Իհարկէ արդարութիւնը յաղթանակելու է, Բայց կրկնում եմ՝ չգայթակղենք Ֆրազներով ու գուշակութիւններով և ռուս յեղափոխականներին յարգանքի տուրքը տալով, այնուամենայնիւ չափից դուրս անձնատուր շլիւններ վարդաղոյն յոյսերի և մարդարեւութիւններ չանենք, որ հեշտութեամբ դուրս են թռչում շրթունքներից, Մարդկութեան փրկիչների այս առաջաւոր պահակը զեռնս միայն արիւնաքամ է լինում պայքարի մէջ, Նրան սպառնում են խոշորագոյն վտանգներ, Մեզ փորձեցին ապացոյցանել, որ Ռուսաստանի զեռ մղւող պատերազմի խնդրում հնարաւոր են Միլիերանների և Լոյդ-Ջորջների միջև անհամաձայնութիւններ, մեզ ասում էին զինադադարի մասին...զգւելի կատակներ, որոնց նպատակն էր ցուել և զրազեցնել մեր ուշադրութիւնը, Իսկ իրօք գոյութիւն ունի անքակտելի կօալիցիա բոլոր միջազգային իմպերիալիստների, բոլոր իշխանութիւն ունեցողների, հարուստների, բոլոր թագաւորների միջև, որ կանգնած են զինւած ժողովրդների զլխին, որոնք խճճւած են հին համաշխարհային կեղծիքի ցանցի մէջ,— մի կօալիցիա, որի նպատակն է պայքարել ազատագրւած Ռուսաստանի դէմ, Այդ պայքարը կը վերջանայ կամ սոցիալիզմի պարտութեամբ կամ կապիտալիզմի կործանմամբ:

~*~

Երբ ի լրումն բոլորի, աշխարհի զահի վրայ կը բազմի ցարիզմը մի քիչ այլ կերպ հաղնւած, երբ մի բնեւոյց մինչև միւս բնեւոյց ամբողջ մարդկային ցեղը—ով գիտէ թէ քանի սերունդ—կը զցւի կապիտալիստական «կարգի» նեղ ու քառասկան բանտի մէջ, այն ժամանակ ինչ որժէք կունենայ ժողովրդի կողմից լրջմիտ և վայելուչ կերպով իշխանութիւնը նւաճելու այս խեղկատակային մանիան, այս խաղաղ վերանորոգման ծրագիրը, որը ձեր յանցանքի շնորհիւ կամաց-կամաց յետ է մղում մեր պայծառ իղէալը:

Այն ժամանակ սոցիալիզմը կարծէք թէ նորից պիտի ծնւի, իսկ այն բոլոր տանջանքները, որ կրեց Ռուսաստանը, մենք պէտք է նորից ապրենք:

Պիտի բոլորովին չնկատել ստեղծւած գրութեան սարսափեցնող պարզութիւնը, որպէսզի կարելի լինի այսքան ժլատ լինել եղբայրական համերաշխութեան համար նրանց վերաբերմամբ, որոնք կենդանի մարմնացումն են եղբայրութեան:

Մի՞թէ բանւոր դատակարգը չի կարող փրկել Ռուսաստանի յեղափոխութիւնը, որ յուսահատօրէն այնքան անզամ մեղօղնութեան կանչեց: Ենթադրենք, թէ սա վիճելի է, իայց յամենայն դէպս անվիճելի է այն, որ բանւոր դատակարգը շարեւ նրա համար այն բոլորը, ինչ որ կոչուող էր անել, անվիճելի է նաև այն, որ շատ սոցիալիստներ և սինդիկալիստներ թաղուելով գեղեցիկ խօսքերի տակ, երևան էին բերում ոճրագործութեան մօտեցող երախտամոռութիւն, երբ խօսք էր լինում Խորհրդային հանրապետութեան թանկագին կեանքի մասին:

Ընդօրինակելով շատագիմակամների դարելի կեղծաւորութիւնը, մենք կշռադատում-չափում ենք այն արդիւնքները, որքին հասել են բոլշևիկները ռազմադաշտում պայքարի ետուն ժամանակ, զիս միացող հսկայ հրդեհի մէջ, այն շրջանում երբ ժամանակ, զիս միացող հսկայ հրդեհի մէջ, այն շրջանում երբ այդ հսկայ երկրի ազգաբնակչութեան մէջ սովն ու համահարակն է իշխում և որը շրջապատւած է ամեն կողմից թշնամիներով, դաւաճանութեամբ և սարսափով: Կարելի է համարձակ և հանգիստ կերպով յայտարարել այն ճշմարտութիւնը, որ այն պայմաններում, ուր նրանք աշխատել են, ստացւած արդիւնքները ունեն հսկայական նշանակութիւն, իսկ նրանց սխալները և պակասութիւնները բոլորովին աննշան են:

Իմանալով այն, ինչ որ մենք գիտենք, մենք իրաւունք չունենք ինչոր քննութիւններ կատարող յանձնաժողովների խաղի վրայ ժամանակ կորցնելու, իրաւունք չունենք այս կամ այն երկրորդական կամ երրորդական նշանակութիւն ունեցող գիշունների ընդդիմախօսութեան, սրան կամ նրան կուսակցութիւնից հեռացնելու, անձնական պատասխրութեան կամ ձեռնադատութեան վրայ ժամանակ կորցնելու: Մենք իրաւունք չունենք այս անելու այն մոմենտում, երբ խօսքը վերաբերում է այն իդէալի կեանքին ու մահւանը, որի համար մենք ապրում ենք և որի համար, եթէ այդ կը պահանջեն հանգամանքները, մենք պիտի պատրաստ լինենք մեռնել:


Համբի Բարբիս

ԿԱՐԼ ԼԻՔԿՆԵՐՏ

Բանասյին յուեռ

Այս բոլոր փոքրիկ յողւածները պրւած են բանտում (1917 և 1918 թ. թ.) զրեթէ առանց որեւէ լրագրական նիւթի, միմիայն մի օրաթերթի տեղեկութիւնների հիման վրայ: Լրագիրները Լիբկնեխտին տրւում էին շաբթւայ վերջը — այդ թերթերը քըն-նութեան ենթարկւելուց յետոյ: Լիբկնեխտն այդ թերթերը կարգում էր կիրակի օրերը, որովհետեւ միւս օրերը նրան տանում էին ստիպողական աշխատանքների և նա հազիւ միայն մի քառորդ ժամ ազատ ժամանակ էր ունենում: Մենք տպագրում ենք առայժմ այդ յողւածների միայն մի մասը. մնացածները կը տպագրւեն հետագայում:

Պէտք է այտեղ աւելացնել, որ կարլ Լիբկնեխտի ներկայ յուշերի ձեռագիրը հանգուցեալի ամուսինը — Սոֆիա Լիբկնեխտը Բերլինում յանձնել է ընկ. Զինովիեին, որն և առաջին անգամ լոյս է բնծայել սուսերէն թարգմանութեամբ «Коммунистический Интернационал»-ի մէջ:



Փեմանակաւն բանուրների խնդիրները պատերազմից յետոյ.

(1917 թ.)

Յաճախ պնդումներ եւ լսում, որ եթէ պրոլետարիատն անգոր գտնւի, եթէ պատերազմի դէմ մղւած պայքարի հետեանքով յեղափոխութիւն չառաջանայ և, մանաւանդ, եթէ յաղթողը Գերմանիան լինի, այդպիսի պարագայում ամբողջ պատերազմը և տւած բոլոր զոհերը «ի գուր» կը լինին անցած:

Եթէ միայն բանն այդպէս լինէր, եթէ միայն միջազգային պրոլետարիատը կարճ լինէր պատերազմից յետոյ նորոգել իր գործունէութիւնը, իր պայքարը ոյժերի նոյն պաշարով և նոյն զիջքերի վրայ, ուր նա կանգնած էր նախքան պատերազմը...


Բայց իրապէս բոլոր պատերազմող երկրներն պրոլետարիատը թուլացած է սոսկալիօրէն թէ ֆիզիքապէս և թէ բարոյապէս. յաղթող երկրներն ունենոր զատակարգերը չափազանց ուժեղացել են թէ քաղաքականապէս և թէ անտեսապէս: Բանուոր մասաներն պարագլուխների մեծամասնութիւնը և նոյն մասսաների մի խոշոր մասը ապականւել են մինչև ոսկորների ծուծը, չլմել են, խելքները կորցրել և ամօթանալ մնացել. պարտւած երկրներում նրանք զոհ են դարձել վայրագ շովինիզմի կամ յուսահատութեան:

Պրոլետարիատն աւելի նւազ՝ քան երբեք է, ընդունակ է գործելու. ունենոր զատակարգերն աւելի պարզօրէն՝ քան երբեք է, դիտակցում են իրենց շահերն ու նպատակները: Միջազգային համերաշխութիւնն ահապէն խոչընդոտների է հանդիպում իր զարգացման մէջ. իսկ ժողովուրդների փոխադարձ պառակտումը, ընդհակառակը, չափազանց նպաստաւոր հող է գտնում իր համար. այդ պառակտումը նոյնիսկ մշտական կացութիւն է դարձել: Իմպերիալիզմը ցնծում է, սոցիալիզմը կորցրել է իր ազդեցութիւնը, և այն՝ ինչ որ կոտարւում է այժմ, վարկաբեկում է, այսպէս ասած, յետին թւով նոյնիսկ 1871 թիւ կոմունան... Մի հսկայական ղեկիցիա, և ոչ թէ զերօ — ահա պատերազմի հետևանքը յեղափոխական պրոլետարիատի համար:

Ֆրանսա-պրուսական պատերազմից, բոլոր պատերազմներից սոցիալիզմը դուրս էր գալիս անբիծ, էլ աւելի սրբազործւած, էլ աւելի կոտած-կոփւած. իսկ համաշխարհային պատերազմը նրան աւերակ դարձրեց: Նրա խղճողգիւն, նրա կազմակերպութիւնները քայքայուած-փառւած են և ամենից աւելի խիստ կերպով ձյն երկրներում, ուր նրանք արտաքուստ, ըստ երևոյթին, ամենից լաւ են պահպանւել, ենթարկւելով տիրապետող ոյժերին, այսինքն ձյն երկրներում, ուր նրանք ամբողջովին խաղալիք էին դարձել պրոլետարիատի մահացու թշնամիների ձեռքին:

Բանուորական շարժումը յետ է շարուած 1870 թականից էլ գէնը, — ահա հետևանքը:

[4n]



A $\frac{\pi}{81169}$